 զի ոնց նկարիչն ՚ի ձեռն գունագոյն գեղոց զգժգոյն պաշ-
 տանն փոխաբերել ՚ի գեղ սքանչելի • նոյնպս և սա ՚ի ձեռն
 բազմաարձոյճ գիւտից և հիւսուածոց բառից զգուշ-
 նաքեայ իրս գունաւորել սլճնազարգէ , և զանգոյ իրն
 ստեղծաբանելով քաղցրալուր գործէ լսելեաց : Նմին
 իրի քերթօղն յաւետ զմթին , զհեռաւոր և զանգոյ իրաց
 խօսի նկարագրելով զմահ , զանդունդս և զտիեզերս , Է-
 որոց բարբառի • որոց տայ և խօսիլ , ուրախանալ , ող-
 բալ , ևն :

2 Յերկուս բաժանի բանաստեղծութին ընդհանրապս •

Մին հաֆնէրգոս-Բիւն՝ գոյլեւտ մեծաբան ,
միւս գործադրութիւն՝ Գերասանախան :

Հագներգութիւնն է՝ ոտանաւոր բան ,
որ ըստորագրէ՝ գործ դիւցազնական .
Սամ զմեծագործ՝ արարս քաջ արանց ,
գեղեցիկ ներկէ՝ յիւրն ներկարան :

մին կոչի հանգնէրգոս-Բի . որ է ներբողական նկարագրու-
թի վեհապանձ գործոց նշանաւոր արանց չքնաղ յօրի
նեւ, սա է տիրանոս Գիւնաղնաբան-Բի . և յայն սակս այս
պէս կոչի , զի 'ի հնուքս զերգս առասպելեաց յօրինեալ
երգէին և պարէին ունեւոյ 'ի ձեռին զթաւ ոտս հագնի
ծառոյն 'ի նշան մշտագալար զունարձուէ իւրեանց . որով
և 'ի տօնի ապողոնի չնյն (662) զմիմեամբք ելեւէ երգէին
զհովերական բանաստեղծութի : Եւ միւսն ասի Գերասա-
նախան , զոր գերասանն 'ի տեսարանս խաղուց ձեացու-
ցանէ առասպելաբանեւոյ և երգաբանեւոյ յաւէտ շարժ-
մամբ մարմնոյն : Բայց սակայն տեսակք քերթունածոց
հասարակօրէն 'ի յետագայս գլխին : Գիւնաղնաբան-Բի .
որ է գերազանց քերթունած երևելի գործոց գիւցա-
զանց , որպիսի են եղիոնական , և ոգիսեան քերթունածք
հովերոսի , և ենէականն վերգիլիոսի : Երգէրգոս-Բի , որ
ողբալի ներկայացուցանէ զերևելի գործ ինչ առարի-
նեաց : Արասնէրգոս-Բի . որ քերթէ զգործ կմ՝ զգիտունած
բերկրալի : Ուրէրգոս-Բի . որ ողբայ 'ի վր ձախող գիտունա-
ծոց : Հովնաբան-Բի , որ նկարագրէ զհովնական խոշոր
բարս , և զվարս : Երգիծաբան-Բի , որ երգիծանէ զախտս
և զանմտութի այլոց : Քնարէրգոս-Բի , որ քաղցրաբանե-
ւոյ գովէ զանձ , և զանձայինս : Տաղէրգոս-Բի , որ է երգ 'ի
սլախիւ գիւցազանց : Յանկարծէրգոս-Բի , զոր յախշտակեալ
քերթօյն երգէ առանց մտածութի : Յարմարէրգոս-Բի .
Հարսնէրգոս-Բի . Ծանրաբան-Բի . Գամբանէրգոս-Բի . Տապա-
նագրոս-Բի . Վերպատոս-Բի : Ուր գիտելի է , զի 'ի գիւ-
ցազնաբանութի պիտի լինել ծանրութի . յողբերգութի
փափկութի . յերկերերգութի կարեկցութի . 'ի հովուն
բանութի սլարգութի , 'ի քնարերգութի քաղցրութի , և
յերգիծաբանութի խայթողութի :

Ղերասանական՝ գործ հանդիսադրին ,
 դիտէ ցուցանել՝ գործով զոր կամին •
 Վանդի դերասանն՝ զբանաստեղծութի ,
 անձամբ կերպագրէ՝ ի տեսարանին :

105 Օրհնէ է եղբերգութեան :

Լղերերգութիւնն՝ բերթած ցաւագին ,
 որ վսեմ բանիւք՝ կղերէ զարին •

Ողբայ երգելով՝ երգէ ողբալով ,
 դիւցազուն անձինս՝ ի նոյն հանդիսին :

106 Լա հաբախէրգութեան :

Կատակերգութիւնն՝ է դերասանին ,
 երգէ ՚ի հանդէս՝ միայն բերկրալին •

Լա ՚ի պատճառել՝ հանդիսականաց ,
 հրձու՛նիլ բերկրանօք՝ ՚ի սիրտ և յոգին :

107 Ոյ՛ էղէն հեղինակք :

Հեղինակ սորա՝ ՚ի հելլէնացին ,
 գիտեմ զ՝ հոմերոս՝ բանաստեղծ նախկին •

1 Գլխաւոր մասունք բերթողութե համարին եւեւեւ
 գութի , և հաբախէրգութի • առաջինն կոչի և նախաբերգութի •
 զի ՚ի հնու մն ՚ի տօնի դիօնիսիօսի շնոյն նոխազաց՝ երգէին •
 զոր դերասանն երգէ ՚ի հանդիսին քնարահարուք ՚ի նկա
 րելն զաղէտալի անցս , և զմահ վեհազանց առ ՚ի զարթու
 ցանել զունկնդիրս ՚ի լալիւն , և ՚ի կարեկցութի : Իսկ
 եկն է ծաղրաբանութի • զոր արիստոտէլ կոչէ նմանող
 զութի դռեհիկ անձանց նկարագրելով զկիրս և զգործս
 նոյն առ ՚ի շարժել զունկնդիրս ՚ի ծաղր :

2 Կախնի բանաստեղծք կոչէին անարանք , զի լը իւ
 րեանց ըմբռնման առասպելաբանէին ՚ի վր ձեռնային բնու
 թե և գործոց և ՚ի վր կարգաց և սերնդոց գից • որով
 խառնէին զփիլիսոփայուն լը գիցաբանուէ • յորս երեւ
 լի հանդիսացաւ Հովերոս բանաստեղծն , իբրև ժամանա
 կակից էղիսյ մարգարէին • որ 934 ամբ յառաջ քան զքս
 ծաղկեցաւ ՚ի յունաստան , ուր թէպէտև յառաջ քան զնոս

Իսկ իմոյս լեզուի՝ վսեմ բանաստեղծք ,
սուրբ նարեկացին՝ և շընորհալին :

Եղեն բանաստեղծք յեգիպտացիս և՛ ի փիւնիկեցիս , այլ
ոչ որ եհաս ՚ի չափ կատարելութե սորա • և նորին աղա
գաւ պանծալի գտաւ յիմ՝ աղինս Է բոլոր դարս հնուն
մինչև ցոյժմ՝ վն հանձարեղ քերթոճածոց յեղիոնական
գիրս այլովքն հանգերձ • որ և ապա կուրացել է կոչեցաւ
հոմերոս • քի ի՞նչ : Իսկ բանաստեղծութե Զորհալի վար
դապեաին մերոյ յայտ է յոտանաւոր բանից և յընտիր
ընտիր տաղերգութեց : Կոյնպէս և նաբէլադադն , զորոյ
զպանծալի քերթողութիւն բացածանուցանեն նրբախօս
ստեղծարանութեք իւր յերգս և՛ ի գիրս աղօթից : Ուս
տի նախնի բանաստեղծք , յորս չգոյր այնչափ գիտութե ,
քաջ բանաստեղծ էին քան զայժմեան • որոց ընդարոյս
երևակայութե շիտթի ուամամբ :

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԳ

ԻՐԱՒԱՐԳԻՏՈՒԹԻՒՆ

108 Օ՛րհնէ է իրասագիտութիւն :

Ի ուսումն յարգի՛ խնդրող իրաւանց ,
Քննիչ օրինաց՝ և սովորութեանց •
Որ արդար կշռէ՛ ՚ի հատուցանել ,
զարդար իրաւունս՝ արդարասիրաց :

109

Սա զարդ է չքնաղ՝ ազանց և պետաց ,
կանոն արքայից՝ ջահ դատաստանաց •
Որով դատաւորք՝ այլև փաստաբանք ,
բառնան ՚ի միջոյ՝ զվէ՛ճ զրկանաց :

Ի իրաւագիտութեն է ուսումն իրաւանց՝ օրինագրութեց՝ հրովարտակաց , և ամի՛ որ կարգին յարգարութիւն : Իսկ իրաւունքն է օրինաւոր իշխանութիւն վարելոյ զինն • և է կրկին • իրաւունք յիւր • որով գրաւէ զիրն ստացել , ուր լինի ՚ի վաճառելն • և իրաւունք առ իւր • որով գրաւէ զիրն իբր իւր , ուր լինի ՚ի սարգէն : Մոյնպէս և տէրութեն է կրկին՝ իրասագիտութիւն , և սեպհախնայութիւն • առաջինն է իշխանութիւն կառավարելոյ զհայատակս , և երկրորդն է իրաւունք յիրն ձգեալ յամ գործածունս իրին , եթէ ոչ խափանեացի օրինօք • զոր որքն ունի իրաւունս սեպհականութիւն յիրս ծնողաց • սակայն եթէ չէ հասեալ ՚ի չափ արգելուն օրէնքն չսեպհականել մինչև ՚ի ժամանակակէտ իւր : Ըստ որոյ բազում տեսակք իրաւանց զանազանին , որք կարգին յարգարութիւն • իսկ արգարութիւն է բարոյական առաքինութիւն հատուցանելոյ այլում հաստատ կամօք զիւր իրաւունս • որ և է երբեակ՝ օրինախնայութիւն , քննախնայութիւն , և քննաքննութիւն • առաջինն պարտաւորէ հոգալ աւելի զբարին հասարակաց , քան մասնաւորաց • եկրն պարաւան

110 Վանի էն օրէնք ։

Յիրաւագիտաց՝ յերիս վերածին , 1

յօրէնս բնական՝ նաև յապագայն .

Ի քաղաքական՝ և կամ գրաւոր ,

Թնդլ զսօցային՝ օրէնս երկնաւոր ։

111 Օրէնք է բնականն ։

Բնական օրէնք՝ յայտնեալ է բանին , 2

ամենայն մարդոյ՝ ըստ բնականին .

Արով հարք և մարք՝ ի վերայ որդւոց ,

և տեարք ծառայից՝ իրաւունս ունին ։

գէ տնտեսել զվարձս , և զպատիժս լը արգեանց . և երդն պարտաւորէ զմասնաւորն հատուցանել մասնաւորին ըստ Թուճարանական համեմատուէ ։

1 Օրէնքն է կարգումն բանի հրատարակել յօրէնսգրէ յօգուտ հասարակաց . որով պարտաւորին ամ հպատակք պահել ՚ի ներկայն և յապագայն . նմին իրի օրինազանցք արգարապէս պատժին ։ Օրէնքն բաժանի՝ ՚ի բնական և ՚ի քրտական , առաջինն է օրէնք յաւիտեանական տպաւորեալ ՚ի մարդիկ ՚ի բնէ . և եկնն՝ որ ՚ի վր գայ , բաժանի յածային , և ՚ի մարդային , առաջինն է գրաւոր օրէնք հին և նոր կտակարանաց . և եկնն կարգի յիշխանաց յօգուտ ժողովրդեան ։ Օրինակ իմն՝ պաշտել զարարիչն է օրէնք անձային . ապա որ ոչ պաշտէ զանձ ըզէմ գործէ անձային իրաւանց ։ Պաշտպանել զկեանս և զճնունդս՝ է բնական իրաւունք . վն զի ամ կենդանիք ուսել են ՚ի բնուէ պաշտպանել զանձինս իւրեանց . ապա սպանանել զանձն , կի՞ վնա , որ կամի մեռանիլ է ըզէմ բնական իրաւանց ։

2 Հարք ունին զբնական իրաւունս ՚ի վր որդւոց . այլ ոչ այնպէս որդիք ՚ի վր հարց . ապա որ ոչ պատուէ ըզճնուցս , ըզէմ գործէ բնական իրաւանց . մինչ զի՝ հեթանոսք իսկ եգիւն ծանր ծանր պատիժս ՚ի վր հայրասպանին , բան ՚ի վր որդեսպանին . Թէպէտ եգիպտացիք եգիւն ՚ի վր որդեսպանին նտիլ զերիս աւուրառաջի անթաղ մարմնոյ մեռելոյն ։ Հռովմայեցիք տային իրաւունս մեռուցանելոյ զորդիս , և երիցս վաճառելոյ . իսկ տեարք զգերիս միանգամ և եթ վաճառէին . Թէպէտ ունէին իշխանութի ՚ի վր կենաց նց ։

112 Աստուծոյ խնայելն ։

Բայց ազգայինն է՝ օրէնք հանրական ,¹
կամ սովորութի՝ ի յազգքս համայն .
Որպէս չար առնել՝ հիւրոց դեսպանաց ,
ընդդէմէ սմա՝ յազինս ամենայն ։

113 Աստուծոյ խնայելն ։

1) օրէնք հիմնեալ՝ ի սովորութե ,²
ըստ անցնիւր ազգաց՝ վասն ընկերութե .
Բանդի փոխադարձ՝ փոխարինութիւնք ,
վարեսցին մարդիկ՝ որպէս անկ մարդկան ։

ԲԺՇ ԿԼԿԼ՝ ԵՄԻՍԻՍԻՍ

114 Օրէնք է բժշկականութեան ։

1) մակացութի՝ ընտիր և յարդի ,³
զի վասն մարդոյ՝ հայթայթեալ լինի .
Օրնել ճանաչել՝ զհիւանդութիւնս ,
բուժել ըզհիւանդ՝ դեղովք պիտանի ։

1 Պահել զհաւատարմութի՝ ի դաշինս , ոչինչ չար առնել հիւրոց և դեսպանաց՝ են ազգային իրաւունք . զոր ուսեալ են մարդիկ ի քաղաքական ընկերութե՝ ի ձեռն լուսոյ բանին ։

2 Օրէնք իշխանաց եղեալ՝ ի վր ժողովրդեան և պէս պէս սովորութիւնք քաղաքաց՝ են քաղաքական իրաւունք . որոց հակառակ երբ գործէ ոք , իրաւամբք պատուհասի ի նմին արութե կի՛քաղարի , այլ ոչ արտաքոյ ։ Ուր գիտեալի է . զի ներգործութիւնք օրինաց են 4 . Հրամայել զբարիս . Արդէւուլ զբարիս . Թոյլ տալ անտարբեր գործոց . Պատժել զյանցաւորս ։

3 Բժշկականութիւն է ուսումն , կամ ազատական արուճեատ , որ պատաղի ճանաչել զմարմին մարդոյ և կենդանեաց , և զներքին արամադրութիւն . նաև զայն ամ որ միանգամ կարէ պատճառել զառողջութի և զհիւանդութե .

Արկին Են տեսակք՝ բժշկականին ,
 մինըն տեսական՝ միւսն ՚ի գործածին •
 Առաջինըն հիմնի՝ միայն ճանաչել ,
 զհիւանդութի՝ և զորակ դեղին :

Արկորորդըն ճրկտի՝ փորձել նկատել ,
 օգտակար դեղովք՝ զախարն փարատել •
 Վիտել սպասել՝ զինչ ցաւ հանդիպի ,
 վերահաս ախտին՝ ընդդէմ ելանել :

Վանզի նախ ճառէ՝ զխոտոց յատկութի ,
 դեղոց ուտելեաց՝ քննէ զքնութիւն •

Թի : Հնութի այսր մակացուէ անտի է յայտ , զի մարդն
 ոչ յետ բազմաց զինի պատուիրանազանցութե անկաւ Է
 պէսպէս ախտիւք • ուր ՚ի խնդիր լինել ապաքինիչ դե-
 ղոց ՚ի լոյս ընծայեցաւ այս պանծալի արուեստ : Սա-
 կայն զառաջինն դնէին զհիւանդա ՚ի հրապարակի • որ-
 պէս զի տեսանօք դեղ իմն ճարտարեացեն , և որ միան-
 դամ տայր առողջացուցիչ դեղ ինչ՝ զնորա անուն և զգեղ
 նշանակէին ՚ի կոթոյս , և յանկիւնս մեհենաց • յայսմանէ
 եղև , զի սպասաւորք մեհենաց նախ սկսան բժշկանալ •
 յորոց մի էր և հայր հիբոկրատեայ : Սա ինքն հիբոկրա-
 տէս էղև առաջին , որ զայն գրուածս ՚ի մի հաւարեալ
 հանգիսացոյց յօգուտ Տի : Ուր հեթանոսք եղին սկիզբն
 սորա զԱրդեպիս շնծ (667) :

1 Տեսական բժշկականութիւն ուսուցանէ զսկզբունս և
 զկանոնս որոշել և գիտել զտեսակս հիւանդութեց և զը-
 բակութիւս դեղոց • գիտելով և զերևոյթս , որք պատա-
 հին ՚ի մարմին հիւանդաց այլովքն հանդերձ : Իսկ եկիչն
 պատաղի գործով կատարել զայն իմ կանոնս և մերձե-
 ցուցանել զգեղս հիւանդին ի պէսպէս հիւանդութեց
 փարատելով զախտս : Վարձեալ մարթ է բաժանել ըզ-
 բժշկականութիւնն՝ մարդոց և անասնոց • յետինն ճառէ
 զպէսպէս հիւանդութեց և դեղոց կենդանեաց :

2 Մասունք բժշկականութե Են՝ Մարդաբանութի (890) :

Սէ այս խոտ արմատ՝ զի՛նչ ինաս գործէ ,
այս հանք օդ և ջուր՝ քանի՛ օդառութի՛ :

Վարձեալ աւանդէ՛ կանոնըս նրբին ,
ուշագիր զննել՝ զերակ ընդ զարկին .

Վիտել ըզպատճառ՝ պէսպէս խօթուէց ,
անշուշտ գուշակել՝ զի՛նչ կայ ՚ի սրտին :

Բ Սնտաբանութի . որ զննէ զորակութիս բնական իրաց և զսնունդ մարդոյ , ճանելով նախ զուտելէաց և ըմպելէաց , զօգոյ , ևն . եկի՞ զաշխատանաց , զքնոյ , զկրկոյ հոգւոյ , զնեղրին արամագրութեց , այլովքն հանդերձ . որով հնարի առողջ պահել զմարդն և յերկարել զկեանս . Գ Արտաբանութի , որ քննէ զզանազան փոստ մարմնոց , զպատճառս , զնշանս և զգիպոճածս հիւանդութեց , զննելով և զզարկ բազկին . յորոյ յարագութե՛ և ՚ի յամբութե՛ գուշակի փոստն : Դ Արտաբանութի , որ աւանդէ կա նոնս առ ՚ի բաղադրել և մերձեցուցանել զդեղս , և դարմանել զհիւանդն :

Ը Բազմապատիկ կանոնս աւանդէն բժշկապետք յազազս զննելոյ զդարկս բայց ընդհանրապէս ՚ի յետագայս գլխին : Չարի՛ զօրեղ կոչի , որ ունի զարժումս ուժգին , մինչև գիւ մագրել զննիչ մտաին . եթէ իցէ համաշտի յամբերակս՝ է բարենշան . ապա թէ ոչ՝ ինասակար : Չարի՛ն մեծ ընդարձակի և ամփոփի սաստիկ , զի լի է արեամբ , որ է բարենշան , և ներհակ սփին է զարկն փոքրիկ : Չարի՛ն և ի արիւնային բնութե՛ է սեպհական . որ երբեմն լիացել խեղդամահ առնէ : Չարի՛ն արտաբանութի՛ օդալից է : Չարի՛ն իտաք լի է թանձր արեամբ . պիտի երակ հասանել : Չարի՛ն իտաք սաստիկ ընդարձակի և գիւրաւ ամփոփի , որ է նշան բարի . որպէս և զարկն անփայտ : Չարի՛ն յաճախ նշան է առատուէ արեան և անինաս : Չարի՛ն արտաբանութի՛ իցէ միօրինակ՝ նշան է առողջութե՛ : Չարի՛ ընդհանրեալ և միջահատ՝ նշան է տկարութե՛ սրտի և ինասակար : Չարի՛ միանձան , որ տակաւ տակաւ լարձակի , և անդէն ամփոփի՛ նշան է պակասուէ արեան : Չարի՛ սղոյանձան ուժգին և նոճազ հարկանէ . որ է նշան խառնակութե՛ շրջանաց : Չարի՛ այծենձան՝ ոստոստեալ գուշակէ զտկարութե՛ սրտի : Չարի՛ն երկաթի կրկին անդամ լարձակի և միան

Որով ուսանի՝ հիւանդն՝ ի մահճին ,
 յանխաբ գուշակէն՝ որ կայ առ նմին .
 Եթէ այս ինչ ցաւ՝ ի ջերմէ լինին ,
 և այս խիթք սաստիկք՝ ցրտով հանդիպին :

Եւ վերջին հանճար՝ բրժշկապետին ,
 բզբաջողջութի՝ խորհիլ հիւանդին .
 ըստ պէսպէս ցաւոց՝ որպէս պատճառին ,
 պէսպէս բաղադրել՝ դեղ յօգուտ նմին :

121 Ոստի պարճառին հիւանդութի :

Իսկ հիւանդութիք՝ ըստ մեծի մասին ,
 յանկարգ ուտելեաց՝ և յըղձից ծագին .
 Իարձեալ ի ցրտոյ՝ և կամ ի քնոյ ,
 ի թանձր արեանէ՝ որ սակաւ շարժին :

գամ ամիսի , գուշակէ զհոսումն արեան Է ռնգունս :
 Զարի՛ որդնանման նշան է սակաւ արեան և Ֆլասակար :
 Զարի՛ իրնապալ սակաւ զգալի՛ նշան է հոգեվարուէ , ևն :

1 Սկզբնական պատճառք հիւանդութեց ծագին յան-
 բարեխառնութէ , որ լինի յուտելեաց և յըմպելեաց , ի
 ցրտոյ և ի ջերմութէ , ի բազում և ի սակաւ քնոյ , ի
 շատ և ի սակաւ աշխատանաց՝ այլովքն հանդերձ . որով
 ներքին չափակցութի կի՛ բարեխառնութին այլայլեալ
 պատճառէ զհիւանդութիս , և ապականին մասունք ինչ
 մարմնոյն և տկարանան գործողութիք . յորոց առ ի լի-
 նել զերձ՝ պիտի բարեխառն և չափաւոր լինել յամի՛ ե-
 թէ՛ ի սնունդս , և եթէ՛ ի վաստակս , ստէպ շարժելով .
 ոպ զի՛ ի կշիռ պահեսցի ներքին համաձայնութի կի՛ տրա-
 մագրուէ հիւթոց և գործարանաց . որում զհետ գայ ա-
 ողջութի : Օրինակ իմն՝ հաշն կի՛ հարբողին յառաջ դայ
 ի խժային և ի մածուցիկ մաղասոյ , նաև ի ստորեջ հիւ-
 թոց . որք ի դիւոյ ի կործս լճանան և պատճառեն զհաշ
 մարմնակցուցանելով զթելս կրծոց . որոյ դեղ է չայ , ե-
 թէ իցէ ի ցրտոյ եկե՛լ . ապա թէ ոչ սառն : Զէրքն կայաւ
 նայ ի կարի իմն խմորման արեան նախ ի ցուրտ , և ապա

Սակայն յայս ախտից՝ մարդիկ պահպանին ,
եթէ բարեխառն՝ իցեն յուտելին .

Վաղցր կենակցեալ՝ բերկրութիւն սրտին ,
յաճախ շարժելով յոր չար հիւթք ցնդին :

'ի ջերմութի համակեշով հանդերձ ցամաքութիւն լեզուի ,
և տաղնապաւ շնչառութիւն . որոյ են բազում տեսակք ,
և դեղն՝ քինայքինա : Մաշտոպութիւն է անտրամադրուե
ուղղոյ , որով մարդն զգածեալ անկարգ երևակայութիւն
տխրի և ցնորի , զի շողիք ելեալ յաղէաց դիմեն առ ու
ղեղն , և խոտվեն զողիս . որոյ դեղ է շարժումն , և մարմ
նաւոր զբաղանք և զբոսանք : Աստուծոյ պատճառի բա
զում անգամ յարբեցութիւն , 'ի շատկերութիւն , 'ի սաստիկ
հոգոց , և 'ի շատ քնոց . մանաւանդ անմիջապէս յետ կե
րակրոյ . որոյ դեղ է յաճախ երակահատութիւն , և 'ի կիր
առնուլ զիրս , որք պատճառեն զփունգալ : Թոյսոցս
նիւն է հիւանդութիւն թոքոց . յորս հիւթք և արիւն ապա
կանին , և փտին նոյն իսկ թոքքն , որոյ դեղ է կաթ իշոյ ,
բալասամ . ևն : Վերնոպութիւն պատճառի 'ի կարի յաճա
խութիւն կծու հիւթոց , որով փրփրի բերանն հիւանդին ,
զոր առ 'ի զգաստացուցանել պիտի վաւել զծխախոտ և
զփետուր : Խածուած օձի կամ կարճի փարատի , եթէ
փութով օձցի վերքն ճարպով իժի , արբուցանելով ստէպ
աղ իժի լուծեալ 'ի ջուր :

ՎՍԻՐԵՆԻՍՈՒՍՈՒԹԻՒՄՆԵՐ

123 Օրհնէ է Վերաբուժումնն :

Վերաբուժութիւնն է բուժիչ վիրաց ,¹
այլևայլ ցաւոց՝ կամ հիւանդութեց .
Կարէ հատանէ՝ ձեռօք մարդկային ,
բժժըչկէ զմարմին՝ ՚ի ձեռնն գործեաց :

124

Բայց վիրաբուժին՝ պատշաճ է և հարկ ,²
մարդակազմութե՝ նախ լինել տեղեակ .
Օննել և ուղղել՝ զոսկրր և զերակ ,
կտրել և կապել՝ երազ յաջողակ :

125

Պարձեալ և դեղոց՝ գիտել ըզբնութի ,
քաջ բարեխառնեալ՝ վարել լը տեղւոյն .
Սա մասնն գոլով՝ բժժըչկականին ,
պիտի ձանաչել՝ և ըզդարկ բազկին :

1 Վերաբուժութիւնն է աղատական արուեստս պիտանի յոյժ . որ առողջացուցանէ զհիւանդն շօշափմամբ ձեռնն, և ՚ի ձեռն գործեաց , ևս և արտաքին դեղովք : Այս արուեստ մասն գոլով բժշկականութե՝ իբր մի համարել լինէր ՚ի հնումն լը նմա . բայց ապա յերկուս բաժանեցին . և այնուհետև եղև ինքնին ուսումն գեղեցիկ և հարկաւոր Տի : Որոյ առարկայ է մարմին մարդոյ եթէ կենդանի և եթէ մեռեալ . որովհետև գործ նորա է առողջ պահել զմարդն , բուժել զհիւանդութիւնն , և զննել զգործարանս մեռելոց : Թողում զվերաբուժութիւն կենդանեաց կամ անասնոց , որ է տեպակ սորա :

2 Վերաբուժն աղգակից գոլով բժշկին , հարկադրի հմուտ լինել մարդակազմութե , սննդաբանութե , արտաբանութե (քննելով զտեսակս ինչ մասնաւոր հիւանդութե)

Ետին յաղթանակ՝ քաջ վիրաբուժին ,
 վրձարել զգործ՝ արագ և հեշտին .
 Եջողակ զննել՝ ապահով կտրել ,
 առանց փնասու՝ զհիւանդըն հաճել :

Վ.ՆԱՐԵԱՆԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ

127 . Օ՛րհ է վաճառահանութի :

Վեղեցիկ արոճեստ՝ ՚ի դարըս նախնի ,
 յամենայն ազինս՝ յայտնի ճանաչի .
 Վրնէ վաճառէ՝ և փոխանակէ ,
 վասըն շահելոյ՝ յիւրում վաճառի :

128

Սա է պիտանի՝ քաղաքականին ,
 օգուտ աղքատաց՝ օգուտ քաղաքին .
 Տէրութիք պանծան՝ և աշխարհ շինի ,
 արդէամբք հանձարով՝ վաճառականին :

129 Ա՛րբ սկսա :

Որչափ աշխարհ հին՝ նոյնչափ և սա հին ,
 այլ յայնժամ միայն՝ փոխանակէին .
 Որպէս ՚ի մոսկովս՝ և յամերիկայ ,
 փոփոխ տան առնուն՝ զկէնաց պիտանին :

(Թեց և վերաց) , և ապաքինութե , որով վարէ լը տեղ-
 ւոյն զգեղս և զսպեղանիս :

1 Վաճառականութիւն է արոճեստ Յաշէն և պիտա-
 նի ՚ի սկզբանէ անախ մտորկուես . զոր և ՚ի հնունս այն-
 չափ ՚ի յարգի ունէին հեթանոսք , մինչև եդին շածս վա-
 ճառականութե (646) :

130 Ո՛րք եղէն նշանատորք :

Վրչանաւորքն են՝ ՚ի սոյն արուճեստին ,
 նախ փիւնիկեցին՝ և եգիպտացին .
 թայց հայոց վաճառք՝ նոցա յաղթեցին ,
 յորոց անց ապա՝ ՚ի հօլանդացին :

131 Օ՛րքն էնչ պիտի գիտէլ :

Սաճառականին՝ անկ է քաջ գիտել ,
 զթուճաբանութի՝ փոյթ լի փոյթ հաշուճել .
 Օրննել ճանաչել՝ ըզնիւ թ վաճառաց ,
 նաև ըզգրամս՝ այլևայլ տեղեաց :

132

Վարձեալ պիտանի՝ նմա ուսանիլ ,
 զաշխարհագրութի՝ և լեզուս խօսիլ .
 ըզչափ և կշիռ՝ օտար քաղաքաց ,
 ըզյարգ և ըզգին՝ ՚ի մըտի ունիլ :

133

Մյլյէտին հընարք՝ վաճառականին ,
 լինել փութաջան՝ արթուն յաւնելին .
 խոհեմ և պարկէշտ չափաւոր ՚ի ծախս ,
 պարզ ՚ի հաշուագիր՝ և հաւատարիմ :

1 Երևելիք ՚ի վաճառականութե էին նախ փիւնիկեցիք եգիպտացիք , աթենացիք , և հոռվմայեցիք . որք հնարեցին հատանել զգրամս և գնել այնու զիրս . յետոյ ծաղկեցան և վենետիկեցիք . որոց ամենեցուն յաղթեաց հայոց վաճառականութե , որնպս վկայեն նոյն խնկ եւրոպացիք . մինչ զի՝ ՚ի հնդկիս և յայլ տէրութիս հայք ծաղկեցուցին զվաճառականութին . և տիրապէս անոճանեցան վաճառական նաև յօտարաց : * Հայք (ասէ մարգինիէ) « կարի իմն անձնատուր են վաճառականուէ և ամենայն » մտադրութի պարապին ՚ի նոյն . . . սորս են արուճեստապետք ոչ միայն վաճառականուէ արևելից այլ նաև մեծապէս ձեռնտուք վաճառականութե մեծամեծ քաղաքացն եւրոպիոյ || : Սոկայն այժմ հօլանդացիք , և առաւել անգլիացիք ծաղկե՛լ են յոյժ ՚ի վաճառականուէ :

ՆԱՆՈՒՅՈՒԹԻՒՆ

134 Օ՛րն է նառադդոմբէն :

Սառուզղուծին է՝ ուսումըն նախնի ,¹
ուղղէ կանոնէ՝ ըզնաւս ՚ի ծովի .
Բստ պէսպէս հողմնոց՝ ընթացից ջրոց ,
սըրընթաց ճեմէ՝ նաւն յալեաց միջի :

135

Սա ուսուցանէ՝ քաջ նաւապետաց ,²
քաջ տեղեկանալ՝ կողմնացոյց գործեաց .
Վիտել զքարձրուծին՝ շարժումն արևու ,
զըննել ըզբեւո՝ ըզդիրս աստեղաց :

136

Վուշակէ շրջանս՝ հողմնոց տեսակին ,
չափէ զսաստկուծին՝ ըստ աստիճանին .
հաշուէ իմանայ՝ գոլով նաւն յանդրին ,
յոր կէտ է երկնից՝ յոր կողմ ցամաքին :

1 Մառուզղուծին է մակացուծի, որ ուսուցանէ կանոնաւորել և ուղղել զընթացս նաւուն, որոշելով զասհման երկնից՝ Ը որով կայ, և չափելով զընթացս ճանապարհի իւրոյ : Վարձեալ՝ աւանդէ կանոնս զննել զգիրս աստեղաց, և զշրջանս ըւսաւորաց, հմուտ լեալ հողմնոց և կողմնացոյց գործեաց այլովքն հանդերձ :

2 Սա ուսումնս ընդհանուր անուամբ կոչի Մասալմբոմբէ և բաժանի ՚ի Մասալաժոմբէ . ՚ի Մասապոմբէ կմ՝ ՚ի Մասաբիոմբէ . և ՚ի Մասաուղոմբէ : Չառաջնոյն գուշնաբանեսցուք ՚ի Ճարտարապետութի (421) : Եկնն՝ որ ՚ի նոյն գլխի, ոչ այլ ինչ է, բայց եթէ որոշել զասպահով վայրս խարխիս արկանելոյ, պարզել և անխորհել զառաքատս և այլ սոյնպիսիս : Իսկ երբն է մասն ուսումնաւ կանուծի, զոր արդ սահմանեցաք :

Գրտանէ զմիջոց՝ ծովու ցամաքին ,
 զհեռաւորութի՛ կողեաց ճեղերին .
 Թէ՛ սրջափ մնաց՝ գընալ՛ ի տեղին ,
 սրջափ հեռացաւ՛ ի վայրէ ելին :

138 Օ՛րն է կողմնացոյցն :

Խակ կողմնացոյցն է՛ տուփ ինչ բողբոջի ,
 յոր կայ հողմացոյց՝ դրեալ՛ ի Թղթի .
 Արք յերեսներկու՝ մասըն բաժանին ,
 այնչափ և հողմոց՝ անուճանք առ նմին :

Դարձեալ կանգնեալ կայ՝ ի հողմացուցին ,
 սըլաք մագնիսեան՝ որ ցանգ երբերին .
 Մատամբ ցուցանէ՛ ըզկողմ՝ բեւեռին ,
 ըզգիծըս հողմոց՝ ըզգիրըս նաւին :

1 Սա որոշեալ զհողմագիծս չափէ զսաստկութի՛ , և զսատիճանս հողմոց , և զհեռաւորութի՛ նաւահանգստին՝ ուստի ել , և ուր գնալ ունի . ևս և զտարակայութի՛ երկուց ծովեղբերեայ տեղեաց . զորմէ տես՛ ի գիրս Նաւուղ զութէ . գիրք ք . գլ . ք . ևն :

2 Կողմնացոյցն է գործի նաւորդաց , յորում գոյ պատկեր հողմոց երեւցուցիչ հորիզոնի (212) . որ գորով բաժանեալ յաստիճանս և ՚ի մասնկուճս , ցուցանէ զտրեսին կողմունս Յի , և զկէտս , ուստի շնչեն հողմք . որով ուղղեալ նաւն գնայ անվրէպ յընթացս իւր :

3 Օրինակ իմն՝ Յ . ան կողմնացոյց գործին « Բ գ ունի ՚ի միջավայրի զսլաքն » . որոյ կողմն « օժեալ է մագնիս քարամբ մասին հիւսիսոյ . վնյ ՚ի դառնալն այսր և անգր՝ հուսկ յետոյ դադարի ՚ի բեւեռն հիւսիսոյ իբրև յիւրում կէդրոնի . ուր և ցուցանէ զգիծս հողմոց : Նոյն է և մագնիսն հարաւային բեւեռի , զոր վարեն նաւորդք յանցանէլն անգր քան զհասարակածն : Գործածութի՛ կողմնացուցին սկսեալ համարի ՚ի 13 դարուն : Քանզի մարկոս նաւապետն վենետկեցի՛ ՚ի 1260 եմոյծ յերոսոպայ , ուսել ՚ի շինաց . որք վաղու ևս ՚ի գործածէին լնասից ոմանց :

140 Ո՛ր էղև գորի :

Պարտիչ սոյն ուսման՝ ՚ի սկըզբանց անտի ,
է նոյ նահապետ՝ երկրորդ հայր երկրի •
Որոյ և որդիք՝ յետ ջըրհէղէղի ,
առ մեզ հասուցին՝ զայս գիւտ պիտանի :

141

Ի այց ծաղկեցուցիչ՝ նախ վենետկեցին ,
ապա հոլանտեզք՝ և գաղղիացին •
Լայտմ մի միայն՝ պայծառացուցիչ ,
ինքնակալ ծովու՝ քաջ անգղիացին :

ԵՐԱԺՂՈՒԹՅԱՆ

142 Օ՛ր էրաժշտութիւն :

Ի մակացութի՛ն կանոնօղ ձայնի ,
նէրդաշնակութե՛ն նոճապարանի •
Որ և համեմատ՝ անոյշ գեղգեղեալ ,
բերկրեցուցանէ՛ զըզգայուն ոգի :

1 Սկիզբն նաւավարութե՛ն համարի նոյ նահապետ շէ
նօղ նաւաձե տապանին • Իսկ ծաղկեցուցիչք ՚ի հին դարս
էին փիւնիկեցիք և կարկէդոնացիք • ապա սպարտացիք
և հուսթիացիք • հուսթիացի վենետկեցիք , և այլք :

2 Երաժշտութիւն է ազատական արոճեստ , որ գեղ
գեղէ զնէրդաշնակութիւն և քաղցրաձայնութիւն պէսպիսու
թիւն հնչմանց : Իբրև զի յորժամ ձայնքն ելևէջութիւն իմն
համեմատ դասաւորին կմ զուգարիւն՝ ելանէ ձայն նէր
դաշնակաւոր քաղցր ՚ի լսել : Այն զի ՚ի համաձայնութե՛ն
ընարական հնչմանց ոչ այլ ինչ յառաջ գայ , բայց եթէ
քաղցրաձայնութիւն , որ ՚ի լատ՝ կոչի Մուսիկա , առեալ
զժագումն ՚ի մուզայից , որք էին քնարահար շիճուհիք
ըստ առասպէլեաց (680) :

Ր զկանոն սորա՝ նախ տայ թոճաբան ,¹
որով ձայնք կարգին՝ ՚ի յու թ աստիճան .
Որոց զուգադրեալ՝ այլևայլ կարգաւ ,
գեղգեղէն ըզձայն՝ և նոճագարան :

144 Աս քանի՛ :

Արկու ես տեսակք՝ երաժշտութեան ,²
մինքն ճայնաւոր՝ մին գործիքայն .
Նա միայն երգով՝ հաճէ զլըսելիս ,
սա հարկանելով՝ ըզնոճագարան :

1 Այս ուսումն ոչ էթէ թոճաբանական կանոնօք վա-
րի , այլ ՚ի ձեռն թոճաբանական յաւաջատութե կարգէ
կի՞ զուգադրէ զձայնս . զի սկսեալ ՚ի ւ ձայնէ , որ են
թագրի ցածածայն , բարձրանայ մինչև ցութերորդն աս-
տիճանաբար : ՚ի սոցանէ ծագին այլ ամենայն ձայնք և
կիսածայնք , որք են ՚ի մէջ ձայնի և ձայնի : Իսկ ձայնք
եղանակաւորին ամանայն . ը որոյ յաւէտ և նոճալ եր-
կարելով , կամ քարշելով գեղգեղի ձայնն : Յերաժշտու-
թե պարտի լինել և հանգիստ . ուր այն ասի կատարեալ
հանգիստ , որ տեէ ՚ի չորս բաղխմունս . կէս ասի , որ
տեէ յերկու բաղխմունս . քաւորդ կոչի , որ տեէ ՚ի մի
միայն բաղխումն , ևն . յորմէ գտանի քանակութի և որ-
պիսութի խաղց : Օրինակի աղագաւ , զտաւս այբու-
բենից ենթագրեալ ՚ի տեղի ձայնից՝ էթէ զուգադրես-
ցին ձայնքս շ է շ է . հնչեն զներգաշնակութի իմն քաղցր
՚ի միջոցի միոյ բաղխման , ը որոյ սկսանի Փէւրէֆն հի-
ւամ : Բարձեւ էթէ զուգադրեսցին ձայնքս այսու կար-
գաւ շ է շ է արտասանի այլ ներգաշնակութի . ըստ որոյ
սկսանի Փէւրէֆն դեմի : Այլ այսր ուսման կատարել
ծանօթութի թերևս ՚ի լոյս ընծայեսցի ը ժամանակին ,
հանդերձ խաղիք կի՞նօթայիւք :

2 Չայնաւոր երաժշտութին է յաւէտ պատուականա-
գոյն քան զայլս , յն . Բ . որ ՚ի ձեռն շնչափողին քօ երգի .
ուր թորք . Բ են ՚ի տեղի փրոց . օդն է նոյն իսկ
չունչն ձայնահան . և շնչափողն է ծորակ շնչաբեր , իսկ
լեզուակն ք գեղգեղից ձայնի . որպս ՚ի սրինգն փոքրիկ
ձեղքոճածն՝ յոր հպի բերանն : Ըստ որոյ օդն ՚ի թորոց

145

Եւ կըրկին սորա՝ գործք զարմացական ,
 կըրկնակի ազգօղբ՝ սըրտի զգայական .
 Սինըն գըրգըռէ՝ զարիւն յեռանդեան ,
 միւսըն խաղաղիչ՝ սըրտի ամբօխման :

146

Սուաջին շարժէ՝ ըզթմըեալ հոգին ,
 դիմել եռանդեամբ՝ ՚ի գործ պիտանին .
 Սորանոր տալով՝ զօրու թի՛ սըրտին ,
 մըղէ ըզկընի՝ վայելչականին :

147

Երկրորդն ըզչարեալ՝ սիրտ ՚ի բարկու թի՛ ,
 ածէ խաղաղէ՝ ՚ի հանդարտութեան .
 Որսէս հանդարտէր՝ դաւ թի՛ նո՛ւագարան ,
 ըզմեւամաղձոտ՝ ոգի սաւուղայն :

՚ի շնչափողն առաքեալ եթէ ընդ լեզուակն ճնշելով ՚ի
 դուրս ելանիցէ թրթումունս զարթուցանէ ՚ի ձայնա-
 հան լարս փոքր լեզուին . իսկ ձայնահան լարք կծկե-
 լով և լելայնելով զայլևայլ ձգանս լուռնին լը սկսակ-
 սու թի՛ ձայնից արուճեստականաց . որք լը բերան և ընդ
 ոնգունս արտասանեալ քաղցրուք իմն եղանակաւորին .
 իսկ շարժմամբ լեզուի և շրթանց բանք յօգաւորին . զի
 ՚ի գիշոյ մարգոյ ՚ի դուրս կորզեալ շնչափողն օի Գ . եթէ
 շնչեսցի լը օ , սնցեալ օդոյն լը լեզուակն Գ հնչէ զձայն
 մարգոյ ՚ի ձեռն թրթուման յօգակապից լեզուակին :
 Այլ քանզի մանկանց՝ կանանց՝ և ներքինեաց նեղագոյն
 է լեզուակն , և կարճագոյն ձայնահան լարքն , նմին իրի
 սրագոյն ձայն հնչեն :

Ի Երաժշտական ձայնք սթափելի զարթուցանեն ըզ-
 սիրտս և զոգիս մխիլ ՚ի գործ ինչ պիտանի : Պատմի վն
 աղեքսանդրի , թէ յաւուր միում նստեալ ՚ի մէջ բարե-
 կամաց իբրև լուճաւ զձայն պատերազմական նոճագարա-
 նաց՝ այնչտի գրգռեցաւ արիւն նր , մինչև առեալ ըզ-
 սուրն գիմեաց արտաքս՝ պատերազմիլ կամելով : Սոյն
 օրինակ ամբեալ զլսելիս խաղաղէ զարկեացեալ և զմե-

Վարձեալ սոյն ուսումն՝ ՚ի սկզբանց անտի ,
յեկեղեցականս՝ եղև պիտանի .

Որով շարժեցի՝ մարդն յերանուծի ,
ի քաղցրերգութի՝ վերին կայրրդի :

149 Ո՛ր էղև Գրիգ :

Վըտիչ գիտութես՝ ՚ի դարըս նախնի ,
ի բանաստեղծից՝ ապողոն կարծի .

Իայց յանձաշունչ՝ յովբաղ զամեքեան ,
հայր և հեղինակ՝ նուագաց պատմի :

150

Իսկ ծաղկիչ սորա՝ յաւէտ ճանաչին ,
և կամ կանոնիչ՝ եբրայեցիք հին .

Սահայն ՚ի մեր դար՝ ազինք ամենայն ,
այլևայլ գիւտովք՝ պայծառացուցին :

Համադձոտ սիրաս մարգկան , ուղ ձայն դաւթեան տաւ
զի սթափեր զոգի սաւուղայ : ան ԽԳ . ԳԼ . ԺԷ . 9 :

1 Երաժշտութեն ծննդակից դուրով մարդկութեանս
տիտիչ է ոգւոց , և փարատիչ ախտից ինչ (821) , ցոր
չափ ոչն վարի շարաշար . նմին իրի պիտանի եղև ՚ի կարգս
եկեղեցականս ՚ի սկզբանէ անտի մինչև ցայժմ . քանզի
զգայական ոգի մարդոյ պէտս ունի այսպիսի ամբիչ գեղ
գեղանաց . ուղ զի այնու քաղցրութի սթափեալ հոգին
վառեցի ՚ի սեր հրեշտակային քաղցրածայնուէց յանձա
տեսութե անդ . որ է լրումն փափսքանաց և վախճան
իմացական բնութեց :

2 Հեթանոսք զգիւտ երաժշտութե ընծայելին ապր
զոնի շնչ (662) . իսկ ծաղկեցուցիչ նր գնէին զորփէոս
քնարահար (715) : Սահայն գրի յանձաշնչի թէ յովբաղ
որգի զամեքայ ՚ի սերնդոցն կայենի ուսոյց զերգս և զբը
նարս . որպէս և եղբայն նր թոսէլ զգարբնութե : Ժն .
Դ . 21 :

ՆԱԼՐԶՈՒԹԻՒՆ

151 Օրհնէ և նկարչութիւն :

Արդ նկարչութիւն՝ հանէ նրկարէ ,
ըզպատկեր իրաց՝ ըստեղծագործէ .
Ի ձեռնն գրծից՝ այլևայլ գունոց ,
զառարկայս աչաց՝ առաջի առնէ :

152

Որով և հանձար՝ մըտաց մարդկային ,
ըստեղծու ըզտիպ՝ ՚ի դաստառակին .
Որ խուն մի յառաջ՝ միագոյն պաստառ ,
ապա սորք լէրինք՝ պատկերք ՚ի նմին :

153

Եթէ ըստ ձեռնոյ՝ մարդկան գծեսցի ,
այն գրծագոյն պաստառ՝ ՚ի մարդ փոխարկի .
Եթէ լը բուսոց՝ և կի՛ կենդանեաց ,
անտառ ծառալից՝ յայն փոխաբերի :

1 Նկարչութիւն է պատական արճեատ . որ ուսուցանէ նկարագրել կամ ներկայացուցանել զառարկայս , կամ զնկարագիր զինչևիցէ իրաց ՚ի ձեռն ուրճական գծից և գունոց : Այդ և պարիէրահանութիւն , իբր այն թէ՛ զպատկերս մարդկան և անասնոց հանէ ՚ի լոյս և կենդանագրէ : Բայց ՚ի գծագրելն զպատկեր մարդոյ պարտ է լը կանոնի չափակցել զամ՝ մասունս մարմնոյն . զի զեամ՝ անգամք մարդոյ ունին համեմատութիւն լը միմեանս . որով լինի մարմնն բարեչափ և գեղեցիկ . ապա թէ ոչ՝ լինի այլանդակ (445) . զի գեղեցկութիւնն է համեմատութիւն ամ՝ մասանց . զի մէջք մարդոյ ց է կեդրոն կամ կէսն սահակին . որում հաւասար է միջոցն թեւէ ՚ի թեւ . իսկ սրունքն չ և լանջքն չ են քառորդ մասն . ՚ի լանջաց լը բերանն և ընդ գագաթն են հաւասար . ևն : Տէս ՚ի յնն կն :

154 Երեմիայի Կիճեալ է :

Մ. յս արուճեստ հիմնի՝ ըզգիւտ հանձարել,¹
 ուրուճականօրէն՝ համեմատ գըծել .
 Ղեղեցիկ կարգաւ՝ գոյնըս նկարել,
 խառնեալ ըստուճերաւ՝ չըքնաղ յօրինել :

155

Իսկ վըսեմութի՝ շըքեղ պատկերին ,²
 է կենդանութի՝ այլև կիրք նօրին .
 Խոռոչք և այտուցք՝ ի ձեռն ըստուճերին ,
 լերինք և հօվիտք՝ ի դաստառակին :

156 Իս քանի՛ կերպիս նկարին :

Մ. ւարկայք իրաց՝ հանին նկարին ,
 իւղազանգ ներկով՝ ի դաստառակին .
 Ղարձե՛լ պարզ ջրով յօրին՝ ի պաստառին ,
 և կամ կիտուճածով՝ ի պղինձն յոսկին :

1 Պատկերահանութե է՝ նախ զգիւտս հնարել կի՛
 նօր իմն եղանակաւ զնկար իւր ձեւացուցանել, և այն
 համեմատ ը իւրօքանչիւր անդամոց և մասանց վայել
 լուչ չափակցեալ . յորմէ լինի՝ զի փոքրիկ պատկեր ինչ
 ներկայացուցանէ զմեծ մարդ և ոչ զմանուկ կի՛ զթզուկ :
 Պահանջի դարձեալ բարիօք բազադրել զգոյնս . և ի
 նկարելն համեմատութի իմն զգոյնս կարգել ստուճերա-
 խառն : Ուր գլխաւոր գոյնք են 5 . սպիտակ , դեղին , կա-
 ռմեր , կապոյտ , սևա . որոց բազադրութի ելանեն անբաւ
 գոյնք . զի դեղինն խառնեալ ը կապոյտ կի՛ ը սեւա ար-
 տագրի կանաչ . կարմիրն խառնեալ ը դեղին առնէ ծի-
 բանագոյն , և կապոյտն խառնել ը կարմիր առնէ մանու-
 շակագոյն . այլ զայսոսիկ գործածուի՛ յաւէտ լինի ու-
 սանիլ քան վարդապետուի :

2 Ի հնուսն հռչակաւոր էին պատկերք նկարեալք
 յապեղեսէ կովացոյ , որ գուրով Ժմիակից մեծին աղէք-
 սանդրի այնչափ գերազանցեաց ի պատկերահանութե ,
 մինչև աղեքսանդր պատուճեր ետ զի մի այլ ոք նկարեացէ
 զպատկեր իւր , բաց յապեղեսէ . որ և նկարեաց զեր-
 կուս գերազանց պատկերս ավրոգիտեայ և զերիվար մի

157 Օխնչ պիտի ուսանել :

Պատկերահանին՝ հարկ է ուսանել,¹
 քնդ օրինակութի՝ ուղիղ գծագրել.
 Հմուտ պատմութեց՝ երկրաչափութե,
 արթուն յարուճեստին՝ եռանդուն լինել :

Ք.Ը.ՆԴ.Ը.ԿԸ.ԳՈՐԾՈՒԹԻՒՆ

158 Օխնչ է չանդախագործուելան :

Ըրուճեստ քանդակիչ՝ է քարի փայտի,²
 քաջ փորագրելով՝ ի ցոյց պատկերի.
 Որով բիրտ հատոր՝ ի մարդ փոխարկի,
 և կի՞ յայլ տեսակ՝ կենդանակերպի :

159

Ըյս արուճեստ ՚ի հնումն՝ էր վրսեմ յարգի,
 գործ գիւցազնական՝ յօրինող բազնի.
 Քանզի գրրօշուճածս՝ ՚ի պաշտօն ուսկաց,
 սոյն արուճեստ գործէր՝ հին հեթանոսաց :

այնչափ ճարտար կենդանագրութի, մինչ զի (ույ պատմեն) ՚ի տեսանել զնա երիվարաց՝ խինջային :

1 Պատկերահանն ոչ միայն պարտի հմուտ լինել նախնի պատմութեց, առասպելեաց, անդամազննուէ, և ուսումնականուէ, այլև պահանջի լինել եռանդուն, երկայնամիտ և սիրող արուճեստին իւրոյ. որով ՚ի նկարելն զինն՝ քաջ երևակայեալ նման գործէ բնականին, կի՞ սկզբնատպին : Սկիզբն այսր արուճեստի անյայտ. սակայն երևի թէ հին է յոյժ. որոյ գոյր և շնծ ՚ի դարս հնութի :

2 Քանդակագործութիւնն է ՚ի կարգի ազատական արուճեստից, որ ուսուցանէ համեմատ գրօշել զայլևայլ ձևս և քանդակս ՚ի քարէ, ՚ի փայտէ, և ՚ի մետաղաց. որ և կոչի Արձանագործութի :

Սկիզբըն սորա՛ ՚ի դարբըս նախնի ,¹
 յետ ջըբհեղեղին՝ լինեւ չաւանի •
 Որոյ հընութեան՝ յաճաղնչի ,
 յայանի վկայէն՝ կուռքըն լաբանի :

161 Ո՛ր արչան ասի երևելի :

Գործ ճարտարագործ՝ այն արձան կոչի ,²
 յորում կիրք մարդոյ՝ հասեմատ գործի •
 Սակայն մի միայն՝ արձան պանծալի ,
 ավրողիտեայ դից՝ ՚ի փարեզ պահի :

1 Այս արձեւս թո՛ւի թէ ծաղկեցաւ ՚ի դարս հնութե յաւուրս նինոսի • սր իբր 500 ամբ յետ ջըհեղեղին , զառաջինն դրօշեաց զպատկեր որդւոյն իւրոյ (7) • որոյ հնութե քաջ ապացոյց են կուռքն լաբանու յամի Ծի 2260 • ծն • լն • 20 • զոր գողացաւ հռաբէլ դուստր նր : թո՛ղ զորթն ոսկի , զոր կանգնեցին իէլացիք յանապատի • էջ • լԻ : Ըստ գրեւոյ պլինիոսի զառաջինն ծաղկեցուցին զքանդակագործութին երկու անուանի ճարտարապետք կրետացիք , սկիւլէ և դիպլինոս • որք և շէնեցին զառնապատկերն հերակլեայ սղնձաձոյլ ոսկեղօծ , ևս և զարձանս անահայ , և աթենասայ : Այս արձան հերակլեայ կանգնեալ էր յաշտիշատ քաղաք հայոց • զոր = Արտաշէս գտեալ յասիա , եբեր ՚ի հայս :

2 Այս արձան ՚ի բազմաց հետէ պահեալ էր յերկիր թօսքանայ • բայց յաւուրս մեր գաղղիացիք բարձեալ անտի , կանգնեցին ՚ի մայրաքաղաք իւրեանց ՚ի փարեզ :

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԳ

ԳԻՏՈՒԹՎԻՒՆԵՐ

162 Օ՛րն է գիտութեան :

Ստոյգ բացայայտ՝ պայծառ ճանաչումն ,¹
այլևայլ իրաց՝ հոչի գիտութիւն .
Հաւաստի փորձի՛ւ՝ ապացուցութի՛ք ,
հարկաւ բացատրի՛ էից զինչութիւն :

163

Ապացուցութի՛ք՝ յայնժամ իրք յայտնին ,²
երբ ըստոյգ պատճառք՝ առ նրմին յարին .
Իսկ ըստոյգ պատճառք՝ հպակցիլ պարտին ,
յայտնի ըսկրզբանց՝ որով ճշմարտին :

164 Եւ յայնի սկզբունք :

Ինեւ չըլինեւ՝ նոյն ՚ի մի կետին ,³
կամ հալ և ոչ կալ՝ է անհրնարին .

1 Գիտութիւն սահմանի . յայտնի և անվտեպ ճանաչումն զինչեւիցէ իրաց ՚ի ձեռն պատճառաց . ուր առանց պատճառի ոչ լինի գիտութի : Օրինակ իմն՝ եթէ ասացի , լուսինն խաւարեցաւ , վն զի երկիրս ք մէջ անկաւարեաւ և լուսնի . ահա այս պատճառ անգէն ապացուցանէ զլինեւ իրին ճշմարիտ . որ յայն սակս կոչի գիտութի , զի ստացեալ լինի ՚ի ձեռն փորձոյ և ապացուցութի :

2 Ապացուցութիւն է ուսումնական ցուցումն , կամ բան , որ ՚ի ձեռն յայտնի և ըստ ինքեան ծանուցեալ սկզբանց ծնանի զգիտութի , քննելով զհարկաւոր կապակցութիւն երկարանչիւր մասանց հաւարարանութի :

3 Բազում են յոյժ յայտնի սկզբունք թ ինքեան ծա

Եւ յս են սկզբունք՝ յայտնի և մեկին ,
յորմէ խոհուծիք՝ անշուշտ հեռակին :

165 Եւ և գերագոյն սկզբունք :

Եւ և ըսկըզբունք՝ յայտնեալ արարչին ,
որք պարունակին՝ յածաշնչին :

Որոց ըյս մտաց՝ խոնարհիլ պարաին ,
զի են ճշմարիտ՝ բանք անձային :

166 Ոյք են բանք հասարոց :

Իսկ բանք հաւատոյ՝ այն խնդիրք կոչին ,
զորոց երբ վիճեն՝ հարկաւ մուրրին :

Որք են պարսիակեալ՝ ի հանդանակին ,
նաև ըսկըզբունք՝ բարոյականին :

167 Եւ ոյք երկբայախանք :

Եւ դարձեալ խնդիրք՝ զորոց երբ վիճին ,
չիք երկիւղ կասկած՝ եթէ մուրրին :

Նուցեչք . որք այնպէս գիւրբմբունեղի են խնացոյ մտաց ,
զի անմարթ է ուրանալ զայնս : Որպիսի են սոքին .
Անհար է թէ և նոյն իրի՝ Լիւել և ու Լիւել ՚ի Բոս Գիթ :
Բուրն ԹԺ է ասն զման : Յուլելն ու Լիւել Լիւի : Երկիոյ երեւ
սունէ Վոյ , ևն : Յորոց հարկաւ հեռակին խոհուծիւնք և
ճշմարտութիւք իրաց : Օրինակ իմն՝ պեարոս խօսի , ու
բեմն է կենդանի . եթէ որ ուրասցի զայս հեռուութի ,
ասելով թէ ոչ է կենդանի , անկանի ՚ի հակասութի .
զի ենթադրէ , թէ գոյ , որով խօսի . և միանգամայն ոչ
գոյ , զի չէ կենդանի . որ է անհնարին :

1 Ածարանական սկզբունք են՝ որք պարունակին յածաշ
շունչ գիրս , կի՛ յանդիր աւանդութիս . որոց պարախիք
խոնարհեցուցանել զմիտս , զի են բանք այ՝ ՚ի վեր քան
զբան :

2 Բանք հաւատոյ կոչին ամ վճիւրք ժողովոց . մասունք
հանդանակին . սկզբունք բարոյականին այլովքն հան
դերձ : զի * Հաւատք առանց գործոց մեռեալ են || :
զոր անհնար է ուրանալ : յի . Բ :

3 Եւ սոքա են փիլիսոփայական խնդիրք անկեալք լե
վիճարանութի . զի են՝ Արդեօք ՚ի վեր քան զաստեղս

Որպէս ըզձեռոյ՝ և շարժման երկրին ,
 Հաստատիլ կարեն՝ որ ինչ և կարծին :

ԼՍՈՒԼՆԼԲԼՆՈՒԹԻԿՆ

168 Օ ինչ է անբանութիւն :

Լ՝ բան զոյ՝ գիտութի՛ վերին ,
 որ տայ ճանաչումն՝ գերբընականին .

Սրբէ ըզլէզու՝ անճարանին ,
 ճառել զոյ՝ զիրաց անճառին :

169 Լ՝ ի քանի՛ս բաժանի :

Լ՝ յս ծով գիտութե՛ վսեմ պանծալի ,
 յանճարանից՝ յերևս վերածի .

Ի՛ գերբընական՝ ի բարոյական ,
 և ի բընական՝ ուղիղ բաժանի :

գտանի՛ նիւթ ինչ , թէ անբաւ դատարկութի . կ՛մ թէ
 ձե երկրիս բոլորանի է , թէ առ բեւոօք տափարակ .
 զորն և պնդեսցէ որ՝ ոչ մնլորի ՚ի հաւատս :

1 Աճարանութին ըհանրապէս առեալ նշանակէ բան
 զոյ . զնոյն նշանակէ և յունական անունս թիւօրդիւ . այս
 պէս կոչէին . հեթանոսք և զիւրեանց շնծարանութիւն
 (613) : Աճարանութին նախ բաժանի ՚ի նախաբիւ . և
 ՚ի գաղափարեալ : Առաջինն է նոյն խիւ անբանութիւն
 անճարանական . որով զէութի իւր ճանաչէ և բովան-
 դակէ իւրե . որ է անհասանելի մտաց : Իսկ երկրորդն
 յառաջնոյ անախ է ածանցեալ և հաղորդեալ բանակա-
 նաց . և այս երրակի՛ նախ անհասանելիսն Քաւարանութի . որ
 պիտի էր անճառելի անճարանութիւն քի : Երկրորդ՝ հա-
 զորդութի՛ որպիսի է անճարանութիւն երանելեաց . որք
 տեսութիւն անճարանութիւն խորոց հասու լինին և անճա-
 բանեն : Երրորդ յայսպէսն որ է անճարանութիւն ուղեւ
 բաց յայսպէսն անճարանութիւն ձեռն հաւատոյ և լուսոյ բանին :

Տալ զայն ճանաչումն՝ է բրնականին ,¹
 գոր անդուստ մարդիկ՝ զաստուծոյ ունին .
 'ի ձեռքն գործոց՝ տիրական մատին ,
 'ի ձեռքն լուսոյ՝ մեր բրնականին :

Եւ յուս անսփոփա՛յք հին ,
 գաին զարարիչ՝ էակըն անծին .
 Յորմէ ամենայն՝ գործք տիեզերին ,
 յանշարժ շարժողէ՛ շարժիլ ասային :

Գերբնականն է այն՝ որով հաղորդին ,²
 մտաց մարդկութե՛ լոյսն անսփային .

1 Բնական անփոփոխ է նոյն իսկ հասարակականութի (191) . որ թողեալ զնիւթականս վերանայ յաննիւթական էակս , և մինչև յէական անծին . որ է անփոփոխ բնական լուսով անփոփոխութե . զոր տպաւորեալ է արարիչն 'ի միտս մարդկան առ 'ի ճանաչել զնա 'ի ձեռն գործոց իւրոց . ուն ծանեան և հին փիլիսոփայք 'ի ձեռն հինգ պատճառաց . ա Վոյ շարժումն , ապա գոյ և շարժող , կի՛ առաջին պատճառ . յորմէ շարժին և պատճառին արարածք : Է Գոն ներքնգունական էակք , որք կարեն լինել և ոչ լինել . ապա գոյ և հարկաւոր էակ անստեղծ , զի տացէ նոյ զգոյ երբ կամի : Է Գոն էակք հոռնաւոր կի՛ չափաւոր . ապա գոյ և անհուն կի՛ անսահման էակ ծայրագոյն 'ի վերջին ծայր կատարելուէ , քան զոր գերագոյն ոչ կարէ լինել : Է Գոյ յճի՛ կարգ և ճարտարութի ամենահրաշ , ապա գոյ և ճարտարապետ կարգադրիչ ամենխմատ . լն սյնմ * Երկինք պատմեն զփառս , , , , : Է Վկայութիք հասարակաց զնոյն յայտ առնեն անփոփոխութեք , թէ գոյ անփոփոխ վկայէ մարտիրոս փիլիսոփայ : * Մի է (ասէ) իւրաքանչիւրոց յամ երկրի միա , , , , ձայն օրէնք և բան . թէ մի է անփոփոխ , ամենեցուն թի՛ր , և հայր || :

2 Գերբնական անփոփոխութի է խմատութի , որ 'ի սկզբանց յայտնելոց անուստ՝ ճառէ յալագոս անփոփոխ և անփոխ .

՚ի՛ սբ հաւատոյ՝ գերբնականին ,
 և յամենայնէ՛ որ ՚ի՛ սբ գրքին :

նոց, և ստոյգ եզրակացուցանէ արամբանորէն ՚ի բան հաւատոյ • զի ույ՛ հաւատքն էն առ ւած և առ ւածայինս • նոյնպէս և ւածաբանութին յածի զւով և զւածայնովք • որոյ և նիւթական առարկայ է այն ւած , որ յայտնեալ է յնոյ, և պարունակեալ ՚ի սբ գիրս և յանգիր աւանդութիս, նախ ինքն ւած , և ամ որ հոյն առ ւած : Իսկ քե՛սական է նոյն իսկ յայտնութին ւածային • * զոր ոչ որ յերս իսանաց Տիս այսորիկ ծանեաւ , այլ մեզ յայտնեաց ւած
 ,, հոգւովն իւրով ॥ • ստէ առաքեալն • վն զի է բան հաւատոյ ՚ի վեր քան զմիտս : Եւ ահա սոյն սա է բուն ւածաբանութին ՚ի դասառական ոճ վերածեալ յւածաբանից , ՚ի սբնի թովմայէ և այսր • որ ՚ի ձեռն գերբնական սկզբանց ճառէ նախ՝ յաղափս քեղեաց • որք են՝ քի գիւրդ հին և նոր կտակարանաց , և առաջին տեղի ւածաբանական • յորմէ ձեռնարկէ ւածաբանն ապացուցարար (527) • Ասանբնութի ւածային անգիր պահեալ յեկեղեցւոյ ՚ի սբ հարց • որ է համազօր սբ գրոց • Ելեւեղի • որ է միաբանութի ուղղափառ քրիստոնէից , և անսխալ կանոն հաւատոյ , և տեղի ւածաբանական • Ընդհանուր ծաղձ արեղերաւ կան՝ համօրէն եւրոպաց • որոյ և վճիռ է սահման հաւատոյ , այլովքն հանգերձ : Երկրորդ՝ ճառէ յաղափս ւն , և ւածային անհուն սորոգեւեաց , իմ միութե , պարզութե , անխոփոխութե , յուխտենականութե , անսահմանութե , ամենակարօղութե , և արարչագործութե , ևն (193) : Երրորդ՝ ճառէ յաղափս ամենաքեղեւեղեաց • կի՛ս յաղափս ւածային եւրոպաց , առնուութեց , և աննաւորութեց • որով զանազանին ւածային անձինք , և միանան ՚ի մի բնութե ան ճառապէս , լքէմ սարելեանց , արխոսեանց , և այլոց : Չորրորդ՝ ճառէ յաղափս մարգեղութե բանին նոյ • և ուղղափառ սահմանի՛ անձառ քնօրէնութե քնի , լքէմ նեստորի , եւտիքի , յուլիանիտաց , և այլոց հերետիկոսաց : Հինգերորդ՝ ճառէ յաղափս արգասեաց մարգեղութե • որք են շնորհի հոգւոյն սբոյ , և ւածաբանական առաքինութե կասափ , յոյս և սեր • յորս բովանդակի քե՛սական ւածաբանութին , սակայն յամի յափուեն գեղերով այսր ծովնան գիտութե , և ոչ բնաւ ՚ի խորս ւածգիտութե փանցելով :

Բարոյականն է՝ այն ճշրագ դաւթին ,
որ տայ ճանաչումն՝ օրինաց էին ։

Ի կարգաւորել՝ բարբոս մարդ կային ,
զի կանոն վարուց՝ և լոյս է շաւղին ։

Սորա է ճառել՝ յիւրում դիւանին ,
զառաքինութեց՝ պէսպէս տեսակին ։

Երջն և մոլութեց՝ որոշիչ կարգին ,
որով ՚ի չարեաց՝ բարիք զատանին ։

1 * Ճրագ են բանք քո սաից իմաց և լոյս սան շաւ-
ղաց իմաց ։ . . . ԺԺԷ : Արգարե ճրագ են անձային օրէնք
և պատուիրանք , որով լուսաւորեալ մարդիկ զհետ լի-
նին բարեոյն , և խորշին ՚ի չարէն . որք և բովանդակին
՚ի ի պատուիրանս ան . քանզի կանոնք՝ որով ուղղին
մարդկային գործողութիւք և կարգաւորին , են պատուի-
րանք . յորոց ոմանք են տպաւորեալ յանձուտ ՚ի ներքին
ատեան խղճի մտաց . իսկ այլք աւանդեալ են յարտա-
քին օրինաց եկեղեցւոյ . յորոց ՚ի զանցառութիւ ծագին
մեղք , որ է խտտորիլ յուղիկ կարգէն ։

2 Բարոյական անձաբանութիւն է գիտութիւն ուղղելոյ
զբարձ մարդկան . քանզի նախ՝ ճառէ յաղագս մարդային
ներգործութիւն . քի ազատութիւ և անձնիշխանութիւ . որով
և զանազանին բարք մարդոյ՝ յանասնոց . որք գործեն ա-
ռանց ազատութիւ լոկ՝ ՚ի բնա ան ազգեցուէ : Երկրորդ-
ճառէ յաղագս բարութիւն և չարութիւն . բարին է անձնիշխան
գործողութիւն համաձայն բանականին . իսկ չարն է ան-
համաձայն . յորմէ հետեւի թէ յերկց սկզբանց ծագին
բարութիւ և չարութիւ . քի յառաջայե , ՚ի պարագայից և ՚ի
վախճանէ . յորոց յառաջ դայ և վեղան . որ է լեզէմ յաւի-
տեանական օրինաց . և զանազանի . սիւրբնական ձգեալ յա-
ղամայ . և անյնական գործեալ աղատ կամօք . և սա բա-
ժանի ՚ի ներգործական , և յանական , որ է արատ մնա-
ցեալ ՚ի հոգին . որոց ոմանք են հոգեւոր , և ոմանք մար-
մաւոր . են՝ որ յանյնառական , և են որ զանցառական կո-
չին . և ս և մահուաբ և ներելի , այլովքն հանդերձ . որոց
զհետ գան պարթիժ մեղաց և դարձան յանցունածոց . ուր

175

Սարգիկ յանասնոց՝ սուլաւ տարբերին ,
 'ի կարգս անմահից՝ վերանցեալ բազմին .
 Օ ի մարդըն չէ՛ մարդ՝ առանց այս կարգին ,
 սյլ սոսկ զմարդոյ՝ կերպարան ունին :

176 Ո՛ նախ կոչեցաւ անձաբան :

Լըծիւն յովհաննէս՝ գրիչն անձաբի ,
 նախ ան զայս անուն՝ անձաբանի .
 Որ և յայլ երից՝ աւետարանչաց ,
 այսու գերապանծ՝ անուճամբ որոշի :

177

Օ ի ըսկիզբն այլոց՝ աւետարանի ,
 'ի ծընընդենէ՛ նախ ըսկըսանի .
 Իսկ սորայս ըսկիզբն՝ զանձութի ,
 բանին նոյ՛ տիրապէս պատմի :

Էն նշով , Բանարանս , ևն : Երբորդ՝ քննէ զխիղճ Տփաց .
 որ է ներգործական դատումն գործնական իմացութեան
 թեւադրելով աննել կի՛ թողուլ զինն 'ի մասնաւորի . որ
 և լը բերման կամաց երբեմն լինի Բարի , և երբեմն լար .
 երբեմն ուղիւ , և երբեմն թիւր : Վարձեալ՝ ճառէ 'ի վիճ
 էօնն խորհրտոյ եկեղեցւոյ , որք են նշան որբազան և մնաց
 ցող , կացուցեալ 'ի քնէ 'ի սրբել զմարդն իբրև միջնորդ
 փրկութե . որք ունին զնիւն . ուր մկրտութեն է ջուրն .
 և զչն . որ է բանն . իսկ արարչական պատճառն է Քն ,
 նաև պատճառն . յորոց յառաջ դան շնորհս և ինիս : Ճա
 ռէ գարձեալ՝ 'ի վերայ տասն պատճառնայն նոյն , և կինգ
 պատճառնայն եկեղեցւոյ . որք են կանոն , և կանոնաւորել
 ուղղեն զթիւր բարս մարդոյ . յայտմանէ սոյն գիտութե
 կոչի 'ի մեզ Բարոյսիան (188) :

1 Կերդոս ազանդապետն 'ի սկիզբն ք դարու . ուրա
 նայր զանձութին քն կոչելով զնա սոսկ մարդ . որոյ ընդ
 դէմ ասեն գրեաց աւետարանիչն յովհաննէս . որ 'ի
 սկիզբն աւետարանին որոտալով իմն 'ի վերուստ զանձու
 թիւնն քն աւետարանէ . * 'ի սկզբանէ էր բանն || . և
 յոյն պակս նախ քան զամ սա կոչեցաւ անձաբան :

ՓԻՒ ԼՍՈՓԸ:ՅՈՒԹԻՒՆ,

178 Օջնէ և փիլիսոփայութեան :

Լ պարզ ճանաչումն՝ բրնական իրաց ,¹
'ի ձեռքն պայծառ՝ բարձրը պատճառաց .
Ուր ֆիլոսոֆօս՝ անունն հելլէնաց ,
Էմաստասէր է՝ 'ի մեզ թարգմանած :

179

Օ ի պիւթագորաս՝ ֆիլոսոֆ նախնի ,²
կոչեաց զիմաստուն՝ սիրող իմաստի .
Ուր բառս իմաստունն՝ միայն ւնյ ,
Իսկ իմաստասէր՝ մարդոյ պատշաճի :

180 Լսա՝ ի քանին բաժանի :

Ղ չորս բաժանի՝ այս ձոխ գիտութի ,³
այս է լօճիֆայ՝ բրնաբանութեան .

¹ Փիլիսոփայութիւն է բնական գիտութի , որ անվրէպ քննէ և ճանաչէ զբնական իրաց յատկութիս և զզինչուութիս 'ի ձեռն փորձոյ , և բարձրագոյն պատճառաց բնական լուսով ծանուցելոց :

² Յունական ձայնս ֆիլոսոֆիա բաղադրեալ է յերկուց անոճանց ֆիլիա իմ սէր . և սոֆիա իմ իմաստութի . ըստ որոյ և բառս ֆիլոսոֆ ծագեալ է 'ի բառիցս ֆիլոս իմ սիրող . և սոֆիա : Ուստի պիւթագորաս , որ էր մի յօթն իմաստասիրաց , եղեալ թէ բառս իմաստունն՝ միայն ւնյ պատշաճի , որ ակներև գիտէ զամ գաղանխս բնութե . այնուհետև զինքն և զոյլ գիտունս՝ իմաստասէրս կամ ֆիլոսոֆ անոճանէր . անտի և այսր անուն եղաւ այսր գիտուէ ֆիլոսոֆիա . իմ սէր իմաստուէ . 'ի մեզ իմաստասիրուէ . իսկ այն որ սնի զծանօթուէ պատճառաց յատկութեց և որպիսութեց բնական իրաց , կոչեցաւ ֆիլոսոֆօս իմ իմաստասէր (194) :

³ Նախնի իմաստասէրք զողջոյն փիլիսոփայութիւն յեր

Ս'էլեաբէիսիֆայ՝ ըրնազանցուածի ,
 և բարոյական՝ վարուց հմտուածի :

181 Օ ինչ է արամաբանութիան :

Ղրուէեստ մըտաւոր՝ ուղղիչ է բանին ,
 զի ուղղէ ըզմիտ՝ 'ի գիւտ ճըշմարտին .
 'ի ձե՞ռն անվրէպ՝ ըստոյգ կանոնաց ,
 ճըշմարտ ձեռնարկք՝ հարկաւ հետեին :

կուս բաժանեցին 'ի Բանալան և յերական . առաջինն է
 տրամաբանութի . որ յունական ձայնիւ կոչի Եճիֆայ կի՞
 փաւօհ . իսկ երկրորդն է համաբնաբանութի հանդերձ
 բնաբանութի , բարոյականաւ , բժշկականութի , և մա-
 թէմաթիկայի : Սակայն սղատոնեանք բաժանեցին 'ի
 նրբախօսութի , որ է տրամաբանութի . 'ի վարս . և 'ի Բարս .
 որ է բարոյական , և 'ի ֆազֆնիս Բնութի , ի՞նչ 'ի նկատել
 զանձ , որ է համաբնաբանութի , և 'ի զննել զգաւիս , որ
 է բնաբանութի : Իսկ արխատուէլ , * երեք են (ասէ)
 ,, մասունք փիլիսոփայուէ , ի՞նչ Բնաբանական կի՞ ֆիլիպայ .
 ,, սոսոմանական (որ է մաթէմաթիկայ) և անձայն || , որ է
 համաբնաբանութի : Բայց այլք 'ի հին և 'ի նոր դարս
 'ի չորս բաժանեցին ի՞նչ որում էդար :

1 Տրամաբանութին ասի ևս գիտութի , ի՞նչ որում ուղ-
 զէ զմիտս 'ի ճանաչումն ճշմարտութե , ասի և գործի .
 զի նովաւ վարիմք առ 'ի ստանալ զգիտութի . որ և բա-
 ժանի յերկուս մասունս . յառաջին մասին քննին երեք
 ներգործութիք մտաց . ի՞նչ Եճիֆայ , արարման , և արամ-
 փաւօնութի . զորովք յածի տրամախոհութիւն մեր . քանզի
 նախ՝ սոսկ հայեցիւք մտաց ի՞նչ ըմբռնին . երկրորդ՝ զի
 րաց ըմբռնելոց դատումն լինի՝ որ կոչի նախարարութի .
 և երրորդ՝ 'ի դատմանց անտի 'ի վի՞ բերի հետեութի
 ինչ կի՞ կապակցութի , և կի՞ մակաբերութի , որ կոչի
 արամախօսութի կի՞ յեռնարկութի . զի 'ի զննելն մտօք զա-
 բարաճս , նախ ըմբռնելք զգաղափարս իրաց . զորս ապա
 ընդ միմեանս համեմատեալ դատումն առնելք , թէ այս
 ինչ ոչ է նոյն ի՞նչ այլում , կի՞ տունկն և մարդն չեն նոյն .
 յորմէ զայլ ինչ մակաբերեալ ձեռնարկելք հաւաքաբա-
 նելով այսպէս : Որ խորհի և խօսի ոչ է տունկ , այլ բա-
 նական կենդանի . իսկ արդ այս ոք խօսի և խորհի , ապա
 է բանական կենդանի : Իսկ յերկրորդ մասին հետագօ-

Օ ի ըզգայու թ ք ք իրք նախ ըմբռնին ,
զորոց և դատմունք ՚ի միտքս լինին .
Թէ այս ինչ այլում՝ յաւէտ բաղդատի ,
ասպա և ձեռնարկք՝ տրբամաբանին :

Որպէս երբ հայիմ՝ ՚ի մարդ զերթ մարմին ,
մըտաց ըմբռնի՝ եզըր մարդկային .
Օ որմէ ըզկրնի՝ դատումն՝ առնելով ,
խօսուն կենդանի՝ ըզնա ձեռնարկիմ :

Գարձեալ բաժանումն՝ սահման էակին ,
քրննել որոշել է լոճիգային .
Լ յլև կանոնել՝ դատումն և ըզբան ,
ինքեան և այլոց՝ է սոյն արոճեստին :

Սահմանն է յայտնօղ՝ սահմանեալ իրին ,
սահմանօղ իրաց՝ բացատրիչ յատկին .
Դ ձեռքն սեռի՝ և տարբերութե ,
էակ յէակէ՝ հարկաւ տարբերին :

տին ըհանուր բնութիւք , կի՞ հինգ ձայնք պորփիւրի . ք
սեռ , փեսի , փաբէբրուի , յափուի , և պափահոսի . ևս և
տասն ստորագութիւք արիստոտելի , այլովքն հանդերձ :
Օրինակ իմն ՚ի մարդն՝ կենդանութին է սեռ . հոգին է
փեսի . բանականութին է փաբէբրուի . ծիծաղականու
թին է յափուի . հասակն կի՞ գոյնն՝ է պափահոսի : Եւ
պատահումն ՚ի ց բաժանի . որք են բանակուի , որակուի
առնչութի , ևն . տես ՚ի փրա՞ . էր . 237 :

1 Յաղագս բաժանման և սահմանաց կանոնք աւանդին
՚ի ք մասին արամաբանութե . ուր բաժանումն է այն՝ որ
զբողորն բաժանէ ՚ի մասունս իւր , զի դիւրբմբռնելի լի
ցի . ք մարդն բաժանի ՚ի հոգի և ՚ի մարմին , և մարմինն
յայլեայլ մասունս :

2 Իսկ սահմանն ը մերս դաւթի անյաղթի՝ է բան բա

186

Վանդի երբ ճըշդիւ՞ մարդըն սահմանի ,
 ասեմք բանական՝ խօսուեն կենդանի .
 Կենդանին յայտնօլ՝ կենդանականին ,
 բանականն՝ յայտնիչ՝ է բանականին :

187

Կենդանին է սեռ՝ ըստ լօճիդային ,
 բանականն՝ յաւէտ՝ տարբերօղ նմին .
 Եւթաւ մարդ հանգոյն՝ գրտաւ անբանին ,
 սովաւ տարբերեալ՝ էութի նորին :

188 Օ ինչ է Բարոյականն :

Բարոյականն է՝ բարուց հրմտութի ,¹
 կանոնէ ըզվարս՝ յուղիղ կեցութի .
 Օ ինքըն ճանաչել՝ բանական ասուեն ,
 կալ որպէս ըզմարդ՝ և ոչ անասուն :

189

Սա դիտէ զըսպել՝ կիրքս մարկային ,²
 կարգել կանոնել՝ ըստ տիրականին .
 Բզցասմնական՝ ընդ ցանկականին ,
 ուր արդար կըշիւ՝ սրահի՝ ի սըբտին :

ցայայտիչ բնութի իրին սահմանելոյ . զի սահմանելով
 զիրն ՚ի ձեռն բազկացուցիչ մասանց իւրոց՝ իսկուլի իրին
 բացատրի . ուն մարդն սահմանի՝ կենդանի բանական .
 ուր կենդանին է սեռ՝ որով միաբանի ը այլս . իսկ բա-
 նականն է տարբերութի , որ որոշէ զմարդն յանբանից .
 և երկաբանչիւր մասունք են բազկացուցիչ մարդոյն :

1 Բարոյական իմաստասիրութեն է գիտութի , որ
 զմոլութեց և զառաքինութեց իսկութի նրբութի իմն
 հետազօտէ , քննելով զինչ է բարութի և չարութի . և
 տայ մարդոյ ճանաչել զինքն , և կեալ ուն մարդ քաղա-
 քական՝ սանձելով զկիրս , և ոչ անսանձ ուն անբան վայ-
 րենի (174) :

2 Չորք կարողութեք են հոգւոյն՝ ըունակք առաքի-

Քանզի լուսափայլ՝ ջահ է այս ուսուցին ,¹
ցրբիչ խաւարի՝ ըն ներքին մարդոյն .

Սառէ ըզմարդիկ՝ յառաքինութի ,
որով և գիմել՝ ի յերանուածին :

191 Օխն է մեթաֆիզիկային :

Սէթաֆիզիկային է նուրբ գիտութի ,²
որ ի մեզ ասի՝ Բնականոցութիւն .

Օի թողեալ իսպառ ըզնիւ թքն ականին ,
քննէ զէութի՝ զիրաց գոյութի :

նութի . քի շահաւան , շանխան , որք են ի զգայական
մասին . Կստ և միտ ի բանական մասին : Առաջինն կա-
նոնէ զցասմնական կիրս ոչ ցասնուլ անդէպ , և ոչ փու-
թով սրամաիլ ի գթոճարին իրս . որով լինի արհուսի .
Երկրորդն կանոնաւորէ զյանկականն ի բերկրականս ը
բանականութի վարիլ . և սա է Բարեխառնութի : Երրորդն
կանոնաւորեալ յօճարի յերաւացի իրս յօգուտ այլոց՝ ի
կշիռ պահէլ զմտ . և սա է արդարութի : Իսկ չորրորդն
լուսաւորեալ շուրջ զառնելեօք՝ չափ սահմանէ օրինաց
առաքինութեց , և սա է Խնայմութի : Սք են չորք գլխա-
ւոր առաքինութիք բարոյական իմաստասիրութի : Առաջ-
նովն խորշիմք ի չարէն , և զհետ լինիմք բարւոյն արիա-
պէս . Երկրորդիւն բարեխառնեմք և մեղմեմք զբոբոբ
ցանկութեան բարոյապէս . Երրորդիւն կանոնաւորեմք
զկամս գործել արդարապէս . և չորրորդիւն լուսաւորել
մտօք առնեմք խոհմապէս :

1 Քանզի վախճան այսր գիտութի է՝ ի ձեռն լուսա-
փայլ սկզբան ցրել զխաւար մուլութեանց , և պայծառա-
ցուցեալ զմիտս վառել ի սէր առաքինութի . որով և
լինի գիմել յերանուածի անձատեսութի . որ է մի միայն
վախճան մարդոյ :

2 Համարնաբանութիւնն յունարէն մեթաֆիզիկայի ձայ-
նեալ , ի մեզ Բնականոցութի թարգմանի . քանզի սա հայի
յիրս՝ որ ի վեր են քան զնիւթականս . իբր այն թէ՝ ի
բաց թողեալ զնիւթն , միայն զիսկութի էակաց հետա-
ղօսէ թէ՝ նիւթական իցեն , և թէ հոգեղէն : Ի ճա-
ռելն զնիւթականաց քննէ զէութի և զգոյութի նց . և

192

Որով վերանցեալ՝ միաք բանականին ,
 Ճառէ անվեհեր՝ զէակէ անծին .
 Եւ ըզհօրեշտակաց՝ զհօգւոյ մարդկային ,
 որչափ ցուցանեն՝ նմա լոյս բանին :

193

Սա է բընական՝ անժխօսութիւն ,
 որ էիւք յայտնէ՝ զէին մեծութիւն .
 Օ անչափ բարութի՛ն և զարարչութի՛ն ,
 զստորագելիս՝ ճանաչէ նորուն : ¹

194 Օ ինչ է Քիչիգայն :

Իսկ Ֆիզիզայն է՝ բնաբանութի , ²
 զբննիչ աշխարհի՝ բննէ ըզբնութի .
 Ղառէ զամենայն՝ բընական իրաց ,
 պատճառաւ փորձի՛ն՝ բերէ ըզցուցութիւն :

Թէ յորում կայանայ գոյացութիւն լրացեալ . որպիսի է մարդն : Ի ճառէն զհօգելինաց՝ քննէ զկատարելութի , զկարողութի և զներգործութի հրեշտակաց , և բանական հօգւոյ : Եւ ՚ի ճառէն զանստեղծ էակէ , քննէ զանձային կատարելութիս և զստորագելիս , որչափ հնար է քննել բնական լուսով . յայն սակս կոչի սա բնաբանութի . (170) :

1 Ստորագելի կոչի այն , որ ստորագի կմ ասի զուսեքէ . ի որում պատշաճի նմա այնպիսի կատարելութի . ի մարդն ասի ծիծաղական , զի ունի զծիծաղականութի : Ըստ այսմ և անձային անբաւ կատարելութիք կոչին ստորագելիք , ի որում փակին յամենակատար իսկութե նորին : Քանզի ի քննէն համարնաբանութի զստեղծական էակս՝ ի առաջ լինի էակն անստեղծ , յորմէ ստեղծան նորին . որ պարտի ունիլ զամենակարողութի , զան սահման իմաստութի՛ն՝ բարութի՛ն ևն : Եւ ահա սրբու են անձայեւ « քրիստոս » զորոց ճառէ համարնաբանութի . թողեալ զկատարեալ հետազօտութիւն բուն անձաբանութի . (172) :

2 Հելլենական բառս Քիչիգի էլեալ յանուննէս Քիչ .

Օ ի համատարած՝ գործածք արարչին ,
 ընդ փորձ քննութիւն՝ են բընաբանին .
 Արով յատկութիւն՝ իրաց բացատրին ,
 և աներևոյթք՝ նոյ յայտնին : 3

Ղարակ է մտաց՝ ըստ կիկերոնին , 1
 վերանայ ՚ի տես՝ շարժմանց երկնային .

Էս , իմ բնութի . նախնիք մեր բնաբանական մտկայութի ձայն էին . և առ մեր բնաբանութի կոչի (իբրև ածանցելի բառէս բան , կի սկիզբն , և լին Քրիստոս . իմ ծնանիմ , սկսանիմ ,) որ է գիտութի բնութե , կի շարժական և զգալի էակաց . քզի նր է ճառել զիմ իրաց փոփոխելեաց՝ շնչաւորաց և անշնչից : իմ ւ ճառէ լինանբապէս զբնութի , և զյատկութեց նիւթոյ և տեսակի բնական իրաց . բննելով զտարածութի , զբաժանելութի , զմեծութի , զծանրութի , զթեթևութիւն , նաև զթանձրութի , զանօրութի և զարժումն մարմնոց : ևս և զէլէքտրականութիւն , զձգողութիւն մարմնոց , զգինչութի լուսոյ , հոտոյ , ձայնի , ևն . որ կոչի ընդհանուր բնաբանութի : Է ճառէ ՚ի մասնաւորի զբաղադրութի ճի . բննելով թէ Տա՛ի քանի իրաց է բաղկացեալ կի թէ զինչ են երկնային մարմինք . աստեղք մալրակք , ևն . որ է փիւրեր-տեսութի (312) : Է ճառէ զգոյ , զհոյ , զմետեորայից . և զայլ երկնային երևութից . որ կոչի Գեոքոմի-տեսութի (200) : Է ճառէ զերկրագնացոյ մերմէ՝ իմ զմասանց ճի . զճագրութի՝ զլեռանց , զխոտոց , զբարանց , զհոյց և զլոյց . բննելով զծովս , զգետս , և զլեռաղս , այլովքն հանդերձ . որ կոչի Էրի-տեսութի (352) : Է ճառէ զյատկութեց տնկոց . և զտեսակաց ծառոց , խոտոց , ևն . որ կոչի փնի-տեսութի (754) : Է ճառէ զանասնոց , և զտեսակաց կենդանեաց . զմարդկային մարմնոյ , ևն . որ կոչի Գեոքոմի-տեսութի (791) և Երգա-տեսութի (890) : Էս ևն այս տմենայն տեղեկութիւնք աւանն զմարդն՝ բնախօս կի Իրի-տոգայ :

3 * Զի աներևոյթք նր ՚ի սկզբանէ ճի արարածովքս
 ,, իմացեալ տեսանին || : Հո . ւ :

1 * Սովաւ վերանալք և շնճիկ հանդիսանալք . . . ւ

Հողմոց անձրեաց՝ զամպոց բնութի,
առաջի առնէ՝ զարմացականին :

197 Աստի քանիս բաժանի :

Ի ընաբանութիւն՝ յերկուս բաժանի,
մին է փեսական՝ բացատրող յատկի .

Սիւսըն փորձառու՝ զըննիչ էակաց,
և բաղադրութեց՝ մարմնոց աշխարհի :

198

Առաջին քննէ՝ պատճառս էակաց,
և կամ զայլևայլ՝ ըսկրզուունս իրաց .

Օ անազան շարժմունս՝ զապականութի,
ըզբաղակցութի՝ նիւթոց տեսակաց :

199

Ի սկերկրորդն՝ ի ձեռն՝ այլևայլ գործեաց,
զըննէ ըզմասունս՝ և զգործս իրաց .

Եւ ըզմեծութի՝ ըզդիրս աստեղաց,
զինչութի նիւթոց՝ հանքաց կենդանեաց :

„ Տեալ զմտաւ զվերինսն և զերկնաւորս . զոր ինչ առ
„ մեզ էն իբրև ճնչին իմն և պիտակ անգոսնեմք || : ԻԻ :
I Սկզբունք էն՝ յորոց լինի ամ ինչ . քանզի ստեղծա-
կան իբք ոչ կարեն ինքնին յոչնչէ արտադրել , այլ ՚ի
սկզբանց ինչ . զորոց պէսպէս կարծիք եղեն ՚ի փիլիսո-
փայս : Թաղէս՝ նախկին բնասիօս համարեալ ՚ի հելէնս,
էգ թէ սկիզբն ամ բնական էակաց է զսօրն . զի ամ ինչ
ասէր ՚ի ջրոց ծնանի , և ՚ի ջուր լուծանի : Հերակլիտոս
ենթադրեաց զհօրն . համարելով , թէ ամ ինչ ՚ի հրոց է-
ղեալ ՚ի հուր լուծանի : Պիւթագորաս եգ զԻնչն : Ի իո-
զինէս զօրն : Եւ պիկուրոս զհիւլէն . ք զմանր շամանդազս .
որք պատաստեալ յերեարս՝ արտադրեն (ասէր) զիրս
Յի . որում հեռեւեցաւ ի իրաց ինչ կարգեսիօս . բայց
այս ամ մերժին յողջամտաց : Այլ հուսկ յետոյ արիս-
տոսէլ ասաց զսկզբունս իրաց՝ լինել նիւթ , և փեսակ .
որովք ամ իբք Յի տեսակաւորին . (309) :

ՄԼՏԼՈՐԸ

200 Օ՛րն է հարկորայն :

Մէտէորայն է՝ երեոյթ վերին ,
որ նըշանակէ՝ վերամբարձ մարմին .

Օ՛ր վերամբարձեալ՝ ՚ի գաւառ օդոյ ,
յաճախ տեսանի՝ ՚ի մըթնոլորտին :

201

Որպէս գոլորշիք՝ և այլ ինչ մարմին ,
ամբարձեալ ՚ի վեր՝ իրտացեալ լինին .

Որով ամպ հոյմունք՝ անձրև և կարկուտ ,
է այլ մէտէորայք՝ յօգրս պատճառին :

202 Եւ զ՛նչ փոլորշիքն :

Պոլորշիք են ջուրք՝ անօսը և նրբբին ,
՚ի ձեռն ջերմին՝ ամբարձեալ լինին .

1 Յունական անունս Բրէօրա՝ ՚ի մեզ նշանակէ զայն
ծով մարմինս , որք երևին յօգս ՚ի վայր քան զլուսին՝ յի՛ ՚ի
մթնոլորտի . եթէ իցեն ջրեղէն , որպէս անձրև , ինն .
եթէ օդեղէն , ուն հողի . եթէ՛ հրեղէն , ուն փայլալին , և
սևադ . և եթէ՛ առերևոյթք , ուն ծիծան , բակ , ևն : Վն
ղի ջուրք ՚ի ձեռն ջերմութե անօսրեալ իբրև զօդ վերա
նան յօգս . ուրանօր լինին շոգի , ամպք , ևն . յորոց պատ
ճառին այն ծով երևոյթք Բրէօրայ անունամբ ՚ի ձեռն ելէք
տրական շարժման մթնոլորտին , զոր մարթ է անոճանեղ
օդերնայն :

2 Պոլորշիք՝ են շոգիք վերառեալք ՚ի մակերևութէ
ջրոց ՚ի ձեռն ջերմութե . սրք չգորեն և ևս նրբանալ և
՚ի վեր մղիլ առ ՚ի չգոյէ ջերմութե արևու . այլ լուղին
յօգս , և ապա միանան և խտանան , և լինին ամպ , անձ
րև , ձիւն , ևն : Ըստ ճիշդ փորձոյ բնաբանից մարդն ՚ի
միջոցի 24 ժամուց , իբր 4½ լիպրէ գոլորշիս կամ ջուրս
արտաշնէ յիւրմէ յօգս , որոյ եկի մասն ելանէ ՚ի մորթոյ
(914) , և մի մասն ՚ի շնչոյ : Միայն բնակիչք վենետկոյ լն
հաշուելոյ վեջնցիոսի տանտօլոյն՝ յամ աւուր արտաշն

Որով ջուրք 'ի ջուրց՝ զատեալ բաժանին ,
որպէս ցուցանի՝ յաճաշընչին :

203

Բայց ը գոլորշեաց՝ այլ մարմինք խառնին ,
ոպիք ծրծրմոյ՝ նիւթք բորակային .

Բազմիւթ չայլ մարմինք՝ շնչեւ՝ ի յերկրէ ,
արբաշընչութեան՝ 'ի մեզ յորջորջին :

204 Օգն է օդն :

() զն է թափանցիկ՝ նուրբ և լոյծ մարմին ,
թեթև տարածեւ՝ շուրջ զերկրագընտին .

չեն յօդս 600, 000 լիպրէ գոլորշիս կամ զջուրս , որոց
400, 000 լիպրէք ելանեն 'ի մութոյ և այլք 'ի շնչոյ :

1 Այլ մարմինք խառնեալ ը գոլորշեաց կոչին արբա-
շընչութի . որք ը մեծի մասին արտաշնչին՝ 'ի հողոյ , 'ի ստո-
րերկրեայ նիւթոց խառն ը վառելի նիւթոց . յորոց լի-
նին հրեղէն մեռէորայք յօդս :

2 Օդն է նիւթ ինչ ամենալոյծ , որ շուրջանակի սլա-
տեալ զերկրագնտաւ՝ ընու զգատարկ վայրս թողեալս
յայլ մարմնոց . խառնայ 'ի ցրտոյ , և ընդարձակի 'ի ջեր-
մութէ , նմին իրի օդն արևելակողման՝ յերս արևու է
պայծառ ջերմ և թեթև . իսկ արևմտեանն մ'թին ցուրտ
և ծանր : Օդն ը մտանէ յերակս , 'ի ջիզս , և յայլ մա-
սունս մարմնոյ . որ երբեմն այլայլէ զարիւնն , և պատ-
ճառէ հաղ . և երբեմն 'ի թորս ըմտեալ խոնաւ օդն պատ-
ճառէ թորացաւութի՝ և 'ի ջիզս խտացեալ կամ ըարձա-
կեալ այլայլէ զմարմինն : Իսկ միջոց օդոյ սկսեալ 'ի մա-
կերևութէ երկրի մինչև 'ի վեր հանդերձ մարմնովք 'ի
նմա լուղէլովք՝ կոչի մեռէորք (322) : Ատինիք եղին , թէ
օդն է պարզ տարր . բայց այժմեան քիմիականք լուծեւ
յօդն 4 տին , զի 72 երդ մասն է բորակածին որ կոչի իսպ-
և աղթ . և 28 երդ մասն թթուճածին որ է օդ մաքուր :
Օդն ունի զմեծ առաձգութի , ուր ցուցանէ փամփուշտ
'ի հուր հոտոտեալ . յոր այնչափ ընդարձակի և առաձը-
գանայ օդն , մինչև պայթուցանել զայն . յորմէ յառաջ
գայ եռալ և պղպջալ ջուրց , հետև կենդանեաց , որք
պէտս ունին տուրևառութե շնչոյ . յորոյ 'ի դադարելն՝
թուլացեալ 'ի վայր կախին թորք , արդեւանի շրջան

Ընտեսանելի՝ անշօշափելի ,
ընդ ըզգայու թի՛ք՝ բընաւ չանկանի :

205

Ընդարձակ տարած՝ է սահմանն օղին ,
ըսկըսեալ յերկրէ՝ մինչ՝ ի ծիր վերինն .
Յոր մարդիկ շընչեն՝ և թըռչունք լուղին ,
անբաւ կենդանիք՝ կայտառն ի նըրմին :

206

Ըյս սահմանն օղոյ՝ յերիս բաժանին ,¹
ի վերին գաւառ՝ Բլին ըստորին .
Սերնոյն օղն է նուրբ՝ և յաւէտ ցըրտին ,
միջնոյն է միջակ՝ թանձօր է ըստորին :

207. Օրէնք է հողմ :

Ըսչեալ հիանան՝ միտք անմիտ ռամկին ,²
երբ մատչին քըննել՝ զինչու թի՛ք հողմին .

արեան . և սրահասին ՚ի կենաց : Տես օրաւաթաթ (468) :

1 Օղ ստորին գաւառի՝ որչափ աւելի թանձր լինի ,
այնչափ փասակար է կենաց . քանզի 28 երգ մասն և եթ
է առողջարար . իսկ 72 երգ մասն է թանձրօղ փասա-
կար ը սրում աղացուցանէ փորձս : Գլխի ՚ի մէջ կոնքի
զապակի անօթ մի գլխիվայր , յոր իցեն 3 ճրագունք մի
քան զմի բարձր . լինց ապա ՚ի մէջ կոնքին ջուր , ուր ճրա-
գունք այնչափ վառին մինչև սպառեսցի առողջարար օղն ,
և ապա նախ սկսանի շիջանիլ բարձր ճրագն , ապա երկ-
րորդն , և ապա կարճագոյնն . և յայնժամ ջուր կոնքին
գլխի յանօթն , և զմասն 28 դրաւէ : Յայսմանէ յայտ է
թէ , յարմար օղ վն մարդոյ է օղն թթուածին . բայց սլե-
տի բարեխառն լինել թանձրօղով . ապա թէ ոչ՝ վտան-
գէ զկեանս . իսկ փասակար թանձրօղն յարմար է բու-
սոց ՚ի սնանիլ . ոնք և սրդանց , զոր միշտ ձգեն յինքեանս
և յինքեանց արտաշնչեն զօղն թթուածին . նմին իրի ա-
ռողջարար է օղ սարաիղաց և բուրաստանաց , քան ան-
տառաց . յորս սակաւ ներգործէ արևն : Առաւել առող-
ջարար համարի օղ ծովու . զի է բարեխառն և յարաշարժ :

2 * Հողմ ուր կամի շնչէ , և զձայն նր լսես , այլ ոչ

|| Լստի՛ գայ և կամ՝ սուր ուրեք գնայ ,
չբզորե՛ն գիտել՝ ըստ ասից փրկչին :

208

|| Կայն միտք հասու՛ քաջ բընաբանին ,
հասեալ ճանաչէ՛ զիսկուծի հողմին .
|ժ| է՛ օգ է՛ յուզեալ՝ յանօսըր շոգեաց ,
տեղւոջէ՛ տեղի՛ բըռնուծի՛ վարին :

209

Օ ի անհաւատար՝ լինի օգ վերին ,
երբ խիտ գոլորչիք՝ անօսրեալ նրբին .
|ճ| որմէ՛ և յուզեալ՝ յընծացըս ձեպին ,
վարին յարձակմամբ՝ զօգ՝ ՚ի նոյն տեղին :

210 || Եղէս լինի խոթորին :

|ճ| որժ ի՛ բուռն հողմունք՝ խիտ ամպոց զիպին ,
կասեալ յընծացից՝ արգելեալ լինին .²
|՛| պա բանալով՝ զանձուկ ճանապարհ ,
՚ի բարձանց՝ ՚ի վայր՝ փոթորկեալ ձգին :

11. գիտես ուստի գայ, կամ յո՛ երթայ || : Զ. 24. 7 : Ըստ
զննութե՛ դէրհամայ սաստիկ հողմն՝ ՚ի միջոցի միոյ ժա-
մու ընծանայ 45 անգղիական մղոն . որ և մարթի կոր-
ծանել զքարեղէն սիւն մի բարձր 12 տանաչափ :

1 Շողմն է հասունն, կի՛ գրգռայոյզ շարժունն օգոյ .
որ գոլով ամենալոյժ մարմին՝ ՚ի բառնիլ հաւատարակչ-
ուութե իւրոյ՝ հարկաւ շարժի տեղւոջէ՛ ՚ի տեղի . յորմէ
պատճառին հողմունք : Իսկ հաւատարակչուութին բար-
ձեալ լինի երբ ջերմութի արևու անօսրացուցանէ զօգն ,
ուրանօր խտացեալ կան շոգիք . յի՛ արեգակն կալով ՚ի
վր՝ այրեցած գօտւոյն , յարևելս զստորանկեալ օգն ա-
նօսրացուցանէ . և ՚ի խաղալն դէպ յարևմուտս՝ օգն ա-
րևելեան՝ ՚ի նախկին տեղի իւր դարձարարեալ պատճա-
ռէ անգ զարևելեան հողմն :

2 Բուռն հողմք արգելեալք՝ ՚ի թանձր ամպոց՝ պտուտ
կին ՚ի բարձունս . և ապա զանցս գտեալ ՚ի խոնարհ փո-
թորկին . և յայնժամ լինի խոթորին :

Ղոյն կարմիր տեսեալ՝ ՚ի ցըրիւ՛ ա մնլին ,
 յայտնէ գողորչիս՝ շատ լինել յօղին .
 Աբբ երբ ՚ի շոգեաց՝ զատեալ անօսրին ,
 հողմոց մըրըրկաց՝ պատճառօղ լինին :

212 Վանի՛ էն հողմ :

Ղլխաւոր հողմունք՝ ՚ի չորս բաժանին ,
 յորոց այլ հողմունք՝ անդրէն որոշին .
 Աւր ընդ ամենայն՝ երեսնեւերկու ,
 ՚ի կողմնացուցի՝ նաւուց նրկարին :

213

Ըստ չորս գլխաւոր՝ կողմանց աշխարհին ,
 չորս որոշեցան՝ հողմք կողմնացուցին .
 Նախ հիւսիսային՝ և հարաւային ,
 հողմարեւելեան՝ և արեւմտին :

1 Քանզի իբրև անօսրին շոգիք , անհաւասար լինի օդ վերին , և նշան է հողմոց . նմանապէս երբ պարզ է օդն և եղանակն ջերմին , լինի անհաւասարութի օդոյ . որով գուշակին հողմք : Եւ Է՛ հակառակն զինի հողմոց իբրև արեւմտեան կողմն շառագնի , ՚ի մուտս արեւու պարզի երկինք , և յեւս ցրո՛ւն ամպք դէպ յարեւմուտս՝ նշան է թէ սակաւ են շոգիք յօգոս . յորմէ գուշակի պարզ եղանակ (228) :

2 Ըստ չորից կողմանց Յի՛ են և 4 գլխաւոր հողմք ծղկննականք . լւ սրում ցուցանէ հողմացոյցն 4 ծ . Չւ . ք . հր . ւ . Հիւսիսային (եւբբբ) . որ անմիջապէս ՚ի հիւսիսային բևեռէ շնչէ . ուղ կէտն 4 : Է՛ հարաւային (գողլ) , որ ՚ի հարաւային բևեռէ շնչէ . ուղ ծ : ՚ի մէջ սոցա է հողմն արեւելեան . (Կիւսօղասի) . և սորա հակադիր հողմն արեւմտեան յ . (պալի) : Են և չորս կողմնական հողմք հաւասար հեռաւորութի միջանկեալ Է՛ մէջ ծղկննականաց . ւ Արեւելեան հիւսիս Բ . (Ժոյբալ) : Է՛ Արեւմտեան հիւսիս Գ . (գարայել) : Է՛ Արեւելեան հարաւ Դ (Կելիւլակ) : Է՛ Արեւմտեան հարաւ Ե (լօբօս) : Կիսահողմք ասին ութ այլ գիծք հողմոց միջանկեալք ընդ մէջ ութ կողմնական հողմոց , որ աւնուէն զանուէն ՚ի ծղկննականաց և ՚ի կողմն

214

Հիւսիսային հողմ՝ ցուրտ է աւելի ,
 զի գայ 'ի կողմանց՝ ցրրտին դաւառի .
 Եւ կի՛մ յաշխարհաց՝ ուր է ցուրտ գօտի ,
 Հնչեալ հողովեալ՝ առ մեզ հասանի :

215

Քերմէ առաւել՝ հողմ հարաւային ,
 Երբ հեզիկ շնչէ՝ 'ի յամարայնին .
 Քանզի 'ի կողմանց՝ այրեցած գօտւոյն ,
 կամ 'ի ջերմ տեղեաց՝ յաւէտ մեզ շնչին :

216

Արեւելեան հողմ՝ չոր է աւելի ,
 զի գայ յասիոյ՝ սահմանաց մեծի .
 Ար ջուր և կամ ծով՝ սահաւ գլտանի ,
 վասն այն չոր ճապղու՝ այս հողմին լինի :

217

Եւ արեւմտեան՝ խառն ընդ նօտոսին ,
 յաճախէ զանձրե՝ խոնաւ և գիճին .
 Օ՛րի գայ յատլանտեան՝ ովկիանոսէ ,
 յորմէ շատ շոգիք՝ ամբարձեալ լինին :

218 Արդեւ լինի Ռաբաոն :

Երբ երկու հողմունք՝ միմեանց դիմադրին ,
 բուռն առնելուք՝ ճրնչեն զամպսուժին .

Նահանաց . յորոց միջի անկանին . ուր , , : Ընդ մէջ նշաւ
 նահեալ վեչտասան հողմոց են այլ ևս 16 հողմադիժք ,
 որք և ասին Քառորդ հողմոց , ուր , , , . որով լինին
 քառորդ 32 . Տես և նախադասութի (134) :

! Քանզի ամպոց 'ի ձեռն բուռն հողմոց ոլորտաձև
 պտոյտիեալ , գործի յորձանուտ կի՛մ թաթառն . որ եր-
 բեմն իջեալ 'ի խոնարհ վարէ բռնութի՛ն որոց միանգամ
 հանդիպի՛ շրջելով դժառս , զտուս , ևն . ուր երկրցս եղև
 'ի պօլիս 'ի 1808 յունիս 18 : Բայց յաճախ լինի 'ի ծովի ,
 և բաղում անգամ զնաւս կործանէ . ի՞նչ Զ . Գ . սո՛վ է

Միւն շրջաճառով՝ զայն ձեւացուցեալ,
սիւնաձեւ խախտա՞յ՝ յայնժամ պատճառին :

219 Օ՛րն է ամսն :

Դմսն է երեւո՞ւն՝ խոնաւ լոյծ մարմին ,
վարեալ՝ ի հողմոց՝ յողբս դանդաչին .
Որ՝ ի ձեռն յաճախ՝ վերամբարձ շողեաց ,
մերձեալ իրերաց՝ խըտացեալ կազմին :

220

Վանգի երբ շողիք՝ խուռն ՚ի վեր ձրգին ,
ներհական հողմով՝ աստ և անդ շարժին .
Որով խըտացեալ՝ միանան ՚ի մի ,
առ սահաւ սահաւ՝ ՚ի յամպ մակարդին :

221 Ոստի՞ ծագին գոյնք և չեք :

Վոյնք վարմանալի՝ յամպն ըստեղծանին ,
՚ի շառաւիղաց՝ արեգակնային .
Իսկ այլեայլ ձեք՝ յողդողդ անհաստատ ,
՚ի ձեռնն հողմոց՝ յայն ձեւակերպին :

222 Օ՛րն է զգն :

Իայց երբ ամպք թէթե՛ւ՝ գիճացե՛լ ծանրին ,
՚ի վայր խոնարհեալ՝ մերձ երկրի լինին .²

ամպ խիտ . յորմէ սիւնն ան ձեւանայ ՚ի ձեռն հողմոց . և ՚ի վայր խոնարհի մինչև ՚ի ծովն ծշ . որով ջրոյն խռովեալ յուզի , և երբեմն ձգի ՚ի վեր , կ՞ամբարձեալ լինի իբրև բլուր , ուն տեսաւ ՚ի պոլիս որ իբրև դժուրն՝ էլ ջուրն ՚ի վեր կանգուես 10 . ուր երբեմն լսելի լինի ձայն ինչ , ուն պատմեն : Է՛ զի՝ պատճառի սա , երբ վերին օդն էլ էքտրացե՛լ յոյժ՝ գայ հազորդի երկրի . ուն ՚ի թաթառն պօլսոյ էլ էքտրացե՛լ երևէր ծխախառն կարմրութի իմն :

1 Մմսն է մարմին լոյծ միաւորեալ ՚ի գողորեաց ամբարձելոց յերկինս . որք խտացեալ լուղին յեթերի այլեայլ գունով և ձևով . ուստի որչափ աւելի նուրբ լինին ամպք , այնչափ ՚ի բարձունս վերձեմեն . և որչափ թանձր և հոծ , այնչափ ՚ի խոնարհ վայրաբերին :

2 Մէգն բաղօղի ՚ի թանձրաթանձր և ՚ի խիտ շող .

Որ զատեւի յամսոց անուճամբ և տեղեալ ,
 Գ 4 , կի՛ մատախոտի՛ ՚ի մեզ յորջորջին :

223

Պարձեւի մառախուղք՝ յաճախ տեսանին ,
 ՚ի գիճին տեղիս՝ կամ՝ ՚ի ջրային .
 Օ ի Թանձրը շոգիք՝ անդ վերաբերեալ ,
 անքոյթ՝ ՚ի հողմոց՝ լինուն զտեղին :

224 Օ ի՛նչ է անճրե :

Սոճաք Թէ անձրեք՝ յամսոց պատճառին ,
 յորժամ՝ ՚ի ցրտոյ՝ խըտացեալ ծանրին .
 Որոց ՚ի մանրիկ՝ կաթիլս զատեալ ,
 իւրեանց ծանրութի՛ն՝ յերկիր անկանին :

225

Իսկ ոլորճնաձև՝ կայլակք զատանին ,
 ՚ի ձեռնն օդոյ՝ դիմակալնսն .

էաց , որք մնան ՚ի խոնարհ վայրս , և ՚ի գլուխս լե-
 բանց . սին իրի յուղակի ելեալ մարդիկ ՚ի բարձրա-
 բերձ լերինս , շուրջ պատին ՚ի Թանձր մառախոյ :

1 Ուրանօր լինի մեզ՝ յուի է օգն , և չէ երեկս ցրտա-
 նայ . զի այն շոգիք չէ բառնիլ արևու հովանան և պատ-
 ճառեն յառարայնի զպէսպէս հիւանդութիս . որպէս է
 տեսնել ՚ի մերձակայ քաղաքս դանտայ , և յայլ ցածա-
 դոյն տեղիս : Ի 1775 նոյ . 8 յամսուրի քաղաքի եղև մեզ
 Թանձր , մինչև մերձակայ առարկայք ոչ երևէին . բնա-
 կիչք ոչ իշխէին ելանել արտաքս վն մ'Թութե , որ այստ
 յետ հասարակ աւուր առ սակաւ սակաւ բարձաւ :

2 Անձրեն է հաւարումս ամսային շոգեաց ՚ի ջուր լու-
 ծելոց ՚ի ձեռն ջերմութե օդոյ . քանզի շոգիք ցրտութի
 Թանձրանան ՚ի վերին դաւառ օդոյ . ուր յանդայտանալ
 մ'Թնուրտին զօրութի ջերմութեն՝ անբաւական լինին
 մնալ ՚ի բարձունս , այլ ՚ի շիթս շիթս լուծեալ տեղան
 յերկիր :

3 Յայն սակս յառարայնի խոշոր լինին կայլակք , զի ՚ի
 բարձրագոյն վայրէ իջեալ միանան չէ այլս զճանապար-
 հայն . ուր գորով օդոյն աւելի անդայտացել սակաւ դե-

Որ 'ի ճըմեռան՝ Թանձըր գտանի ,
և 'ի յամարան՝ անգոյտ և նըրբին :

226

Ուստի և անձրեք՝ համեմատ սըմին ,
'ի ձ՞մեբան խիտ՝ մանրահատ Թափին .

Լ՝յլ 'ի յամարան՝ յանօսըիլ օգոյն ,
անօսը և խոշոր՝ կաթիլք կայլակին :

227 Օ՛խարդ գուշակի անհրեան :

Լ՝յն փոքրիկ խիտ ամպք՝ այն դէ՛ղ ամպային ,
որք միմեանց վերայ բարդեալ տեսանին .

Բարձրացեալ՝ 'ի ծիր՝ վերնագաւառին ,
գուշակէն զանձրե՛կ՝ վաղահաս ուժգին :

228

Գոյն մըթին տեսեալ՝ 'ի հորիզոնին ,¹
երբ յեւ և 'ի մնւտ՝ գըտանի արփին .

Յայտնէ յօգն յաճախ՝ լինեւ գոլորշեաց ,
յորմէ եղանակ՝ պըղտոր գուշակին :

229

Սակայն յորժամ 'նոյն՝ մասն հորիզոնին ,
կենդանի գունով՝ կարմիր նրկարին .

Յայնժամ սակաւ են՝ յօդն գոլորշիք ,
յայտնէ զեղանակ՝ պարզ և գեղեցիկ :

մեկալէ նմին . որով ամբողջ տեղան կայլակք : Եւ ըհա
կառակն 'ի ձմեբայնի մանրաշիթ Թափին . զի խիտ օգն
մանր բաժանէ զկայլակս :

1 * Յորժամ երեկոյ լինի , ասէք պարզ լինիցի . զի
,, կարմրացեալ է երկին . և առաւօտու՝ այսօր մըրիկ ,
,, զի շառագունի տրտմութիւն էրկին . || Տփ . ԺԷ : Քանզի
կարմիր գոյնն յայտ առնէ , թէ յօգն սակաւ գտանին գո
լորշիք . մինչև ոչ լինեւ բաւական առ՝ 'ի պատճառեւ զանձ
րե կամ մըրիկ . և նորին աղագաւ պարզ գուշակի օրն :
Քայց յորժամ շառագունի տրտմութիւն , կի՛մ մ'Թնագոյն տե
սանի երկին՝ յեւ և 'ի մնւտս արևու , ցուցանէ շատ լի

230 Օ ինչ է կարմիր անձրևն :

1 ըրդ կարմիր անձրև՝ երբեմն անձրևին ,¹
յոր կարմիր մարմինք՝ խառնե՛լ գլտանին .
Որպէս որդք բոտոսք՝ վերառեալ յերկին ,
խառն լէ անձրևաց՝ յերկիր կայլակին :

231 Աս զինչ ծծմբայինն :

1 Նձրև ծրծրմբոյ՝ է՝ ՚ի գոյն դեղին ,²
խառնե՛լ զանազան՝ մասամբք ծրծրմբին .
Խակ խրժայինն է՝ պարարտ վերթ՝ կողի ,
իւղային մասունք՝ խառնեալ՝ ՚ի նմին :

232 Աս ցորենանձրևն :

1 Գորենանձրևն է՝ կայլակ ցորենին ,³
որք ՚ի ձեռն հողմոց՝ վերառեալ լինին .
Կամ մանրիկ արմատք՝ խոտոց վերացեալ ,
իբրև ըզցորեան՝ ՚ի խոնարհ թափին :

նեւ գոլորշեաց յօդն . յորմէ պատճառի պղտորութիւն
օդոյ :

1 ՚ի 619 ամս շինուածն հռովմայ տեղաց ՚ի հռովմ անձ
րև կարմիր . որ էր ներկեալ սաեն յանհամար որդանց և
բոտոսաց թռուցելոց յօդս , որք կոտորե՛լ ՚ի կայլականց
անտի խառնին ՚ի շիթս , և ներկեն զանձրևն :

2 ՚ի 1649 ամի անկաւ ՚ի բոբէնհայկ անձրև ծծմբոց
դեղնորակ խառն ծծմբային մասամբք : Աւրանօր ՚ի 1804
անկաւ անձրև լուսափայլ ՚ի դիշերի . բոյց յառաւտուն
գտին ՚ի վր տանեաց մոխիր սպիտակ : Եւ ՚ի 1693 տե-
ղաց յիւլանտիա անձրև իւղային կմխժային . որ մնաց
զաւուրս 15 ՚ի վր երկրի . և ապա շամաքեալ թանձրա-
յաւ սեւագոյն :

3 ՚ի 1807 տեղաց ՚ի հայաստան ցորենանձրև պատճա-
ռեալ ՚ի մանրիկ սոխից խոտի ինչ . որոյ արմատն սոխ-
ձև կցեալ էր բարակ թելիւ . որք երբ չորանան , յա-
փշտակեալ ՚ի հողմոց իբրև անձրև տեղան յերկիր . Թո՛ղ
զի և երբեմն ցորեան և այլ սերմանք բռնուածք հողմոց
ամբարձեալ յօդս , ապա անձրևեն , որպէս սաեն :

233 Արարանքերն :

Խոզ զի և երբեմն՝ քարինք անձրևին ,
որք 'ի հրրարուզին՝ լերանց վեր ձրզին .
Կամ 'ի Թաթառայ՝ հողմոց ամբարձեալ ,
այլևայլ ձևով՝ յերկիր անկանին :

234 Օրհն է ցօղն :

Յօղն 'ի նուրբ մասանց՝ ջւրոց եթերին ,
կաթիլ ձևանայ՝ երբ միմեանց յարին .
'Ի ձեւըն ցրրտոյ՝ պարզ առաւօտին ,
ցօղեալ 'ի վերուստ՝ 'ի վայր կայլակին :

235

Օր նուրբ մասունք ջուրց՝ իբր ըզգողորջին ,
'ի խաղաղ և պարզ՝ յեթերըն լուզին .
Հասեալ 'ի վերայ՝ ցուրտն 'ի գիշերին ,
զլրկին 'ի շարժմանց՝ խըտացեալ լինին :

236

Լյն փոքրիկ մասունք՝ երբ 'ի մի զանգին ,
պայծառ մարդարտաց՝ նրման գըտանին .

1 'Ի 1803 եկն 'ի նորմանտայ գազլիոյ քարանձրև . յոր մեծագոյնն էր 6 օխայ : Նոյնպէս 'ի 1768 անկաւ քար յերկնից 38 լիպրէ ծանրութիւն : Բարձեալ և 'ի պօլիս 'ի 1805 : Թողում ասել զբոցստառ անձրևն , որ տեղաց 'ի կրանագայ 'ի 1741 , և զշրջակայ գաշտս հրդեհեաց : 'Ի 1803 անկաւ յերկնից գերան հրեղէն և կործանեաց զտունս , և ապա մանր խորտակեալ փշրեցաւ հանելով զծուխ : 'Ի նոյն ամի երևեցաւ 'ի պօլոնիա ամպ լուսաւոր և ծխախառն . յորմէ ձայն ինչ լսելի լինէր :

2 Նուրբ շոգին չև ևս յամպ մակարդեղ երբ լի այգն 'ի վայր իջանէ՝ ցօղ ասի . իսկ յորժամ լի երեկս ցօղէ Բ-Գ ձայնի : Յօղն ոչ միայն յօղոյ յերկիր իջանէ . այլև յերկրէ 'ի վեր ելանէ , գարձեալ և 'ի ծակեաց անկոց թորթորի . զք եթէ բոյս ինչ այնպէս փակեացի 'ի մեջ անօթոյ , մինչև չսորդիլ ցօղոյ 'ի նա , տակաւին լի առաւօտն ցօղազեաց երևի : Բարձեալ է թէ ձագառ ապակեղէն

Որք իւր ծանրութիւնն յառաւօտին ,
բանջարաց խոտոյ՝ ի վերայ ցօղին ։

237 Ո՛րպէս լինի եղեան ։

Եթէ ամպք լուծեալ կարի անօսրին ,¹
որ յանկանեւն անդ՝ ցուրտ օդոյ դիպին .
Սոյն կաթիլք ցրուեալ՝ այնպս բաժանին ,
ոչ անձրև յերկիր՝ այլ եղեամն թափին ։

238

Եւ եթէ մանրիկ՝ մասունք ցօղադին ,
տապով արևու՝ ցամաքեալ լինին .
Երման ոտայնի՝ յօդ տարուբերին ,
հերս արուսեի՝ յայլոց յորջորջին ։

239 Ո՛րպէս և Յիւնն ։

Չիւն յաւէտ լինի՝ ի խիտ ձրմերին ,²
երբ ամենացուրտ՝ են գաւառք օդին .
Օ ի ամպք ի ցրտոյ՝ յամենայն կողմանց ,
պատեալ պաշարեալ՝ իսկ և իսկ սառին ։

չրջուն՝ ի վր եղե՛լ նեղագոյն տակառի՝ յետ արևուն մտա
նելոյ դիցի յամարայնի յօդ բացօթեայ՝ վինի սակաւուց
ցօղէ ներքին յատակ ձագառին ։ Ի ցօղոյ անկոց բազկա
նայ քաղցրահամ գաղպէն հայաստանեոյց ի տերևս , և
մանանայն գալապրիոյ՝ ի ծառս , շաքարն յեղեգունս արա
բիոյ , և մեղրն՝ ի ստամբս մեղրուաց (847) ։

1 Կուրբ շոգին կի՛ լուծե՛լ ամպն հարե՛լ ի ցրտոյ՝ խտա
նայ կի՛ կարծրանայ և կոչի եղեան . որ մանր թափի ի վայր ։
2 Քանզի ամպք չև ևս լուծեալ յանձրև՝ գուլով շոգի
կի՛ իբրև փրփուր , սառին՝ ի ցրտոյ վերնագաւառին , և ի
պատառս սպիտակս թափին ի վայր . և զի բարդք ձեան
լի են օգալից ծակաեօք , նմին իրի թեթև գտանի ձիւնն
և սպիտակ ։ Չիւնն յաճախ պատճառէ հիւս՝ ի հայաստան ,
և յարևմտեան լերինս , որ զառաջինն է փոքրիկ շեղջ՝ ձեան .
բայց երթալով երթայ , իսկ զժառս , յախշտակէ զմարդ
և զանասուն . և նոքօք հանդերձ մեծանայ յոյժ , կործա
նէ զբաղում գիւղս , և արդեւու զընթացս գետոց , և
լնու զդաշտս ։

Յորժամամայք չեւ ևս՝ ՚ի կաթիլ զատին ,
այն դոյզըն մասունք՝ նոյն հետայն սառին .
Լ' պա բարդելով՝ ՚ի միմեանց վերայ ,
նովին ծանրութի՛ք՝ բարդ ՚ի բարդ թափին :

Եւ զի նոյն բարդք ձեան՝ օգուվ լընանին ,
գուով լի ծակտեօք՝ թեթեւ գըտանին .
Որք շառաւիղաց՝ են ցոլացուցիչք ,
որով ըսպիտակ՝ պայծառ երևին :

Լ' որդ յորժմ թանձրե՛լ՝ ջուրքըն մակարդին ,
՚ի ձեռըն սաստիկ՝ ցըրտութե օդին .¹
Ուր մակերևոյթ՝ ջըրոյն կարծրացեալ ,
սառըն բաղկանայ՝ որպէս զապակին :

1 Ոմանք ՚ի բնախօսից համարին , թէ աղային նուրբ մարմինք խառնեալք ՚ի ջուրն՝ վարեն՝ զհրեղէն մասնկուս ջրոյ , և անգէն ցրտութի՛ք սառուցանեն . ուստի երբ հուր մատուցանի յանօթն , զորով պատե՛լ է ձիւն խառն թ աղի , խկոյն սառի ջուրն թ հալիլ ձեանն և աղին . վս զի հուրն զսառուցե՛լ մասնկուսն նոյ յաման անգր մկեալ տանի . որով և նախ յարաքին կողմանէ անօթոյն սկսալ նի սառիլ : Եւ զի լի է սառն օգուվ . յայն սակս թարձալ կեալ բեկանէ զանօթն , և թեթեւ գտե՛լ լուզի ՚ի ջուրն . ՚ի Ֆիօրէնցա եգին զջուրն յանօթ պղնձի . յոր սառուցեալ է հերձ զանօթն . այս ուժգնութի հաւասար գտալն 27 հազար լիպրէ ծանրութե : Վարձեալ՝ եգին ՚ի թնդանօթի ջուր . և ահա յետ 12 ժամուց սառուցեալ է հերձ : Եթէ գիցի փայտ ՚ի ջուրն յառաջ քան զսառիլն , օգն անցե՛լ թ ծակախա փայտին ոչ բեկանէ զանօթն : ՚ի հիւսիսային կողմանս՝ ՚ի սաստիկ ձմերան կարծր լինի սառն իբրև զվե՛մ : Յամի 1740՝ ՚ի բեթրպուրի շինեցին զպալատ մի համակ ՚ի սառէ . զի գերանք , տանիք , և այլ մամ մալ սուրք էին սառն , եդե՛լ առ նմին և 6 թնդանօթս սառի :

243 Աս որպէս կարկոտան :

Երբ մասունք ամպոց լուծեալ կայլակին ,
 յանկանիւն 'ի վայր՝ ցուրտ օդոյ գիպին .
 յորմէ սառուցեալ՝ կայլակ ջըրային ,
 կարկուտ ձևանան՝ 'ի վայր անկանին :

244

Սակայն նոյն կայլակք՝ 'ի յամարայնին ,
 'ի մի հաւաքեալ՝ մեծազանգ լինին .
 Ապա սառուցեալ՝ 'ի ցուրտ գաւառին ,
 'ի տարազ սիսուանց՝ յերկիր կարկըտին :

245 Օ՛րն է որոտան :

Այն զարհուրելի՝ տեսիլ ահադին ,
 գողցես պատառիլ՝ կամարն երկնային .
 Այն ահեղագոչ՝ գողալ թանձր ամպոց ,
 'ի մեզ որոտան՝ յորջորջեալ ձայնին :

246

Օ՛ր բազում խիտ ամպք՝ 'ի յամարայնին ,
 բարդէ՛լ ըզմիմեամբ՝ դիզադէզ թանձրին .
 Որք 'ի գոլորշեաց՝ յարտաշնչու թեանց ,
 յայլևայլ մարմնոց՝ զանգեալ մակարդին :

զորս իբրև արձակեցին՝ գնտակքն՝ 'ի 60 ոսնաչափ տարա
 կայութե ծակեցին զտախտակ մի ստուար :

1 Վայրահոս շիթք անձրեաց 'ի յամարայնի՝ սառին 'ի
 վերին ցրտութէ գիմամարտուք իմն ջերմին գոլորշեաց .
 և թափին յերկիր ծանրութե իւրեանց իբրև զհաստ
 սխառան սառուցեալս . և զի յամարայնի ամպք են կայ
 ծակնուաք , և լի բորակաւոր գոլորշեօք , որք օգտեն
 սառուցման ջրոյ , նմին իրի յայնժամ գիւրաւ սառին
 շիթքն :

2 Որչափ աւելի թանձր են ամպք՝ 'ի յամարայնի , այն
 չափ մեծամեծ հատք կարկտի տեղան , մինչև բազմալիտք
 կշռութե . որք յաւէա 'ի վայրէջան մեծանան 'ի յաճա
 խուէ շոգեաց , զորս ք իւրեանս ձգեն և միանան . ուս

247

1. ըդ սոյն ամսօք դիզեալ՝ ճրնչին և սեղմին ,
յառնելու թէնէ՝ հողմոց եթերին .

3) որում բորբոքեալ՝ նիւթք ծրծրմբային ,
ճայթիւնք և բոմբիւնք՝ ի բարձանց լըսին :

248

1. զի օդ փակեալ՝ յայն կրծիկ ամսլին ,²

ճրգնի գտանել՝ ե՛լս յանել բանալին .

3) որում անօսրեւ՝ ճայթէ զամսյն ուժգին ,
գործէ զորոտումն՝ ըստ թընդանօթին :

տի՛ ի վր բարձրաբերձ շէրանց ոչ այնչափ մեծ իջանեն
կարկուտք : ՚ի 1812 ՚ի սահմանս վենետիկոյ կարկուտաց
այնչափ մեծ մինչև մի հատն 10 օխայ կռեաց , որ ՚ի
բարձուէ իջեալ միացան ՚ի ճանապարհի : և ՚ի 1808 էջ ՚ի
կողմանս անկիւրիոյ հատն 400 տրամ :

1 իբր զի նիւթք ծծմբային և բորակային եւէբորաց
եալք յայլևայլ խորչս ամսոց ուժգին բանութք պատա
ռին էթէ ամսօք իցեն աւելի իմն հոժք , որով և հէ
ղաձայն որոտմունք գործին . ուր և երբեմն յանձկագոյն
ծոց ամսոյ ինչ փակեալ յեւէբորանալ նիւթոյն՝ ահագին
շռուալիւն լսի , իբրև զբոմբիւն հրացանի թօթափամտք
կայծականց : Յորմէ նախնի քիմիականք եղին թէ հուրն
պարտի լինել նախածին տարր , կի՛ մի ՚ի 4 տարերց . որով
հետև փակեալ գտանի յամենայն մարմինս գոլով թէթև
և թափանցող , յօդ ՚ի ջուր ՚ի հող , յամս , և յայլ ամենայն
բաղադրեալ մարմինս . որով և կոչի ալափ , զի միշտ է ՚ի
շարժման և սկիզբն համարի բաղադրութե և լուծման
մարմնոց իւրով աղդու և կիզիչ զօրութիւն (309) :

2 Ըստ ոմանց բնախօսից որոտմունք պատճառին եր
բեմն և յօդոյ փակելոյ ՚ի խորչս ամսոց , որ ճգնի գտա
նել ելս . բայց իբրև անօսրի՛ ճայթեցուցանէ զամսյն և
գործէ զորոտումն : Ուր գիտելի է , եթէ ձայնն որոտ
ման յապաղէ գալ յետ փայլական լը չափու միոյ զարկի
բազկին՝ այն ամս հեռի գտանի ՚ի մէնջ 173 ձողաչափ ,
եթէ ըստ չափու երկուց զարկից՝ հեռի է 346 ձողա
չափ , և ն :

249 Ո՛րպէս լինի փայլանին :

Եւ է զի առանց՝ որոտմանն ձայնին ,¹
 հուր յամպոց ելեալ՝ յամպըս փայլակին .
 Վանզի ամպք սահաւ՝ ելէքտրականք ,
 շրժչըփեալ փայլակք՝ ցոլացեալ լինին :

250 Եւ որպէս աստպս :

Պարձեալ՝ ի փոքրիկ՝ ամպըս նիւթք վառին ,²
 կարծի թէ յերկնից՝ աստեղք անկանին .
 և կամ ոտոտեալ՝ հըրեղէն վիշապ ,
 աստպս անկասպեղս՝ վառ ի վառ սահին :

251 Եւ որպէս հոսրճուի :

Սպարարտ տեղիս՝ կամ ՚ի ձիւթային ,³
 հուր ինչ շրջմովիկ՝ մնլորեալ շրջին .

1 Երբեմն ամպք՝ սահաւ ելէքտրացեալ են , և ոչ այնչափ հոծք . ուստի ՚ի հրանալ նիւթոյն՝ երանէ փայլակն անձայն , որպէս վառօդ լուցեալ յանփակ վայրս . նմին իրի յամարայնի լէ երեկս յաճախ երևին . զի գոլորշիք շփմամբ ամպոց փութով լուցանին , և չեն փակեալ յարգեւանս ամպոց , որպէս զի յեւն անդ՝ որոտումն գործեացեն :

2 Բազում անգամ տեսանեմք զաստեղս կի՛ ստուպս ՚ի խոնարհ յափշտակեչ . և երբեմն տեղւոջէ ՚ի տեղի արշաւեալ . որք են դիւրավառ գոլորշիք լուցեալք յելէքտրական հրոյ ՚ի վերին գաւառ . որք սովորակի արծաթափայլ երևին վառ ՚ի վառ , ՚ի մեզ անկասպեղ ձայնեալք , չնանկեչ աստեղք : Եւ զի՛ նոյն հրեղէն մէտեւրայք բոլորչի երևին զարդարեչ վերջաւորօք՝ այսր անգր արշաւելով նման անժոյժ այծու . որով և կոչին այժ+ սպառչեալ : Եւ զի իբրև գերան տեսանին . ուր եթէ միջին վայրն ու ուղեչ գտանի՛ վիշապ կոչին : Եւ է զի իբրև ջահ երևին , կի՛ որպէս սիւն , վահան , գեղարդն , բուրգն , ևն . որոց նիւթ և արամագրութի վն պէսպէս լինելոյն յայլևայլ ձևս նշմարին : Երևեցաւ ՚ի 1808 ՚ի պօլիս և ՚ի վէնէտիկ լը մեծութեւ Լուանի :

3 Այս երևոյթ կոչի ևս հոսր լա՛ւիւղ . որ շարժմամբ հողմոց բազում անգամ ելէքտրանայ և հաւաքի զկայմիւ

1 Վի առ գիտովք՝ մարդկանս կենդանեաց,
է՞ զի առ կայմիւ՝ շուրս երեւին :

252

Որք յորժամ էն զոյգ՝ երկունորեակ ձայնին ,
կասորք և պողոտա՝ ըստ յունականին .

Երբ միակ միակ՝ ՚ի կայմին կըռուճին ,
յայնժամ՝ հեղինէ՝ անուն տան նմին :

253 Օրինք է կայծակն :

Կայծակն է կայծ վառ՝ վառեալ յեթերին ,
յորժամ խըմորին՝ նիւթք ծըծըմբային .

Որ ՚ի շրջմանէ՝ ամպոց հրացեալ ,
արագ և յանկարծ՝ ՚ի խոնարհ սահին :

Նաւուց , և վառի . եթէ այս հուր վերանայ դէպ ՚ի ծայր
կայմին՝ նշան է թուլանալոյ մրրկին . զի յոչ խոտիւնէն հող-
մոց զօգն՝ ՚ի վեր բերին բնական իմն թեթևութիւն . իսկ
եթէ երևեսցի ՚ի ստորակողմն խոնարհիլ , նշան է սասա-
կանալոյ մրրկին : Երբեմն այս նիւթ ելեալ ՚ի մարմնոց
և ՚ի պարարտ տեղեաց երևին զվարսիւք մարդկան , և
զբաշիւք երիվարաց . այլև ՚ի գերեզմանատունս , և ՚ի վր
մարմնոց կախելոց զփայտէ , և ս և ՚ի ջուր ծովու շարժել
՚ի թիոյ , ևն : Սոյն հուր մնլի փախչի ՚ի հետամոտաց , զի
օգն յառաջ մղէ զայն . և հետամուտ լինի փախստէից ,
զի օգն վանի յառաջոյ կողմանէ :

1 Ըստ այսմ և հիւսիսային բաշարչան է ՚ի կարգի հրեղէն
մէտէորայից . որ զկնի 2 , կի՞ 3 ժամուց մտանելոյ արե-
գական՝ երևի յանլուսին գիշերի ըն նմանութե արևազալ
պահու իբրև հրդեհ ինչ մեծ ՚ի հիւսիսակողմն պատճա-
ռեալ յելէքարական շոգեաց փոխադրելոց անդ յայրե-
ցած դօտուոյ :

2 Կայծակն կի՞ շանթն պատճառի ՚ի ծծմբային և յե-
լէքարական նիւթոց հաւաքելոց ՚ի վերին դաւառ օդոյ .
իբր զի՝ ամպք ինչ ՚ի ձեռն յուզման օդոյ , կի՞ հողմոց
երէքարացեալ արձակեն շոգիս կի՞ շանթս յերկիր , և եր-
բեմն յանէլէքարացել ամպս . որ ելէքարական ուժգնու-
թիւն այնպէս արձակին ՚ի խոնարհ , մինչև հալել զհրահա-
լէլիս , և քանդել զորմս . յորս վն զի բազում հրահալէ-

254

Օ ի ելէք քորական՝ հըրբափայլ շողին ,
 շողեալ ՚ի յամսոց՝ բուռն անհընարին .
 Բժշառ զաշտարակ՝ բարձրաբերձ տեղիս ,
 քանդեալ տասպալէ՝ որոց պատահին :

255

Աստի և երբեմն՝ կայծակունք դիպին ,
 ՚ի մարմին մարդոյ՝ այլ ոչ հանդերձին .
 Ա զի այլայլեն՝ զգինին ՚ի տակառ ,
 առանց դիպելոյ՝ բընաւ տակառին :

256 Օ Ինչ է ծիածանն :

Վեղէցկանըկար՝ կամար ցօղապին ,
 ամբարձեալ ՚ի վեր՝ քան հորիզոնին .
 Արմբերանդ դեղին՝ նըման ծիրանւոյ ,
 յանդիման արփւոյն՝ պճնեալ երևին :

Ը ի մասունք զօղել կան , ՚ի դուրս ժայթքեն զելէքարա-
 կան շողիս , և անդէն քայքայեն :

1 Յոյն սակա շանթն վեր՝ ՚ի վայր առնէ զոսկիս ՚ի քսաւ
 կին , զսուրն ՚ի պատենին , և զգինին ՚ի տակառի անդ՝ ա-
 ռանց շրասելոյ ծածկութից , քանզի այն ելէքարական
 նիւթք զօղեալք ՚ի ծակտիս մօրմնոց ելէքարանան ՚ի շան-
 թէ անտի և քայքային : Ամանանց մանուկն շրասի յար-
 զանդի մօրն առանց շրասու ծնողին , կենդանիք սատակին
 անվեր , և ծառք հերձոտին . վն զի ելէքարական նիւթք
 վազեալք ՚ի մէջ կեղևոյ ծառոց , և հիւթք ՚ի փորոտիս
 մանկան և կենդանեաց՝ բուռն շարժմամբ շոգւոյ անգայ-
 տանան և զոյս ամենայն երևոյթս պատճառեն . այ իրաւ
 քաստօր բանաստեղծն ՚ի տղայութե ոչինչ շրասեցաւ ՚ի
 գիրկս մօրն , թէպէտ մօյրն կայծակնահար մեռաւ :

2 Ծիածանն աք է աղեզն բազմադունի , Չ և Ե . որ
 յանձրևային կողմն երկնից երևի յանդիման արեգական
 ՚ի վերոյ քան զհորիզոնն . քանզի յորժամ արևն « արձա-
 կէ զճառագայթս ՚ի հանդիպակողմեան ամպս ցօղապին ,
 շառաւիղք իւր բեկբեկին և յօշանան , որով և դունաւոր
 կամար երևեցուցանեն . ուր երբեմն երկու ծիածանք

257 Եւ որպէս լինի :

Յորժամ շառաւիղք՝ արեգակնային ,
վըճիտ ցողանան՝ յամպ անձրեւածին .

Եւ յս ծիրանափայլ՝ վերամբարձ գօտին ,
եօթնաթիւ գունովք՝ յերկին նըկարին :

258

Եւ աջին մասն է՝ ճանաչագոյն ,¹
ասպա ծիրանի՝ հանաչ երկնագոյն .

Վեղին ոսկեգոյն՝ հոլակ յետոյ կարմիր ,
որ ըզկորընթիս՝ եզերէ գօտւոյն :

259

Եւ յս պէսպիսու թիւնք՝ գունոց պատճառին ,²
յորժամ շառաւիղք՝ կըրկին բեկբեկին .

ժիանգամոյն երևին , ուղ ահբ , և շրէ . և գուն ուրեք
երեք ծիածանք : Զծիածանն եբրայեցիք կոչեն իմար ալ .
և հեղէնք՝ որդի դարձան :

1 Հիանալի գոյնք ծիածանին միշտ այսու կարգաւ
ճնանին , բայց զկնի ծիրանւոյն յաջորդէ երկնագոյնն ,
սուրա կանաչն . սակայն յորժամ ծիածանն է կրկին , գոյնք
վերին ծիածանի ներհական կարգաւ նկարին . որովհետև
կարծիրն սկսանի՝ ի խորոփեացն , և մանուշակագոյնն վեր
ջանայ ՚ի կորնթիս . զոր ՚ի ստորին ծիածանի՝ շառաւիղն
անկեալ ՚ի կայլակն . բեկբեկի և ցողանայ յաչս օ լէ ան
կեամբ 40 աստիճանաց , և երևի մանուշակագոյն . իսկ
անկիւնն օ ի գորով հաւասար 42 աստիճանաց նկարէ
դգոյն կարծիր . և ահա ՚ի մէջ երկուց գունոց կարգաւ
նկարին այլ գոյնք : Եւ ընդհակառակն ՚ի վերին ծիա
ծանի՝ շառաւիղաց ցողացե՛լ ՚ի կայլակն , կրկին բեկբե
կին , և անկիւնն իօ , երևեցուցանէ կարծիր . իսկ անկիւնն
իօ՛ն նկարէ մանուշակագոյն . ասպա և միջանկեալ գոյնք
նկարին ներհական կարգաւ : Եթէ լուսինն ծագեացէ
զլոյս իւր ՚ի ցողագին ամպս այսու արամադրութիւն՝ պաա
նառէ ծիածան բացագոյն :

2 Նախնական ծիածանն պատճառի ՚ի կրկին բեկբեկ
մանէ և ՚ի միոյ ցողացմանէ . իսկ երկրորդականն ՚ի կրկին

Նոյն և ցոլանան՝ յամպոց՝ ի յերկիր ,
որք լուծեալ ՚ի շիթ՝ կախին ՚ի յերկին :

260

Նաշտու թեան նըշան՝ եղև այս գօտի ,¹
ընդ մարդ և անձ՝ յետ ջըրհեղէղի .
|| ՚ի և ըս մարդիկ՝ ջուրք հեղեղեային ,
թէև գոյր յառաջ՝ այս տեսիլ վերին :

261 Օրհն է Բան :

Նահն է գունազարդ՝ մանեակ բոլորչի ,²
շուրջ զարեգակամբ՝ լուսնի՛ն բոլորի .
Վանզի նուրբ շոգիք՝ վերառեալ ՚ի յօդ ,
ըզլոյս բեկբեկեն՝ Բանն պատճառի :

262 Նա պի՛նչ արեան մանուկ :

|| պատկեր արփւոյն՝ տեսիլ սրերալի ,³
քանզի յամպըս ինչ՝ արև նըշմարի .
Օ որ և պատճառեն՝ ձիւնեղէն գըլանք ,
ի ձեռն անդրադարձ՝ ցոլմանց արեգի :

բեկբեկմանէ և ՚ի կրկին ցոլացմանէ արեգակնային շա-
ռաւիղաց :

1 * Չաղեղն իմ եղից յամպս , և եղիցի ՚ի նշանակ յա-
ւիտենական ուխտին լ իս և լ ամ երկիր || : Ծն . լ : Իբր
զի երբ երևի ծիածանն , այլ ոչ գայ անձրև . ուրեմն ոչ
ևս լինի ջրհեղէղ :

2 Երբեմն բազում բակք կմ նոյնակեգրոն շրջանակք
միանգամայն երևին ունեւով միշտ ՚ի կեգրոնի զլուսա-
ւորս : Ի 1692 երևեցաւ բակ մի բազմագոյն , որոյ առա-
ջին մանեակն էր երկնագոյն , եկն ծիրանագոյն , երդն
կանաչագոյն , և վերջինն դեղնագոյն : Վարձե՛լ և երբեմն
չառաւիղք արևու անցե՛լ լ պատառուածս ամպոց իբրև
գաւազան երևին . և երբեմն շէ՛նչ նշմարին պատճառեալք
յօդս ՚ի խիտ գոլորչեաց և ՚ի խիտ ամպոց :

3 Քանզի ՚ի վերանալ արևու յինչ և իցէ բարձրու՛մ յա-
ւետ ՚ի տառուցե՛լ ժամանակի՛ պատկերք արեգակն նկա-
րին յամպս լցեալս ձիւնեղէն գըլանք , որոց արտաքին

263 Օրհնէ է երկրաշարժութեան :

Երկրաշարժութիւն՝ է շարժումն երկրի ,
 զի մասն աշխարհի՝ թընդեալ երեքի .

Եւ զի դըղըրդեալ՝ վայրք բորակային ,
 ահագին դողմամբ՝ ճեղքեալ պատառին :

264 Եւ որպէս լինի :

Քանզի կը պրաձիւթ՝ և նիւթք ծրծրմբին ,
 ՚ի փորոքս երկրի՝ դիզեալ մըթերին .

Յորոց ՚ի վառիլ՝ ուղիք արտաշընչին ,
 շարժեալ դըղըրդեն՝ ըզծով և գետին :

265

Իսկ այլք զայս շարժումն՝ այլազգ մեկնեցին ,
 թէ ՚ի ստորերկրեայ՝ ջըրոց պատճառին .

Օր խոռոչք լի են՝ օդով և ջըրով ,
 յարձակելն՝ ՚ի դուրս՝ գետինք տատանին :

մասունք գողով թափանցիկ լեռնին զբառուիղս արևու .
 իսկ ներքին մասունքն դիմահար՝ ցոլացուցանեն զտիպ
 արևուն ը օրինի հայեւեաց : ՚ի 1629 երևեցան ՚ի հռովմ
 4 արևանմանուկք Բ , Գ , Ն , Է . շուրջ զօրովք անսանէին 2
 բակք , ունեւով զարևն = ՚ի միջի . Չ՛ է : Այս երևոյթ
 յաճախ լինի ՚ի հիւսիսային ամերիկա :

1 Յորժամ խմորէլ արծարծանին իուռն յորդութիւք
 նիւթոց կմ ելէքտրական ուղիւից՝ տատանին ջուրք , հա
 լին հրահալէլք , սասանի և պատառի երկիր . ուր ընդ
 գտանելն էլս՝ ՚ի դուրս յարձակին ՚ի ծոցոյ լերանց և
 յայլ տեղեաց՝ բոցք , քարինք , ուղիք ջրոց , և ալգի ազ
 ցի հանքք այնչափ ուժգին , մինչև երբեմն լերինք և
 կղզիք ՚ի վեր երևին , երկիրն՝ ՚ի միոյ կողմանէ մերթ ցած
 նու և մերթ բարձրանայ , որում երբեմն զուգընթանան
 ահագին ձայնք որոտման : ՚ի 1726 երկրաշարժութիւք ՚ի
 վեր ելին գնտաձև մարմինք , որոց մին ձայթեւ ահագին
 որոտումն գործեաց և սպականեաց զօգն այրելով զտե
 ղին : ՚ի 1809 ՚ի կողմանս բօսֆօլի երկրաշարժութիւք է
 րևեցաւ յերկինս գնտակ մի մեծ լուսաւոր , որ ահագին
 ձայնիւ ձայթեցաւ :

266 Ո՛ր լինի :

՛Ի հրրաբուղիս վայրս՝ յաւէտ տեսանին ,¹
 ուր ցողմամբ հրեղէն՝ տեղիք սասանին .
 Որպէս ՚ի կողմանս՝ միջերկրականին ,
 ծուխ ածիւն և քար՝ ՚ի դուրս արձակին :

267

Սիկիլեան ետնա՝ բերան անդընդին ,²
 և լեառըն վեսուս՝ ՚ի նէապոլին .
 ՛Ի արձեալ և եկլա՝ լեառն իսլանտիոյ ,
 հրրացայտ բոցով՝ յաճախ գըղըրդին :

1 Պատմէ վարդան քահանայ, թէ ՚ի 1341 լեառն մամբ
 բուտ ՚ի կողմանս վանոյ յանկարծակի գոռաց սաստիկ ,
 և սարն պատտառեալ հուր ցողացուցանէր մառախլապատ
 ծխով, քարինք եռային, և մեծամեծ վէմք ընդ երկինս
 ձգէին : ՚ի 1693 չորիցս երկրաշարժութի եղև ՚ի սիկիլե
 լիս . 18 դեօղք և բազում քաղաքք կորեան . 93,000 մար
 գիկ մեռան : ՚ի 1730 չորս փարսախաւ հեռի ՚ի փէքինէ
 ջինաց բացեալ եղև երկիր, և էլ ծուխ կիմամպ ժահա
 հոտ, և վայրն մնաց այնպէս . ապա էլ ջուր դեղնորակ
 սեաւ : թո՛ղ որ եղև ՚ի սանդուրին կղզի ՚ի 1707 . ուր ՚ի
 մէջ ծովուն կղզի մի ՚ի վեր երևեցաւ, ծովն մերթ կանա
 չագոյն և մերթ կարմրագոյն տեսանիւր, ՚ի տունջեան
 ծուխ և ՚ի գիշերի բոց երևէր . քարինք ՚ի վեր ձգէին
 հանդերձ որոտմամբ, և ժայռ մի ՚ի 40 աւուրս աճեալ
 վերստին սուղե՛լ անհետ եղև : ՚ի 1809 երկրաշարժութի
 երկու գիւղօրէք սուզան ՚ի կողմանս զմիւսնոյ . ՚ի տեղ
 աջէ միոյն էլ ջուր :

2 Նախնիք տեսե՛լ զանընդհատ վառումն սիկիլեան լե
 րին բերան անգնդոց ասացին լինե՛լ . որոյ բարձրութին
 է 30,000 քայլ, և շրջապատն 10,000, որ ՚ի հեռուստ է
 րևի իբր ծինե՛լայլ և սիւն ահագին : ՚ի տափարակ դա
 գաթան է բերան հնոցին . յորմէ էլանէ ծուխ և հուր,
 երբեմն և գետ հրեղէն ընմանութի հալե՛լ կապարոյ :
 Սին համեմատ դտանի լեառն վեսուս՝ որ ՚ի նէապոլիս .
 բարձր 3,600 տան՝ . այլ ՚ի 1758 զիջաւ դուրսն 64 տանա՝ :
 Գլուխ լերին ջերմ է և աճիւնալից . ՚ի բերանոյ հնոցին

268 Օ ինչ է հակընթացութիւն :

Մակընթացութիւնն շարժումն է ծովին ,
որով ջուրք աճեալ՝ յափըն կոյս դիպին .
Մինչ ովկիանոս՝ այն ծով ահագին ,
գընայ դիզանայ՝ դէպ ՚ի հիւսիսին :

269

Սակայն ՚ի վեց ժամ՝ ջուրք ծովու աճին ,
և յետ այնորիկ՝ անշարժ խաղաղին .
Մինչ յերկոտասան՝ միջոց վայրկենին ,
որով յայնժամ՝ ծովք՝ մեծ և լի կոչին :

270 Եւ ինչ փեղափոխութիւն :

Տեղատուութիւնն է՝ տեղի տալ ծովին ,
զի ջուրք ՚ի յափանց՝ յետադարձ լինին .
Մինչև ցրվեց ժամ՝ իսպառ պակասին ,
ապա վայրկեանս ինչ՝ այնպէս դադարին :

Ըսին շառաւիժներ և բոմբիւնք . ներքին հուրն միշտ վառեւէ կայ . ՚ի ցերեկի երևի ծուխ , և ՚ի գիշերի լոյս , երբեմն ելանէ գետ հոյ ծծմբախառն , որ և քարանայ . յամի 79 սաստիկ բորբոքեւ թանձր ծխովն խաւարեցոյց զարեգակն , և զաճիւն իւր ցնդեաց մինչև յեգիպոսս , նաև ՚ի կոստանդնուպօլիս : Այս հրաբուլի ունի հաղորդութիւն լի վերնոյն ստորերկրեայ անցիւք : Արք երբեմն արձակեն զմեծամեծ քարինս մինչ 200 հօխայ ծանրութիւն , որոյ նիւթ է ՚ի պաղլեղէ՝ ի ծծմբոյ և յարջասպէ զանգեւէ :

1 Մեծատարած ջուր ծովու տարուբեր շարժմամբն է զի դէպ ՚ի ցամաքն ընթանայ , և է զի տեղի տուէւէ յետս դառնայ անտի . առաջինն կոչի Տակընթացութիւն , երբ ովկիանոս ՚ի հարաւոյ դիմէ ՚ի հիւսիս . և եկի՞ն փեղափոխութիւն երբ դառնայ ջուրն . ուստի յիւրաքանչիւր աւուր եկիցս դիզանան ջուրք , և երկիցս զիջանին՝ ցամաք թողեալ զծովափնեայ :

2 Իւրաքանչիւր մակընթացութիւն և տեղատուութիւն տեւեն ժամք 6 . և բոպ՝ . 12 . որ է չորիւր մասն ժամանակին՝ յարում լուսինն մեկնեւէ ՚ի միջօրէէ իրիք տեղոյ՝ դառնայ ՚ի նոյն . որովհետև զայն ճանապարհ վարէ ՚ի միջոցի 24

271

Լ՝ յօսէս ցրվեց ժամ՝ ջուրք ծովու աճին ,
 նոյնչափ ժամանակ՝ պահասեալ լինին .
 () ետոյ նոյնգունակ՝ աճին պահասին ,
 ՚ի միում աւուր՝ չարից ս այլայլին :

272 Օ ի՛նչ է պարճառն :

Լ՝ յարք փոփոխման՝ պատճառն է լուսին ,
 որ երբ հասանէ՝ միջօրեայ երկրին .
 Բարձրացուցանէ՝ ըզջուրս ծովին ,
 մակընթացութիւն՝ անդանօր լինին :

273

Լ՝ յորժամ դառնայ՝ դէպ հորիզոնին ,
 ձրգէ ըզկընի՝ ըզջուրս ծովին .
 Որով պահասեալ՝ ջուրն ՚ի ծովափնէ ,
 անդ տեղատուութիւն՝ ջրոց պատճառին :

274

Դարձեալ երբ գընայ՝ ընդ երկրաւ լուսին ,
 դէպ ՚ի միջօրեայն՝ դիպի ըստորին .
 Լ՝ նդրէն ըզհեա իւր՝ ջուրըն շարժելով ,
 մակընթացութիւն՝ նորոգ հեաւելին :

Ժամուց և 48 բոսէից . ուր և ՚ի 12 բոսի՝ . մայ ջուրն
 անշարժ , թէ՛ ՚ի մակընթացութեան , և թէ՛ ՚ի տեղատու-
 թեան :

1 Բանզի յորժամ լուսինն , Չ՛ , է է ՚ի շ կի՛ ՚ի է մերձ
 դասնի = և է մասանցն ովկիանոսի , քան « մասանց .
 նմին իրի յայն վայրս առաւել ներգործէ և ձգէ ՚ի վեր
 զջուրն , և լինի մակընթացութի՛ն = և ՚ի է . իսկ յորժամ
 իսնարհի ՚ի հարիզոնն , լինի տեղատուութի՛ն = , է , և մա-
 կընթացութի՛ն յայն քաղաքս , ուր է լուսին : Բայց երբ
 գնայ տարեկան շարժմամբ դէպ ՚ի բեւեռն շ , կի՛ բ , շարժէ
 զջուրն , և պատճառէ անդ աւելի մակընթացութի՛ն . այլ
 յորժամ արեգակն ճ զուգընթաց լինի լուսնի , յայնժամ
 ստասիկ լինի այս երևոյթ :

Նոյնպէս ձեմն առեալ՝ յընթանալ լուսնին,¹
 գէպ 'ի հորիզոն՝ հակասեալ եզրին .
 Դարձեալ սահասումն՝ և տեղատուութիւն,
 ծովու և գետոց՝ լինի վերստին :

ՆԸ՝ՆՔԸՐԸՆՆՈՒԹԻՒՆ

276 Օրհնէ հանաբանութի :

Հանքաբանութիւն՝ ուսումն է հանքաց,
 քրննէ զյատկութիւն՝ զորակ մետաղաց .
 Ղառէ զգոյութեանց՝ աղային նիւթոց,
 այլև ըզհողոյ՝ զպատուական ականց :

277 Եւ զհնէ հանքն :

Իսկ հանքն է մարմին՝ գոյացեալ յերկրի,²
 յորում են մետաղք՝ խառնեալ ընդ քարի .
 Ար երբ 'ի քուրայն՝ հրրավառ մատչի,
 զատեալ սրոչէ՝ զարծաթ կամ զոսկի :

1 Երբակի լինի մակընթացութի և տեղատուութի քա-
 բէիան, ամաիան, և օրաիան . առաջինն առաւել լինի 'ի հա-
 սարակածին քան յարեադարձս, իսկ եկն յաճախ լինի
 'ի նորման և 'ի լրման լուսնի :

2 Հանք կոչին այն ամ մարմինք, որք 'ի ծոց հողոյ մա-
 ծեալ ը միմեանս 'ի մի կոչտ հաւաքին, որոց գլխաւոր
 նիւթն է ջուր և հող, խառն այլևայլ մասամբք . որք 'ի
 ձեռն ներքին ջերմութե հողոյ և գոլորշեաց, և 'ի ձեռն
 արտաքին ջերմութե արևու պէսպէս տրամադրին . և
 իբրև 'ի ծոց մօր գոյանան 'ի հող, և կմ յերակս լերանց .
 որպիսի է երակն աբ . Չև . ք . ուր հաւաքեալ հանքային
 նիւթոց միանան և 'ի հանք փոխարկին . որք և վերածին
 յաղս, 'ի հրահալէլիս, և 'ի քարինս . որոց ծանօթութի կոչի
 հանաբանութիան :

278 Օ ինչ է հող :

Հողն է նիւթ դանդաղ՝ ապակեայ մարմին ,
բուսոց կենդանեայ՝ մայր է նախածին .
Յորմէ սընանին՝ ի նոյն վերածին ,
անշունչք շընչաւորք՝ մարդիկ հողածին :

279

Սէտաղք և քարինք՝ այլևայլ մարմին ,
խառնեալ կան՝ ի հող՝ յերակըս երկրին .
Ուր որչափ ՚ի խոր՝ հող երկիր պեղին ,
այնչափ սերտագոյն՝ մարմինք երևին :

280

Ինչպէս էն խոռոչք՝ երակք ՚ի հողին ,
յորում լցեալ կան՝ նիւթք ծըծըմբային .
Որով դղրդեալ՝ մեծազանդ երկիր ,
շարժի երեքի՝ երբ այն նիւթք վառին (263) :

Ի Հողն է մարմին տարրական խիտ և սերտ , և արմատ ամենայն պնդակազմ մարմնոց . որ հրով յապակի լուծաւ նի , թէնպտ զուտ հող ոչ գտանի առ մեք : Բազում տէսակք հողոյ գտանին . են՝ որք աբգաւանդ կոչին . են՝ որք աճուլ . և են՝ որք Բժշկաբար : Արգաւանդ հողք ունին զառատ տնկական ազս և իւղս . որովք բուսանին և աճին տունկք . և նորին աղագաւ սևագոյն և ծանր են պարարտ հողք այլև մածուցիկ : Ի սոյն կարգի է կաւն , որ պարարտ գոլով՝ երբ ողողի ջուրքք , լինի ծաւալական , և լուսնի զձևս . բայց չմարթի հանգուրժեւ հրոյ , եթէ ոչ աւազով խառնեցի : Ամուլ հողք են սպիտակագոյն , թէթեւ , աւազուտ , և դիւրափորելի . զի նոճազ ունին աղային և իւղային մասունս . նմին իրի ոչինչ կարեն բուսուցանել : Ի սոյն կարգի է աւազն . թէպէտ մարթ է զսա անոճանել ճանրախիճ յամենայն տեսակէ քարանց , որոց ձեք զննեւ խոշորացուցիճ՝ են բազմանկիւնի . որով և չկարեն աղմանալ . բայց խառնեւ ՚ի կիր կիճ ՚ի կաւ տան նց զպնդութի : Իսկ բժշկարար հողք յաճախ գտաւ նին յայլևայլ կողմանս Ծի , որք լի են կծու և ապաքիւնիչ ոգւովք , որովք և գազարեցուցանեն զարիւնն հո

Մ. յլ'ի սիրտ երկրի՝ կամ՝ ՚ի կեդրոնի ,¹
 նիւթ ինչ մագնիսեան՝ ամբարեալ կարծի .
 Ուր անտի ցլմեզ՝ տարակայու թիւն ,
 իբր երեք հազար՝ մըղոն համարի :

282 Օ՛րն է առ :

Մ. զն է սերտ զանգուճած՝ և անկիզելի ,²
 զանգեալ ՚ի ջրոյ՝ գիւրաւ լուծանի .
 Որ իւր սերտու թեամբ՝ սերտէ ըզմարմինս ,
 ոչ ապականիլ՝ կալ անփրտելի :

283 Աստուծոյ յիշատակն՝ նորա :

Բազում են տեսակք՝ աղային հանքաց ,³
 որք են զանազան՝ նիւթով բաղադրած .

սեալ ը բերան , զորացուցանեն զերակս , և զիջուցանեն
 զնիւթս աստիճանելով զայլևայլ աստս : Թող զն՝ բազում
 տեսակք գունաւոր հողոյ գտանին . յորոց կազմեն զներկս :

1 Կարծիք է առ փիլիսոփայս , թէ ՚ի կեդրոն երկրի
 պարտի լինել նիւթ ինչ մագնիսական . քանզի ծանր մար
 մնք գիւմելով ՚ի կեդրոն երկրի , երևին ձգիլ ՚ի մագնիսէ :
 Եւ երկաթ եզել ը երկար ՚ի ծոց հողոյ , մագնիսական
 իմն զորուի զգէնու : Իսկ տարակայունին՝ որ ՚ի կեդրոնէ
 երկրի մինչև ցմակերևոյթն՝ կոչի կիսաբամազիճ երկրի ,
 որ գտանի ՚ի շրջապատէն . որովհետև շրջեալ նաւուց ը
 բոլոր շրջապատն , գտին դափ նր լինել 22460 մըղոն աշ
 խարհագրական . որոյ իբր վեցերորդ մասն է կիսատրա
 մագիճն 3575 մըղոն . (355) :

2 Այն հասարակ՝ է զանգուճած սպիտակ սերտ և ան
 ծախ ՚ի հող . բայց գիւրաւ լուծանի ՚ի ջուր . և ՚ի գոր
 ծարանս ճաշակելեաց պատճառէ զգագացողութիւն ինչ
 քարի և խթիչ . որոյ գլխաւոր մասունք են՝ հող , ջուր , և
 հուր , իսկ մանրամանր մասունք նորա բաղկացուցիչք ,
 կռուին ը միւսեանս ՚ի ձեռն հիւթոց ինչ . որով ը իրաց ինչ
 լուսանցոյց լինի ազն . և շունչէ ՚ի հուր վնցնելոյ ջրոյն :
 Այն խառնել ը ձիւն և ը սառն՝ սաստկացուցանէ զցր
 տուին , և յիւղխառնել սակաւ ծախի իւզն ՚ի լապտերի :

3 Յորով տեսակք աղեց գտանին . որնսի են՝ առ կան

Որպէս շնչբորակ՝ պաղէղ և արջասպ ,
 և այլ սոյնպիսի՝ տեսակ բորակաց :

284 Օ՞րն է ծծումբն :

Ս) Ծծումբն է՝ զանդունած՝ դիւրավառ դեղին ,¹
 զանգեալ յարջասպէ՝ մասամբք իւղային •
 Յաճախ գըտանի՝ յեւրոպեան մասին ,
 որ ՚ի խորս երկրի՝ համահաւաքին :

285 Ա՞պարաճիւթն :

Իսկ կըպրաճիւթն է՝ կաւ ինչ խրժային ,²
 կի՛հ հանք դիւրավառ՝ խառն ընդ ծրծրմբին •
 Սորա է տեսակ՝ նաւթըն իւղային ,
 այլ յոյժ բոցավառ՝ երբ հուր հոտտին :

† այն , կի՛մ Գաբալ էլեալ ՚ի լէրանց : Ալ ծովային , որ լի-
 նի ՚ի ծովաջրոյ : Ալ հարհաւոր , զոր հանեն ՚ի անկոց իւր-
 տացուցանելով զհիւթս անկոց , ունի է աղն անգղիոյ լու-
 ծողական : Ի տեսակս աղի վերածին շնչբորակն՝ գլխա-
 ւոր նիւթ վառօդոյ , բորակն էլեալ յ՛ծին պարսից , և ՚ի
 հայս • որ գիւրու հալէ զհրահալէլիս , պաղէղն , ար-
 ջասպն , անուշադրն էլէլ յերկրէն ամեննիւոյ • աղն տար-
 տարօսի լուծողական , որ կուռնի ՚ի տակառս գինւոյ • և
 այլ բազում , որք բազկանան ՚ի պէտպէս աղային , և ՚ի
 կծու նիւթոց :

1 Ծծումբն հանքային բաղկանայ ՚ի պէտպէս իւղային
 և ՚ի վառելի գոյացուծեց խառնելոց լէ հողային և ընդ-
 ջրային մասունս • որ սիւռել գտանի յաճախ յերակս երկ-
 րի : Թող զի լէ քիմիականաց ամ վառելի նիւթ՝ ծծումբ
 անդունի : Ի ծծմբային , և ՚ի կրային հիւթոց բաղկա-
 նայ հանքն ծաղկաձև • • : Չ՛ թ :

2 Ապարաճիւթն և նաւթն էլանեն ՚ի հողոյ իրբև կա-
 ինչ խժային , որք միանան յիւղային և ՚ի ծծմբային մա-
 սանց : Քարաճիւթն թորթորի ՚ի ծերպից քարանց : Իսկ
 սաթն կամ (Էհէրիպարն) և ամբրն են երկու տեսակք
 կարի իմն աղնիւ ձիւթոյ • առաջինն ՚ի սալթիկ ծովն
 գտանի , որ ՚ի պարարտ փոշոյ հեղանիւթից տակաւ տա-
 կաւ թանձրանոյ ասէն : Եւ եկն ՚ի հնգիկս գոյանայ ՚ի
 պարարտ հիւթոց երկրի , որ լէ պալսամուտ ալբիւրս և

286 Օ կնչ էն հրահալելիք :

Հրահալելիք էն՝ նիւթ ինչ հանքային ,¹
 գոյանան ՚ի հող յերակըս երկրին .

Որք հըրով հալին՝ ցըրտով կարծրանան ,
 ձրգին յերկարին՝ այլև ծաւալին :

287 Ասա քանի՛ :

Իսկ տեսակք սոցա՝ ութնեակ անուճանին ,²
 ոսկի և արծաթ՝ պղինձ ընդ երկաթին .

Ինա՞ք և կապար՝ և ժլարդինայ ,
 դարձեալ և սընդի՛ որ յայս կարգ դասին :

288 Օ կնչ է ժլարդինայ :

Փըլադինայն է՝ ըսպիտակ ոսկի ,³
 կամ հանք նորագիւտ՝ ալնիւճ և յարգի .

Է գետս անցեալ իջանեն՝ ՚ի ծով . ուր առ սակաւ սակաւ
 պնդացեալ յալէկոճութեց ձգին ՚ի ծովափն :

1 Հրահալելիք , որ և մետաղք՝ էն մարմինք հալելիք
 հրով , և կռանաւ ծաւալելիք բազկացեալք ՚ի յտակա
 գոյն հողոյ , և ՚ի ծծմբային և ՚ի սնդկային հիւթոց . որք
 ցըրտութիւն ձուլին , և ջերմութիւն ծաւալին և երբեմն կրա
 նան : Այ՛ զի ունին զջրածին և զթթուածին մասունս .
 որով երբ ելանէ ջրածինն , և տիրէ թթուածինն , հանքն
 ՚ի կիր փոխարկին . և երբ տիրէ ջրածինն , դարձեալ լի
 նին հրահալելի քիմիական առնելութիւն : Ոմանք համա
 րին , թէ հրահալելիք անմիջապէս ստեղծան յոյ , որք ոչ
 աճին . բայց հաւանական թուի ասել , թէ զուգարու
 թիւ մասանց բազկանան յլերս հողոյ . որովհետև քիմիա
 կանութիւն լուծեալ հրահալելիք՝ սկզբունք նոյ մասն հա
 սարակորէն ծծումբ սնդիկ , այլովքն հանդերձ (309) :

2 Ըստ այժմեան քիմիականաց 23 տեսակք հրահալե
 լեաց գտանին , որք զանազանին ՚ի միմեանց գունով ծան
 բուրութիւն , և սերտութիւն . բայց սոքա զկիսահրահալելիս
 ՚ի միասին հաշուեն . զք զինկ , անդիման , մկնդեղ , ևն :
 Թողումք զնորագիւտ կիսահրահալելին՝ բազադրեալ յա
 զային նիւթոց քիմիական առնելութիւն , նման գոլով սնդկի ,
 որ երբ մերձենայ ՚ի ջուր՝ անդէն բորբոքի :

3 Այս հրահալելի գտաւ յանցել գարուն ՚ի բերու

Լ'նկիզանե լի՝ դժոճարաւ հալի ,
յորմէ յորինին՝ անօթք պիտանի :

289 Եւ զի՛նչ ոսկէ :

Սսկին է դեղին՝ մետաղ ցանկալի ,¹
յազգըս համօրէն՝ չըքնաղ և յարդի .
() անր է առ այլովք՝ սերտ տարածելի ,
դժոճարալոյծ է՝ ոչ ժանգահարի :

յառերիկայ՝ ի սպանիացւոց, որ է սպիտակ ոնյ զարծաթ՝
անծախ՝ ի հրոյ, և դժոճարահալէլի . ծաւալի իբրև թիւ
թեղն, և ձգեալ երկայնի, յորմէ կազմեն զանօթս պիւ
տանիս քիմիականաց վն դժոճարալուծութիւ . զոր ՚ի 50
ժամս եդին ՚ի սաստիկ հուր՝ ոչ հալեցաւ . բայց իբրև
եղաւ ՚ի վառարան կիզանողական հայեւոյ, ՚ի վայրկենի
հրացեւի և լուծեւի արձակէր յիւրմէ զանօթս և զծուխ
(436) . նոյննիս և դժոճարաւ լուծանի յարբուցի ջուր :
Յոյս հրահալէլի խառնեւի գտանին ոսկեղէն և երկաթեւ
ղէն մասնիկք, սնդիկ, մագնիս ևն . որոյ տեսակարար
ծանրութիւն է իբր 19 առ 1 . ք՝ իբր 19 երկ մասն կո
րուանէ ՚ի ջրի :

1 Սսկին ընտիր է քան զամ՝ հրահալէլիս, և ճոխ պէս
պէս ձրիւք . ք՝ ծանրութիւ, գունով, և անապականու
թիւ . ոչ ժանգանայ, և ոչ խի ծախի ՚ի հրոյ . զոր լ 6
ամիսս եդեալ յակն հալոցի ասրակագործաց, ոչինչ կո
րոյս ՚ի ծանրութիւն . բայց ՚ի կիզանողական հայեւոյ փու
թով լուծեւի ՚ի կիր դարձաւ, կորուսանելով զծանրու
թիւն և զդոյնն . սակայն քիմիական առնելութիւ նորոգ
հեղճեղեկեւի փոխարկեցաւ յոսկի : Ոմանք դենն թէ մարթ
է բառնալ զգոյն ոսկւոյ և սպիտակացուցանել : Սսկին
ուրի ծակախս . քան զի յանօթ ոսկեղէն արկեալ ջուր,
եդին ՚ի մամուլս . և ահա իբրև քիրան հոսեր ջուրն յոսկ
ւոյ . զարմանալի է ծաւալականութի ոսկւոյ . զի տրամ
մի ոսկւոյ ծաւալի յերկայնութի բազում միզոնաց : Գտաւ
նին կոտորակք ոսկւոյ ՚ի վր լերանց հապեհու, և ՚ի քի
լի (364) : Եւանէ աւազանման ՚ի գետոց վալարիոյ և
կոճինեայի : Բայց ՚ի հայաստան և ՚ի բազում տեղիս խառն
ելանէ լ 8 ծմբոյ, արջասպոյ, ևն . և այն 150 կանգուն
խոր ուրեք ուրեք : Զուտ ոսկին ելանէ ՚ի ճեարսն, ՚ի

Ոսկի անապակ՝ յորժամ գըտանի ,
բըռնութեամբ հըրոյ՝ ոչ էրբէք ծախի .
Սեցամնեայ միջոց՝ եղեալ ՚ի քուբայն ,
ոչինչ ծախեցաւ՝ այլ նոյնչափ ոսկի :

291 Օ՛րն է արծաթ :

Արծաթն ըսպիտակ՝ սերտ գոյացուծիւն ,
ծաւալական է՝ մերձաւոր ոսկւոյն .

Պարզ արծաթ ՚ի հանքս՝ հազիւ գըտանի ,
որ ՚ի ժանտաջուր՝ քակի լուծանի :

292 Ա՛յս պղինձ :

Պղինձ ծանրուծեամբ՝ մերձ է արծաթին ,
գեղեցիկ կարմիր՝ ՚ի գոյն հըրային .

Պընդի կարծրանայ՝ խառն ընդ անագի ,
և քան զայլ մետաղ՝ ձայնեղ գտանի :

չինս ևն . որ և լուծանի ՚ի սնդիկ և յարբունիջուր . որոյ տեսակարար ծանրութիւն առ յստակ ջուր՝ է իբր 19 կի՞ 20 առ 1 :

1 Արծաթն՝ յետ ոսկւոյ ունի զաեղի , որ գժոււ բաւ ծախի ՚ի հրոյ . զի եղեալ ՚ի քուբայն զամիսս 2 , հազիւ կորոյս 12 երբորդ մասն ՚ի ծանրութեանն . իսկ տեսակարար ծանրութիւն սորա առ ջուրն՝ է իբր 10¹/₂ առ 1 : Հազիւ գտանի ՚ի մետաղս զուտ արծաթ , այլ յաճախ խառնեալ ընդ հողոյ . ուր հողակոշան տեսանի լի արծաթափայլ շամանգաղօք . ելանէ յասիս և ՚ի բերու :

2 ՚ի պղինձն բազում արջասպային մասունք գտանին . յորոց պատճառի կանաչ բորբոսն՝ դիւբաւ գոյացեալ ՚ի պղնձի անօթս . և նորին աղագաւ փոյթ ծախի ՚ի հրոյ . որոյ տեսակարար ծանրութիւն առ ջուրն՝ է 8 առ 1 : Եթէ պղինձն ձուլեցի թէ գաղամինար անուանեալ քարի , կի՞ թէ կազոնեան հողոյ լինի առջ . եթէ թէ անագի՝ լինի ձայնեղ նիւթ զանգակի և թնդանօթի . և եթէ թէ կապարի՝ լինի թռած :

293 Ա = Երկաթ :

Երկաթն է մարմինս՝ սերտ բեկանելի ,¹
առաձրգական՝ և ծաւալելի .

Հորաշէկ եղեալ՝ ոչինչ լուծանի ,
իսկ հըրով զտեալ՝ ՚ի պողպատ փոխի :

294 Ա = անագ :

Անագն ըսպիտակ՝ կակուղ գտանի ,²
սակաւ ձայնահասն՝ թեթեւաւելի .

Որ երբ ՚ի պղղինձ՝ կամ յարծաթ խառնի ,
յաւէտ ձայնահասն՝ կարծրակուռ լինի :

295 Ա = Կապար :

Կապար կակղադոյն՝ ծանր է յետ ոսկւոյն ,³
դիւրաւ լուծանի՝ ՚ի մերձիլ հրոյն .

Իայց չունի ձայն ինչ՝ զառաձգութիւնս ,
ձրգի ծաւսլի՝ ՚ի լայն հեշտադոյն :

1 Երկաթն գուրվ մարմին սերտ դիւրաւ բեկանի, այլ գթոճարաւ հալի ՚ի հրոյ . որ եթէ եփեսցի ՚ի հուր սառտիկ՝ յաւելլով ՚ի վր՝ զկնդակա անասնոց՝ որ է բորակա խառն յոյժ, և ՚ի շանթանալն կամ ՚ի մօտ լինելն հալիլ մեկսցի ՚ի ջուր ցուրտ, լինի պողպատ կարծր և առաձգական . և որչափ կրկնեսցի գործողութին, այնչափ կաւտարեւադոյն լինի : Ի հողմանս պոճառսի ՚ի տեղին Կապար սայս, գոյ փոսկ մի, յոր արկանեն զաւաղ ինչ մօտակոյ տեղւոյն, յետ 15 աւուրց փոխարկի յերկաթ փոքր ինչ կարծր :

2 Անագն կակղութի մերձաւոր է կապարի, այլ թեթեւ քան զայն, և քան զայլ հրահալելիս, որոյ թէպէտ սակաւ է առաձգութի, սակայն խառնել ը առաձգական հրահալելիս՝ անթեքելի գործի : Հանք անագի է քար ինչ ծակոտկէն . ելանէ ՚ի գաւառս անգղիոյ, և ՚ի գերմանիա :

3 Կապարն թէպէտ ծանրութի մերձաւոր է ոսկւոյ, զի 11 անգամ ծանր է քան զջուր, որով և քան զարծաթ ծանր գտանի . բայց գոյն նր և դիւրալուծութի ՚ի սառըին կարգս դասէ զայն . զի բազում անգամ սաստիկ ջեր

Իսկ սընդիկն 'ի կարգ՝ մետաղաց դասի ,
այլ է թըռչական՝ լոյժ բաժանելի .
Որ քան ըզկապար՝ ծանրագոյն կըշուի ,
յոսկին յայլ մետաղս՝ ընդմըտեալ յարի :

Թողում զանդիմոն՝ այլև զապակի ,
որք հրահալելեաց՝ ունին ըզտեղի .
Օ ի հալին հըրով՝ զերթ արծաթ ոսկի ,
այլ ոչ ծաւալին՝ նմանեալ քարի :

մութի արևու հալէ զկապար : Ելանէ 'ի գերմանիա ,
յունկարիա և 'ի հայս . յաճախ խառն գտանի ընդ պա-
րարտ հողոյ :

1 Մնդիկն թէպէտ ոչ է տիրապէս հրահալելի , սակայն
սկիզբն գոյով նոցա թ քիմիականաց դասի 'ի կարգս նո-
ցա . այլ մասունք նր խառն են յոլով խոնաւութիւն , և ոչ
բնաւ սերտին իբրև զարծաթ . քանզի ցնդել խոնաւ մա-
սանցն ձգեն թ իւրեանս և զայլ մասունս : Երով զնոյ
անդիկն 'ի ծուխ . ուր 'ի թուլանալ ջերմութե անդրէն 'ի
նոյն բնութի մաճնու : Սակայն 'ի մոսկովս 'ի ձեռն սաւ-
տիկ ցրտութե կարծրացուցին զանդիկն և ծաւալեցին
կռանահարութիւն իբրև զայլ հրահալելիս . այլ թ մեղմա-
նալ ցրտութե , լուծաւ : Այս ցնդականութի սնդիկի
անյոյս առնէ զքիմիականս . սակայն քիմիական սանելու-
թիւն արկել զանդիկն 'ի հալեալ արծաթ , կմ 'ի կապար ,
որ սկսանի թանձրանալ , անդէն պնդանայ մինչև վերա-
ծիլ 'ի փոշի . սակայն թ հոտոտելն զհուր 'ի ծուխ լուծա-
նի : Որ և ծանր է քան զջուր 14 անգամ . որով յետ
ոսկւոյն և փլագինացին սա գտանի ծանր : Գլխաւ յա-
րի թ ոսկի , և խորշի յերկաթոյ . ձգի և յայլ մետաղս :
Գտանի յաճախ 'ի մետաղս ֆախեուլի և յիտալիա խառն
ընդ կլինաբարիս : Գտանի և զուտ սնդիկ յերակս մե-
տաղաց :

2 Սոքա կոչին կիսահրահալելի , զի ունին զմէջն հրահա-
լելեաց և քարանց . թէպէտ բազումս ջանացան ծաւա-
լական առնել զապակին , այլ 'ի զուր . զի ցորչափ ջերմ
է ծաւալել և թունի զայլևայլ ձևս . բայց 'ի ցրտանալն

298 Օ կնչ է քար :

Վարն է սերտ մարմին՝ անկրճանելի ,
անծաւալահան՝ և անհալելի .

Որոյ բազմազան՝ տեսակք գլտանին ,
է զի թափանցիկ՝ է զի շողշողին :

299 Է ա զնչ է մարմարին :

Սարմարիոնն է՝ տեսակ խիտ քարի ,
գոյացեալ հողով՝ և հիւթով երկրի .

Ընի բեկանուտ : Պատմէ սլէնիոս թէ ոմն 'ի հնումն յօ
բնէր զանօթս յաղակոյ կռանահարու թի . յորոյ անօթ
մի ասէ մատուցաւ տիբերեայ կայսեր :

1 Քարն գոյանայ 'ի հողոյ և 'ի ջրային գոլորեաց . որ
և նախ խոտանայ 'ի թանձր հեղուկ : և ասպա սնդացեալ
հողային շոր մասնկամբք ընի մարմին կարծր : Հասարակ
քարինք պատճառին՝ երբ այս հիւթ սչ է բարեղք արու
մաղրեչ, և 'ի թանձրանալն գրաւէ զբաղում հօւմ հօղս :
Բայց այս հիւթ զտեալ և եփեալ եթէ խոտնեցի բնդ
յտակ մատունն հողոյ, կարծրանայ 'ի բար ջննջ, և եր
բեմն թափանցիկ . յորս բաղում անգամ ճանճք և մըջիւնք
փակեալ գտանին, որք խրեչ են 'ի նոյն հիւթ յառաջ
քան զկարծրանալն : Են և տեսակք քարանց յորս նկա
րեալ երեկն ծառք հանդերձ ճիւղովք . խոտք և բոյսք,
որք գոլով 'ի մէջ քարային հիւթոյ քարացեչ են այնու
հիւթովք 'ի սիրտս քարանց . զր + + . Չ : Ժ : Ուստի
հասարակօրէն քարինք յերիս տեսակս վերածին յանուն
'ի քոնքոնս, և 'ի վնս . 'ի վնաց սակի է մարմարիոնն :
Սկուիք են իճիք գունով գեղափայլք, որպէս կարկէ
հան կարմիր, զմրմուխ կանաչ, ռսկէքար, տպազինն, ա
կառ բազմագոյն, յասպիս կիսաթափանցիկ ևն : Իսկ փոս
փորոնն է քար հանեալ 'ի բլրոց բոնանիոյ, որ յետ լու
ծանելոյ հրով 'ի դաժ . դնի ժամանակս ինչ հանգէոյ ա
մնայ 6 . ապա վեցեքո՞ւ օր է լուսնի :

Մշտն՝ աշխատի ստորոց լուսնի :

Յունվար	2 .	Յուլիս	6 .
Փետրվար	3 .	Օգոստոս	8 .
Մարտ	2 .	Սեպտեմբեր	9 .
Ապրիլ	3 .	Հոկտեմբեր	10 .
Մայիս	4 .	Նոյեմբեր	11 .
Յունիս	5 .	Դեկտեմբեր	11 .

2 Թուճական հրէից սկսանի ի ստեղծմանէ Յի . յու-
նացն՝ յոլմպիական խաղուց . սելլեկիացւոցն՝ զկնի մահ-
ուճան աղէքսանդրի . հոովմայեցւոցն՝ ի շինութէ հոով-
մայ . իսկ քրիստոնէիցն յետ ծննդեան քսի . հայոցն ի
Նորոգութէ տօմարին . որ սկսաւ յամի ամս 552 , և տաճ-

515 Օ ինչ է ուլեմդիարն :

Ուլեմդիարն է՝ միջոց չորս ամաց ,¹

որ էր Թոճական առաջին յուճաց .

Վանդի յամենայն՝ չորրորդում ամին ,

խաղ ինչ առնէին՝ յուլեմդեայ շինին :

516 Աս յոբելեան :

Իսկ յորելեանն է՝ յիննամեայ շրջան ,²

յորում հռչակէր՝ տօն ազատութեան .

Սոյն զընդիկտիոն՝ որ կայ խափանեալ ,

հընգից և տասանց՝ ամաց ինչ շրջան :

517 Աս ծոսապարիկն :

Սըռազատիկն է՝ վըրիպակ զատկի ,³

որ ՚ի լըրմանէ՝ լուսնոյն պատճառի .

կացն յամիրապետէ իւրեանց , որ սկսանի յամի օն 622 :
Ուստի Թոճական հրէից է 5574 . ուլեմդիարնին , կմ ուլեմ-
դիարին՝ 2590 . սելեփաջոնոյն 2121 . հոռվայեցոնոյն 2563 .
քրիստոսէիցն 1814 . հայոցն 1263 , և քաճիսոյն 1229 :

1 Չինի դարձին արգոնաւորդաց հաստատեցին զխաղ
ինչ առաջնորդութիւն հերքութեայ (685) մերձ ՚ի տաճարն
որմնդական դից ուլեմդեան (590) , և այնուհետև ՚ի մի-
ջոցի 4 ամաց կմ 50 ամսոց խաղային վայն խաղ քաջ երի-
տասարդք . որոյ 4 ամն համարիւր մի ուլեմդիար : Իսկ
ապա իբրև յաղթող գտաւ յայնմ խաղի կորեբոն եղիոնա-
ցի , այնուհետև սկսաւ ուլեմդիական Թոճականն յամի օն
3228 , և 776 ամօք յառաջ քան զքն :

2 Յորելեան շրջանն յիննամեայ՝ երբ լրանայր , հռչա-
կէր առ հրէայս ամն Թողութիւն . յորում ամի ազատէին
զգերիս , և ամբն դառնային յազգս և ՚ի տունս իւրեանց :
Իսկ շրջան ընդիկտիոնից սկսեալ համարի 3 ամօք յառաջ
քան զձնունդն քնի . բայց Թէ առ ինչ հնարեալ է այս
անստոյգ է : Են որք ասեն Թէ սկիզբն եղև ՚ի մեծէն
կոստանդիանոսէ , երբ ետես զխաչն քնի ՚ի 24 սեպ . 312 :

3 Քանդի ՚ի ծոսապարիկն տօմարն յուճաց դնէ զաւարդ
լրումն յաւուր շարաթու յապրիլի 5 , և յաւուրն եկի ՚ի
դնէ զզատիկն . իսկ հին տօմարն հայոց ՚ի ծոսապարիկն

Որով յոյնք յառաջ՝ կատարեն զատիկ ,
և հայք ըզկընի՝ միոյ եօթնեկի :

ՊԵՏԵՐ ԳՐՈՒԹԻՒՆ

518 Օրհնէք պատմագրութիւն :

Եւ մահացու թի՛ր որ ուսուցանէ ,
պատմե՛լ զիրս անցեալ՝ ՚ի վաղուց հետէ .
Եւ յլլե ըղներկայն՝ կարգաւ բացայայտ ,
լլե ժամանակաւ՝ առաջի առնէ :

519 Եւ զանի՛ :

Արկին էն տեսակ՝ վիպասանութե՛ ,
մին է արբառին՝ իրաց պատմաբան .
Իսկ միւսն անուանի՛ եկեղեցական ,
զի պատմէ դիպուճածս՝ հոգևորական :

520 Ո՛ր է եկեղեցական պատմիչ :

Եկեղեցական՝ պատմիչ պանծալի ,
մեծօն եւսեբիոս՝ տիրապէս կոչի .

դնէ զաւագ լրումն յաւուր կիւրակէի յապրիլի 6 . և
յայն սակս զղատիկն դնէ ՚ի հետևեալ կիւրակէի յապրիլի
13 . բայց ուղիղ աւագ լրումն լինի ՚ի չորեքշաբաթի :
Եւ մին իրի ՚ի միջոցի 95 ամաց միանգամ հանգիպի ծուա
զատիկն :

1 Պատմագրութիւն է ուսումնս պիտանի լծմ՝ ազանց .
որով հմուտ գտանի մարդն անցից անցելոց , և սկզբնա
ւորութե ազգաց . նմին իրի գրեթէ յամ՝ ազինս ՚ի դարս
հնու թե՛ վիոյթ յանձին կալան գրասէլք նշանակել զանցս
ժամանակաց իւրեանց . ուղճարէս փոխգրիացի յոյն պատ
միչ վիպագրեաց զճարտահոգութե՛ արգոնաւորդաց , և
զպատեբազմ տրոյխոյ . յորում և ինքն զինուորե՛լ էր 1180
ամք յն՝ Ք. Ք. 425 : Ըստ այսմ պարսիկք , հայք , և ասորիք
ասյին քրմաց իւրեանց նշանակել զանցս Յաց իւրեանց :

2 Եկեղեցական պատմագրութիւնս պատմէ զանցս եկե՛

Որ 'ի չորս դարուն՝ զիրս եկեղեցւոյ ,
զայլ և այլ գիտունած՝ դրնէ առաջի :

521 Այս զի՛նչ արարտինն :

Արտաքին պատմիչք՝ գրեն զաշխարհաց ,
ըզհանդէս մարտից՝ զարարս իշխանաց .
Յոր յաճախ դրտան՝ բանք առասպելաց ,
խառնեալ 'ի նախնի՝ հին հեթանոսաց :

522

Սովաւ իմանամք՝ ըզծագումն ազգաց ,
աճեալ բազմացեալ՝ յանկիւնս աշխարհաց .
Իսէ ի՛նչ հաստեցան՝ ինքնակաշուծիք ,
անմահ պատմադիրք՝ պատմեն լըսելեաց :

523 Ո՛րպէս գրաս նախնի պարճաբէ հայոց :

Երանի պատմութի՛ն՝ մեր թագաւորաց ,
վաղարշակ արքայն՝ հան 'ի դիւանաց .

դեցւոյ , զգործս ժողովոց , զմահ և զյաջորդութի՛ն հայ-
րապետաց , զփոփոխութի՛ն աթոռոց , և զաղանդս հերե-
սիոսաց այլովքն հանդերձ : Որպէս արար մեծն Էւսե-
բիոս եպիսկոպոս կեսարացի , որ զհռչակաւոր եկեղեցա-
կան պատմութի՛ն 'ի թ՛ գիրս բովանդակեաց այնչափ որան-
ծալի , մինչ հայր անուանեցաւ եկեղեցական պատմուեց :
Այլ է և Թառնանչ պատմութի՛ն . զորմէ զկնի :

1 Արտաքին պատմիչք այլոց ազգաց 'ի նշանակել զծա-
գումն ազգաց իւրեանց , միշտ առասպելս մուծանելին
ինքնահնարս . ուր վկայէ յուստինոս հին պատմիչ հռով-
մոցեցի յասէնն . * Ամ հնախօսութի՛ն առասպելախառն է || .
գիրք Է . դԼ 6 : Եւ պատմառն է՝ զի ոչ գտին զմատեանս
նախնեաց . ուր գիտորոս սիկիլիացի հեթանոս պատմիչ
30 ամ զհետ եղև . այլ ոչ եգիպտոց ինչ յառաջ քան
զնինոս :

2 Երանի պատմութի՛ք մեր հանեալ եղեն 'ի մատենե-
անախ , որ գրեալ էր 'ի լեզու քաղդէացի և պահեալ 'ի
դիւանի . յորում նշանակեալ էր կարգաւ յաջորդութի՛ն
նահապետաց մերոց սկսեալ 'ի հայկայ մինչև ցարդոյր ա-
ռաջին թի՛ր հայոց (532) : Արդ՝ վաղարշակ թի՛ր հայոց

Չեռամբ մարիբաս՝ իմաստասիրին ,
 յորմէ պատմագրեաց՝ մեր խորեհնացին ,

524

Սիապետութիւն՝ մերոյս քաջ հայկայ ,
 հարեալ զգետնի՝ յաղթել ներքովթայ .
 կամագգահամար՝ դիւցազուն անձանց ,
 ուղիղ ը կարգի՝ ի նոյն էր գրած :

525

Քանզի թագաւորք՝ ի դարըս նախկին ,
 հին բրամապետաց՝ գրել հարկէին .
 թղծագումն ազգայ՝ զաձեւ փրութեց ,
 ի մատեանս իւրեանց՝ նըշանակէին :

Եղբայր արշակայ մեծի յամի Յի 3857 . իբր 2000 ամօք
 զկնի հայկայ , կամեցեալ գիտել , թէ ոյք ոմանք յառաջ
 քան զինքն պայազատէին աշխարհիս հայոց խորհեցաւ ի
 հին քաղգէական մատեանս որոնել . ուստի առաքեաց ի
 նինոճէ զայր ոմն ասորի մարիբաս իսպիհայ անուն , հմուտ
 քաղգէական և հելլենական գպրուէց՝ հանդերձ թղթով
 առ Եղբայր իւր արշակ , զի տացէ ի ձեռս նորա զհին
 մատեանս պատմութեց : Իսկ նր առեալ զթուղթն հրա-
 մայէ բանալ զգիւննս . յոր յուզեալ եգիտ մատեան մի
 յունարէն գրով . որ հրամանաւ մեծին աղէքսանգրի ի
 քաղգէացոց լեզուէ ի յոյն թարգմանեալ էր : Յայսմ
 մատենէ կարգաւ եհան մարիբաս զպատմութի նախնեաց
 մերոց , յաւելեալ յայն յետոյ զգործս արշակայ և վա-
 զարշակայ այլովքն հանդերձ , զոր և պահէին զգուշութի
 ի գանձս արքունի . յորմէ հանեալ գրեաց խորեհնացին
 զպատմագրութի իւր յամի ամ 441 . որով հին պատմութի
 մեր՝ քան զայլոցն ստուգագոյն գտանի :

Ի Ներքովթ կմբէլ զկնի աշտարակաշինութե յամի Յի
 1893 տարածեալ էր յոյժ զթագաւորութի իւր՝ անձանը-
 ման գոլ զինքն ցուցանելով . որում ոչ կամելով հնազան-
 դիլ քաջին հայկայ նախահօր ազգիս՝ ժողովեաց զորգիտ
 և զթուռունս իւր հզօրս և կորովիս , պատերազմել ընդ
 բէլայ . որում ապա յանկարծ ի վր յարձակեալ ձգեաց
 ուժգնակի զնեա իւր երեքթեան , որ անցեալ ը պղնձի

Ինքնակալութիւն՝ ասորւոց ազգին ,²
 Հիմնեալ 'ի ներքովթ՝ 'ի վէպըս պատմին .
 Պարսիցն 'ի կիւրոս՝ յունացն յաղէքսանդր ,
 'ի նոյն իսկ մատեանս՝ նոցա վիպադրին :
 527 Օ ինչ է անճաշանչ պարմութիւն :
 Բանզի արարիչն՝ 'ի պէտըս մարդկան ,¹
 շընչեաց 'ի մովսէս՝ գրել՝ սբ մատեան .
 Օ ի քարոզեսցին՝ 'ի դարս առ յապա ,
 գործք իւր արարեալ՝ մատին անսահման :

տախտակ կրծոցն եւ ընդ մէջ թիկանցն , և կործանեալ սատակեաց զնա : Արդ՝ 'ի տոհմէն հայկայ սերեալ ազգս՝ կոչեցաւ հայ , և Տն հայասրան . որ և կոչին Ռուֆօնէանք յանուն թորդոմայ հօրն հայկայ . այլև սոփանա ղեան՝ յանուն եղբօրն թորդոմայ : Չկնի հայկայ տիրեաց որդի նր արմենակ , և ապա արամ , յորմէ ընկալան հայք զանունս արմէնի , կմ'երմէնի , լը խոր" :

2 Կիւրոս ծնաւ 'ի դասերէն աժդահակայ արքային մարաց յամի Տի 3405 . զոր կամելով սղանանել աժդահակայ ետ ընկենուլ 'ի բացի . զոր եղիտ հովիւ ոմն , որոյ կին 'ի նոյն գիշերի ծնաւ զորդի մի մեռեալ . առեալ հովուին զկիւրոս՝ սնոյց 'ի տան , և զորդին մեռեալ եգ 'ի տեղի նր : Իբրև եհաս 'ի չափ հասակի կիւրոս , գնալ ցեալ 'ի պարսս՝ յարոյց զմեծամեծս պարսից 'ի վր մարաց , և ինքն բռնացեալ՝ եղև անինքնակալ պարսից , և այնչափ զօրացաւ , մինչև կոչիլ 'ի մարգարէից օժեալ ան , գոլով ժամանակակից եզէկիէլ մարգարէին : Իսկ աղէքսանդր մակեդոնացի ծնեալ յամի Տի 3648 մարդեցաւ յուամունս առ ոտս արիստոտելի . սա զկնի մահոճան հօր իւրոյ փիլիսոպոսի տիրեալ բովանդակ յունաստանի հիսնեաց ղինքնակալութի յունաց . և ապա գրաւեալ զքոլոր ասիա և զասիրիկէ , արար միահեծան ինչ արութի 'ի 3670 :

1 Աճաշունչն է՝ բան անյ գրեալ 'ի սբ մարգարէից , և յաւաքեւոց շնամար հոգւոյն սբ , և պահեալ 'ի սբ եկեղեցւոյ . որ կոչի սբ փրք . որ է պատգամ անյ , և անսխալ կանոն հաւատոյ և վարուց . սնյ ապացուցանեն

Օ այս պատմագրութիւն՝ անձաշնչին ,
 գրեալ մարգարէք՝ ՚ի յերայեցին .
 Ուր եօթանասուն՝ ծերք անտի առեալ ,
 ՚ի լեզու յունաց՝ քաջ թարգմանեցին .

գուշակութիւն գրեալք ՚ի նս . և հետզհետե կատարելք պէսպէս սքանչելեօք ՚ի վեր քան զքան : Չայս ապացուցանեն՝ սկզբնագիրն հրէից , որ է նոյն . և թարգմանութիւն այլևայլ ազգաց : Ամին իրի ամ բանք և բառք սբ գրոց են անձաշնչ . թէպէտ սրբազան գրողքն է զի՝ ՚ի ներքին յայանութէ գրեցին . և է զի՝ յարտաքին տեղեկութէ . է զի՝ ՚ի գիմաց այ խօսեցան . և է զի՝ ՚ի գիմաց մարգկան : Անձաշնչն բաժանի ՚ի հին և ՚ի նոր կտակարանս . հինն առաջի գնե զհին օրէնս և գուշակե զգալուստ մեսիայի , կի՞ յի վրկչին : Չհինգ գիրս հին կտակարանացն՝ գրեաց մովսէս հոգևով սբլ յանապատի յամի Յի իբր 2514 : Չգիրս յետնաց ինքն յետու գրեաց , և զմարգարէութիւն՝ իւրաքանչիւր մարգարէք . որք ը ամ բովանդակին ՚ի ին գիրս : Իսկ նոր կտակարանն աւետարանե զեկեալ մեսիայն և քարոզէ զնոր օրէնս . որ բաժանի ՚ի ին գիրս . և ը ամ հի՞ անձնական գիրք . որոց ոմանք են երկրորդականն . զո՞ր քովի ին . յարի ին . ան և ի միմեք՝ . սիրտ , բարտ . ևս և՝ Եբր . յալ . ի պէք . ի և զ յովն . յոպ . և յայրնու ին : Իսկ անձնական են անընտելիք . և անարգեալք յեկեղեցոյ . որպիսի են՝ առփարանն Բուժայի . գիրք մանկամե յի . ևն :

2 Բնագիր հին կտակարանաց է երրայական՝ շարադրեալ ՚ի լեզու նոյն , և գրեալ հին գրով . որ ասի հնարեալ ՚ի մովսիսե (32) . զոր ապա օրինակեաց էլք նոր գրով առեալ ՚ի քաղզեացոց ՚ի 3537 ամի Յի . Իսկ բնագիր նոր կտակարանաց է յունարէն . թէպէտ ասի թէ աւետարանն մաք . և թուղթ եբր . շարագրեցան հրեարէն : Հին թարգմանութիւն անձաշնչին են՝ Քաղզեականն . որ է մեկնաբանութի հին բարոնեաց . նաև առաջ և առաջացոյն . որք են հարազատ և ընտիր թարգմանութիւն : Բայց ընտիր ևս է յունացն՝ եօթանասնից ասացեալ . քան զի յամի 3727 . իբր 273 ամք յառաջ քան զքն պտղովնոս վիղագեղվոս արքոց եգիպտացոց շնեաց յաղեքսան .

որմէ զկնի՝ 'ի հայ դարձուցին ,
 մեսրովս և սահակ՝ Թարգմանիչք մեկին •
 Վ ըսեմ և ընտիր՝ քան զամէն ազգին ,
 շքեղ Թարգմանեալ՝ զայն մեզ հասուցին •

գրիա զգրատուն մի մեծ , և ելից զայն բաղնուծք հին մատենից : Խնդրեաց նաև յեղիազար քահանայապետէ եբրայեցոց , զի առաքեացէ առ ինքն 'ի գիտնաւորաց արս հէ՛ ընտրանօք վեց վեց 'ի 12 ցեղիցն իլի խելա մուտք եբրայական և հելլենական գալուածեց • ոնց զի Թարգմանեցեն 'ի յոյն լեզու զածաշունչ գիրս հին կտա կարանաց 'ի սէտս հրէից վարեղոց յունական գալուած • ոնց և արարին խի յարբունի ազարանս 'ի փարոս կղզւոջ՝ որ 'ի մեջ նեղոսի • զոր ըստ ասելոյ հարց սքց՝ ամ զգուշուծք ընտիր Թարգմանեցին յանսխալ օրինակէ առաքելոյ 'ի նոյն քահանայապետէ , որ էր գրեալ սկի զորով 'ի մագաղսթեայս • և կատարեցին յառուրս հէ՛ գոշով փակեալ իւրաքանչիւր յառանձին սենեակս իւրեանց : որոնս պատմէ արիստէաս Թիկնապատճ արքային • յորմէ և անունեցաւ Էօթանանից :

1 Յամի ամ 431 յառուրս փոքր Թեոդոսի Թագաւորին՝ սքն խահակ • և սքն մեսրովս յեա պիւտի գրոց (32) • ետուն բերել 'ի կոստանդնուպօլսոյ զընտիր օրինակ մի անաշունչ գրոց 'ի յոյն բարբառ • զոր այնչափ վսեմ և վայելուչ Թարգմանեցին 'ի հայ՝ բաղգատելով թ ասորւոց , և թ այլոց Թարգմանուեց , մինչև յովհաննէս սքրո դէր գերմանացի մեծապա գրոճատէ ճայնակցուք երեւելի մատենագրաց • հայկական Թարգմանուծի անաշունչին ասէ այնչափ է գերապանծ , մինչ արժան էր բաղգատուծք նր ուղղագրել զբուն յունականն : 'ի նոյն ժամս նակս և սքն Հերոնիմոս ուսեալ զլեզու հրէից՝ Թարգմանեաց զԱճաշունչն յեբրայականէն 'ի լատին լեզու , որ կոչի Վուկաթս • ք հրատարակեալ • զոր այժմ 'ի գործածեն լատինք • Թէպէտ ունէին յառաջ և այլ Թարգմանուծի համաձայն Էօթանանից :

ՄԱՍՆ ԵՕԹՆԵՐՈՐԳ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՆԻ

530 Քանի՛ էն պետութեան :

Որչափ էն աշխարհք՝ այնչափ պետք իշխան ,
տիրողք կուուովար՝ յայլևայլ սահման .
Սակայն պետութիք՝ ՚ի տիեզերիս ,
յաշխարհագրաց՝ եօթն ուրոշեցան :

1 Աւաջին պետ և ինքնակալ աշխարհի եղև նախ-
հայրն աբամ . և յետ նորա որդիք և թուռնք , առաջին
նահապետք տիեզերակալք : Եւ զինի ջրհեղեղին եղև
նոյ և որդիք նր՝ մինչև ցաշտարակաշինութին . զինի ապա
բազմացեալ ազգի մարդկան՝ այնուհետև գլխաւորքն ՚ի
նն սկսան պայազատել իւրեանց սահմանաց . ոմանք իբ-
րև ընդհանուր տիրողք մեծամեծ աշխարհաց , այլք՝ ինչ
ինչ սահմանաց կամ կողմանց աշխարհի . և ահա այս ամ
պայազատութիք կի՛ մորութիք յեօթն կարգս վերածին .
Թող զապագեպոսիսն . յորում տեարք և կուուովարիչք են
ուամիկք կի՛ հասարակ քաղաքացիք ընտրեալք յամ՝ վիճա-
կաց . որ և կոչի ժողովրդապետութիսն : Այս ամ իշխանու-
թիք ՚ի զանազան ազգս բաժանեալ են յեւրոպիա և յա-
սիա . ոմանք են բազմամարդ և զօրաւոր , և այլք ոչ նոյն
պիսիք : իր յաշխարհին գաղղիոյ , կի՛ գաղղիացիք լը նոր
հաշուի ուրումն համարին 35 միլիոն՝ Ռուսք 33 միլիոն :

Տաճիկք 30 միլիոն : Գերմանացիք 24 $\frac{1}{2}$ միլիոն : Անգ-
լիացիք 14 միլիոն : Սպանիացիք 11 միլիոն : Բրուսք 9
միլիոն 160,000 : Իտալացիք 3 միլիոն . Շվեդք 3 միլիոն :
Պանիք 2 միլիոն 700,000 : Հոլանտացիք 2 միլիոն : Փոր-
թուգալք 2 միլիոն : Իսկ հայոց մորութի և ազգ մեծ էր
յոյժ և բազմամարդ ՚ի հնումն , բայց այժմ՝ յետ ցրուէ-

531 Աճ ԴՅ :

Ինքնակալութիւն՝ կամ Այստեղութիւն ,
 Թագաւորութիւն՝ Հիւսպատոսութիւն .
 Լ՝ յԼ գրքսութիւն՝ Առսակալութիւն ,
 Եւսարարութիւն՝ և իշխանութիւն :

532 Օ Ինչ է Ինքնակալութիւն :

Ինքնակալութիւն՝ է մեծ պետութիւն ,
 որ ինքնին վարէ՝ զիւր իշխանութիւն .
 Լ՝ նկատ յուսեքէ՝ տիրէ աշխարհաց ,
 կարգէ զայլևայլ՝ ազգաց տիրութիւն :

533 Աճ ԿԱՆԻ :

Ինքնակալութիւնք՝ ՚ի չորս վերածին ,
 ՚ի յարեմսեան՝ և յարեւելին ,

Այս յայլևայլ կողմանս աշխարհի դժուարին է որոշել :
 Մօրէք գնէ միայն ՚ի հայաստան 1520000 տունս հայոց .
 Ը որոյ և բնակիչքն դուշահին 10 միլիոն :

1 Տիրապետ ինքնակալ աշխարհի եղև ներքովթ՝ որդի
 բուշայ , Թոռն քամայ , որ հիմնադիր եղև ասորուոց տիրու
 Թեան . և շինեաց զպարսպս աշտարակին և զբարելոն :
 Ապա հայկ . ապա որդի նր արմենակ այլովքն հանդերձ
 մինչև ցպարոյր և Թգր հայոց : Իսկ յետ ներքովթայ տե
 բեաց բար . և այլք զինի մինչև ցշամիրամ հզօր Թագուհի
 և ինքնակալ ասորեստանեայց : Թող զաղեքսանդր (526) :

2 Օկնի Թագաւորութե վահեայ հայոց արքայի և մե
 ծին աղեքսանդրի՝ մեծն արշակ պարթև յիշխանացն պար
 Թև ազգին , և ՚ի սերնդոցն արբահամու Թագաւորեաց
 ինքնին յերկրին բուշանաց յամի աշխարհի իբր 374 . և
 տարածեալ զիշխանութե իւր՝ տիրեաց ասիոյ մինչև ցհըն
 գիկս : Օկնի ապա Թոռն իւր արշակ Շարձակեալ զտե
 բուԹին՝ տիրեաց համօրէն սահմանաց հայոց և պարսից
 մինչև ցեփրաս գետ , և կայոյց Թագաւոր ՚ի վր հայոց
 զեղբայր իւր զվաղարշակ . և այնուհետև ինքնակալք ա
 սիոյ էին արշակունիք , կթ պարթևք :

3 Արեւելեան ինքնակալութե յունաց սկսաւ անցա
 նել ՚ի հագարացիս ՚ի ձեռն մեծի օմանին առաջնոյ յա
 մի տն 1300 . սակայն ՚ի Թոռանց սր Է սուլթան մէհեմ

՚Ի հիւսիսային՝ և յասիական ,
ասիականն էր՝ ՚ի ձեռս՝ պարթևին :

534

Ղրկէլեանն է՝ ՚ի հագարացին ,¹
և արևմտեանն՝ ՚ի գերմանացին .

Իսկ հիւսիսային՝ ՚ի ձեռս ռուսաց ,
և ասիականն՝ ՚ի չինու մացին :

534

Սակայն ՚ի նախնու մն՝ երկուս հաշուէին ,²
կայս՝ ր արևելեան՝ կայս՝ ր արևմլտին .

Օ ՚ի մեծ թէոգոս՝ զայն ետ իւր որդւոց ,
արկադէոսին՝ ոնորիոսին :

Սէտ իբրև էառ զկոստանդնուպօլիս ՚ի 1453, ժառանգեաց, և ժառանգէն յաջորդք նր ցարդ զինքնակալուին արևելեան: Նմանապէս և ռուսք սկսան թագաւորել ՚ի ձեռն ըուրիկ իշխանին իբր ՚ի 895 ամի ամն. բայց ՚ի 1694 յաւուրս պետրոսի թագաւորին իւրեանց ինքնակալք անուճանեցան հիւսիսականաց: Իսկ արևմտեանն՝ որում տիրէին նախ հոռովմայեցիք, և ապա ոնորիոս յամի ամն 383. էանց հուսկ յետոյ ՚ի գերմանացիս. և յաւուրն մեր՝ Է ամս ինչ ՚ի գաղղիացիս: Բայց չինք և թաթարք ՚ի վաղուց հետէ ինքնակալեն մեծի մասանցն ասիոյ: Պատմի թէ Փօհի ինքնակալ՝ եղև հիմնադիր արուսթէ չինաց 1600 ամօք յառաջ քան զքն. զոր ինքեանք զնէն 2950, որ յառաջէ քան զըրհէղէղ:

1 Մեծն թէոգոս յամի ամն 383 անուճանեաց զարկադէոս որդի իւր կայսր արևելեայց, որ զկնի հօր իւր նստաւ ՚ի կոստանդնուպօլիս, և զոնորիոս կայսր արևմտեայց. ուր յառաջ քան զայս մի միայն ինքնակալ տիրէր արևելեայց և արևմտեայց:

2 Թագաւորութին ՚ի կայսերութէն այսու զանազանի, զի կայսերք իշխեն այլևայլ թգրութեց և աշխարհաց, անկախ վարելով ինքնին զպետութին. իսկ թգրութին իշխէ այլևայլ սահմանաց և դաւառաց, ոնչ է թագաւորութին սպանիոյ, անգղիոյ, շվետաց, ևն: Թէպէտ, բազում անգամ այս անուճանք ՚ի տեղի միմեանց վարին ՚ի

536

Արկաղէոսն էր՝ կայսր արևելին ,
որ թագաւորէր՝ ՚ի մեծի պօլսին .
Եւսկ սնորիոս՝ կայսր արևմտին ,
ի հըւովմ՝ նըստեալ՝ իշխէր աշխարհին :

631 Օ՛րն է Ռաֆաաւորոս-Թէան :

Թագաւորութիւնն՝ է այն վէհուութիւն ,
որ գէթ մի ազգի՝ վարէ զպետութիւն .
Որպէս անգղիա՝ կամ ըսպանիա ,
ունի զիւր ազգին՝ գահակալութիւն :

538 Եւսկ հիւսպատոսութիւն :

Այն տէրութիւն՝ յոր են պետք բազում ,
միաբան վարեն՝ զհասարակութի .
Որպէս էր երբեմն՝ յաւէտ պանծագոյն ,
մեծին հըւովմայ՝ հիւսպատոսութի :

մեզ : Թագաւորութիւն և ինքնակալութիւն միով անունաբ
կոչեն Բաղէփոս-Թէ . որում իշխէ մի ոմն իբրև գլուխ հա-
սարակութե :

1 Հիւսպատոսութիւն կոչի և պանծագեփոս-Թէ , որոյ իշ-
խանութի է ՚ի ձեռս ազնունականաց . ոպ էր ՚ի հնունս
առ հռովմայեցիս . յորս երկու և երեք հիւսպատոսք մի-
այնտիրէին՝ դուով լիհանուր հրամանատարք . որք կոչէին
Էսպէփոս . Թէպէտ եղև երբեմն՝ զի ՚ի ձեռն բազմաց կա-
ռավարէր այն մեծ արութի , ոպ էին և վենետիկեցիք :

2 Վենետիկեցիք առին զանուն դքսութե յամի տն 697 .
որ էր ազնունապետական արութի . զի բազում ազնունա-
կանք կարգէլք լի սոթիւ վարէին գորութիւն . յորս գլխա-
ւորքն էին 10 . և գլխաւորագոյնքն 3 , իբր ակն արուե-
մինչ զի՝ դուքսն կմ սոթն առանց նյ ոչինչ կարէր առ-
նել , Թէպէտ ՚ի հանդիսի արքայակերպ երևէր : Այս
դքսութի հին քան զբազումս ՚ի ժամանակս մեր փոխե-
ցաւ ՚ի ռամկապետութի , կմ ՚ի ժողովրդապետութի .
իբր զի՝ յամ վիճակաց ընտրեալ բազում անձինք կառա-
վարէին զհասարակութիւն . և այն ևս փութով վերջա-
ցաւ . որով իբր 1377 ամեայ իշխանութիւն՝ որում ոչ ոք

539 Աստուծոյ խնայանք :

Իսկ դրքսուծիւն է՝ սպայազատուծիւն ,
որ տիրէ անկախ՝ փոքրիկ տէրուծիւն .
Իբր ըզձենովայն՝ որ իւր դաւառաց ,
կամ քօծ վէնէտկոյ՝ իշխող վէճագոյն :

540 Աստուծոյ խնայանք :

Կուսակալուծիւնն է բզեշխուծիւն ,
կարգեալ ընդ՝ արքայիւ՝ վարէ զտէրուծ .
Որպէս են բռեաշխք՝ ՚ի Տագարացին ,
տիրողք կառավարք՝ կողմանց աշխարհին :

541 Աստուծոյ խնայանք :

Նախարարուծիւնն է իշխողուծիւն ,
ինքնին կանոնէ՝ զիւր կարգադրուծիւն .
Որ իբր ՚ի բազումն է ընդ բռեաշխք ,
փոքրիկ սահմանաց՝ վարէ զտէրուծիւն :

542 Աստուծոյ խնայանք :

Իսկ իշխանուծիւն է յոյժ ստորին ,
զի տիրէ միայն՝ իւրում՝ քաղաքին .
Որպէս արդ մեծք՝ որ ՚ի Տայաստան ,
իշխեն և տիրեն՝ իւրեանց քաղաքին :

տիրեալ էր , անկաւ ը տիրուծի՞ դադրեացոց . և յետոյ
ը կայսերաւ Ասորիոյ :

1 Կուսակալուծիւն է իշխանուծիւն , որ կառավարէ զմասն
ինչ տէրուծիւն ը հպատակուծի՞ արքային . զի են աժմ
քաղաքի կամ գէշ օսմանեանց . որք կողմանց կողմանց աշ-
խարհի տիրեն . որ և կոչի Տագարացիւնն . զի գէշ ըզգէնի :

2 Նախարարուծիւն է ստորին քան զայն ճշգրիւ առեւ՝
զի կարգեալ գողով ընդ բռեաշխք կառավարէ զգաւառ
իւր . ուր են գէշ ըզգէնի : Սակայն հայոց նախարարաց իշ-
խանուծիւն մեծ էր . զի արքայակերպ ճոխացեալ ունէին
զօրս , և զսեպհական դաւառս և ժողովուրդս . զօրս ինք
նին կառավարէին անփոփոխ որդւոց յորդիս : Հանդերձ
նց էր ծիրանի ոսկէհունն . և ՚ի վր ինքզ և վարսակալ
ականակապ . և այլ թագաւորավայել զարդք . ունէին

543 Ո՞ր էն արքայանիստ քաղաքի ՝
 Արքայանիստ է՝ շինացոց փէքին ,¹
 քաղաք բազմամարդ՝ յասիոյ մասին .
 Յորում հոյակապ՝ մեհեանք բազմագանձ ,
 այլև մեծաշէն՝ աշտարակք կրկին :

543

Սոյլ բիւզանդիոն՝ գահ մեծ կոստանդին ,²
 նաև բեթրպուրկ՝ աթու մասկովին ,

գրազում քաղաքս , և զհարիւրաւոր բերդս . թիւք նա
 խորարուծէց հայոց ՚ի հնունն էին 120 . յետոյ յաւե
 լան այլ ևս :

1 Փէքինն թարգմանեալ արքանիտ հիստոյ՝ է աթու
 ինքնակալին շինաց , ըդարձակ և բազմամարդ . որոյ շրջ
 ջապատն է 22 մղոն . իսկ բարձրուծի պարսպաց նորս
 150 ոտնաչափ . յորոյ վր գիշերապահ զինուորք երկվա
 րօք շրջին , հրապարակ քաղաքին ընդարձակ , և թիւ
 բնակչաց ՚ի ծէ դարուն էր 2,500,000 : Եւթն հոյակապ
 մեհեանք են ՚ի սանս , յորս երևելի են 2 տաճարք նուր
 բեալք երկնի և երկրի . յառաջնունն են 7 մեծամեծ
 սրահք , յոր ինքնակալն ամի ամի զոհ մատուցանէ երկ
 նից՝ մեծաւ հանդիսիւ : Իսկ յերկրորդն թագ կապեն
 ինքնակալք , և յայն օր զգեցեալ զլուստ մշակի՝ արծա
 թի մաճ ՚ի ձեռին արօրագրեն զմասն ինչ երկրի՝ աւ ՚ի
 ցուցանել զպիտանութի երկրագործութի : Բոլոր սահ
 ման շինաց հաւասար գտանի Էւրոպիոյ . յորում են իբր
 130 փլինն մարդիկ :

2 Ըստ յնս կոչի վիզանփին յանուն վիզասայ հիմնադրի
 քարաքիս , որ 640 ամք յառաջ քան զքս , հիմնեաց գիւղ
 մի՝ զոր ապա բաւզանիսս զկնի 170 ամաց նորոգեաց .
 որ ըստ աճ . կոչի իւլամօլ , քի բազմունի հաւատացելոց :
 Չայս քաղաք մեծ և բազմամարդ՝ արքայանիստ արար
 մեծն կոստանդիանոս՝ վայելուչ գեղազարդեալ , և ըար
 ձակել կանգնեաց ՚ի վր 7 լէրանց . որոյ շրջապատն է 18
 մղոն . և դրունքն են 26 . թիւ տանցն դնի 88 , 185 , և
 բնակչացն իբր 1,200,000 : Իսկ բեթրպուրկ արքայանիստ
 մարաքաղաքս առաստիոյ շինեալ եղև ՚ի մեծէն պետրոսէ ՚ի
 1714 . որոյ երկայնութի է իբր 4 մղոն , նոյնչափ և լայն

Փարիզ գաղղիոյ՝ լինտոն անգղիոյ ,
վէննա գերմանիոյ՝ աթոռատեղին :

նուէն . փողոցք նորա լայն և ուղղագիծ : 'Ի 1750 հանգէտ
արարել գտան 'ի նմա բուն բնակք՝ արք 27557 . կանայք՝
22209 . ծնէք 8941 . աղախնեայք՝ 4700 . Թո՛ղ զմանկունս :
Իսկ 'ի 1789 համօրէն Թիւ բնակչաց գտաւ 217,948 : Բա-
ղում մեծամեծ շինուածք գոն 'ի նմա , և եկեղեցիք այլև-
այլ ազգաց . արքունի սպարանք , հռչակաւոր ձեմարանք ,
և մենաստանք այլովքն հանդերձ : Փարիզ արքայանիստ
հռչակաւոր մայրաքաղաք համօրէն Թագաւորուէն գաղ-
ղիոյ տեղի իմաստուԹե և հանձարոյ , հոյակապ և մտք
գաշա՛ գիրք նորա բոլորածե , և շրջապատն 19 մղոն .
գլխաւոր գրուէքն են 11 . մեծամեծ փողոցքն 967 . ուր չ
բոլորամն վառին մշտավառ լատտերք . են 'ի նմա 50,000
տունք . 500 մեծաշէն սպարանք . և 700,000 բնակիչք :
Բոլոր քաղաքն բաժանել է 'ի 18 Թաղս . յորս են բազում
եկեղեցիք մեծաշէնք , և երևելի ուսումնարանք , համա-
լսարանք ևն : Լնփօն կի՛մ Լնփօս մայրաքաղաք անգղիոյ ,
կի՛մ մեծին բրիտանիոյ . մեծագանձ և բազմավաճառ . որոյ
երկայնուԹի է 6 մղոն , և լայնուԹին իբր 3 . մեծամեծ
գրուէքն 8 , բաց 'ի փոքունց . Թողում զհոյակապ շին-
ուածս : Թիւ տանցն է 150,000 . իսկ Թիւ բնակչաց նո-
րա իբր 950,000 որ և բաժանի 'ի 26 Թաղս , յորս են
189 ժողովրդապետուԹիւնք , և բազում եկեղեցիք , և
մեծահռչակ ձեմարանք դիտուԹեց և արուճեստից . Թո՛ղ
զայլ մեծակառոյց շինուածս և անկեւանոցս : Սոցին հա-
մեմատ գտանի ի արքայանիստ քաղաքն Վէննա , որ 'ի 4
Թաղս բաժանի . 10 գրունս ունի . 80 փողոցս , և 20
հրապարակս : Շինուածք տանց են ըստ մեծի մասին
վեցյարկեան , և մինչև ուԹյարկեան . իսկ Թիւ բնակ-
չացն ընդ արուճարձանեայց 280,000 . յորում են երևե-
լի եկեղեցիք , համալսարանք , ևն : Թողում զԼաբու՛ն
մայրաքաղաք լէհաց , զՊե՛ռլէն բրուսսիոյ . զՄաբէ՛ր
սպանիոյ . զՀա՛մբ քաղաք հին և գերահռչակ , տեղի մե-
ծակառոյց շինուածոց , որոյ շրջապատն է 10 մղոն . և Թիւ
բնակչացն իբր 165,000 : զՎէնէ՛րի հինեալ 'ի վերայ 72
կղզեաց կցելոց 'ի միմեանս կամրջօք . որոյ շրջապատն 7
մղոն . և բնակիչքն իբր 180,000 . զՆաբօ՛ւն քաղաք բազմա-
մարդ . որոյ շրջապատ 9 մղոն և բնակիչք իբր 500,000 :

545 Օ՞խնչ էն աղապ քաղաքս :

Լ՞աղատ քաղաքք էն՝ որք աղատ վարին ,¹
 'ի ձեռն իշխանաց՝ իւրոյ սահմանին .
 Որպէս պաշտաւով՝ կեռլէ և ճորճով ,
 քաղաքքն հայոց՝ որ 'ի յառտեալին :

ԵՕԹ՝Ն ՏՐԸՇԼԵԼԻՒԹ՝

546 Օ՞խնչ էն Եօթն հրաշալիս :

Լ՞օթըն հաշուէցան՝ հրրաշք աշխարհի ,²
 գործեալ 'ի հնու մն՝ հանձար արուճեստի .
 Հոյակապ շինուճաճք՝ ահաւոր տեսլեամք ,
 կանգնեալ 'ի վեհից՝ յայլևայլ տեղի :

547

Լ՞ըբ հայիմ յայս գործ՝ արուճեստասիրին ,
 բաղխիմ 'ի կրից՝ իմ բընականին .
 Լ՞ըբ բազմիմ մտօք՝ յաթու հնութե ,
 զհանձար բնութե՝ դիտեմ արուճեստին :

548

Օ՞արուճեստ բընութե՝ գիտեմ աղախին ,³
 լըցօղ թերութեց՝ բնութե ձեռին .

1 Այսոքիկ քաղաքք գուրով ը տերութե գերմանաց-
 ւոց , ազատօրէն կառավարին 'ի ձեռն հայոց իշխանաց ,
 որք ունին զգատաստանս , և գատին զժողովուրդն յատե-
 նի իւրեանց : Գտանին և 'ի մոսկովս աղապ քաղաքք 'ի
 ձեռս հայոց . ուր նոր նախիջնան , գրիգորիպօլիս ևն :

2 Եօթն սքանչելիք , կի՞ Եօթն հրաշք Յի անուանեցան
 7 մեծագործ ամբարտակք կառուցեցէք յայլևայլ տեղիս
 'ի մեծագործ արքայից . որպիսի էր մեհեանն արտեմեայ :

3 Արուճեստն կոչի ի աղիկ , կի՞ նմանօղ բնուէ . զի միշտ
 հնարի նման գործեւ բնութե , և իբրև աղախին ծառայե

Լ զի զժողածէ՝ ՚ի վայր անջրդին ,
մերթ ըզգաշտ փոխէ՝ յասարեզ ծովին :

549

Ո՞ր սայլիճ բերան՝ լերինք ՚ի դաշտին (599) ,
որո՞վ լըծակաւ՝ վէմ շամիրամին (608) .
Կամ զհարդ եդեալ՝ դարբնոց ՚ի ծովին ,
կանգնեաց զարձան մեծ՝ ՚ի հըւողոսին :

550

Կախեաց բնութին՝ յերկնից կամարին ,
լուսալիր զամբարս՝ չըքնաղազունին .
Կախեաց և արոճեստն՝ յասպարեզ օդոյն ,
ծառալից պարտեզ՝ հիճ ջրբըղխին (610) :

551

Ըսչափ սրխրալի՝ գործած արոճեստին ,
մինչև չըթողուլ ըզբնութէ թերին .
Գործէ մեծամեծս՝ ՚ի սիրտ մեծանձանց ,
՚ի լոյս ընծայէ՝ գործս ըսքանչեւեաց :

552. Ո՞ր եղէ ք հրաշալին :

Ըսաջին կոչել՝ բանն իմ հաւանի ,
զայն սողովմոնեան՝ տաճար հրաշալի .
Ըինեալ ՚ի վերայ՝ լերին սիօնի ,
՚ի պաղեստինեան՝ մայրաքաղաքի :

553

Նորաշակերտ յարկիս՝ չորս մասունք էին ,
չքնաղ յօդոճածովք՝ ՚ի մի բոլորին .

առ ՚ի լրացուցանել զթերին նորա , յորինելով զայնս ,
չորս չարար բնութին . այլ եթող մարդոց հանձարել ՚ի
ձեռն արոճեստի , յորմէ հնարեցան և հնարին այնչափ
արոճեստակերտք , և պանծալի գիւղք յԾի (11) :

Ի Այս գերահռչակ տաճար սողովմոնեան անձանօթ
գողով աննծ բանաստեղծից , ոչ յիշատակեցաւ ՚ի գիրս նյ՝
սակայն մեր հայեցեալ ՚ի դերազանց մեծագործուի նր :

Վաւիթ այլ սրահ՝ վայր քահանայից ,
սրբութի սրբոց՝ մեծ քահանային :

554

Լ՝ աջինն էր վայր՝ աւաղադունին ,
ուր շուրջ ձեմարան՝ հանգոյն սրբահին .
Ս՝ այելուչ կանգնել՝ յոլով սեամբք կձեայ ,
'ի չորս կողմ՝ նորին՝ դրրունք չորեքկին :

555

Լ՝ յս գաւիթ կից էր՝ միւս տեղւոյ ռավկին ,
գործ ձարտարագործ՝ արուճեստագիտին .
Չ՝ քնաղ ձեմարանք՝ շուրջ բոլորէին ,
գունեղ մարմարիոնք՝ 'ի յատակ նորին :

556

Խկ որմունք սորա՝ դրրունագեալ էին ,
յոսկւոյ սօփերայ՝ ընտրելագունին .
'Վարձել և դրրունք՝ յարծաթ համակել ,
քերուք դրրունագօք՝ վայելուչ կարգին :

557

Երկրորդ սրահն էր՝ բարեձև երկայն ,
ուր քառակուսի՝ պղղընձի խորան .
Երկոսին կողմանս՝ այսրը խորանին ,
անօթք պղնձի՝ քրովբէից նման :

ոչ միայն եղաք 'ի կարգս 7 սքան շէլեաց , այլև գլուխ և
առաջին նոցուն , որ շինեցաւ իբր 1000 ամօք յառաջ քան
զքն 'ի միջոցի է ամաց :

1 Ընդարձակութի այսր գաւթի էր 500 քայլ . յորմէ
մտանէին յերկրորդ սրահն մեծագործ և զարդարել աղ-
նունագիւտ զարդուք :

2 Ս՝ յս սրահ էր վայր քահանայից՝ երկայն 40 կան-
գուն , և լայն 20 . 'ի միջավայրին էր խորան պղնձի բարձր ,
և յերկսսին կողմանս խորանին էին 10 անօթք պղնձիք 'ի
ձև քրովբէից , առիւծուց , եզանց , և արմուէնեաց :

Աստ երկոտասան՝ ձուլածոյ եզինք,¹
 վայելուչ կանգնեալք՝ ՚ի կողմն աշխարհին,
 Արեք յարևելս՝ երեք յարևմուտս,
 երեք դէպ հիւսիս՝ այլք դէպ հարաւին:

Վերայ սոցա՝ էր ծով անուճանին,
 և տասն աւազանք՝ յաջ և յահեկին:
 Ուր հարիւր էին՝ տաշտք ոսկի համակ,
 այլև նրոնաձեք՝ և ոսկի շուշանք:

Սմն միւս պայծառ՝ գաւիթն յաջորդէր,
 յորմէ և յանյարկ՝ սըրահն անցանէր:
 Որոյ բարձրութի՝ էր վաթսուն կանգուն,
 քրսան կանգուն էր՝ նորին լայնութի:

Աստ եօթնաջահեան՝ աշտանակք կային,²
 և այնչափ զամբարք՝ կանգնե՛լ ը կարգին:
 Վ մնբուր ոսկւոյ՝ սեղանք տասնեքին,
 գեղեցիկ կարգօք՝ կառուցեալ էին:

562 Օ՛րն էր «բհաւի» «Բ»:

Սրբութի սրբոց՝ տեղի պանծալի,³
 յամենայն կողմանց՝ էր քառակուսի:
 Որմունք առաստաղ՝ շքեղ զարդարեալ,
 անգին գոհարօք՝ ոսկուլ ցանկալի:

1 Աստ էին պուտնարդք, տաշտք ջեռուցիւք, բազմա-
 կալք, յարդարիւք համակ յոսկւոյ՝ այլովք հանդերձ
 Գ. Թագ. Է. Է:

2 Այս աշտանակք էին 10 կանգնեալք յերկոսին կող-
 մանս, և այնչափ ևս զամբարք: Աստի անցանէին ՚ի վայրն
 «բհաւի» «Բ» անուճանեալ:

3 Այս վայր հրաշալի՝ ունէր երկայնութի և լայնու-

563

Լ՛նդ իբրև զաստեղս՝ յերկնից կամարին ,
 ոսկեղէն կանթեղք՝ տասն հազար էին .
 Լ՛յնչափ և սեղանք՝ յոսկի համակեալ ,
 ուր և մեծ սեղան՝ ոսկեկուռ կանգնեալ :

564

Լ՛նբաւ էին անդ՝ կահ և կարասի ,
 ոսկեղէն անօթք՝ և կոնք արծաթի .
 (Ը)՛նդ զընդելուզեալ՝ սլատոճահան հիճ ,
 ոսկեղէն գործիս՝ յերգըս սլիտանի :

655

Լ՛ստ էր տապանակ՝ տիրական ուխտին ,
 զէտեղեալ՝ ի մէջ՝ սոյն դաբիրային .
 Յոր էին տախտակք՝ բուրվաւ գաւազան ,
 ոսկեղէն ք՛րովբէք՝ կանգնեալ առ նմին :

566

Յայս ասեղահարա՛ Վայր դաբիրայի ,
 տեսիլ հրրաշից՝ յայանէր սըխրալի :
 Լ՛ծխօսութիւն՝ ՚ի տապանակէ ,
 մեծ քահանային՝ լինէր լսելի :

Թի 20 կանգուն . նոյնչափ և բարձրութիւն . որոյ կէսն պատեալ էր մարուր ոսկեով , միւս կէսն ընդելուզեալ գոհարօք . ուր և կանգնեաց սողովման երկուս քրովբէս ոսկիապատս , երկայն ՚ի 10 կանգնոյ , որք տարածեալ ձգէին զթևս յորմէ յորմ :

1 Ըստ չափազանց սլատմութեան յովսէպոսի՝ բաց ՚ի 10,000 ոսկի կանթեղաց և սեղանոց , էին անդ 20,000 ոսկի սկահք , և 160,000 արծաթի սկահք . 100,000 բաժ կամանք կի՛ ժամանոցք յոսկւոյ , և 200,000 յարծաթոյ : 80,000 ամսեայք յոսկւոյ , և 160,000 յարծաթոյ . 50,000 կոնք յոսկւոյ և 100,000 յարծաթոյ : 20,000 անօթք յոսկւոյ , և 40,000 յարծաթոյ : 20,000 բուրվառք յոսկւոյ մեծք , և 50,000 փոքունք : 1000 զգեստք վն քահանայից համակ ընդուզեալ գոհարօք : 200,000 փողք յարծաթոյ ,

567

Սա մի միայն փառք՝ ՚ի մէջ աշխարհի ,
 անձապաշտից՝ և սողովմանի .

Բայց իբրև չարիք՝ մարդկան աճեցին ,
 զայն հիմնայատակ՝ թողին ամայի :

568 Ո՛ր է Բ՝ հրաշալին :

Երկրորդ հրաշալի՝ ըզկրնի վերնոյն ,
 այն եփեսիոյ՝ մեհեան գերագոյն .

Օ որ և ՚ի սրտի՛ն՝ դիցրն արտեմեայ ,
 կանգնեաց հոյակապ՝ բոլոր ասիա :

569

Բնդարձակատար՝ այս վայր տօնելի ,
 եղև յերկերիւր՝ ամաց միջոցի .

Յոր եղևնափայտք՝ դրո՛ւագք զանազան ,
 որմունք քանդակեալք՝ դ՛րունք էին նոճի :

570

Իսկ բոլոր շինուած՝ բազմէր վեհապանծ ,
 ՚ի վերայ ազնի՛ն՝ հարիւրաւոր սեանց .

Վործ քանդակագործ՝ կանդնե՛լ յարքայից ,
 արժանավայել՝ ընծայ դիւցազանց :

և 40,000 նո՛ւագորանք յուկոյ և յարծաթոյ : Այսպէս
 էր ասէ այս հրաշալի տաճար ՚ի ժամանակս սողովմանի :

1 Չայս գերահռչակ տաճար զկնի իբր 400 ամաց ետ
 քանդել նաբուգոդոնոսոր արքայ բաբելոնացոց ՚ի ձեռն
 նաբուգարգան դահճապետին , որ առեալ զեհ՛մ գերի
 վարեաց զհրէայս ՚ի բաբելոն . զոր ապա նորոգեաց զօ
 բարբաբել զկնի 70 ամաց : Յետ այսորիկ օխտոս կայսր
 հռովմայեցւոց զկնի սատակելոյ միլիոն մի հրէայս , հիմ՛
 նայատակ արար զայն յամի տն 70 . լուծանելով զվրէժ
 տիրասպանութե՛ս , զոր անօրինեցան ՚իքս :

2 Այս մեծագործ մեհեան երկայն էր 425 ոսնաչափ ,
 լայն՝ 220 , և բարձր՝ 60 . բազմեալ ՚ի վր՝ 127 քանդա
 կագործ սեանց . զորս կանգնեցին մի մի թգրք ասիոյ :

571

Լ՝ յս հանդիսարան՝ չըքնալ պանծալի ,
 դիցամուլ մարդկան՝ գեր հրրաշալի •
 զոր մի միայն ջահ՝ ՚ի մի գիշերի ,
 յերկիր կործանեալ՝ դարձոյց ՚ի փոշի :

572 Ո՛ր է քի հրաշալեան :

Երրորդ անուճանեմ՝ զայն անմահ շինուճած ,²
 սահման բարձրուե՛ թրուչնոց թրուուցաց •
 Բ՛ զբարեւոնեան՝ պարիսպ գերամբարձ ,
 ոյր թանձրութիւն էր՝ ասպարէզ կառաց :

573

Լ՝ յս մեծ ամբարտակ՝ հրրաշք պանծանաց ,
 էր քառակուսի՝ յամենայն կողմանց •
 Հարիւր դրունք էին՝ ՚ի ձոյլ պղնձոյ ,
 գեղեցիկ կանգնեւէք՝ գործ ըսքանչելեաց :

574 Օ՛րն է քի քոյր՝ է՛նմա :

Դ՛ մէջ պարըսպին՝ բընաք սրերալի ,
 սրերալի տաճար՝ կրուսցըն բելի •
 Լ՛նդ զարմանասքանչ՝ աղնիւ՛ բուրաստանք ,
 լիճ՝ և շատրուճան՝ պալատ արքունի :

575 Ե՛ս ո՛ր կանգնեաց :

Օայս մեծահազալի՝ շինուճած պանծալի ,
 կանգնեաց շամիրամ՝ հրգօր թագուհի •
 Դ՛ դոյլն հընգերեակ՝ ամաց միջոցին ,
 ապա ժամանակք՝ անհետ արարին :

1 Չայս շինուճած հրգեհեաց աննշան ոմն 350 ամօք յառաջ քան զքն՝ ՚ի գիշերին՝ յորում ծնաւ աղէքսանդր մահեդոնացին • յորմէ հնարեցին առասպելարկուք • թէ աբտեմիս զբաղեւ զոչով ՚ի մանկաբարձութիւն աղէքսանդրի , ոչ էհաս աղասել զտաճար իւր (654) :

2 Զբարձրութիւն այսր պարսպի ոմանք աւանդեն լինել 350 ոտնաչափ , և զթանձրութիւն՝ 87 • բայց պարսիկք

576 Որ է ք Տրաշալին :

Եւ յն հիանըշմար՝ տեսիլ վիթխարի ,
պըղընձի արձան դիցն ապողոնի :

Վանգնեալ 'ի սլատի՛ն՝ արսիւոյն պանծալի ,
պանծայր 'ի բերան՝ կըղզւոյն հոռոգոսի :

577

Օ արմանալի էր՝ բարձրութի սորին ,
զարմանալի դիւքն՝ որ ըստ կանոնին .
Վայեալ 'ի բերան՝ նաւահանգըստին ,
ձրգէր հեռաւորս՝ 'ի տես չըքնաղին :

578

Սաք առագաստեալք՝ ձեմողք 'ի յանդրին ,
ընդ սոյն արձանաւ՝ անցեալ գնային .
Վանգի մի ոտն էր՝ 'ի մի կողմ ժայռին ,
և միւս 'ի միւս կողմ՝ նաւահանգստին :

579

Տաստ էր բըթամատն՝ իբրև բուն ծառին ,
մինչև չըկարել՝ ընդգրկել բազկին .
Վատարկ էր արձանն՝ ը բոլոր մասին ,
մեծ հատորք վիմաց՝ եղեալ 'ի նմին :

580

Ունէր մեծ լապտեր՝ 'ի ձախու ձեռին ,
չոր 'ի գիշերի՝ ելեալ վառէին .
Իսկ լանջքն էր յղկեալ՝ իբրև հայելի ,
նաք անցեալ հեռուստ՝ յայն երևէին :

Խմանալ փոխանակ կանգնոյ : Իսկ քառակուսի միջոց տեղ-
ւոյն էր 60 մղոն . ուրանօր շինեաց նաև աշտարակ մի
բարձր 'ի պէտս աստղաբաշխութի :

1 Այս ճարտարարոճէստ առնապատկեր արեգական
կամ ապողոնի (662) կանգնել էր 'ի բերան կղզւոյն հոռ-
ոգոսի . զորոյ բարձրութի ասեն լինել 80 կանգուն . այն

581 Ո՛ր շինեաց :

Երևոյ արձանին՝ լախիս կարեսի ,
 աւարտեալ 'ի տասն՝ ամաց միջոցի •
 Որ յիսուհն վեց ամս՝ կացեալ 'ի տեղին ,
 երկրաշարժու թի՛ք՝ յերկիր կործանի :

582

Ետ կործանելոյն՝ մընաց 'ի տեղին ,
 յերկար ժամանակ՝ ըն որում պատմին •
 Լսպա վաճառեալ՝ վաճառականին ,
 յինքն հարիւր ուղտ՝ ըզպըղինձ բարձին :

583 Ո՛ր է Ե Ն Ն րաշալին :

Լորդ զայն դամբարան՝ գործ հըրաշալի ,
 հինգերորդ ձայնեմ՝ հըրաշք աշխարհի •
 Լքտեմիսիա՝ դըշխոյն կարիոյ ,
 կանգնեաց 'ի սահեւ՝ զամուսնոյն իւր դի :

584

Լսնչափ էր սորա՝ տեսիլ սըխրալի ,
 մինչև մեռելոյն՝ տային երանի •
 կենդանի շիրիմք՝ 'ի նոյն բերելին ,
 թողեալ զամենայն՝ մընալ 'ի նմին :

585

Լնըշուհնք քարոզ՝ սա առ կենդանին ,
 մահանալ յանձին՝ կալ յանմահ շիրմին •
 Վերադանց գոլով՝ յարկաց արքունի ,
 արքայից պետաց՝ էր համբուրելի :

պէս զի՛ Ը ագումէջսն անցանէին նաւք պարզեալ առա ,
 դաստիւք :

1 Չայս մեծագործ դամբարան կանգնեաց արտեմիս ,
 սիա թի՛հի կին մաւսողէայ արքային կարիացւոց , ամիս
 փել զսակերս առն իւրոյ , սակայն մինչև վճարել գոր ,
 ծոյն՝ մեռաւ և ինքն :

Մեծատարած էր՝ լայնութի սորին ,¹
 նոյն և բարձրութի՝ համեմատ նրմին .
 կանգնեալ ՚ի վերայ՝ երեսուն և վեց ,
 միապաղաղ սեանց՝ ընտրելագունին :

Բաջ ճարտարապետք՝ սորա չորս էին ,
 յայլեայլ կողմանց՝ զայն դըրուճագէին .
 Մին յարեւելից՝ մին յարեւմտից ,
 ոմն ՚ի հիւսիսոյ՝ միւսն ՚ի հարաւին :

Լպա ՚ի վերայ՝ բոլոր շինուճաճին ,
 բուրգ մի գերամբարձ՝ վերահանգնեցին .
 Յորոյ ՚ի գլուխ՝ կառք մի քառաձի .
 համակ մարմարեայ՝ չըքնաղ հանգուցին :

Մինչ զի երբ ետես՝ անաքսագորաս ,
 զարժանին վըճիռ՝ նմին արձակեաց .
 Լհա գանձ ոսկւոյ՝ ՚ի քար փոխարկած ,
 ապա յաւերակ՝ յետ սակաւ ամաց :

590 Ո՛ր է շ Նրաշաւե :

Չըքնաղ դրօշեալն՝ մեծին դիոսի (622) ,²
 գործ քերուբ փիղեայ՝ քանդակագործի .

¹ Շրջապատ սորա դնի 411 օտնաչափ , իսկ բարձրու-
 թին 25 կանգուն :

² Այս դրօշեալ ուղիմուխական դիոսի կանգնեալ էր ՚ի
 քաղաք պեղողոնտոսի մերձ ՚ի գետն ալփէոս , կմ ՚ի կորն
 թոս : Տեղին՝ յորում առնէին զուղիմուխական խաղս՝ մերձ
 էր արձանին այսմիկ . նմին իրի այսպէս կոչեցաւ : Ու-
 բանոր էին անբաւ գանձք , և աղնուճագիւտ քանդակք .
 յորոց միջի սրանձայր արձանն դիոսի նստեալ յականա-
 կապ և յոսկէհուռ դահոյս . զոր արար մեծանուն քան-
 դակագործն փիղեայ :

Երկրորդադեւի՝ էր դիցամոլին ,
մատրն քանդակիչ՝ քան զանրզգալին :

591

Հիանալի էր՝ արձանն ոսկի ,
մարմին փղոսկ րեայ՝ ագուցեալ ՚ի մի .
Յաջն էր յաղթանակ յահեակ գաւազան ,
յոյր վերայ արծիւ՝ և այլ կենդանի :

592

Պ գըլուխ նորա՝ էր պըսակ փառաց ,
ի ձե ձիթէնուոյ՝ կամ արմուէնեաց .
Ս եհ վերաբազմեւ՝ յայն գահ մեծասքանչ ,
յահընկէց ռամկին՝ շի հրաշ պանծանաց :

593

Այս գահ փրղոսկ րեայ՝ շքեղ գերազանց ,
էր ընդելուզեալ՝ յանգին գոհարաց :
Բնդ պատուանդանաւ՝ էին յաղթանակք ,
արձան հերակլեայ՝ շ այլոց դիւցազանց :

594

Սին առ գահին՝ արձանք պատմութեց ,
ոսկեղէն առիւծք՝ տեսակք կենդանեաց .
Ընդրի արևու՝ ՚ի պայծառ ոսկուոյ ,
բազմեալ էր ՚ի կառս՝ ընդ չնծուհեաց :

595

Արձան շընորհաց՝ ՚ի մի կողմ գահին ,
ի միւս կողմ արձան՝ եղեալ էր լուսնին .
Օ ի սոքա ծնունդք՝ դիօսի կոչին ,
որ հայր չնծոց՝ լս աւասպելին (645) :

1 Այս ամ ոսկեղէն արձանք այլևայլ կենդանեաց և գրօշեալք բաջագործութեց հերակլեայ և այլոց գիւցազանց , և արձանք բազում գից կանգնեալ էին ՚ի վայրն շուրջ զգահիւն դիօսի :

Լ. յսպէս անբաւ դանձ՝ էր ՚ի նոյն տեղին ,
պանծալի արձանք՝ ճարտարագործին .

Ս այր պատկառելի՝ հանուրց աշխարհին ,
հրաւեր անբարբառ՝ ռամկաց բընաւին :

Լ. յս ահեղ տեսիլ՝ երևեր ռամկին ,
յաւէտանալ միշտ՝ ՚ի յաւիտենին .

Բայց ժանիք դարուց՝ զայն փոյթ ծօխեցին ,
միայն կայ ՚ի գիր ս՝ բաւտանիասին :

Լ. փշի բընութի՝ ընդ ճիգն արուճեստին ,¹
երբ դիտէ գնալ՝ նաւու ընդ լերին .

Լ. փշի դիտարան՝ իմ կըրօականին ,
երբ դիտէ բրգունս՝ եգիպտականին :

Բընութին արար՝ զայն վայր դաշտային ,
և ուստի լերինք՝ կանգնեալ ՚ի նըմին .

Երկուն մասն արար՝ արուճեստասիրին ,
զահաւոր լերինս՝ փոխեալ ՚ի դիւրին :

Յայս ըոքանչեւեաց՝ երեք մընացին ,²
որոց մին ահեղ՝ մեծ քան զերկոսին .

Սենեակք և դահղիճ՝ պատուական քարանց ,
նըստարան կըձեայ՝ կայ ՚ի միջոցին :

¹ Բազում անգամ ՚ի պահանջել հարկին մարդիկ ՚ի ձեռն մեքենական արուճեստի գնացուցին զնաւս ընդ լերինս և է դաշտս , ուր եղև ասէն յառնուէն օսմանեանց զկոտանդնուսօլիս : Թող զմեքենայն արբիմիդեայ . որով գնային նաք է ցամաք (455) :

² Այս բրգունք իբր կէս աւուր ձանապարհ ՚ի վերոյ

601

Պամակ քարեղէն՝ ընդարձակ տեղին ,
 քարեղէն գերանք՝ ի յառաստաղին .
 Ի մէջն աւազան՝ պորփիւրեան կճոյ ,
 դործ ճարտարագործ՝ ի ձև տապանին :

602 Որպէսէ է Յէն :

Չե մեծի բրգանս՝ է քառակուսի ,
 արտաքուստ սանդուղք՝ գոյ շուրջանակի :
 Որոյ գագաթն է՝ լայն և տափարակ ,
 սրայծառ ճեմարան՝ յամպոց սահմանի :

603

Ուղիղ բարձրութիւն՝ է անկըշուելի ,
 լար չափաբերին՝ չափեաց կըշուակի :

Են քան զայժմեան քաղաք եգիպտոսի՝ յարևմտեան կողմն
 նեղոսի :

1 Այս բուրգն կառուցեալ է ՚ի վր Տողաբլրոյ յաւա
 կուտ անապատի . բարձրութի բլրոյն է 100 ոտն՝ . որ է
 իբր խարխոսի մեծի բրգանս : Արմուկք սորա աստիճանա
 բար են շինեալ լը նմանութի սանդուղց . յորում են 207
 աստիճանք որք հանեն ՚ի տափարակ գագաթն նորա , ող
 պանմեն :

2 Ուղղապիծ բարձրութի սորա լը զննութի անգլիաց
 ւոց է 499 ոտնա՝ . իսկ խարխոսն 693 . և տարածութի
 յատակին 480,249 քառակուսի ոտն՝ : Ան բրգամբ կայ
 հողաբլուր , որ ժամանէ մինչև ՚ի 38 ոտն՝ . ուր կայ փոք
 բլիկ գուռն , որ հանէ ՚ի տեղե ըարձակ ՚ի մէջն բրգան .
 և անտի ՚ի սրահ մի բարձր 5 , կմ 6 ոտն՝ . և երկայն 110 :
 որոյ յատակ է համակ ՚ի սպիտակ մարմարիոտն : Ատի
 ելանեն ՚ի միւս ևս անաւել մեծաչէն սրահ բարձր 26
 ոտն՝ . որոյ յատակ և առաստաղ են ՚ի սպիտակ լուսա
 փայլ կճոյ : Ատի ընդ փոքրիկ սենեակս ինչ լինի մտա
 նել յընարձակ և ՚ի մեծաչէն սրահն յօրինել ՚ի թեթայեան
 կճոյ . որ է ՚ի միջավայրն բրգան : Երկայնութի նորա 34
 ոտն՝ . իսկ լայնութին 17 . և բարձրութի 19 $\frac{1}{2}$: որոյ ա
 ռաստաղ միաստանի քարեղէն գերանօք շինեալ է , որք և

Իբր Տինգհարիւր ոան՝ հաշուի բարձրունն,
նաև Եօթնհարիւր՝ խարիսխի գտանի :

604 Աստուծոյ շնորհք :

Ընտել սոյն բրդան՝ փարաւոն կարծի ,
շինեալ ասէն զայն՝ իւր մարմնոյն տեղի .
Սակայն այլք կարծէն՝ թէ սա է կանգնել
ի պատիւ արփւոյն՝ ի՞նչ եգիպտոսի :

605

Սակաւ ինչ հեռի՝ աստի գրտանին ,
Երկու այլ բրդունք՝ նրմանեակք մեծին .
Թէպէտ կիսով չափ՝ փոքրիկ չափեցան ,
կանգնեալք ՚ի հրնումն՝ վասն արեգական :

606

Սին է բովանդակ՝ յորձաքար վիմաց ,
միւսն ՚ի լուսափայլ՝ մարմարեայ քարանց .

այնչափ լայն են , զի 9 գերանօք կատարի առաստաղն :
Ի մէջ այսք Եարձակ սենեկի կայ աւաղան ըն ձևոյ տա-
պանի ՚ի պորփիւրեան կճոյ , կարծր յոյժ , որ հնչէ զձայն
զանգակի :

1 Ոմանք համարին ընդ երոգոտոսի՝ թէ զայս բուրգն
կանգնեաց փարաւոն վն մարմնոյ իւրոյ , զէրկրորդ վասն
կնոջն , և զէրրորդն վն դատերն , թէպէտ այլք համա-
րին՝ կանգնեալ զսա ՚ի պատիւ արեգական կի՞ ապողոնի
առաջին չոյ եգիպտոսի (662) : Ի շինելն զայս ոմանք ա-
սէն , թէ աշխատէին 100 հազար գործաւորք . և սակայն
այլք ասէն 360 հազար : Պատմէ պլինիոս , թէ 1800 առ-
զանգ արծաթոյ ծախեցան միայն ՚ի սոխա և յընդեղէնս ՚ի
կերակուր արոճեատաւորաց , որ առնէ աւելի քան 400
հազար վեներտեկեան ոսկի : Տասն ամբ ծախեցան ՚ի հա-
տանել զքարինս , և կոփել յէթովպիա . և 20 ամբ ՚ի շի-
նեղ զամբարտակն զայն . ՚ի շինումն թէ մինչև յայժմ են իբ-
րև 3000 ամբ , ոմանք դնեն 4000 :

2 Այսորիկ շինուածք են մեծագործ յոյժ . որոց առա-
ջին հատեալ է կռանաւ ՚ի մէջ լէրին յերկայն 1400 ու-
նաչափ . և ՚ի խոր 30 իսկ երկրորդն նոյնպէս մեծ և հոյս :

Յորոց միջոցի՝ երկու այլ շինուճած,
հոյակապ և մեծ՝ յապառաժ փորած :

607 Օ՛խն էր աշտարակն փարոսի :

Լ՛րդ մեծ աշտարակն կրղզւոյն փարոսի ,¹
շինեալ գերապանծ՝ վեհ աղէքսանդրի .
Որ բոցաճաճանչ՝ լուսով գիշերայն ,
յայտնէր նաւորդաց՝ զանբոյլթ ծոց ծովի :

608 Այս քարն շամիրամայ :

Լ՛սն միապաղաղ՝ քար շամիրամին ,²
բերեալ ՚ի լերանց՝ հայոց աշխարհին .
Որոյ բարձրութի՛ն էր հարիւր յիսուն ,
քրսան և չորս ոտն՝ նորին լայնութի՛ն :

609

Սո՛ղ ըզթէատրոն՝ զայն հրաշալի ,³
բազմեալ ՚ի գլուխ՝ միոյ արձանի .

կապ : Սոքա էին բնակարանք քրմաց . որք սիրէին ՚ի խաւարի առնել զգիւնական պաշտամունս , և զգործս : Բաց յերկց բրդանց են և 10 փոքր բրգունք : Ոչինչ կարի հէնի ՚ի սցէ են գուբք կի՞ գերեզմանատեղիք նախնի եգիպտացւոց . յորս մարմինք յ3000 ամաց հետէ մնացեալ են անապական՝ գոլով զմուսեալ և ամիտիեալ ՚ի կողովս հիւսեալն յարմուկնեաց , և յարկեղս ներկեալս և ոսկեղծեալս ՚ի ձև չածց : Այս անիուտ մարմինք ներկեչ են ՚ի ծունկս և ՚ի լանջս և ոսկեղծեալ . տեսնք ձեռք մի , որոյ մատն գեռ ներկեչ էր հինայիւ՛ . գոյն և հոտ նոցա նման է կայրոյ . որ և կոչի մոթա :

1 Այս աշտարակ ՚ի փարոս կղզւոջ շինեալ եղև յապառաճանդրէ . յոր վառէին լապտերս յապահովութե նաւուց , որ սակս մեծադործութե յեթն քրանչելիս համարեցաւ :

2 Այս քար շամիրամոյ միապաղաղ , զոր հատեալ ՚ի լերանց հայոց՝ ետ բերել և կանգնել ՚ի բարեւոն նախնի շամիրամ , յոմանց դնի ՚ի կարգի եթն հրաշալեաց :

3 Սքանչելի էր թէատրոնն ՚ի հերակլիա . որ շինեալ էր ՚ի վր գլխոյ անդրոյ միոյ . մինչ զի՛ մի մարդն տանէր

Եւ ըզհըռչակեալ՝ տաճար հըռովմայ ,
զ մեհեան քարաշէն՝ ՚ի կիզիկոնի :

610 Եւ կախաղանեայ բուրաստանն :

Մնայ ՚ի բանէս՝ յաւէտ յիշելին ,¹
այն կախաղանեայ՝ բուրաստան նախկին .
Օարդարեւ ճառովք՝ կախեաց յեթերին ,
նաբուգդոնոսոր՝ ՚ի բաբելոնին :

611

Ընդ էր տեսանել՝ վերնայարկ երկնին ,
Բարձրացեալ ՚ի յօդ՝ զերթ առաստաղին .
՚ի չորից կողմանց՝ կալեալ յոլով սեամբք ,
պանծայր առ թռչնովք՝ ը գերագահին :

612

Օայս անմահ ծնունդ՝ սրտի մեծանձին ,
Եւ երթահրաշ՝ գործած արուճեստին .
Եկեր և ծախեաց՝ այն հին ծերուսին ,
մընաց յիշատակ՝ միայն ՚ի գրին :

՚ի գլուխ իւր զայն ահագին շինուած : Մեծագործ էր և
կապիտուկան տաճարն հոովմայ . նոյնպէս և մեհեանն
քարաշէն ՚ի կիզիկոն , ևն :

1 Բազումք եօթներորդ դնէն զայս կախաղանեայ բու-
րաստան . որ էր ահագին շինուած բարձրացել յօդս իբ-
րև առաստաղ երկնի՝ գոլով ՚ի վր բարձրագոյն կամա-
րաց վերաբաղմեալ . յորում կային ծառատունկք , և ջըր-
բուղիք . զոր և յիշէ եւսերիոս : Յայսմանէ յայտ է , թէ
թիւ եօթն սքանչելեաց ամբողջ պահի ՚ի հնախօսից . թէ-
պէտ ոմն զայս , և ոմն զայն մեծագործ շինուած ՚ի թիւ
քնուածանէն :

ՄԱՄՆ ՈՒԹԵՐՈՐԴ

ԳԻՅԱՐԱՆՈՒԹԻՒՆ

613 Օգնէ է գիցաբանութի :

I այն հրամուժին՝ որ ճառէ ըզդից , ¹
 զ՛հեթանոսական՝ ծիսից կրօնից .
 Օ որ առասպէլեալ հին բանաստեղծից ,
 եղին զանազան՝ չա՛ծ կամ՝ ըզդիս :

614

Սընտրիասէր՝ միտք նանրախոհից , ²
 հաստիչ չա՛ծոց՝ ստեղծու ըզդիս .
 Այց ապա անկեալ՝ բագնեաց առաջի ,
 երկիրպագանէ՝ զերթ վեհագունից :

1 Գիցաբանութիւն կի՞ չա՛ծաբանութիւն է ծանօթու
 թիւն կրօնի նախնի հեթանոսաց , որք երկրպագանէին
 կռոց , կամ սուտ անոց . զորս կեղծէին բանաստեղծք՝
 այլեայլ անունամբ յորջորջելով զնոսա : * Չի ընդու
 11 նայն էին մարդիկ , (ասէ իմաստուն) , յորս էր անան
 11 գիտութի . . . այլ կամ զհուր , կի՞ զհող . . . կի՞ զլուսա
 11 տրսն . . . աստուծոս համարեցան , որոց եթէ լը գեղն
 11 զոճարձացեալք զնոսա աստուծոս կարծեցին , գիտաւ
 11 ցեն՝ թէ՛ որչափ ևս նոցա արն առաւել լաւ է . . . որ
 11 գեղեցկութի արարչապետն է || : Իմաստ . ծԳ :

2 * Ընտրեաց հիւան զփայտ . . . և մաճոյց սոսնձով , և
 11 արար զնա՛ ՚ի պատկեր առն . . . անկեալ առաջի այնմ
 11 երկիրպագանէ . . . զորոյ զկէսն այրեաց ՚ի խարուկի . . .
 11 և խորովեաց զմիս , եկեր և յագեցաւ , և ջեռաւ , և
 11 ասէ վա՛չ ինձ , զի ջեռայ և տեսի զկրակ . և զկէսն ա
 11 բար ան գրօշէլ . . . յաղթա կայ առ նա , և ասէ . փր
 11 կեա՛ զիս || : Ե . . . ԻԳ . 13 :

Ի զնախնեաց ծածկել՝ գարշ ամօթալիս ,
 ուսայ ՚ի գրոց՝ լինել գոյլելիս :

Եւ յուզնաբանել՝ շընորհի բանիս ,
 յամօթ բանսարկուհին՝ և պաշտօնէից :

616 Ո՛ր էր սոսանսի չափ :

Կըռոնոս չափ՝ առաջին ծեր հին ,¹

հայր դից կարգացեալ՝ ըստ առասպելին :

Որ ուտէր զորդիս՝ առ չար նախանձին ,
 զի միայն կայցէ՝ ՚ի տիեզերին :

617 Եւ սոսանսի ապրեցաւ դիոս :

Սակայն խորամանկ՝ առ իւր տիկին ,²

երբ ծընաւ դիոս՝ որդի դիւցազին :

Եւ քար քարեղէն՝ արձան մի մանկան ,
 խաբեաց ըզկըռոնոս՝ այս է ծնունդ իմ :

1 Կըռոնոս ըստ առասպելաց էր որդի սոսանսի, կի՛ք երկնից. որոյ անդրանիկ եղբայր համարի Գիգան չափ. սա զինքնակալուծին ասէն էա եղբօր իւրոյ կըռոնոսի այսու գաշամբ, զի մի սնուսցէ զգաւակ արու, որպէս զի նոյն տէրուծին անցցէ ՚ի տիտանեանս (621). սորին վն ասէն, թէ կըռոնոս ուտէր զորդիս իւր: Բանաստեղծք զաւոզուծի ժամանակի նմանեցուցանեն կըռոնոսի, որ ունի ՚ի ձեռին օձաձև մանեակ անեղբ՝ նշան յաւիտենակա նուէ. ՚ի գլխին ժամացոյց, և յաջ ձեռին մանգաղ իբր զի՛ ժամանակն զամենայն ինչ և զամենայն դործ ուտէ և սպառէ: Եւ զի մի յանչափս երազեացէ յընթացս (ասէ կիւ կերոն) կարգեցաւ ՚ի դիոսէ ընդ դիրս աստեղաց, կամ առաջին մոլորակ անուանեցաւ. այն է Երևա՛յ: Եւ մին իրի առ լատինս սոսանսիս կոչի թէ՛ այս մոլորակ, և թէ՛ կըռոնոս:

2 Սէա կին կըռոնոսի յորժամ ծնաւ զգիոս, հնարս գտել ապրեցուցանել զնա՝ շինեաց ասէն արձան մի քաբեղէն, եր առաջի կըռոնոսի իբր ծնունդ իւր. և նա իբրև եհուլ զայն՝ նոյնհետայն փոխեաց և զայլ կէտալն. իսկ զգիոս սրահեաց մայրն, և գիեցոյց կաթամբ. ըստ

Օ այն իբրև եկուլ՝ դառնն ծերունին ,
 Ժայթքեաց զառաջինս՝ ընդ այն արձանին օ
 Որով և դիտս՝ ապրեալ՝ ի հօրէն ,
 աճեալ զօրացաւ՝ ընդդէմ՝ կռոնոսին :

619 Ո՛ր էր հայր կռոնոսին :

Իսկ կրոնոսի՝ հայր կոչէր երկին ,
 անուանու անուն՝ ի յունահանին օ

Որում բրոնացեալ յաղթեաց կռոնոս ,
 ըստ առասպելաց՝ եդ զաթոուն յերկին :

620 Ի՞նչ էին :

Վարձեալ և ուէա՝ մայր արամազդին ,
 քոյր էր և եղև՝ կին կրոնոսին օ

Որ և կոչեցաւ՝ մայր ամենայն դից ,
 զորմէ բազում ինչ՝ առասպելէին :

621 Ո՛րք են պիտանեանք :

Տիտանեանք կոչին՝ հըսկայք վիթխարի ,
 որդիք տիտանայ՝ չնյն երկնի օ

Որ հանդերձ որդւովք՝ կռուել ի վերինս ,
 յանդունդըս սուզին՝ ցասմամբ դիտի :

որում յիշատակէ և մագիսարոս ՚ի թուղթն՝ որ առ սէ
 նանիս վանահայր : Այս չնծուհի գրի նստեալ ՚ի վերայ
 առիւծու պսակազարդ բոլորիւք ծաղկանց , ՚ի ձեւին
 ունի զէղջիւրն առաքանելան օ յորմէ թափելին ծաղիկք ,
 պտուղք և սերմանք : Այս եղջիւր էր այծու դիտին :

1 Կռոնոս ծնեալ համարի յերկնից , կի՛ յուռանոսէ օ
 որ տիրել հօրն թագաւորեաց ասէն յերկինս : Սա նոյն
 համորի ընդ մեծ չնյն պարսից , որ կոչէր զԷփէմ : Եր
 կիր ամուսնացեալ ասէն ի ուռանոսի՝ ծնաւ զովկիանոս ,
 որ համարեցու հայր ամենայն իրաց օ զոր ձևացուցանէին
 ծեր ՚ի ձեւին կոնք , յորմէ հոսէր ջուր :

2 Ըստ բանաստեղծից տիտան չնծ եղբայր կռոնոսի
 իբրև ետես , թէ որդիք կռոնոսի ապրեալք ժառանգէն
 զինքնակալութին երկնից՝ մարտ ետ հանդերձ որդւովք

622 Ո՛ր էր Գրիգոր :

Մըամազդէ ձայնէր՝ անուռն դիտսին ,¹
 զոր պարսիկք որմիդք՝ վերակոչէին .
 Սա ինքն է ներբովթ՝ կամ բէլ և բաճաղ ,
 ըստ մեր յովհաննու՝ իմաստասիրին :

623 Ասորդէս անաս :

Սա կաթամբ այծու՝ սընաւ յանտառին ,²
 և ձայնիւ պահեալ՝ նուագարանին .
 Որով խափանեալ ձայն աղաղակին ,
 չիմացաւ իւր հայր՝ զձայն երեխային : (617)

624

Բայց երբ աճեցաւ՝ ի չափ հասակին ,
 զորացաւ ընդդէմ՝ իւրոյ ծընողին .
 Զգեաց յաթուոյ՝ յերկնից ի խոնարհ ,
 փակեաց ի դժոխս՝ սանդարամեաին :

Իւրովք, կռուեցաւ ընդ զօրութիս երկնից. կի՞ վերինս
 եղեալ ՚ի վերայ լերանց՝ մերձ եղեն զինուք յերկինս,
 յայնժամ ապա ցասուցեալ դիտս շանթաչար արար զնու
 սա, և արկ ՚ի սանդարամեսս :

1 * Քաղղէացուցն տեսեալ զտիտանեանն զայն վիթ-
 ,, խարի (ներբովթ), . անօրէն իմն սրատուով պատ-
 ,, ունեցին ը իւրաքանչիւր լեզուաց այլաձևելով զնորս
 ,, անուռն, բուշացիք ներբովթ կոչելով. բարեւոյցիք բեռ.
 ,, փղշապցիք Բահաղ. եղիլէնացիք Գրիգոր. պարսիկ որմիդք.
 ,, հայք արմազդէ || : Յովհ. իմ. ճա. պօղիի : Սակայն խա-
 շացիք զսա անուանեցին Յիօվէ. ուն և լատինք Յօվի կի՞
 է՞նքիլեհե. յի օգնիլ, կի՞ օգնու հայր. զի սա ասեն կեր-
 պացոյց և զարգարեաց զաշխարհ, որ յառաջն էր անձն :
 Վասն որոյ այս չի՞ծ մի միայն գերահոգակ դտաւ ՚ի դարս
 հեթանոսութե. յորոյ անուռն կոչեցին զերկրորդ մուր-
 բակն լուսնթագ եւնքիլեհե :

2 Ըստ առասպելաց այժն ՚ի շնորհս այսր երախտեաց
 դասեցաւ ՚ի դիտսէ ՚ի կարգս համաստեղութեց այժեւ
 ջիւր ձայնեալ (349) :

625

Սա կոչեցաւ հայր՝ օգնիչ աշխարհին ,
կերպացոյց զաշխարհ՝ ըզլոյս ընդ նմին ,
Որպէս ցուցանեն՝ բանք մըտացածին ,
կեղծեալ դիցամոլ՝ առասպելարկուին :

626 Ո՛ր Լաֆաֆորէր :

Ո՛ր ազաւորէր սա՝ յերկնից գաւառին ,
հրսկայք զայն բառնալ՝ յիւրմէ ջանացին ,
Սազմեւոյ սանդուխս՝ ելանել յերկին ,
հար շանթիւ՛ դիոս՝ Թափեաց յանդնդին :

627 Օ՛րնչ են գործք սորա :

Սեփեորահան՝ երևոյթք վերին ,
կայծակն որոտմունք՝ գործք են դիոսին ,
Որ երբ ընթանայ՝ կառօք՝ ՚ի յերկին ,
ահեղ որոտմունք՝ յայնմանէ լինին :

628 Լա՛րպէս Բոսաս :

Լա՛յս չմծ երկնից՝ գիւտ բանաստեղծին ,
յայլեայլ տեսակ՝ փոխեալ ասացին ,
հուսկ յետոյ յամօթ՝ իւր պաշտօնէից ,
՚ի չիք փոխարկեալ՝ նանրացաւ ինքնին :

1 Դիոս զկնի յաղթելոյ հօրն իւրոյ կռօնոսի , որ դա-
բան գործեալ էր սպանանել զնա , բաժանեաց զԹապա-
ւորութի տիեզերացս ՚ի մէջ եղբարց իւրոց . պոսիգօնի
ետ ասէն զծովն . պղուտոնի զգժօխս . և ինքն տիրեաց
երկրի և երկնի . զոր տիտանեան հսկայք , կի՛ Կօրեղբօր
որդիք զայն յափշտակել կամելով՝ սանդուխս կազմեցին
երկնաշափ բարձրութիւն , որ ակնարկէ ՚ի պատմունի աշ-
տարակաշինութիւն . (19) :

2 Ըստ առասպելախօս բանաստեղծից դիոս յայլեայլ
կերպարանս փոխեցաւ՝ ՚ի կարապ , ՚ի կինճ , յանձրև ու-
կի , ևս և յեղն առ ՚ի գրաւեղ զեւրոպոս , ևն : Սորա բա-
զին կառուցեալ էր և ՚ի հայս յանի քաղաք ՚ի ժամանակս
հեթանոսութեան . զոր կոչէին օգնական աշխարհի , և հայր

629 Ո՛րպէս Կրօշեալ լինի :

Իսկ արձան սորա՝ ունի՛ ՚ի ձեռին ,
 զահաւորափայլ՝ ըզսրլաք շանթին .
 Պարձեալ՝ և զարծիւ՝ ՚ի մէջ սրբունից ,
 որ էր նո՛ւիրեալ՝ ՚ի պաշտօն նորին :

630 Ո՛ր էր սորա հին :

Կին սորա հերա՝ այն չնձուհին ,
 դուստրը կ'ուռնօսի՝ և կամ քոյր սորին .
 Եւ սա կոչի մայր՝ համայն չնձոց ,
 տո՛ւօղ ձոխութեանց՝ օգնիչ նեղելոց :

631 Ո՛ր էր պոսիդոն :

Պոսիդոն , նոյն և՛ Տօղլու լրսի ,
 որ լուղիչ չնձ՝ ջրոց թարգմանի .
 Վանգի յետ աճման՝ ՚ի փարախ խաշանց ,
 զինքնակալութիւն՝ ընկալաւ ծովի :

632

Սա երկրորդ որդի՛ էր կրուոնօսի ,
 եղբայր դիոսի՝ և պըղուտոնի .
 Որ իբրև ծընալ՝ թագոյց ըզնա մայր ,
 թափեալ ՚ի ձեռաց՝ ժանտ կըլանողի :

633 Եւ որպէս պահեաց մայրն :

Կեղծեաց հընարիւք՝ ծեր կրուոնօսին ,
 թէ կենդանի մի՛ ծնեալ է նըմին .

եծոց . ՚ի մեզ կոչի զանպար . իբր խնամակալ հիւրոց .
 նմին իրի սամարացիք յանուն սորա նո՛ւիրեցին զտաճար
 իւրեանց . և զտօն սորա կոչէին որ՛մլախան : Է՛ մակ . Ը . 2 :
 2 Պոսիդոն չնձ ծովու , կի՛ջրոց՝ շինեաց ասեն զպալ
 բիսպս արոյիոյ , և հարե՛լ զգեանի զեռաժանի իւր՝ ծնաւ
 ձի մի . որով համարի , թէ նախ սա ՚ի կիր էած զձիս .
 յորոյ ՚ի պատիւ՝ ՚ի հնունն առնէին խաղ ինչ ձիւնթա
 ցից : Սորա կառքն է խեցի . յոր նստի և իշխէ Էւոզոսի
 չնյն հողմոց . և հրամայէ յարուցանել զմըրիկս :

Օ որ սընոյց փոխան՝ իւր պոսիդոնի՝
պոսիդոն սընաւ՝ ՚ի մէջ փարախի :

634 Ո՛րպէս նկարի :

Ուսապէլարկուք՝ զայս նրկարէին ,
եւաժանի մի՝ տուէալ ՚ի ձեռին .

Որ և ՚ի յատակ՝ ծովու բընակի ,
յիւրում քիւրեղեայ՝ ասէն սալատի :

635

Վարձեալ խեցեամորթք՝ նրման սատափի ,
եղեալ կայ սորա՝ առ դարչապարի .

Որ ձգի յերկուց՝ ձիոց ծովային ,
ի ցոյց տէրութէ՝ ծովու դիւցազնին :

636 Ո՛ր էր պղոպտոն :

Որդուտոն կրրտսեր՝ որդի կ՛ռոնոսին ,
իշխան դրժոխոց՝ և չնձ նորին .

Ի զի այեփս՝ անուն ձայնէին ,
չնձ ճոխութեանց՝ ոսկւոյ արծաթին :

637

Որա մահանուն՝ անծաղք ասացին ,
ժանտ դրժոխերես՝ տեսիլ պատկերին .

Եւ այնչափ տրդեղ՝ սեաւ զարհուրելի ,
մինչ ոչ զոք եգիտ՝ ինքեան ամուսին :

638 Ի՞նչ որպէս նկարի :

Ո՛ր խոժոռադէմ՝ զայն նկարէին ,
և երկժանի մի՝ կալեալ ՚ի ձեռին .

1 Սա ինքն է առաապէլէալ չնձն ստորայնոց՝ սանդալ
սա յոմանս է հաս մերկ , ուն խաղողն . յոմանս փեճեկա .

Յորջափ կայ 'ի բոյս՝ անտի սընանի ,
 և բազում անգամ՝ 'ի պատեան փակի :

767 Օ ինչ է սերմն :

Սերմըն վերջին մասն՝ է բուսականին ,
 ըսկիզբն և վախճան՝ կատարիչ նյութին .

Օ երթ պըսակ փառաց՝ եղեալ 'ի գըլխին ,
 որով և տեսակք՝ տընկոց պահպանին :

ւոր , ուր նուշն . և յոմանս պատենաւոր , ուր ցորեան :
 Պտուղն զտեալ յինքեան զհիւթն՝ պարարէ զսերմն . և
 միանգամայն կարգի 'ի կերակուր մարդոյ և կենդանեաց՝
 տալով նոցա զփափուկ սնունդ : Ուստի գիտաղբ ոչ են
 պտուղք , այլ այտուցք ինչ , յորս ուռնուն մանրաթելք
 ծառոց խոցոտելոց 'ի խայթոցաց ճանձից (846) : Բայց
 գիտելի է , զի բազում անգամ տեսակք պտուղոց փոփոխին
 'ի պատճառս սննդարար հիւթոց . զի ցորեանն երբեմն
 փոխի յորումն , և գարին 'ի վարսակ , առ 'ի չգոյէ սեպ-
 հական հիւթոց . վս զի փափուկ գործարան մանրատնկոյն
 կծկեալ կմ լարձակեալ ձգէ զօտար հիւթս , և բեղմնա-
 ւորի օտար պտղով :

1 Սերմն արտադրի 'ի զտեալ մասանց հիւթոց . յոր 'ի
 վերջոյ ձգի տնկական զօրութին . որոյ ընտիր և ողելից
 մասն փակի 'ի կեդրոնի իբրև խիւս կամ սաղմն . յորմէ
 արտադրի տունկն . իսկ խոչոր մասն հիւթոց փաթութէ
 զայն իբր պահարան սերման : Արդ բնաղնինք պնդեն
 նախ՝ թէ իմ տունկք արտադրին 'ի սերմանէ . երկրորդ
 թէ իմ տունկք յառաջ քան զբուսանիլն պարունակեն
 յինքեանս զբոլոր տունկն հանդերձ իմ մասամբք . ի՞նչ
 բում ցուցանեն և խոչորացոյցք . յոր իբրև զարթնու-
 տնկական զօրութին , զարմանալի իմն կարգաւ աճեցու-
 ցանէ զմասունս . զի ա, Բ, Չ . ձ . են երկու բլթակք բակ-
 լայի միացեալք 'ի ձեռն թեւից . յորս տեսանի ստեղնա-
 ւորութի իմն * * * * . ուր արմատք սերման են գ գ . որք
 ճապաղեալ թ իմ մասունս բակլայի սնուցանեն . իսկ
 փոքրիկ ընձիւղն կմ արմատն ՚ի իջանէ 'ի հող և տարա-
 ծեալ զմասունս ձգէ յերկրէ զհիւթն սննդարար . ապա
 արտադրէ զընձիւղն է , և յետոյ զտերևս , որով լինի
 տունկ :

768

Թողում զայլևայլ մասունսս պիտանի ,
 Ըզխիղը ըզպատեան՝ փուշ ընդ փեճեկի .
 Սմանք իբր ոսկր էն՝ որպէս յընկուղին ,
 ոմանք զերթ մագիլ՝ իբր ՚ի բաղէղին :

769

Սյս ամէն մասունք՝ աճողականին ,
 կազմեն բոլորեն՝ ըզգեղ գալարին .
 Սրովք սնանին՝ աճին բարձրանան ,
 ՚ի թուփ և ՚ի տունկ՝ ՚ի ծառ ձևանան :

770 Եւ հիւանդութիւնք :

Եւ հիւանդութիւնք տրնկոց պատճառին ,
 ՚ի բազում առթից՝ որովք վրտանգին .
 Եւ ելորդ հիւթովք՝ ցրտաիւճ և ջերմամբ ,
 հարուճածով զեւնոց՝ օրհասաւ բնութեանս :

1 Այս մասունք կոչին ծառայականք . իբր զի՝ ծառայ-
 են յօգուտ անկոց . որպէս խիղք ձգեալ զխեչակօք
 վերամբարձ ունին զորթն . փուշք պահպանեն զվարդն
 ՚ի շրտակար զեւնոց . և պատեանք պաշտպանեն ըզ-
 պտուղս , ևն :

2 Բազում էն յոյժ առիթք հիւանդութեանկոց . ի
 տերեւթափութի , խորշակահարութի , որով կիզուն գե-
 ռարձակ պոկունք , ցրտահարութի , փտութի կի՛ բազ-
 կեղ , որ հարկանի ՚ի տունկս առ արմամբք . թոյլ զվաթ-
 տար արմամդրութիս արմատոց , զխոնաւուիս և զճճիս :
 Իսկ մահ կի՛ ցամաքումն անկոց պատճառի՝ յորժամ խց-
 նին անօթք ոչ կարելով չունիլ զհիւթս , կամ յորժամ
 երկարութի կենաց շիջանի տնկական զօրութիս , չկարե-
 լով ձգել և մարտել զհիւթն ՚ի սնունդ իւր : Գոյ ՚ի
 տունկս ձգողական իմն զօրութի համարուի՛ ձայնէլ . որով
 վարդէնիք մատչին ՚ի ջուր , և խորշին յիւղս . դարձէլ
 և որթն դիմէ ՚ի ջուր և խորշի ՚ի կազամբէ : Այս խոր-
 շումն կոչի հակախոնք :

771 Վանի էն Կեասկի Կնկոյ :

Արդ տեսակք տրնկոց՝ բազում գլտանին ,
'ի տրնկաբանից՝ յերկուս վերածին .
Ոմանք անկարար՝ ոմանք կարարեալ ,
անկատարք են սունկք՝ որք զարմատ չունին :

772

Իսկ կատարեալքն են՝ որք զարմատս ունին ,
ըզբուն ըզկեղև՝ զոստ ընդ ուղեշին .
Եւ սոցա երեք՝ տեսակք գլտանին ,
Ճառ սաղարթալի՝ ըռուփ և դալարին :

773 Օրն է դալարին :

Դալարին է տունկ՝ դալար և անբուն ,
որոյ են անբաւ՝ տեսակք գունագոյն .

1 Այժմեան տնկաբանք զհետ եղեն զտեսակս տնկոց ը
թոճով արկանել . բայց որովհետև ոչ որ մարթացաւ ցարդ
յամ լերինս Տաց դնալ և քննել , (Թող զի նոր տեղք հետ
զհետէ գտանին ,) նմին իրի օրթորէ տեսակք տնկոց առա
ւելուն . իսկ զորս մինչև ցայժմ գտին՝ իբր առ ոչինչ համա
րին նկատմամբ բժմ անծանօթ Տաց . քանզի տնկաբանք
43,000 տեսակս տնկոց հազիւ գիտացին որոշել ցարդ :

2 Կատարեալ սունկք ունին գործարանս , արմատս ,
տերևս ևն . յորոց ոմանք կարգին 'ի դեղ , ոմանք 'ի կե
րակուր . ոմանք 'ի ներկ . ոմանք 'ի զարդ , ևն . իսկ ան
կատարք են , որք չունին կատարեալ արմատս , կամ այլ
մասունս , որպիսի են սունկ անարմատք . որ ծնանին 'ի
մարմին տնկոց այլևայլ մասանց երկրի , որոց հանդիպին
ընդ հողով , սւրանօր նախ ելանէ բուն ինչ՝ իբր խուրձ
ջրաց , և աճեալ ձևանայ դուխ . յորում է միս լի հիւ
թով : Չնոյն է ասելի և յաղագս Բարբոսաց , որք են կու
տակուն մասանց 'ի դուրս ելելոց 'ի փտեալ մարմնոց .
թէպէտ խոշորացուցիւ իբրև տունկ ինչ երևին ունելով
գոյնս և սերմն : (Թող զՎասն բոյսն անարմատ նրբաթել .
որ հատմամբ թեւից բաղմանայ , և լինի 'ի ջուր . ուղ է
և կանաչ բոյսն 'ի յատակս լճից . ը այսմ է և լոռ , կամ
մոմառ , որ լինի ևս 'ի վր քարանց :

3 Դալարի ձոյնեմք զամ տեսակս խոտոց , սերմս

Իբր անուշահոտ՝ ծաղիկք զանազան,
եղէզն և բանջար՝ վարունկ և ցորեան :

774 Եւ նոսնոսֆարն :

Բոյսըն նունուֆար՝ ՚ի ջուրըն աճի ,¹
արմատն ՚ի բազում՝ ոստըս բաժանի .

Որոյ զօրութիւն՝ է զարմանալի ,
կակղէ ըզպղինձ՝ իբր ՚ի հալոցի :

775 Օ ինչ է Բոսֆն :

Սուփն է տունկ փոքրիկ՝ բնովք բազմազան,²
յարմատոյ ՚ի վեր՝ ոչ յոյժ բարձրանան .

Որպէս մերենին՝ նաև վարդենին ,
տօսախ և դրժնիկ՝ այլև մըրտենին :

նեաց , բանջարեղինաց , չեղինաց , ևն . որոց ոմանք կար
գետաւ են ՚ի պէտս կերակրոց , ոմանք ՚ի գեղ բժշկուէ .
և ոմանք ՚ի փափկութի : Դարձեալ են որ պահանջեն
զգարման , և են որ անդարման բուսանին ՚ի լերինս և
՚ի դաշտս , են որ առ եզերք ծովու բուսանին ուր պատու
ծովային . և են որ ՚ի խորս ծովու . ուր է տեսակ ինչ
սիւղոյ , որ ելանէ մինչև յերեսս ծովու՝ մարգարէանի
նմանութի : Դաւարիք ՚ի պէտս փափկութե՝ են ծաղիկք ,
որք զանազան հոտովք , և գեղազան գունոցն վայելչու-
թի գեղեցիկ պանծան ՚ի բուրաստանս . ուր են մանու-
շակ , նարգէս , մեխակ . ևն : Թոզում զկենդանաբոյսն ,
որոյ ճասպուկ գոլով ջրացն , եթէ որ մերձեացի ՚ի նա՝
զնամ տերևս ամփոփեալ պատի զձեռամբ . որով երբեմն
նաև զթաշուես բոբոնէ , և ապա թարշամեալ չորանոյ .
նման է սմա և պարիտոնի , այլ սա անդրէն ուղղէ զտերևս :

1 Այլ է սա ՚ի նունուֆարէ Ծաց մերոց , որ նոյնպս
՚ի ջուրս աճի . բայց այս միայն ՚ի ջինս դտանի . զորմէ
պատմէ հայրն քոնձդէ , թէ ոմն ՚ի ջինաց առեալ գոյզն
արմատ այսր բուսոյ եդ ՚ի մէջ նր պղնձի գրամ մի . և
եդեալ ՚ի բերան մանրեաց ատամամբք զոյգ չարմատոյն
և զպղինձն : Թոզ զբոյսն խահվէի աբ . Չ . ձ . ձ . որոյ
տերեք նման են նարնջի , և ծաղիկն սպիտակ . զոր եգիտ
վանահայր ոմն անապատականաց :

2 Թուփն է տունկ փայտեղէն , որ ոչ այնչափ ՚ի վեր

776 Աս Բորամէան :

Թուփըն բորամէս՝ ՚ի Թաթարս լինի ,
 երեք ոտնաչափ՝ բարձրացեալ աճի .
 Որ իբրև դառն ինչ՝ յարօարն երևի ,
 կըճկակ ոտք և հերք՝ ՚ի նոյն որոշի :

777

Սա ՚ի մէջ դալար՝ խոտոց բուսանի ,
 որպէս գառն յարօտ՝ մընայ կէնդանի .
 Յորչափ Թարմ են բոյսք՝ ինքքն դալարի ,
 ՚ի սպառիլ խոտոց՝ անդէն ցամաքի :

778 Աս Լոշտակն :

Իսկ Լոշտակն է բոյս՝ որ սակաւ աճի ,
 բայց արմատ նորա՝ է հիանալի .
 Օ՛ր իբրև նրման՝ մարդոյ գտանի ,
 գըլուխ ձեռք անդամք՝ ՚ի նոյն նըշմարի :

բարձրանայ . որոց ոմանք են բազմաբուն և ոմանք ոչ :
 Եման է մրտենւոյ Թուփն Բէյի կմ (Լայի) դր = 4 . Չէ .
 ձը . որ յետ երկց ամաց բերէ զտերև առատ յոյժ . ծա-
 դիկ նր է սպիտակ նման վայրի վարդի . չինք յամին երկցս
 քաղէն զտերև նորա . նախ ՚ի մարտի՝ երբ տերևքն են
 մանր և քնքուշ . զոր շորացուցանեն ՚ի հովանաւոր վայրս .
 սա ալնիւ գոլով «բոնի կոչի , զոր ոչ երբէք հանեն յաշ-
 խարհէ իւրեանց . իսկ զերկրորդն ժողովեն յապրիլի . և
 զերդն ՚ի մայիսի , և ՚ի յունիսի , զոր առաքեն յՏ ամ :

1 Բորամէան Թարգմանի գառն , զի լը վկայելոյ սու-
 բիոսի և սղալիկերայ նման է սա գառնին՝ ոտիւք , կճրա-
 կօք , ունկամքք , և բովանդակ իսկ մարմնովն , բաց յեղ-
 ջերաց . որոց փոխան ունի Թելս իբր հերս . յորմէ Թա-
 Թարք առնեն արտախուրակս :

2 Գոյ ՚ի չինս և բոյս ինչ ձին սէն՝ անուանել կանդնա-
 չափ բարձր . բուն նր Թաւամազ , ուզիղ և անոստ . որ
 արձակէ տերևս սրածայրս , և լինի ՚ի ձև հովանոցի .
 բերէ զծաղիկ մանուշակագոյն . որոյ արմատ՝ նման է
 մարդոյ հանդոյն լոշտակի . և է բնդհանուր դեղ չինաց
 Շրէմ ամ ակախից , մանաւանդ Թորացաւուր Թե (Վերեֆ) :

779 Օ կնչ է ճառն :

Եւանն է տունկ փայտեայ՝ որ բարձրը ձրդի ,¹
 ոստովք տերեւովք՝ կաննաչ դալարի .
 Որպէս ձիթենի՝ կաղնի թըթենի ,
 և այլ անհամար՝ յայլևայլ տեղի :

780 Ա յնչ է ճայրն :

Մայրն երկայնակեայ՝ ծառ հըռչակելի ,²
 'ի վերոյ քան զայլս՝ ամբարձեալ լինի .
 Որ 'ի լիբանան՝ բազում գըտանի ,
 առ սողումնի՛ւ՝ բուսեալ գոլ կարծի :

781 Ա արձաւենին :

Արձաւենին է՝ ծառ ավրիկեցի ,³
 քաղցրահամ՝ պըտղով՝ 'ի գըրոյ գովի .
 Որոյ է տեսակ՝ իբրև հերձանի ,
 հոսէ հիւթ անոյշ՝ պատուական գինի :

1 Ճառն ունի բազում տեսակս . որոյ ոմանք են ձայնի , ունի , ունի կաղնին , շագանակն , ևն . և ոմանք շոքանի , ունի դարնին մշտագալար . ոմանք ջրայն , ունի ուռին . ոմանք առաւել քան զնեւրնկէցս բարձրանան . և ոմանք այնչափ ստուար լինին , մինչև գրուն նոյ 7 մարդիկ հաղիւ լըգըր կեն : Պատմէ պլինիոս , թէ յաշխարհին լիւկիս գոյր սոսի մի 80 ոտնաչափ փապարաւոր . յորում 18 բարձակցոք արար խրատուի զուգիոս դեսպան : Գիրք ԺԷ : Պատմէ Հայրն կիրիկերիոս թէ տեսի ծառ մի 'ի հնդկիս , յորոյ 'ի փապարի կարէին բնակիլ 25 անձինք :

2 Մայր ծառն գրեթէ քան զամ՝ ծառս առաւել բարձրանայ . և երկարագոյն տեէ վն անփուտ լինելոյ փայտիննր : 'Ի սոցանէ 28 երևին 'ի լիբանան մեծամեծք յոյժ . զորոյ ստեն , թէ սողումնի է անկեալ զայնս : Գտանին յեգիպտոս և ծառք թղոյ , որք կեան ց600 ամ : Գոյ 'ի պէնկալա ծառ մի կոչեցեալ թղենի բենիամինեան . որոյ են 60 բունք կապեալք ընդ միմեանս , և շընապատն 370 ոտնաչափ . իսկ ստուէրն 'ի կէսաւուր 1100 . զոր չափեցին 'ի 1787 :

3 Արձաւենին մշտագալար զոյդ բուսանի սրս և էգ .

782 Ա՝ լաւիւնէն :

Իսկ լաթինէն է՝ տեսակ մի ծառի ,¹
 մինչև հարիւր ոտն՝ ձրգի երկայնի .
 Բստոճար միակերպ՝ յարմատոյն ցրվեր ,
 միայն ոստք ուղիղ՝ ՚ի ծայր բուսանի :

783 Ա՝ Լիւնիւն հնդկաց :

(Թ) ձրգենին հնդկաց՝ է ծառ միաբուն ,²
 երկայնեալ ձրգի՝ ՚ի մեծ բարձրութիւն .
 Ար ուղղեալ յոստոյ՝ ըլլթելա ՚ի գետին ,
 արմատս արձակեալ՝ նոր ծառք բուսանին :

որով էգն առեալ յարոճէն փոշի ինչ ալերանման (765)
 պողաբերի . ապաթէ ոչ մնայ անպտուղ . քանզի անկէշ
 երբեմն զոյգ մի արմաւենեաց հարուստ միջոցաւ հեռի
 յիրերաց ոչինչ պողաբերեաց էգն , սակայն իբրև բար-
 ձրացեալ քան զիմ միջանկեալ ծառս՝ ետես զարու ար-
 մաւենին և ընկալաւ ՚ի ձեռն հողմոց զալիւրն , սկսաւ
 այնուհետև պողաբերել : Մման է արմաւենւոյ և նարինի
 ծառն հնդկաց . բայց սա ՚ի միում կանթի ունի բազում
 տերևս իբրև ճառագայթս . զպտորն պատեալ կայ կա-
 նաչ մաշկ ինչ . և զինի այնր կարծր թեւք . յորմէ առնեն
 պարանս նաւուց . ապա երևի պտուղն , որ ունի ՚ի վր
 զփեճեկս ուն ընկուղոյ , և է նման շագանակի : ՚ի ծա-
 ռոյ աստի ելանէ հիւթ ինչ , որ լինի բմպելի . իսկ կեղև
 պտղոյն ՚ի գործ ածի ՚ի տեղի անօթոց , դրդալաց , և
 ՚ի պէտս ձգելոյ զծուխ . յորոյ անուն և այն կոչի նախ-
 փիւն :

1 Լինի ՚ի հնդկիս և ծառն քախալ , որ զպտուղն բերէ
 ոչ յոստս , այլ ՚ի բուն անդ ծառոյն , սկսեալ ՚ի ստո-
 ըին կողմանէ արմատոյն , մինչև ցգլուխ բնոյն . պտուղ
 նր գեղնագոյն և սեխանման . այլ մեծ քան զայն . ՚ի
 մեջն կեղևոյն ձգեալ կայ ձող ինչ իբրև առանցք . յորոյ
 վր դասաւորեալ են մանրահատ պտուղք , ունելով ՚ի
 միջի քաղցրահամ հիւթ ինչ սպիտակ : Թող զչաքարաբեր
 ծառն ամբրիկոյ նման կաղնւոյ . յորոյ ՚ի բունն բանան
 ձեղքոճած ՚ի մարտի , և մսեշ ծորակ՝ հոսի անախ հիւթ .
 որ եռացուցեալ սնդանայ , և լինի շաքար :

2 Սորա տերևք նման են սերկեկի և պտուղն (Թղոյ) .

784 Օ ինչ է օձառաբէրն :

() Ճառաբէրն է՝ զերթ ընկըզէնի ,
 այր 'ի մէջ պողոյն՝ զանդուճած ինչ փակի .
 իր և շատ փրփուր՝ արձակեալ յիւրմէ ,
 մարբէ ըզհանդերձ՝ նրման օձառի :

785 Աս ճարպաբէրն :

() Պողուժ՝ զճարպաբէր՝ ծառն չինացի ,¹
 տերեք սըրտածէ՝ կարմիր շողշողի .

Իսկ պըտուղն 'ի մէջ՝ պատենից փակի ,
 ընդ որով գոյ ճարպ՝ որ լուծեալ հալի :

786 Աս կինամնն :

() Կինամնն է ծառ՝ իբրև ձիթենի ,²
 որոյ է տերև՝ նրման կիտրոնի .

Սենի սեաւ պտուղ՝ և տերև կրրկին ,
 ներքինն է ընտիր՝ որ մեզ ընծայի :

որոյ թէք էրկայնեալք՝ 'ի գետին , արմատանան , և բուսեալ գրաւեն զերկիրն իբրև անտառ :

1 Այս ծառ բերէ զպտուղ փակեալ՝ 'ի մէջ պատենի յերիս շերտս բաժանելոյ . ուր միջուկն արտաքին կեղևոյ է սպիտակ գոյացութի , գունով հոտով և ամ իբօք նման ճարպոյ . զոր հանեալ լուծանեն առ հրով . և եղեալ 'ի նմա պատրոյգ՝ 'ի թէլէ կնիւնոյ՝ վառեն 'ի գիշերի , ոտք մէք զկանթեղս . գտանի յճ ճիարոնայ և ծառ թղթաբեր . յորոյ 'ի կեղևանայն լինի թուղթ . այլև մանեն զուճան , և գործեն զկտաւ . յօրինեն անտի և պատրոյգս , որ է զիւրավառ : Գոյ և տեսակ մի ծառոյ յափրիկէ . լը որոյ կեղևօք մածեալ կան փայտեղէն թէլք , յորմէ գործեն զկտաւս և զգէնուճն : Թող զծառն ոսկեբեր յափրիկէ . ընդ որոյ կեղևանօք բնոյ գոյանայ սսեն ոսկի . թերևս պատճառեալ՝ 'ի հանքային հողոյ տեղւոյն :

2 Ծառ կինամննի լինի 'ի սելեան կղզի . որոյ ծաղիկն է սպիտակ , և պտուղն սեաւ , բոլորակ և կաղնուցափ . սորս կրկին են կեղևք՝ ներքին և արտաքին . ներքինն գուլով սպտանի , բերի առ մեզ և յամ աշխարհ . և այն է բարէն : Անգ լինի և ծառ պղպեղի փոքրիկ և պատաստակ իբր թուփ , որ բերէ հաստ օղկուլորէն :

787 Այս մեխակն ։

Իսկ ծառ մեխակին՝ է դարձոյ նման ,
բերէ զՏոտաւէտ՝ ծաղիկ պատուական ,
Օ որ չորացուցեալ՝ առ մեղ առաքեն ,
ի սեւեան կղզւոյ՝ որ ՚ի հընդկաստան ։

788 Այս զմանենին ։

Այլ զբմբռունենին՝ է ծառ ամբրիկեան ,
ոյր ստուճար է բուն՝ ութ ոտք բարձրանան .
Արբ վիրաւորի՝ հոսէ արտասուս ,
բստաշին՝ հոտաւէտ՝ տն սլիտեան ։

789 Այս հալուէն ։

Հալուէն է ծառ ինչ՝ արնիւ պատուական ,
փայտն է իւղային՝ հոտով աննրման .
Օ որ հատեալ յերկար՝ թողուն ՚ի բայի ,
և զընտիր մասունս՝ հաւաքեն անտի ։

1 Չմանենին է ծառ փոքրիկ և դանդաղասաղարթ . որ ՚ի վիրաւորին կաթեցուցանէ հիւթ ինչ պատուական , զոր կոչեմք ստաշին , կի՞ զմուսս : Սմին նման է և բալասան ծառն փոքրիկ իբր եռոտնաչափ բարձրութիւն յաճախեալ ՚ի հնդիկս . ունի տերևս մշտադարբս , որ ձեռքեալ հոսէ զոգտակար հիւթն բաւասա՛մ : Գոյ յարեմտեան կղզիս և ծառ մի բարձր և ստուճար , վիշապ ձայնեալ . դոյն կեղևոյ նր նման է թեփոյ վիշապ օձի . ոտք նորա բուսանին՝ երկու երկու լերկ ուղ բազուկ մարդոյ , ունելով ՚ի ծայրն տերևս ցաւատեալս իբրև զմատունս . հերձեալ զկեղևս նր ելանէ հիւթ կարմիր . զոր գեղարարբ կոչեն արեան վիշապի :

2 Չհալուէն կի՞ (չօք աղածի) հատեալ ՚ի հնդիկս դնեն ՚ի բայի , մինչև փոռի փայտն . բայց քանզի ՚ի ծառն դատանին երակք ինչ իւղայինք , որք մնան անփուտ , և սոքա են բուն չօք աղածի . որ սիւսի լէ ամ աշխարհ : Այս աղնիւ ծառ լինի և ՚ի չինս , այլ առաւել ընտիր . որ նման է ձիթեանոյ , և բուն նր բաղկանայ յեռատեսակ փայտէ , առաջինն է ծանր և սեւա . երկրորդն սպիտակ և թեթև . երրոն՝ որ է ՚ի մէջ բնոյն ՚ի յարգի է յոյժ . հոտ

790

ՄԼ ԹՈՇԷԼ ԸԳԳԵՂ՝ արնկոյ զանազան ,
 տրկարանան բանք՝ զի էն անսահման .
 Որք ՚ի փառս անբաւ՝ մնաթին տիրական ,
 դարձեալ և ՚ի պէտ՝ մարդոյ արարան :

նր անուշակ և միանգամայն դեղ ուշաթափաց : Տերևօք
 նր ծածկեն գիւղականք զյարկս տան իւրեանց , և վա-
 բեն ՚ի տեղի սկաւառակի . մանրաթեւք տերևոց նման
 գորով վնջ ՚ի պէտպէս իրս պիտանի լինին : Փուշքն տե-
 րևոց ՚ի կիր արկանին փոխան բեւոաց : Մ հասանել
 զոսոս բնոյն ծորէ հիւթ մեղրահամ , որ յետոյ փոխի ՚ի
 պատուական քացախ . փայտ ոստոցն ունի զհամ կիտրո-
 նի , զոր մարթ է ուտել :

1 Անհամար է տեսակ անկոյ , ոտ յայտ է ամենեցուն .
 որոց յատկութիւն , և հիանալի գոյն և ձև թէ՛ տերևոց և
 թէ՛ ծաղկանց ամբեցուցանէ զմիտս մտաւորաց : Բայց
 թէ յիւրաքանչիւր անկոց որչափ տունկք արտագրէլ էն
 մինչև ցոյժմ , անհնար է մտօք խել բմբունել . քանզի ե-
 դեալ թէ մի հատ եգիպտացորենոյ յառաջին ամի բերէ
 100 . որոց մի մի յերկրորդ ամի բերելով այլ ևս 100 .
 լինին ք մտ 10000 . յերր ամի լինին 1000,000 . ՚ի չրդ
 ամի լինին 100,000,000 . և այսպէս հետզհետէ աճելով
 ՚ի ստեղծմանէ աչխարհի՝ որք էն ամբ 5813 . մինչև ցոյժմ
 հառճեալ ելանէ թիւ մտաց անբարդէլի , զոր առ ՚ի
 բացատրել պիտին 11621 զրօք հանդերձ միութիւն . որք
 է թէ գիղէին ՚ի վր երկրի , մինչև ցարբունակն երևակէ
 հասանէր շեղձակոյտ նց :

Կենդանագրութիւն՝ ուսումն հեշտալի ,¹
 ճառէ զքնութեանց՝ կենդանեաց սեռի .
 Օ որ՛ի զանազան՝ տեսակ որոշեալ ,
 ճառեն բընախօսք՝ ըստ իւրեանց կարգի :

792 ՕՒՆԷ Է Կենդանին :

Կենդանին ունակ՛ է գործարանի ,
 շարժուն գընայուն՝ ինքնին՝ ՚ի յերկրի .
 Ունի զօրութիւն՝ սլաղաբերելոյ ,
 այլև ըզգալոյ՝ և կամ՝ բաղձալոյ :

793 ԵՍՏՅԱՆ ԲՈՒՆԷՆԻՆ :

Եստյան կենդանիք՝ ՚ի վեց կարգ զատին ,²
 ՚ի յամառային՝ և ՚ի յօրային .
 Եսև ջրային՝ և յերկնայինցալ ,
 յայլևայլ որդոսան՝ ընդ խեցեմորենին :

1 Կենդանագրութիւն է մասն փիլիսոփայութեան , որ ճառէ զյատկութեց , և զպէսպէս տեսակաց կենդանեաց . Ը որով փակի և մարդաստեղծութիւն (890) . վն զի գործարանք կամ անգամք մարդոյ լը մեծի մասին նման են գործարանաց այլոց կենդանեաց : Սակայն զայս ինչ յուշ առնել կամիմք համբակաց . զի մանր խուզել զյատկութիւն կենդանեաց լը նոր գիտողութեց թողաք բնական պատմութե : Իսկ մեք նշանակեցաք և զհին կարծիս նախնեաց ՚ի հմտութի և ՚ի զուարճութի մասնկանց :

2 Կենդանիք նախ լըհանրապէս բաժանին յերկուս տեսակս՝ ՚ի Բանային , և յանբան : Բանականն է , որ ունի զօրութիւն իմանալոյ և կամելոյ . ուր մարդիկ և հրեշտակք : Իսկ անբանք՝ որք կեան կենդանական կենօք , և ունին զգայունիս և զշարժումն յառաջախաղաց , են՝ ք

794

Լայց ցամաքայինք՝ մակաբաժանին ,
'ի սողուն զեռուն՝ լ'ի չորքոտանին .

Լ. յլև յընտանի՝ և 'ի վայրենի ,
որպէս ձի արջառ՝ գազան կատաղի :

795 'Լ չորքոտանիս որ է Տեճագոյնն :

'Լ չորքոտանիս՝ փիղն է մեծ գազան ,¹
որոյ մորթն է լէրկ՝ խիստ և կընճուականս .

Լ յրկու ասամուռնք՝ ցցուէալ 'ի ծնօտի ,
և ստինք 'ի յէգ՝ կին մարդոյ նրման :

Չորքոտանիք . ք թռչունք . ք Սողունք . ք Միջատք կմ
աղետաք . ք Չկունք . ք Խեցեմորթք : Որոց անցուն տե
սակք այժմ համարին 24 հազար . ուր դաւիթ անյաղթ
գնէ 1000 տեսակս կենդանեաց . յորոց 600 'ի ծովու և
400 'ի ցամաքի : Են որք գնեն 12 հազար , և են որք
գնեն իբր 30 հազար :

I Չորքոտանիք արարան 'ի հողոյ 'ի վեցերորդ աւուր
արարչագործութե . որք և ունին սեպհական յատկուես
որով զանազանին յայլոց կենդանեաց . ք Չև նյ է այլա
տարազ՝ գնալով քառոտանի . ք Ուլեղ նյ փոքր է քան
զմարդոյ հատեմատութե մարմնոյ իւրեանց : ք Ունին եր
կու ձգանուտ յողակապս , որք սկսեալ 'ի գլխոյն գնան
մինչև 'ի քամակամէջս , որով և անաշխատ 'ի կախ ունին
զգլուխ իւրեանց : ք Ստամոքս նյ այլազգ է քան զայ
լոցն . զի ոմանք 'ի նոցանէ ունին 2 . կմ 4 ստամոքս . ոն
կոն . այծն . նակ ուղտ , որով որոճան : Տեսակ չորքո
տանեաց համարին իբր 450 . յորոց ոմանք են մակեր ,
ոմանք խոտաճարակ . կէսք ընդակեր . այլք ունին 'ի
թաթս միս ճարպալից . զոր երբեմն լիզեն . և այնպէս
կեան անկերակուր զձմեռն ողջոյն , ոն արջք . ոմանք են
եղջերաւոր , և կճղակաւոր ոն արջաք . ոմանք եղնգա
ւոր կամ մատնաւոր . են որք որոճան , և են որք ունին
Պ4 մատուես որոնս անգեղջիւրն . կէսք երկու մատուես .
այլք 5 : Թողում զչղջիկն , որ ունի զմաշկաթև , որով
թուչի . և միանգամայն է չորքոտանի :

Այս Թանձր անասուն՝ է քաջ կրթական ,
մինչ պատերազմաց՝ լինել պիտեան .
Ունի ըզկընձիթ՝ դիւրադարձ երկայն ,
ձրգէ և վարէ՝ զայն ձեռաց փոխան :

797 Օ ինչ է առիւծ :

Առիւծն է փոքրիկ՝ քան ըզփիղ գազան ,
այլ յոխորտ զօրեղ՝ արքայ վեհական .
Որոյ և ոսկերք՝ կուռ են և անձուծ ,
սակաւ ըմպէ ջուր՝ ահեղ է և ձայն :

1 Այս սոսկալի կենդանի մեծ . և բարձր իբր չորեք
տասան ոտնաչափ քն , Չ՛. ձթ . երկայնակեաց է և ու
ժեղ . զի կեայ 9500 ամս . գլուխ նր ահագին , և ըստ
ուարամորթ , ոսկր ճակատուն Թանձր իբր ութ մատնա
չափ , մինչև մարթ է մտել 'ի նմին բեւեւ . բառնայ ըզ
բեռն 3000 լիպրէ ծանրութիւն . 'ի միում՝ աւուր ընթա
նայ վեցօրեայ ճանապարհ . ուտէ 40 հօխայ որից , կի
հայ . և ըմպէ բազում գոյլ ջուր , կի՞ դինի . պարկեշտ
է յոյժ . նախ վարէ զմարդիկ , և ապա ելանէ 'ի կարիս
որովայնին : Գիւրընդէլ է և կրթական . մինչ զի 'ի
հնումն կրթէին զնոսա արբուցանելով զգեղ , և 'ի ծայր
կնձթին կապեալ սուսեր հոնէին ըզէմ թշնամեաց . որ
կոտորած մեծ գործէին , և առաթուր կոխէին զնո
սա : Եւ երբեմն փոքրիկ աշտարակս 'ի վերայ կանգնէին
փղին , և մտեալ 'ի ներքս պատերազմէին : Թ՛. Գլ .
Չ . 30 :

2 Առիւծն 'ի մջ գազանաց վեհ ճանաչի . զի է կեն
դանի ահաւոր , և մեծագլուխ . բերան նր մեծ . մարմինն
թեթեւ և ջղային . ճիրանքն ուժեղ . ձեռ նր երկայն և
զօրաւոր , մինչև յերկիր կործանել այնու զկենդանիս :
Արու առիւծն Ե՛ Չ՛. զ . է իբր ութոտնաչափ , ունի
'ի պարանոցին զբաշ . այլ ոչ է գն , որ և լինի փոքր .
ասի թէ որոց դէս է կարճ և դանդուր , այնք հեղ
լինին , և որոց երկայն և անդանդուր , դաժան լինին
յոյժ :

1. յս գազան արի՝ յորժամ ծերանայ ,
 չըզբտեալ գազան՝ ըզմարդիկ որսայ .
 1. ու ընդդիմադարձ՝ է յոյժ անողորմ ,
 իսկ նըկուն անձանց՝ և կանանց գըլթայ :

799 Ա. հեղեղներ :

1. յլ ուրնգեղ ջիւրն է՝ գազան վիթխարի ,
 գունով մեծութք՝ նմանեալ փըղի .
 1. վերայ ուրնգաց՝ զեղ ջիւր մի ունի ,
 մորթ նորա կարկամ՝ իբրև ըզխեցի :

1 Այս գազան ծանրաշունչ և սաստկաձայն՝ տոկայ ընդերկար անձաշակ՝ զայրանայ եթէ որ հայեացի ՚ի նա ժպիրհ հկամբ : Ամենայն կենդանիք երկնչին ՚ի ամանէ , ընդ որս մաքառի , և ոչ բնաւ թիկունս գարձուցանէ . այլ մարանչելով յետս գնայ : Սակայն մարդիկ հնարիւք զարհուրեցուցել փախուցանեն զնա . և ՚ի կողմանս հասեշու ընտանեցուցեալ վարեն ՚ի տեղի շանց :

2 Այս կենդանի էր Չ. զն. է ՚ի չափ երկայնութի փղի , այլ ոչ բարձր և ստուշար . ոտք նր կարճ . ձև նր և ձայն նման եղին . մորթ մարմնոյն լերկ և բազմուղի նմա նեալ պատենից լի թեփօք բաց ՚ի գլխոյն և յորովայնէն . բնութք հանդարտ է , այլ ընդ գոյն կարմիր զայրանայ . կեայ լէ երկար . կրէ զծնունդս յորովայնի աւելի քան զամ մի . ուն և փիղն : Թող զիեղջերան ձիաչափ և մթնա գոյն , երկտա և անտառաբնակ . զորմէ պատմեն նախնիք թէ ունի ՚ի մեջ ճակատուն եղջիւր մի երկայն . զոր սրեալ ՚ի վիմի մաքառի լէ փղաց . և երբեմն կալեալ եղջերք զփիղն ՚ի վր գլխոյն շըջն . ամ զորութի սորա աւսեն է յեղջեր անդ . որ և է ապաքինիչ թիւնից . մինչ զի՝ այլ կենդանիք սպասեն ամա առ ջրով . զի սա նախ խառնէ զջուրն եղջերք . և ասլա ըմպէ . յետ սորա և այլք ըմպեն : Բայց նորք անհաւաստի համարին զայս կենդանի : Գտանի և միեղջերու ծովային , յորոյ ՚ի բերանն գոյ եղջիւր մի փոքրիկ :

800 Այս վագրն :

1) ազբբ գազանն է՝ զորեղ կատաղի ,
 և կերպարանօք՝ գայլոյ նրմանի .
 Պատառէ ըզմարդ՝ և ըզկենդանի ,
 'ի սէր իւր կորեանց՝ որսորդաց մմանի :

801 Այս բորենին :

1) Եւ բորենին է՝ գիշախանձ գազան ,
 յաճախ գլտանի՝ յախրիկեան սահման .
 Չայնէ որպէս մարդ՝ ըստ պլինիոսի ,
 խաբէալ գիշատէ՝ ըզմարդ առժամայն :

802 Օ՛րն է ինչիսկէ՛ս :

1) Եւ 'ի քափրաստան՝ գազան կենդանի ,
 որ յօգենդացոց՝ ինչիսկէ՛ս կոչի .

1 Այս գծնդակ գազան խայտափիտ յաճախէ՛ 'ի հըն գիկս , արագաշարժ է յոյժ , որ 'ի մեծ բարձրութի ռաւ նու . մարմինն նր երկայն , և առաջին ոտք նր կարճ . եզ սորա որդեակեր է յոյժ և հանապազ կատաղի : զորոյ երբ զկորիւնս յախտակեն , կատաղէ՛ զննէ զհետս որսորդաց , և զհետ պնդի անհնարին արագութիւն . յորմէ շէք հնար զերծանելոյ , եթէ ոչ զմին 'ի կորեանց ընկեցիկ առնելով . զոր բարձեալ տանի յորջ իւր և անդէն պնդի զկնի , մինչև մտեալ 'ի նաւ փախչի որսորդն : Ասեն թէ սա ոչ յարձակի 'ի վր սպիտակ մարդոյ , որնպս և ինձն . որոյ գէւթն նման է կատուի . աչքն գեղին , լեզուն խորտաքորտ , թեթեւաշարժ է և կատաղի . ունի յն : Չ . ոչ .

2 Ասէ պլինիոս թէ այս կենդանի ա , Չ . ոչ . ձայնէ ունի մարդ 'ի վրանս հովուաց . յորմէ խաբեալ մարդիկ իբրև ելանեն արապս՝ կալեալ գիշատէ . զոր արդիք ոչ հաւատալի համարին : Գտանի յախրիկէ և ընձուղտ Բ . : Չ . ոչ . որոյ պարանոց հանդերձ գլխովն նման է ուղտու , և մորթ նր խայտափիտ ունի զընձու . 'ի վր բարձից առաջին ոտից ունի պասկաձև նշանս , ո : Թող զասէ կենդանին 'ի չափ երկվարի . որոյ ոտք և կճղակք նման են եղջերուի , գլուխն՝ ձիոյ . մորթն և ականջք՝ իւրոյ . եղջերաւոր է և երազընթաց . անցանէ թ գետ լողալով :

3 Փինքինկզէ՛ս նշանակէ անօր ֆալապա . զի գարշ հս

Որում էրբ մարդիկ պընդին ըզկընի ,
արձակէ չար հոտ՝ անհանդուրժելի :

803 Ա՛ս Բոնասոս :

Նոնասոս գազան՝ նման է եզին ,
'ի դաղմատիա՝ յաւէտ գըտանին :
Որ ըզկուն ձըգէ՝ ընդդէմ որսորդաց ,
այրէ և վառէ՝ ջերմամբ սաստկադին :

804 Ա՛ս յովազ :

Սովազ բարկասիրտ՝ հոտով յինքն ածէ ,
զայլեայլ գազան՝ կալեալ սատակէ :
Արջն 'ի ձըմերան՝ յօրացեալ թըմբի ,
եղանէ 'ի ծառ՝ որպէս մարդ չըջի :

805 Ա՛ս կազէլայ :

Արդ կազէլայն է՝ մեծ չորքոտանի ,
գլուխն է ուղտու՝ բայց եղջիւրս ունի ,
Սարմինն է եղին՝ ձայն որպէս այծու ,
յետին ոտք երկայն՝ զերթ նապաստակի :

սով՝ զոր արձակէ երբեմն հեզձուցանէ զհետամուտ որ-
սորդս • որով ստիպին յետս գառնալ : Իսկ գառնիս կեն-
դանին = + ՁԵ • զԵ • մեծ է քան զկատու • համակ փշա-
պատ , որ Է տեսանելն զթշնամիս ջցոճեալ զայնս պաշտ-
պանի :

2 Յովազն է տեսակ մի ընձառիւծու 'ի չափ որթու •
գլուխն բորբաձե , թեթեաշարժ է և երազընթաց :
Իսկ ընչոքի թեթեաշարժ է և մահուչափ թշնամի
չանց : Գտանի յափրիկէ և վայրի շուն 'ի չափ օշխարի •
որդ սրունքն երկայն , տատանւքն և շիրանքն սայրա-
սուր , կատաղի յոյժ մինչև պատասեղ զմարդ : Թող զա-
մնաթեթե Գառնի Գառնի գեղեցկատրուք • որում ոչ կարէ
հասանել երթվար • տոկայ անսոճաղ զաւուրս երիս :

1 Ըստ այսմ և առնէա կենդանին 'ի չափ կատուի , 'ի
ձմերայնի թմբեալ 'ի ջրոյ մնայ ամիսս 6 անշունչ • Իսկ
'ի գարնան յառնէ 'ի կենդանութի , զոր բերեն յըրինակ
յարութի :

806 Եւ լամայ :

Չորքոտանի է՝ լամայ կենդանին ,
այլ թմնձր են շրթթունք՝ և մեծ աչքնորին ,
Կրճղակ և մագիլ՝ ի յետուստ ունի ,
դուլ ի սահուն՝ վայրբս գեգերի :

807

Եւ սորա երկու՝ ըստինքս ունի ,
և երկու միայն՝ կորիւն ծնանի .
Որք յամերիկա՝ միայն գըտանին ,
փոխան գըրաստուց՝ բեռինքս տանին :

808 Եւ ճուհն անգատային :

Սուկն անառային՝ է գորշ կենդանի ,
մեծ քան զմուկն է՝ կըրկին աւելի .
Եւ զն ունի ըզպարկ՝ ընդ որովայնիւ՝ ,
բանայ և փակէ՝ երբ պիտոյք լինի :

809 Եւ սախերո :

Սաթիրոն ի մեզ՝ այծամարդ լըսի ,¹
երբեմն ի վերայ՝ երկոտից շրջի .
Ոյր գըլուխ է մեծ՝ ըստուճար է մարմին ,
ըստինք են կընոջ՝ յորովայն իգին :

810 Եւ կապիկ :

Կապիկն է ճարտար նըմանող մարդկան ,²
և կերպարանօք՝ մարդոյ է նըման :

1 Սաթիրոն և սին նման կենդանիք՝ են տեսակ ինչ
կապիկաց . մի ի սոցանէ բերաւ ի հոլանտա , որ էր էր
լը մեծութե պատանեկի . բայց կրկին ստուճար և սեփեղ
ունչքն թիւր , քամակն թաւ . փորն և ստինք մերկ . գլխ
մօք և այլ անգամօք նման մարդոյ . առնէր զգործողու
ինչ մարդոյ . ընկողմանէր յանկողնի՝ եղեալ զգըլուին ի
վր բարձի . ուտէր զպտուղ , ըմպէր զգինի , և յաճախ
շրջէր երկոտանի :

2 Կապիկք ոչ միայն լը արատքին կերպարանաց նման

Որոյ էն տեսակք՝ բազում զանանգան ,
որպէս է եօգգօ՝ մարդակերպ գազան :

811 Օ ինչ էն սողունս :

Սողուն կենդանիք՝ սողին ՚ի յերկրի ,
ձրգէլով զերկայն՝ մարմին ըզկրնի :

Վերաթէք գոլով՝ և շարժապարոյր ,
կրծկեալ և թողեալ՝ գրնան իւրովի :

էն մարդոյ . այլև լը ներքին գործարանաց բազմօք նման
գտանին . որոյ տեսակք բազում էն յոյժ . ոմանք ունին
երկայն ալիս որպէս « Չ . զԳ . և զայն վարեն ՚ի տեղի
ձեռաց , և որսան զիւրեքմարթս ՚ի լճից . և ոմանք ունին
զպարկ ը պարանոցաւ . ուր պահեն զուտելիս , և ՚ի լէ
նէլ Հարկի հանեն և ուտեն . ոմանք էն ընտանի որք ի Բ
րև մարդ աշխատին և գործեն զկտաւ . և ոմանք վայ
րագ և կտտալի . ոմանք խմբովին շրջին հազարաւորք ՚ի
միասին , ունին զգլխաւորս , որոյ հպատակեալ գնան
յորս , յորժամ ննջեն՝ գնեն զմին պահապան իւրեանց :
՚ի ստա ձիգոս կապիկ « Գ . զԷ . առաւել նման է
մարդոյ . երեսն տափարակ , գլուխն բուրջի , խորակն ,
տափարակի թև և երկայնաբազուկ , թաթք ձեռաց և ոտից
լերկ , մեծ չորս ոտնաչափ , հանդարտաբարոյ և արագա
շարժ . ուտէ զհաց և զտուղ . իբրև զմանուկ յայտ առ
նէ զկարիս իւր կամ զյաւս : ՚ի նիկրիտիա գտանի տե
սակ մի մարդակերպ կանգի , է Գ . զԷ . զոր կալեալ
բնակչաց մարդէն մանրէլ զորիզ , հանել զճուր ՚ի ջրհո
րոյ , տանել զբեռն ՚ի վր գլխոյ , և դարձուցանել զբաժ
փուր առ ՚ի խորովէլ զմիս , ևն : Գոյ ՚ի հապէշս և տե
սակ մի ՚ի չափ կատուի , մարդակերպ և մօրուան սպի
տակ , հեծեծէ ուր մարդ . զճ . զԷ :

1 Սողունք էն անտան կենդանիք , որք սողովեալ ըն
թանան . իսկ որոյ մարմնիք ոլորտագիծ և շրթոյակերպ
էն հիւսեալք , այնք յառաջ խաղան և ընթանան դարձա
դարձ գալարմամբ . ոմանք էն հողային , կի՛ր շամտային , և
ոմանք ջրային և ջրածին . կէսք էն անաբնակ , որպէս որ
դունք . այլք աբնակաւոր , ուր յօճք , վրայք , ևն : Օճք
շարժին ՚ի ձեռն անոճածև թեփոյ գասաւորեւոց ը ո
րովայնիւ հակառակ կարգաւ , քան զոր ունին ՚ի թի .

812 Եւ քանի՛ էն փեսայի :

Բազում էն տեսակք՝ սողնոց ցամաքի ,
է զի անարիւն՝ է զի փանաքի .

Արաէս օձք ճըճիք՝ Թըրթուրք և որդունք ,
և այլ մեծ գազանք՝ որք սողին յերկրի :

813

Սեծամեծ սողունք՝ գազան վիթխարի ,
աճին երկայնին՝ ՚ի չափ սոսկալի .

Արաէս եղև այն՝ առ բազրատ գետով ,
զոր ռըմբօք հարին՝ զօրք ատտիկոսի :

814 Օձնէ Բասիլիսկոսն :

Բասիլիսկոսն է՝ օձ ինչ Թիւնաւոր ,
կամ քարք դըժընգակ՝ օձից Թագաւոր .

Իսկ խարամանին՝ այլ տեսակ օձի ,
որ խայթեալ ըզմարդ՝ փութով մեռանի :

կունս . քանզի ծայրք Թեփոց ՚ի վեր գոլով քան զմակե-
րեղթ մարմնոյ նց՝ յեցեալ լինին ՚ի հող, և հեռեւեալ
մասունք կծկեալ մղեն զառաջին մասունս և այնպէս գա-
լարեալ գնան : Արոց բազում տեսակք գտանին . են որք
ունին զցցունս ՚ի գլուխն ուն , ո՛հ Չ . Տ . և են որք ու-
նին ոտս . են որք ձուածին են , և են որք կենդանածին
ուն ի՞նչ , ոմանց տուտ կրկին է . և ոմանց լեզու երկ-
ճիղ , ուն երկայն օձն զ . Չ . Տ . որք և հանապաղ աճին
և կեան ՚ի հարիւրաւոր ամս :

1 Տեսակք սողնոց համարին լինել իբր 180 . բայց են
և բազումք որք անձանօթ են մեզ : Տեսաւ ՚ի նորա-
գիւտ Յի տեսակ մի նշանաւոր զեռնոյ . որոյ բովանդակ
մարմնն երևի ուն հիւստեած տերեւոյ . իբր զի՛ Թեք նր
են կէս տերեւոյ , որք բերեալ առ միմեանս ձեանոյ տե-
րև մի . ստորին կողմն մարմնոյն է տերև մի ալտազոյն .
ունի երկու սլաքաձև ոտս , և 6 ճիւղանս , նման տերեւոյ :

2 Պատմեն հնախօք , թէ երկայնութի այսր կենդան-
ւոյ էր 120 ոտնաչափ . զոր սպանին մանդղիոնօք՝ զօրք
ատտիկոսի արքային . այլ այս՝ յառասպելեաց է սակի :

3 Բազումք ՚ի նախնեաց համարէին թէ այս օձ միայն

815 Օ՛րն է աստիճան :

Ես սպիրտն է ժամատ օձ՝ դառն թիւնայլ ,
 Թընամի մարդոյ՝ կենդանեաց սեռի .
 Իր և ՚ի սահաւ՝ ժամուց միջոցի ,
 զրաւէ ըզմարդ՝ առանց այտուցի :

816 Ես սերաստէսն :

Սերաստէսն ՚ի մեզ՝ եղջերի կոչի ,
 զի ունի եղջերս՝ ըստ եղջեր այծի .
 Իսկ իժն է ժամատ օձ՝ յաւէտ չարաթոյն ,
 այլ միսն օգտակար՝ ՚ի դեղ սլիտանի :

817

Տեսակ ժամատ օձի՝ դտաւ յաիրիկէ ,
 որ թքեալ հեռուստ՝ զաչքս արատէ .
 Եթէ ոչ կրնոջ՝ կաթամբ լուսացի ,
 փութով կուրանայ՝ ցաւօք վըշտայլի :

հայեցիւք սպանանէ զմարդ . որ է անհաւաստի : Իսկ
 խարամանին յաճախեալ յաիրիկէ՝ ՚ի խոյթեղն պատճառէ
 անհնարին ծարաւ և անդէն սպանանէ :

1 Այս օձ 1/2 • Չ • ճք • ունի ՚ի վր ճակատուն եղ-
 ջերս որոյ մարմին ստուար է և երկու կանգնաչափ եր-
 կայն • գոյնն դուրով աւազանման՝ դարանի յաւաղուս
 եթովպիոյ , և որսայ զթռչունս • երբեմն նաև յարձակի
 ՚ի վր հեծեւոյ • նախ վիրաւորէ ասէն զոտս ձիոց , և
 սպա զմարդն : Իժն՝ կորիւնս ծնանի կենդանիս մինչև
 20 • բայց մի մի յաւուրն • սորա երկայնութիւն լինի մի
 կանգուն • որում նախնիք պաշտօն իմն անձային ընծայէին •
 ուն տեսանի ՚ի հին դրամն : Գայ և այլ տեսակ անթոյն
 օձի գուլիթէ կոչեցեալ , որ ունի 4 ոտս կարճիկս հինգ-
 մասնեայս , և լեզու երկճիկ , մանր են ստամուկը նր •
 ծնանի կորիւնս 10 , կմ 12 • դր Բ • Չ • ճք :

2 Սորա թուքն է թիւնաւոր • զոր ՚ի հեռուստ ցայ-
 տեցուցել յաչս ճանապարհորդաց՝ պատճառէ անհնարին
 ցաւ • և եթէ ոչ փութով լուսացի կաթամբ կնոջ , ան-
 շուշտ կուրանայ : Թանգ զնեթօյն , որ ստուցեալ սլանայ
 ը օգս մինչև ց20 կանգուն յերկայնութի :

Վոյ և այլ տեսակ՝ դրժընդակ օձի ,
 ոյր 'ի ծայր տըտան՝ ձայն իմըն հընչի .
 Յորոյ 'ի սողալ՝ անցաւորք փախչին ,
 զի անտի լըսի՝ ձայն ինչ զանգակի :

819 Յիսկ պէտս էն Ռոյնս :

Ուոյն օձից պահի՝ 'ի լընտեր նոցին ,
 խածեալ ըզմարմին՝ թափեն 'ի վիրին .
 Արով երբ թըռչուն՝ և զայլ ինչ ուտեն ,
 թուշով և ջերմամբ՝ քայքայեալ մարսեն :

2 Չայս տեսակ օձի տեսին 'ի գօնկօ . որ մօտ 'ի ծայր տտան ունի ոււոյց մի փոքրիկ . յորմէ 'ի գնալն հնչէ ձայն ինչ զանգակի : Գտանին անդև օյ+ Ռուսուր+ կի՛ տեսակք Լիւպոսոյ . որք ունին և երկու կարճ օտս . գոյն նց էանաչափսան կապոյտ , և մորթն թեփոտ : բնակիչք ընծայեն սց պաշտօն ինչ : 'ի 1812 երևեցաւ 'ի կարմնա կարնոյ օձ մի ԿՏ, ՉԼ. ճԴ. որ լը պատմելոյ ականատէ սից՝ էր հերասպանծ և մեծ . թեփք նր ցոլացուցանէին զլոյս , և ինքն երևէր ճառագայթարձակ . մինչ զի՝ ոչ որ իշխեաց զիմել 'ի վր նր . ապա դարձաւ 'ի լեառն , ուստի իջեալն էր : Գոյ և տեսակ մի ապաթոյն օձի յափրիկէ երկայն 7 օտնա՝ . և ստոճար իբրև զմէջս մարդոյ . գըլուխն՝ մեծ և բոլորչի . աչքն՝ մեծաբաց և կապուտակ . մորթն՝ աստղանիւ : Չայս օձ զաղրատեսիլ՝ պաշտեն կոյր կոճիկեացիք իբրև խնամակալ չաճ վս բնութք հեղ լինելոյն :

2 Թոյն օձից ամփոփեալ կայ 'ի մաշկեղէն ինչ պարկի զետեղէլոյ 'ի ընտերս նոցա . առ որ գտանի ատամն՝ ծակ և սուր , որ հաղորդի թիւնալից անօթոյն 'ի ձեռն խողովակի ինչ . 'ի խայթելն օձից , թիւնն չէ ծակն ատաւման՝ թափի 'ի վերսն . և ապա խառնեալ ընդ արեան պատճառէ սնհնարին ջերմութի վիրաւորելոյն , և այն պէս սպանանէ , եթէ ոչ ապաքինեսցի փութով : Եւ զի ստամոքս օձից գոյով երկայնաձև անյարմար է առ մարտողութի . և նորին աղագաւ օձք 'ի ձեռն ջերմութեան թիւնոյ գիւրաւ մարսեն զկենդանիս : Այս թիւնաւոր

820 Օրհնէք Են Տողէս :

Մորդ մողէսք և գորտք՝ յայլ կարդ վերածին ,
առանց սողելոյ՝ դընան և շրջին :

Որպէս է կովձուծ՝ կանաչ աստղանիշ ,
յորոյ և բազումք՝ թիւնաւոր լինին :

որակութի չար և մահարեր ոչ միայն է՝ ի կենդանիս ,
այլ և ի առնիս և ի հանքս . բազում գաղանք ծնեալք ի
չոր և ի ջերմին վայրս թիւնաւոր լինին : Գոյ թոյն որ
լուծանէ և հրդեհէ զարիւն . և է որ խանգարէ զչործա-
րանս : Իսկ մեծութի օձից աւելի գասնի . քան զճօ կամ
50 տոնա՝ . երկայնակեաց են և ընդերկար շարժին յետ
սպանանելոյ : ի բազում ամիսս անսոճնող մնան փակեալ
յարկեղ . մինչ զի յետ անցանելոյ 10 ամսոց տակաւին
առոյգ են և թիւնաւոր . բայց եթէ բացյի բերան աք-
կեղ , ի շնչել զօգն՝ մեռանին :

1 Սոյն տեսակք կենդանեաց տիրապա կոչին Կռանս ,
կի՞ Կռանս , զի ունին ոտս և գեռան յերկրի . որոց տե-
սակք բազում են յոյժ . ի սոցանէ է Կռանս կի՞ կովա-
դիայն՝ մողէս թիւնաւոր . որոց ոմանք մեծ և կանաչ .
այլք ստոճար և աստղանիշ : Որպէս Կռանս յ՞ որ լինի
յամբերիկա . Չ . Ճ . և Չ . Ճ : Այլ է և թեւաւոր
մողէսն Վիւսոյ ձայնեալ . որ ունի երկու մաշկաթեւս ի
վր կողց . մորթ նորա կապոյս և սեանիշ . ունի մաշկս ,
զոր ըստ հաճոյս լնու օդով առ ի թեթեւանալ . և երկու
պարկս , զոր ի թուշիլն ուսուցանէ . Կռ . Չ :
Թողում զվիշապանման կենդանին * . , Չ . Ճ . որ ունի
երկու թեւս և ոտս . զոր ոմանք յուշապարիկ ձայնեն :
Նմանապէս և Կռանս են տիրապա զեռունք . որք ծնանին
ի ջուր զպարկ ինչ նման ձուռոց . որք բեղմնաւորե՛լ սեր-
մամբ արոճի , զկնի 20 աւուրց լինին երկայնաձև , և առ
սակաւ սակաւ բուսանի գլուխ նոցա , և առտ , ի 50
աւուրս կենդանանան նմանեալ ձկան : Ապա սնեալ ա-
ճին և ձկանայ գլուխ գորտոց , և ելանեն սոք ի 50 ա-
ւուրս , և տալս անկանի առտ նոցա և ձկանան գորտք :
Գտանի յիտալիս և տեսակ մի գորտոց , ի չափ գլխոյ
մարդոյ , որք զձագս իւրեանց ի վերայ թիկանց կրեն :
Եւ տեսակ մի որոց գլուխն է եռանկիւնի և գոյնն կար-
միր . և տեսակ մի ևս փշամորթ և եղջիւրաւոր . որպէս
է . . . Չ . Ճ :

821 Օրհնէ է Ռարանիւօլա :

Թարանթօլա է՝ տեսակ մողեսի ,¹
 Թիւնաւորեալ մարդն՝ անըզգայ լինի .
 Բայց իբրև լըսէ՝ ըզձայն քննարի ,
 առ սակաւ սակաւ՝ շարժեալ բըժըչի :

822 Եւ գեղնաաւիժ :

Իսկ գեղնաաւիժն է՝ նրման մողեսի ,²
 այլ խայտախարի՞՞ փայլուն գերթ հայլի .
 Յորում մծտաւոր՝ առարկայք զըննին ,
 ոյր լեզուն՝ ի դուրս՝ ձրդեալ կերակրի :

823 Եւ սալամանդր :

Կենդանի սեաւ՝ ի ձև մողեսի ,³
 անթոյն ապիկար՝ տեսլեամբ սոսկալի .
 Բնութի՞նց ցուրտ է յոյժ՝ մինչ տոկալ հըրոյ ,
 ուտէ ըզկրրակ՝ առանց այրելոյ :

1 Այս կենդանի յաճախեալ յիտալիա է տեսակ ինչ մողեսի, բայց մարմինն գորով գնտակաձև ըստ իրաց ինչ նման դաանի սարգի, որոյ գոյնն է գորշ, մորթն՝ անհարթ և խիստ. զորմէ պատմի թէ ոմն հարուճեալ ի սմանէ՝ զառաջինն սկսաւ տխրիլ, ապա հեալ շարաշար-զարկ բազկին տկարացաւ, դէմքն խորշովեցաւ, և հուսկ յետոյ անզգայացաւ: Ապա ք լսելն զձայն քնարի նախ սկսաւ շարժել զմտտունս, ապա զբազուկս, և զոմենայն մարմինն, և վինի ինքնին յարուցեալ սկսաւ պարել մինչև 6 ժամս. ապա ի դագարիլ ձայնի քնարին անկաւ ի մահիճս ի քիրան համակել, և այսնս շարունակել աւուրս ինչ առողջացաւ: Չայս օրինակ երաժշտական բժշկութե՞ մերժենք վերջին բնաբանք:

2 Սորա երկայնութիւնն է 2 քիլ 77. Չ. ճի. գոյն նորա կանաչ. որ վերկայն լեզուն ը ձրդեալ ի դուրս՝ որ սայ զմըջիւնս և զճանճս, և ուտէ. զի լեզուն զգածեալ է խժային հիւթով, յորում մածնուն կենդանիք. թէ պէտ կարէ ամիսս հ մնալ անսոճաղ:

3 Սալամանդրն ս. Չ. ճի. ունի ի ներքոյ մորթոյն հիւթ ինչ ցուրտ, զոր՝ երբ անկանի ի հուր հոսէ

824 Այս անկուէպ :

Այն կուէպ կէնդանին՝ է՝ ի չափ կատուէի ,
բայց ձևն է նման՝ կովարիայի .

Ազդէ հըպէլոյ՝ ցուրտ և դող ուժգին ,
փարատէ ըզտէնդ՝ հըպէալ հիւանդին :

825 Օրդ էն որդուանդ :

Որդ որդանց բազում՝ տեսակք գտանին ,
ոմանք են աղխաղխք՝ և են որք ոստչին .

Սիւրմէ , և այնու պահի՝ ի հրոյ . և երբեմն շիջուցանէ :
Եթէ հատցի տուտ սոցա , անդէն բուսանի . սոքա փո-
խեն զնուրբ մաշկ երեսաց մորթոյ իւրեանց՝ ի 8 աւուրս
փանդամ , որպէս և գորտք :

1 Այս նորատեսակ կէնդանի նման է մողեսի . և
բնուէ այնչափ ցուրտ , զի դող սաստիկ պատճառէ որոց
հպին ի նա , զոր հապէշք ի կիր առնուն՝ ի բժշկութիւն
տենդից՝ հպէցուցանելով յախտացեալն . յորմէ անհնա-
րին ցաւ պատճառի յամենայն անդամսն , և սպա առող-
ջանայ ասէն :

2 Որդունք թէպէտ են փանաքի , այլ մեծաբարբառ
բարոզք մեծութե արարչին շնչին մարմնով իւրեանց և
սքանչելի յատկութե և գունով , զորոց զտեսակս ոմանք
էգին 1200 . բայց են իբր անհամար . որոց ոմանք ունին
զլոյս ի տուտս , որպէս են փոքրոց . ոմանք հոսեն ի
մարմնոց իւրեանց իւղ ինչ , և հիւթ . ոմանք վեցոտնեայ ,
բազմոտնեայ կի՛ հարիւրոտնեայ , ևն . որպէս շ , յորոյ
վերայ գոն աստղաձև կապոյտ նիշք , Չ . ճՅբ : ի մէջ
սոցա անտոն որդունք ինքնին բաժանելով ի մասունս
բազմանան . քանզի մարմին նոցա բազկանայ յանրակաց ,
որք բաժանել յիւրեաց՝ նոր որդունք արտագրին . բայց
և բազումք են փոքրոց , յորոց արտագրին և ճանճք ,
որք զձուս գնեն ի կեղևանս ծառոց , ի տերևս , ի սլը-
տուլս , յաղբս , նաև ի հեղանիւթս . ուր յետ ձմերան
ի ճանճ՝ փոխակերպեալ թռանին . վն որոյ ամենայն ու-
րէք գտանին որդունք , մինչև ի մորթս կէնդանեաց և
յաղիս նաև յուղեղս (919) : Բազումք ի սոցանէ ոչ չըն-
չեն ընդ բերանս , այլ ընդ ծակս տտան , կամ թիկանց :
Իննին և յաղիս կէնդանեաց ճճ , երկայնաձև , բոլոր

Յորոց և բազումք՝ յորժամ՝ կըարատին , ամենայն մասունք՝ կենդանի լինին :

Ճի , բառոտանի , ևն . որք երբեմն շարժեալ և սպառեալ զմամայն , պատճառէն զբազց սաստիկ , զսպառումն շնչոյ , և զբուն ծանր . և երբեմն այնչափ երկայնին , մինչև հարիւրաւոր ոտնաչափ լինին . բայց սոքա պղնաղիեալ համարին 'ի բազում ճճեաց : Աւարաւ որդունք հասարակօրէն երկայնածե լինին , յորոց զմին կարատեաց 'ի 40 մասունս սովուռ բնաբան , և ահա 40 որդունք եղէն : Իբր զի՝ յաղիսաղիս կենդանիս բազում թորք և շարունակեալ շարք սրտից նմարին . որով 'ի բազում մասունս բաժանեալ , իւրօքանչիւր կարօնք ունին զգործարանս բաւականս առ կենսական գործողութի : Երբեմն երկու կարօնք զանազան ճճեաց եկեալ առ միմեանս , պատուհաստեալ լինի մի կենդանի : Ի կարգս սոցա վերածին միջատք , կամ բոտոտք ձուճածինք . որք սփռեալ զեռան 'ի վր ամենայն իրաց , ևս և աւաղոյ (441) . որոյ ոմանք անհնարին փոքր են մինչև չանկանիլ չե տեսուք : Ի սոցանէ են յընչ կենդանեաց , որք խայթոցաւ բեռանոյ իւրեանց ծակեալ զմարմին՝ զնեն զձուս . և այն պէս կենդանացեալ գոյանան 'ի մորթ կենդանեաց : Գոյ 'ի չինս և Բոպո կամ որզն փոքրիկ իբրև լու . որ աներեւոյթ կնճթաւն ընդ մտեալ 'ի ծառս ծծէ զհլութս ծառոյն , և փոխարկէ 'ի մոմ սպիտակ , որ զօրէն կայլակաց հօսի 'ի վայր : Ամանք 'ի միջատաց են առնէգ . այլք ինչնածին . իր առեալ զմի փոքրիկ ողիւ տնկոց դիցի միայնակ 'ի մէջ ապակեոյ՝ երբ հատանէ 'ի չափ մեծութե՝ ծնանի ինքնին . և 'ի միջոցի սակաւ առուրց բազմանոյ բազում ծննդովք . որք մինչև յերդ ծնունդն աճին : Սոքա 'ի գարնան և յամառան են կենդանածին . իսկ յաշնան ձուճածին . յարդանդ իգաց գտանի թէ՛ կենդանի , և թէ՛ ձու : Թորզում գորզն նաւահար , երկայնածե և սպիտակ ասղնաչափ . յաճախեալ 'ի նաւահանդիսսս ինչ պոնտոսի , որք փանայքի մարմնովն ծակեն զյատակս նաւուց , և բնդմտանէն 'ի տախտակս , որով 'ի սակաւ ժամանակի անպլտանացուցանեն զնաւն : Կրման են ամա և , ճաղնապէս ճճիք . որք գոյացեալք երբեմն չե մտկաւ մորթոյ տղայոց խոշանգեն զնոսա : Այսպիսի որդունք գոյանան և 'ի սրունս մարդոյ 'ի հնդկաստան , և են երկայն 7 գրկաչափ , և կամ պակաս :

826 Օ կնչ էն կենդանաբոյս :

Իսկ կենդանաբոյսը՝ ըստ բուսականին ,
 ոստովք և բրնսովք՝ աճին երկայնին .
 Ոմանք ծառաձև՝ և կէսք ծաղկաձև ,
 ոմանք անգլուխ՝ են օրք սիրա չունին :

1 Մտքա իբրև զբոյս աճին , մնանին , և սերին առանց
 արուճի , վս զի բուսուցանեն 'ի մարմնոց իւրեանց զգա-
 ւակս զօրէն ճիւղոց , և կի՞ հանեն զձուս զօրէն սերմանց-
 օրք կուտէլ յիր ինչ՝ լինին արմատ այլոց կենդանաբու-
 սոց . որոց թէ հատցին ստեղուիք , բազմանան : Մար-
 մին սոցա է իբր պարկ ինչ , ունեւոյ միայն զբերան և
 զթեւս 'ի տեղի ձեռաց , որովք կալեալ զմանր կենդա-
 նիս , ուսեն և փութով մարսեն : Գասնին բազում ան-
 գամ 'ի փոսս . ոմանք են ծաղկաչև . զի երևին իբր մի
 մի ծաղիկ 'ի վերայ միոյ ծղի բուսեալ , որք արագ արագ
 շարժեն զչրթունս . այս ծաղիկք զատեալ կուտին 'ի յե-
 նարան ինչ , յորոց ելանէ այլ ծաղիկ . և ապա կծկեալ
 լինի կոկոնաձև . յորմէ ելանէ կրկին ծաղիկ , և սոքա
 այսպէս բազմանան , և լինին իբր թուփ բազմաստեան :
 Ոմանք են յափնայն . որք ունին զգլուխ և զմանր ոսս .
 սոքա հանէլ յինքեանց թեւս լինին նոր կենդանիք . ուր
 առաջինն լինի արմատայլոց , և այնպէս բազմանան : Եթէ
 հատցին անգամքն՝ անդէն բուսանին , իսկ եթէ գլուխն
 ձեղքեայի՝ լինին երկու գլուխք : Եթէ հատցի գլուխն , և
 այլ անգամ գիցի առ նմին՝ պատուաստին : Գոյ և ծո-
 վային կենդանաբոյս , օր հաստատի 'ի վր կարծր իրաց
 ինչ . 'ի սոցա սակի է Բուսփն , որ համարի բոյս ծովու .
 բայց զննեալ գտին , զի է պատիճ կենդանեաց . որովհե-
 տև գոն 'ի նմա բազում կենդանիք , կի՞ որդունք ծովու ,
 որոց մաշկք և հիւթք մարմնոց տակաւ տակաւ կարծրա-
 նան , և ապա քարանան . յորս բուսեալ այլ կենդանա-
 բոյսք՝ սերին իբրև զճիւղ . և այնպէս լինի թուփ ինչ
 անտերև 'ի մէջ ծովու . որ և բուսանի շրջուն՝ արմատ 'ի
 վեր , և ոստք 'ի խոնարհ . չունի արմատս՝ կուտի 'ի բա-
 րինս . գոյն նորս կարմիր , բայց լինի և սպիտակ 'ի հիւ-
 սիսային ծովի : Գոյ և տեսակ մի , որ փայլի . 'ի սոցանչ
 է ի տունկ ծովային : Զև . ձէք :

827 Ա՛րբ Եղէն օրայինս :

(Օրայինք Եղէն՝ յօր Հինգերորդի ,
'ի ջրոյ ստեղծեալ՝ Թևեն յեթերի .

Որոց բազմազան՝ տեսակք որոշին ,
որպէս ճանճ՝ Թռչունք՝ մարախս լը մեղոճին :

828 Օ՛րն էն Ռուսանս :

(Թռչունք փեարազարդք՝ յօդրս դեղերին ,
պատառեալ զեթեր՝ Թևօք բաբախին .

Ոմանք ճրկրնկեր՝ կամ ամենակեր ,
ոմանք ջրային՝ և ցամաքային :

1 Օրային կենդանիք են ձուճածինք , որք համարին
Թռչունցիկ սողունք օդոյ . որոց ոմանք են փեարազարդք ,
ոնք Թռչունք . և ոմանք լերի , ոնք մարախք , և ճանճք այ-
լովքն հանդերձ :

2 Թռչունք կոցազէնք ունին կրկին շարժմունս , Թռչ-
չին և շրջին ոտիք . գլուխն նց՝ այնպէս է յօրինեալ , զի
գլուխու պատառեն զօգն , և ահանջք նց՝ զետեղեալ 'ի
գլուխն վասն նոյն պատառախ : Ծնօտք նց՝ երկայնեալ 'ի
գլխոյ անտի գնան 'ի կտուց , և 'ի մի կէտ միանան :
Այք նց՝ գոյով գնտաձև՝ շրջափիւռ տեսանէն զամ ինչ ,
և սրտաես են յոյժ քան զտրքոտանեաց : Հուսկ յետոյ
կազմուճած մարմնոյ նց է իբրև անօթ ինչ Թեթև յօրի-
նեալ առ 'ի հէշտ գնալ յօդս : Ունին նաև զիւղ ինչ 'ի
յետոյսն . որով բազում անգամ կոցաւն օծանեն զփե-
տուրս , և այնպէս ոչ տամկանան 'ի ջրոյ : Արկին է սոցա
ստամոքս , մին 'ի կակղել զկալեալսն , և միւսն 'ի մար-
սել : Ունին մկանունս 'ի վր կրծոց այնպէս զօրաւոր ,
զի անվաստակ 'ի բազում ժամս շարժեն զԹևս : Տեսակք
Թռչնոց հաշուին իբր 2500 . որոց ոմանք են գեղեցկա-
ձայն երգեցիկ . ոմանք սկէփայլ նկարէն , կէսք ունին
ոտս մաշկապատս 'ի պէտս լուղելոյ . այլք ունին մագիլս
'ի պէտս որոյ . ոմանք բարձրաթուիչ են , և ոմանք կար-
ձաթև , և մեծամարմին , որպէս հաւք և ջայլամի : Թո՛ղ
դէ՛ռ Թռչուն գիշերաշրջիկ և որստիկր ո՛ք Չ . Ճժի . որոյ
գլուխ է նման կատուի , և ձայն՝ անախորժ . ուտէ զմուկն
և զխլուրդ : Չա՛ք Թռչնոց ամբոցեալ են կեղևօք , և
սաղմն փակեալ 'ի կեղրոնի իբր 'ի սրտի , զի անվտանգ

829 Աստուծոյ արժեքն :

Արժեքն է արքայ թրուհնոց երամին ,¹
 դազան գիշակեր՝ և քաջամարմին .
 Սրբատես Տրդոր՝ և բարձրաթուիչ ,
 համարձակ հայր՝ ի լոյս արեգին :

830

Սաքան զայլ թուշունս՝ ընդերկար ասլի ,
 քանզի ծերու թեամբ՝ ասէն ոչ վատի .
 Արք կըտուց նորա՝ անսլիտան լինի ,
 սովալըլուկ լեալ՝ հիւծի մեռանի :

831 Աստուծոյ արժեքն :

Սազէն գիշակեր՝ յետ սորա դասի ,²
 հաւ արեսնարբու՝ սրբաթուիչ արի .
 Ամ յամէ զթև՝ բացեալ ընդ հարաւ ,
 նորափետուր լեալ՝ լինի կորովի :

Տեսցէ . զոր ոմանք համարին լինել ՚ի մի կողմն գեղնու-
 ցին ՚ի մաշկն սպիտակ . իսկ ձագքն ՚ի ձեռն Զերմու թե-
 թիսմօր արտադրեալ ՚ի ձոճոջ՝ նախ ստանան զնշմարանս
 սղին յետ 14 ժամուց . և ապա զսրտին , զուզոյ և զա-
 ջացն . հուսկ յետոյ այլ անդամք կազմակերպին . որք և
 սնանին ՚ի սպիտակուցէ և ՚ի գեղնուցէ անտի . մինչև
 բեկեալ ապա զկեղևն ՚ի լոյս ընծային յետ 451 ժամուց :
 Յեգիպտոս Զերմու թե փռան ելանեն հազարաւորք ՚ի
 միասին ՚ի միջոցի սահաւ աւուրոց :

1 Արժեքն օք Չե . ձեթ . զորաւոր և մեծագոյն՝ նմա-
 նեալ առիւծու , ոչ յարձակի ՚ի վր գիշոյ և ՚ի վր տկար
 կենդանեաց , և միտ թողու մասն ինչ ՚ի կերակրոյ իւր-
 մէ . և կեայ ը միում իգի մինչև ցմահ . որոյ գոյ տեսակ
 գծարտ անունն ՚ի հարաւային Յի մեծ . զի երկայնու թե
 նր թևէ ՚ի թև է 16 ոտնա՝ . և կարող է վերացուցանել
 նաև զփոքր եղինս : Պատմի ՚ի նախնեաց , թէ արժեքն
 դնէ զձագս իւր հանդէպ արեգական , եթէ ոչ հանդուր-
 ժեն ճառագայ թից մերժէ յիւրմէ իբրև խորդս :

2 Բազէք արեւմտեան կղզեաց՝ գազանաբարոյ են յոյժ ,
 մինչև երբեմն կռուիլ ը որսորդաց . յորոց բազէ մի բե-

832 Ա- անգղ :

Անդրդ մըսակեր՝ թռչուն որսական ,
 հետամուտ գիշոց՝ սրբատես գազան .
 Որ կալեալ մագլօք՝ ըզծիտ գիշերայն ,
 գրնէ առ կրծովք՝ ջեռնու ձմերայն :

833 Ա- հոռուհի :

Սունկունք ճախնասէր՝ երամով շըրջին ,
 կազմեն ըզփաղանգ՝ նըման զինուորին .
 Աստանդական լեալ՝ գրնան սանդրխտին ,
 յամառն՝ ի ձմեռն՝ փոխեն զտեղին :

բեալ ՚ի սպանիա արձակեցին անդէն կապեալ չ սարա
 նոցն զկնիքն արքունի , և ահա ՚ի մի թուիչս եհաս ՚ի տե
 ղին վարվազակի : Սա ոնց և ամ գիշակերք անուսից ման
 չերկար . զի առաւել ջերմ և չոր գոլով՝ արեամբ կեն
 դանեաց շատանան . նմին իրի և կտուց նց անյարմար է
 յըմպել քօ Է * Չ . ճժի :

1 Այս թռչուն գիշախանձ ունի հոտառութի սուր ,
 մինչ զի հարիւրաւոր մղոնաւ հեռի առնու ասեն զհոտ
 գիշոց . և յաճախակի հետամուտ ըինի պատերազմական
 զօրաց ճախր առնելով զտեղեաւ կոտորածին : Այս մեր
 ձենայ ասեն ՚ի գէշ օժեղ անուշահոտ իւղովք , զի մահա
 բեր է նմա անուշահոտութին , ոնց և գարշահոտութին
 կենսատու : ՚ի սոյն կարգի է և ցինն , որ վերանայ յոյժ
 ՚ի բարձունս , և յակն թօթափել խոյանայ ՚ի վայր
 յափշտակել զձագս : Ըստ այսմ գոյ ՚ի հասկէչս և թռչուն
 մի բիբի անուն , որ արեամբ կենդանեաց սնանի , և ՚ի
 տեսանէլն զօրսորդս՝ թռուցեալ առաջնորդէ նոցա ՚ի
 գիւտ որոյ :

2 Ոմանք ՚ի թռչնոց են աստանդական , ոնց կուռնկն ,
 ծիծառն , արսին , ևն . որք սքանչելի գիտողութի նկա
 տեն զժամանակ փոփոխման օդոյ , և այնպէս յամառան
 գնան ՚ի ցրտին դաւաւ , և ՚ի ձմերայնի՝ ՚ի ջերմին : Ըստ
 այնմ : * Արսին յերկինս ծանեաւ զժամանակ իւր . տառ
 րակ և ծիծառն , և թռչունք վայրիք պահեցին զժամա
 նակ մտից իւրեանց || : էր . Ե :

834 Այլ ջայլամն :

Ջայլամն է թրուչուն՝ գազան վիթխարի ,
սրբունթաց եղեալ՝ վազէ որպէս ձի .
Սարէ ըզթուիչս՝ ՚ի սրավարութիւն ,
ունի զերկայն փող՝ թևըս փետրալի :

835

Սընութիւն սորա՝ ջերմ է աւելի ,
ներքին կազմութիւն զերթ չորքոտանի .
Ուտէ ըզկըրակ՝ զերկաթ ընդ քարի ,
գիւրացուցանէ՝ զելս որովայնի :

836

Սընունդ ձագուց՝ տըխմար գըտանի ,
զի թաղէ՝ զձուս՝ յաւազուտ վայրի .
Սակայն ելանեն՝ ջերմամբ արեգին ,
կերակրին որդամբք՝ ձագքըն գեռածին :

837 Օգնէ է Տեղուհան :

Սըգ մեղուհան է՝ գըտիչ փեթակի ,
՚ի գըտանեւ զայն՝ յանցըս գեգերի .

1 Ջայլամն յաճախ գեգերի յաւազուտս բարեւոնի ,
և ՚ի ջերմին վայրս . որոյ աչք ոչ միայն ունի զստորին
արտեանունս ը այլ թուչնոց , այլև ունի զվերինն . նաև
ունի յօնս ըստ կապկաց : Սք այնչափ սրունթաց վազէն ,
զի չմարթի ժամանեւ նց կենդանի ինչ . և երբեմն առեալ
քար ՚ի լայն թաթս արձակեն զկնի հետամտոց իւր
եանց . և այնչափ մեծ լինին , մինչև մարդն կանգուն ան
ցանէ ը ագումէջս նց . գր = բ գ , Չւ . չժէ :

2 Պատմէ պլինիոս , թէ ջայլամն ծածկէ զպարանոց
իւր ՚ի մջ թփոց՝ կարծելով թաղուցանեւ զըտըր մար
մինն : * Լուալ է ՚ի նմանէ իմաստութի սննդեան ձա
գուց || յով . լի . զի ձագքն անինամ ելանեն ՚ի ջերմու
թէ արևու . բայց ոմանք ՚ի ձուչոց գուլով անսերմնեխին ,
և սրգունք եռան ՚ի նս . որք լինին կերտուր ձագուցն
ելելոց ՚ի սերմնաւոր ձուչոց : Արաբացիք ջայլամն եր
բեմն ՚ի գործ ածեն փոխանակ իւր :

3 Այս թուչուն հապեղու ճ : Չւ . չժք . գուլով մեղուհ

Երբ տեսանէ մարդ՝ բարախէ ըզթեւս ,
տանի ցուցանէ՝ նրմին զայն տեղի :

838 Եւ հասարուան :

Տաւալուսն թըռչունն՝ նրման է սագի ,
բայց ընդ կըզակաւ՝ պարկ իմըն ունի .
Երբ ձուկըն որսայ՝ դընէ՝ ի պարկի ,
և ապա ուտէ՝ ի յանքոյթ տեղի :

839 Եւ ինկուալ :

Ղարձեալ ձրկընկուլ՝ թըռչունն ծովային ,
թըխսեալ հանէ ձագս՝ ի հանդարտ ծովին .
Ուր չորեքտասան՝ աւուրց միջոցին ,
ուց ալէկոծի՝ ծովն ի մեքին :

840 Եւ ընուտի :

Իսկ ողջունատու՝ թութակն անուանի ,
ի հընդկաց անտի՝ մեզ եկաւորի .
Ոյր լայն ձե լեզուին՝ բան յօդաւորեալ ,
ըստ հընչման մարդոյ՝ ձայնէ բարբառի :

841 Եւ սիրամարգ :

Իայց սիրամարգն է՝ թըռչնոց թագուհի ,
գունագոյն ներկեալ՝ օսկեթեւ յարգի .

ուէր՝ երբ գտանէ ուրեք զհասրարս մեղուաց՝ թուցե՛լ
դեգերի առ ճանապարհին , ի տեսանելն զոք բարախէ
զթեւս և նշան տուեալ երթայ զտեղի առնու ի վը փե-
թակին . և այնպէս առաջնորդ լեալ առնու և ինքն ըզ-
բաժին իւր ի մեղուէ անտի : Թող գեղեցիկ թռչունն
նէապօլսոյ 2, Չ. Ճթթ. որ ունի երկու եղջիւրս ի
գլուխն , և է գունազարդ և գեղեցիկ :

1 Նախնիք համարէին թէ այս թռչուն տեսեալ զձագս
թունաւորեալս յօձից պատառէ զկուրծս , և կաթեցու-
ցեալ զարիւն իւր ի վը նց ապաքինէ . զոր բերէն յօրի
նակ ըն :

2 Սիրամարգ կ'արբահաւն էր , Չ. Ճի , է ի չափ
հնդկահաւու , փետուրք նորա մանուշակագոյն , կանաչա-

Նազել լով ճեմէ՝ շարժելով գրչխին ,
պարզէ ըզառուտ իւր՝ ընդդէմ՝ արեգին :

842 Ա՝ փեմնիկ :

(Ընդ զանմահ փիւնիկ՝ հաւըն հօրաշալի ,
զոր ասեն լինել՝ մի յիւր տեսակի .
ճափրիկեան սահման՝ միայն գրտանի ,
զորմէ բազում ինչ՝ ՚ի գիրքս պատմի :

843 Ա՝ սոխակ :

(Ընդունմ գանկալի՝ սոխակ քաղցրաձայն ,
ծիծառըն ճըռուճօղ՝ գուշակիչ գարնան .
Ա զայլ անհամար՝ տեսակ զանազան ,
է զի գեղգեղիչ՝ է զի գունազան :

դոյն , և գեղնակիտուճած՝ նկարէն , որք ըստ պէսպէս
գրից պղպղեալ երևին ամենագոյն . տուտ նորա մեծ և
գեղեցիկ՝ սակեգիծ զարդուք , և աչաձև նկարուք զար-
դարեալ . զոր ստէպ բանայ հանդէպ արեգական և պան-
ծայ . ՚ի գլուխն ունի քանի մի շուշանաձև փունջս փայ-
լուն փետրոց . իսկ կտուց նորա երկայն և գեղեցիկ : Աստ
այսմ և փաթանն չինաց ի ՚ի , Չ՝ . Ճին , լը այլևայլ մասանց
մարմնոյն՝ է սակեգոյն , ծիրանեգոյն , և կանաչագոյն .
արուճ ունի ցցունս ՚ի գլուխն , տուտն չքնաղ և երկայն :
Թոյլ զբննաճանճն արագաթուիչ յաճախեալ ՚ի հնդիկս և
յամէրիկա , ոչինչ կարի մեծ քան զթիթուունս . գլուխ
նոցա կանաչագոյն սակէնիչ . պարանոցն կարմրանիչ փայ-
լուն որպէս յակինթ , աչքն նման անգամանդի . արուք
ունին ցցունս . կտուց նոցա նուրբ իբրև զասեղն :

Ի Փիւնիկ կմ արձաւ հաւն հաչակեալ ՚ի գիրք նախնեաց
համարի մի միայն լինել յիւրում տեսակի , որ յետ 160
ամաց ասեն ծերացեալ կազմէ զիւր բոյն ՚ի խնկենեաց ,
յորոց վերայ մեռանի . ապա յուզողոյ սակերաց նորա նախ
ծնանի որդն , յորմէ արտագրի նմանատիպ հաւ . որք են
անհաւաստի զրոյցք : Պատմէ տակիտոս , թէ յաւուրս
արշակայ՝ երևեցաւ այս նորանշան հաւ թուոցեալ ընդ
հեղիուպօլիս յաշխարհին եգիպտացւոց . շուրջ զորսմ
ասէ պատեալ բազմութե՝ օգահանաց թևակից լինէին
նմա : Տարեգ . Է . գլ . 28 : Սա թերևս լցէ տեսակ ինչ

844 Օրհնչէն հրուսց :

Իսկ կտուցք թըռչնոց՝ տոճէալ են նոցին ,
'ի տեղի զինուց՝ աստամանց ձեռին .

Ուր գիշակերաց՝ կրտուցն է կարճ կոր ,
զի զմիս ցաւատեալ՝ կերիցեն հեշտին :

845 Լա Լեւո :

Լայց թեք տուտ թռչնոց՝ են թիղէկնոցին ,
որով 'ի թըռիչ՝ թեքթեքեն զմարմին .

Որոց կարճ է տուտ՝ այնք ուղղորդ թըռչին ,
և որոց երկայն՝ յաճախ թեքթեքին :

846 Օրհնչէն ճանճ :

Նքաւ են տեսակք՝ ճանճից երամին ,
որք են անտետուր՝ թըռչունք եթերին .

Ոմանք սակփայլ՝ որպէս են բրզէզք ,
ոմանք ինքնալոյս՝ և կէսք մեղրածին :

Գրախառնան օօ , Չե . ճիբ . որ է թռչուն ամենագէ
զեցիկ 'ի չափ ազաւնոյ . փետուրքն՝ երկայն և ամենա
գոյն . գլուխ նորա և աչք՝ փոքր : Աւնին և թագաւոր , չ
որով հպատակէլ կան այլք և չ նմա թռչին : Թագաւորն՝
փոքր է քան զայլս և բարձրաթուիչ . նման սիրամարդի
զարդարեալ սակփայլ աչաձև նկարուք , որք և լինին
զարդք՝ 'ի գլուխս թագաւորաց : Այս թռչնոյ ոտք՝ փոքր
են յոյժ , որոց փոխան ունին երկու թելս ընդ որովայ
նիւ , որովք կախին զճաւոց :

1 Թռչունք բազխելով զթևս՝ 'ի վեր մղին 'ի ձեռն ա
ռաձգութե օդոյ . ուր երբեմն անարժ թևօք նախեղակ
ուժգնութե՝ 'ի վեր բերին . որոց թեք են վն թխավարե
լոյ , և տուտք իբրև ղեկ՝ 'ի պէտս ուղղելոյ զինքեանս , և
ուղղորդ մնալոյ 'ի թուիչս . որովհետև տուտ նոցա համե
մատի ծանրութե պարանոցի և գլխոյն . զի 'ի շարժելն
զայն յաջկոյս՝ դառնայ թռչունն յահեակ կոյս . և 'ի
շարժելն՝ 'ի վայր՝ դառնայ 'ի վեր :

2 Տեսակք ճանճային կենդանեաց հաշուին 18000 . որք
արտադրին յորդանց (825) . յորոց սակի են մեղուն ,
ձխաստացն , մթեղն , նաև ճպուռն ժժմակ ճանչող , թիլ

847 Ա. ԳԵՆԵ ԲԵՂՈՒՄ :

Ս'եղուք իմաստուն՝ փոքրիկ կենդանի ,
այլ են մեծագործ՝ ճարտար հրաշալի .
Ս'իաբանասեր՝ և քաղաքական ,
ընդ թագաւորաւ՝ հրպատակեալ կան :

Թեւն, և մարտիս՝ փաստակարար արտորեկից, և այլ անբաւ
ճանճիկք . որոց ոմանք ունին եղջիւրիկս, որով առաջ-
նորդին 'ի դնացս, որպէս կոյրք յստով, խորշելով 'ի խո-
ւնց, զք = 4 և նս, Չ. ճիդ. ճիդ. և ոմանք են ինքնա-
լոյս . տեսակ մի յամերիկա այնչափ լոյս ունի, մինչև 'ի
կիր առնուն զայն փոխան ճրագի . զք ըս, Չ. ճիե .
ոմանք ունին երկու թևս : այլք 4, և աւելի ևս : Ահաք
ունին բազում աչս . որպէս սարդք, ճանճք, ևն . դոն
և թրթուրք, որք ունին 10 աչս . բանզի արտարին մաշկն
աչաց ճանճին = Բ, Չ. ճիդ . նման գոշով վարմի, չկա
բառի բաց, այլ են 'ի նմա բազում աչք . որովք տես-
նէ . տեսին խոշորացուցիւ 'ի բզէզն Բ, Չ. ճիե, հարիւ-
րաւոր աչս : Այլ գիտելի է, զի ճանճք ինչ աներեւոյթ
կնճթաւ իւրեանց փորեալ զճառս դնեն զճուս 'ի միջի .
ուր ժողովեալ հիւթոց սկսանի ուսնուլ տեղին, և ձևս
նայ Գիպոր . յորում գոյաւորեալ որդն սնանի, և ապա
փոխակերպի 'ի ճանճ . յայսմանէ պատճառի գիտորն, որ
է բնակութի որդանց (766) . գոյ և գնտաձև միջատ
ինչ նման գիտորի :

I Մարմին մեղոնաց բազկանոյ յերկց մասանց . առա-
ջինն է գլուխն, որ ունի երկու ճիրանս, որով զանդեալ
յորինեն զմոմն . ունին և կնճիթ շարժական, զոր կար
կառեալ 'ի սիրտս ծաղկանց, ձգեն անտի զխորիսխ մե-
ղու : Էրկրորդ մասն է լանջքն, ուր են 6 սրունք և 4
թևք . երդն է որովայնն բաղկացեալ 'ի 6 անոնոց . յո-
րում են աղիք, անօթ մեղոս, իւնան, և թոյն . անօթն մե-
ղու թափանցիկ է, որպէս սրահարան՝ յոր ամբարեն մե-
ղուք զցօղս, կի՞ զճճեչ հիւթս այլեայլ ծաղկանց, սակաւ
ինչ սնունդ անտի ինքեանց առնլով : Խթանն է որպէս
նեւ պահեալ 'ի տտան, որ բացեալ լինի՝ երբ խայ-
թէ . իսկ անօթն թիւնալի զտեղեալ յարմատն իւթա-
նին՝ ունի հիւթ ինչ . զոր 'ի խայթելն թափեն մեղուք
'ի վէրոն, և սպտճառեն ցաւ անհնարին : Հասարակ մե-

Սորա 'ի յառնել՝ հողմոց մըրըրկի ,
 ոտամբք առնուռն խիճ՝ երբ էն 'ի բացի .
 Լ՝ յնու ծանրացեալ՝ զի մի խըլէսցին ,
 'ի սաստիկ հողմոց՝ որք յօդըս յուզին :

Օ արմանալի է՝ յօրինուճած մեղըին ,¹
 յորում ժիր մեղուք՝ վառեալ աշխատին .
 Իսկ այլքըն գընան՝ 'ի գործ պիտանին ,
 քաղէլ 'ի ծաղկանց՝ նիւթ 'ի սպարաիզին :

850 Որպիսի է Լեւգասորն :

Թափաւոր սոցա՝ ոչինչ աշխատի ,²
 որ մեծ է մարմնով՝ քան զայլս փառացի .

գուք՝ չէզոք են , միայն մայր մեղուն կամ թափաւորն է
 էգ , որ բերէ զձուս . գոն և արու մեղուք անզէնք , իւր
 մէջն ձայնեալք . որք բեղմնաւորեն զձուս , ուր յետ եր
 կուց աւուրց ելանեն որդունք , և 'ի մէջ 6 աւուրց ածին .
 և ապա մնան 'ի նոյն վիճակի ըտրմացեալք զաւուրս 15 .
 հուսկ յետոյ ստացեալ զգոյն մեղուճի , և նկարել անդա
 մոց նորա 'ի 21 աւուրս՝ թուչին որպէս թիթեռն « Գ » .
 Չ . ճիւղ . և տեէն ցամս 8 :

1 Ոմանք 'ի մեղուճաց գնան հաւաքել զնիւթ մոմոյ 'ի
 պէտս շինուճոց բճճին . ոմանք ժողովեն զմեղը կամ
 զքաղցր հիւթս 'ի ծաղկանց . կէսք զանդեն և ձևակերպեն ,
 և այլք կատարելագործեն՝ միակերպ վեցանկիւնի գործել
 զծակսն . յորս մտեալ մի մի 'ի մեղուճաց հաւաքեն զմեղըն .
 իսկ ծերք բնակեալք առ գուրս 'ի ներքս ըունին զբեռ
 նաբերս , և մատակարարեն զկերակուր աշխատողաց . 'ի
 գիշերի հանգչին ամենեքին , և յառաւօտու յառնեն 'ի
 գործ 'ի տալ միոյ ուրժք զնշան կրկին բոլանօք , որպէս
 ասեն : Դիտեն զզխարդն երկնից , երբ գոյ նշան հող
 մոց և անձրևաց ոչ ելանեն արտաքս . մայքրասէր են
 յոյժ , և ոչ նստին 'ի տեղի աղտեղի , կմ 'ի վերայ թիւ
 նաւոր ծաղկանց :

2 Թափաւոր մեղուն ոչ այլ ինչ է , եթէ ոչ մայրն մեղ

Սկսեք նորա կարճիկ՝ գրնացք նազելի ,
նիշ գոյ 'ի ճակատ՝ զերթ թագ 'ի գրլխի :

851 Օ կնչ է Ռիւեան :

Սիթեոն հիասքանչ՝ չքնաղ կենդանի ,
դունագոյն թևօք՝ ճախրեալ դեգերի .
Որոյ են տեսակք բազում զանազան ,
սկսպէս երանգօք՝ 'ի տես զարմացման :

852

Սքա են յառաջ՝ թրթուրք զազրալի ,
ժրժմունք շատակեր՝ բուսոց թրչնամի .
Որք քրնով թմրեալ՝ զերթ մեռելոտի ,
յառնեն 'ի գարնան՝ թիթուռնք սանձալի :

853

Սունապաճոյճ՝ են՝ խայտափիտ գունով ,
օգահերձ թրուչունք՝ ճախրեն առ ծառով .
'ի ծաղկանց միջի՝ խայտան բերկրալի ,
անմահ յարութե՝ տիպ ըսքանչելի :

ունաց , որ շերանէ արտաքս 'ի բճճէն , բայց յորժամ ար-
տագրէ զձուս . և յայնժամ այլ մեղուք տարածել զթևս
կանգնին յերկուց կողմանց , և ծածկեն զնա յաչաց իւր
եանց . ապա անցեալ թագուհւոյն նազելով մտանէ 'ի
բճիճ մի դատարկ , դնէ անդ ձու մի , և յայնմ սահու
սրսակաձև բողբոքեալ ծառայիցն հարկանեն զթևս յուրա
խակցութիւն գշխոյին . որ և ելեալ անտի մտանէ յայլ
բճիճ , անդ ևս դնէ ձու մի , և այննդս լըուցանէ զբճիճս ,
յորս գոյանան որդունք . և 'ի միում ամի կարէ արտա-
գրել իբրու 50,000 ձուս :

1 թիթուռնք են ձոճածինք . որք յերիս վիճակս փոփո-
խին . 'ի ք վիճակի են թրթուրք շատակերք , որք մնանին
բանջարովք . մինչև 'ի միջոցի 24 ժամուց երկուս աւելի
ուտեն քան զճանրոց իւրեանց : Գոյ և տեսակ մի փոք-
րիկ յոյժ , որ 'ի 24 ժամս 150 անգամ աւելի աճի . ո-
րոց մարմին բաղկանայ յերկոտասան անրակաց . ունին
10 աչս , և 16 ոտս 'ի լանջս , 18 ծակս 'ի տեղի թիքոց ,

Յազգ օղականաց՝ դարձեալ վերածին ,
 օձքինչ մաշկաթև՝ որ ընդ օդ ոստչին . (820)
 Գոն և ձկունք ինչ՝ ՚ի գաւառ ջերմին ,
 ՚ի վեր քան զջուր ոստոստեալ փախչին :

855 Օ ինչ էն երկհէնցադ :

Երկհէնցադք էն՝ կենդանիք միջին ,
 ընդ ցամաքային՝ և ընդ ջրային .

Օ ի անխրտիր կեան՝ ՚ի ջուր չ՛ի ցամաք ,
 որպէս ցուցանէ՝ և անուն նոյին :

որովք շնչէն : ՚ի ք վիճակի՝ կեան անսոճաղ ուն անզգայ .
 իսկ ՚ի ք վիճակի՝ ՚ի լոյս ընծային երփնագեղ թիթուունք ,
 որք սնանին ընտիր հիւթովք անկոց և արեամբ կենդա-
 նեաց . կր զթրթուրն ա , Չ՛ . ճիթ . կալեալ ՚ի 4 մայիսի
 սնուցին տերևովք մինչև ՚ի 11 յունիսի . և ՚ի նմին ժա-
 մանակի սկսաւ անցանել յանզգալի վիճակ . որպիսի է
 ք . և այնպէս մնաց զաւուրս 19 գլխիվայր կախեալ . և
 հուսկ յետոյ ել անախ գեղեցիկ թիթեուն չորեքթեան
 4 : Ըստ այսմ և շէրա՛ն է թրթուր մետաքսագործ . որ
 կերեալ զտերևս թթոյ փոխակերպէ զայնս ՚ի նիւթ
 խիճային . և սրահէ յորովայնին ՚ի մէջ երկայն փորո-
 տեաց . զոր և հանեալ ՚ի բերանոյ իւրմէ չէ երկու խո-
 զովակաձև անցս՝ ոչորէ ոտիւք զայս խժային թելս , և
 հիւսէ շուրջ զիւրև զխողակ . երկայնութիւն թելին լի
 նի մինչև 900 ոսնաչափ . հուսկ յետոյ փոխակերպեալ
 ՚ի խողակին՝ ելանէ արտաքս թիթեուն գեղեցիկ : Թո-
 ղում յիշէլ զշէն՝ , որ յօրինէ ինքեան զգգեատ ՚ի մալկոց
 չուխայի կամ ցիւսոյ . և ապա փոխակերպի ՚ի թիթեուն
 ճրագասէր :

1 Ոմանք ՚ի սոցանէ արտագրին ՚ի մէջ ջրոց , և ոմանք
 ՚ի ցամաքի գնէն զձուս . բայց երկաքանչիւրն անխտիր
 կեան և կերակրին ՚ի ջուր և ՚ի ցամաք . որոց ոմանք
 նման էն չորքոտանեաց , ուն Ֆիսֆէֆի . ոմանք մոլէսի ,
 ուն փիֆէֆի . կէսք անակիր , ուն իրիայն , և այլք ամենա-
 կերպ :

856 Օ Ինչ է Կոկորդիլոս :

Յայս սեռ վերածի՝ տիտեռն ամեհի ,
կամ կոկորդիլոս՝ գազան վիթխարի .

Օ ըրահաւորեալ՝ անթափանց խեցիւք ,
ահադին մարմնով խաղայ՝ ի ջլբի :

857

Եյս գազան դրժնեայ՝ ի ձոճոյ լինի ,
մինչ ՚ի վերջ կենաց՝ աճի երկայնի .

Կրլանէ ողջոյն՝ մարդ յաղթամարմին ,
ահադնատեսիլ՝ մեծ են աչք նորին :

858

Եանիք սայրասուրբ՝ ՚ի բերան սորին ,
միայն շարժական՝ կրլափրն վերին .

Քանզի անշարժ կայ՝ կրլափն ըստորին ,
յորում կենդանիք՝ մանրին և ծախին :

859

Սա առ նեղոսի՝ յաճախ դրտանի ,
ճեմէ ՚ի յեզերս՝ յտըս քառակի .

Ի Այս գազան ահադին ա է ՉԼ. ճԼ. յաճախեալ յափրիկէ՝ նման է կովադիայի . մարթ նր թեփաւոր և խայտաբէտ . որ արտադրի ՚ի ձոճոյ ը մեծութե՛ ձոճոյ սա գուց . և այնչափ տճէ , որչափ կեայ . լինի մեծ աւելի քան զ20 ոտնաչափ . շրջի յեզերս գետոց , և բազում անգամ դարանի յեզեգնուտս և ՚ի մացառախիտ տեղիս գետեզերաց . ուր ՚ի գալ կենդանեաց ըմպել զջուր՝ որ սայ . և զի մարթ նր նման է բնոյ արմաւենեաց . յոլով անգամ և մարդիկ խաբեալ ծախին : Ի սոցանէ համարին և Վիշապ էթովպիոյ , որք ՚ի հեռուստ երևին ուղ կոճղ ծառոց . տեսաւ երբեմն ՚ի գետս հայաստանեայց այսպիսի կենդանի : Գրէ դոմանտ , թէ տեսի վիշապ մի երկայն 33 ոտն . որոյ գլուխն՝ նման վարաղի , ականջքն՝ շորոյ . ժանիք երկայն և սուր . տուտն լայն , և աչքն բոցավառ . ճիրանքն սուր , և բոլոր մարմինն պատեալ անդճելի խեցիւք . ունէր ասէ երկուս փոքրիկ թևս :

Փախստահանաց՝ յանդուգն հետամուտ ,
'ի հետամըտաց՝ վատթարեալ կասի :

860

Սորա մի միայն՝ անհաշտ թշնամի ,
հելա մըկնակերպ՝ փոքրիկ կենդանի .
Որ 'ի տիղմ՝ շաղեալ՝ ձրգի 'ի բերան ,
կրծէ զփորոտիս՝ վարի ընդ սրբբան :

861 Եւս գի'նչ իսպէտի :

Երգ ձիագետին՝ է քառոտանի ,
յաղթանդամ և մեծ՝ առ ջըրովք շըրջի .
Ունչք թինձըր և լայն՝ աչք ակինջք փոքրիկ ,
մորթն է դեղնագոյն՝ ձեռ իբրև փրզի :

862

Ի հողանտիս՝ տեսաւ կենդանի ,
ելեալ 'ի ծովէ՝ գընայր որպէս ձի .
Որոյ ձեռն երկայն՝ մորթ խայտախարիւ՛ ,
երկու էին թեք՝ կարծըր զերթ խեցի :

863

Ութ ոտնաչափ էր՝ բարձրութիւն սորին ,
և մորթ անթափանց՝ գընտից հրայանին .
Սըտեալ 'ի յանտառ՝ 'ի խումբ ոչխարաց ,
եկեր զբազում՝ դարձաւ յիւր տեղին :

1 Այս կենդանի երկակենցաղ իւ Չա. ճլա. յաճախ
գտանի առ նեղոսիւ՛ . լինի 'ի չափ դոճոյ , բայց գլուխն
մեծ՝ նման ցլու , ձայնն՝ ձիոյ , և մորթն՝ անթափանցե-
լի 'ի զինուց . ունչքն թանձր և լայնաբաց . սրունքն
ստուճար և բոլորակ . 'ի ստորին ծամելիս ունի 4 տա-
մունս կէս ոտնաչափ երկայնութիւն . սա ոչ լուղի , այլ
գնայ 'ի ջրի իբրև 'ի ցամաքի . 'ի գետս կերակրի ձկամբք ,
և 'ի ցամաքի խոտովք . յառատանալ արեան իւրոյ շփե-
լմարմին իւր ը սուր քար , և ապա թաւալեալ 'ի հող՝
փակէ զվերոն : Գտանի 'ի ձեռքոն և շուն ծովային 'ի
չափ հասակի տասնամեայ մանկան . գլուխն , բերանն , և

864 Օ ինչ է գայլ ծովային :

Վայլըն ծովային՝ է քառուտանի ,¹
բայց լայնաբերան՝ տափակունչ լինի .
Վըլուխ շան նրման՝ կարճոտն և ըզգաստ ,
ծընի՝ ի ցամաք՝ լողայ՝ ի ջրի :

865

Վ սոյն վերածի՝ և որթ ծովային ,
որ է թաւամորթ՝ գընայ՝ ի գէտին .
Ի նտեւ է բարուք՝ այլ գիտէ հաչեւ ,
ոչ ուտէ բնաւ՝ արտաքոյ ջըրին :

866 Ե- Բէշի ճշոյ :

Վարձեալ բէշի մըշկոյ՝ է ի սոյն կարգի ,²
լստ ձևոյ ձըկան՝ տափակ տուտ ունի .
Յոյր վերայ էն նիշք՝ որպէս թեփ ձըկան ,
աւ պորտով սորա՝ բուշտ հոտոյ լինի :

պարանայն՝ մեծ . որովայնն՝ լայն իբրև զտիկ . ատա-
մունքն՝ մանր և սուր . ունի Է որովայնի՛ն երկուս ոտս
լայնս , և մատունս նման մատանց մանկան . միս նորս
աղնի՛ն :

1 Սա ՚ի ծնանիլն է սպիտակագոյն , յետոյ փոխի ՚ի
կարմիր , և ՚ի սեւաւ . որոյ գլուխն՝ նման է շան . սորա
երեք տեսակք գտանին : Գտանի յովկիանոսն և առի-ծ
ծովային երկոտանի , սպիտակ և մեծ , զարգարեալ բա-
շիւք . ձայն նր նման է շան , պօ «ի , Չ՛ւ . ճլք :

2 Այս կենդանի «ի Չ՛ւ . ճլք . փոքր է մարմնով .
գլուխն՝ նման շան , տկանջքն՝ կարճ և բոլորչի . բաց ՚ի
16 հասարակ ատամանց՝ ունի և 4 ատամնէս սայրա-
սուրս . որովք հասեալ կործանէ զճառս . ունի յագրու-
մէջն և բուշտս՝ յորս հաւաքեալ կայ հիւթ սղարարտ և
հոտաւէտ : կերակրի ՚ի ջուր ձկամեք և խեցեմորթիւք ,
խոկ ՚ի ցամաքի՝ բուսովք . ունի երկու ստամոքս . յետին
մասն մարմնոյն է ձկնահամ : Սոքս գոլով քաղաքական՝
լստ մեղո՛ւնց ՚ի միասին բնակին , և ՚ի միասին գործեն ,
կառուցանելով զթումբս ՚ի գետորայս իբր 12 ոտնաչափ
Թանձրութթ . յօրինելով զտունս գմբէթայարկս . որոց

Յար նրման էն շան՝ ոտքըն առաջին ,
 յետինք զերթ սագուց՝ մտք մաշկու կըցին ,
 Առաջնովք գընայ՝ պեղէ ըզգետին ,
 յետնովքըն լողայ՝ խաղայ՝ ի ջըրին :

868 Արշափ էն Չինանք :

Անբաւ էն տեսակք՝ ձրկանց բազմութե ,
 արարող մատին՝ օրհնէրդու անձայն ,
 Ա զի մեծագոյն՝ է զի փոքրագոյն ,
 ի ծով լայնագիր՝ խաղան և գընան :

Իւրաքանչիւր ունի երկս յարկս՝ ի վր միմեանց , որք և առաստաղք էն հարթեալ արտամբ իւրեանց սքանչելի ճարտարութե . երկու գրունք էն տանց՝ մին սովորական , և միւսն վն փախչելոյ : Ի ներքս տան շինեն տախտ , ք (սէկ) , իւրաքանչիւր տան բնակին 10 , կմ 15 : Մեծութիւն տանց է 12 տոն՝ երկայն , և 10 լայն . ամ տուն ունի շտեմարան , յորս ամբարէն զկեղևս ծառոց ի կերակուր իւրեանց . և ուաղան ի լուծացումն . յորս բնակին յաշնան և ի ձմերայնի . անգ ծնանին , և կան սիրով Է միմեանս . ոչ որ յափշտակէ կմ գողանայ ինչ յայլմէ . իւրաքանչիւր տունք երևին մի մի հասարակութի . որք ապա ի գարնան թողեալ գտունս՝ դնան յանտառս մինչև ցաշուն . գտանին յամերիկա , և ի հիւսիսային անշէն վայր : Տեսակք երկակենցաղ կենդանեաց հաշուն իւրև 292 :

1 Չկունք էն ձուածինք , որք առանց արուի բերեն զձուս . զորս ապա արուն բեղմնաւորէ սերմամբ , և կեն գանացուցանէ : Մնանին ի ջուր . ի տեղի ոտից ունին զտուտ առ ուղղելոյ զինքեանս , և թևս՝ առ ի լողալ և գնալ . ունին նաև գլխաթևս կմ ունկունս , որով շնչեն ի ջրի : Մարին ձկանց այնպէս է յօրինեալ , զի գլուրաւ պատաւէն զջուր , և չըջին . յոյր սուկս և աչք նց շեն այնչափ այտուցեալ . փայլուն թեփք՝ ոչ միայն էն ի զարգ և ի պաշտպանութի . այլև օդնեն նց ի լողալ : Ունին ի փորի պարկս օգալիցս . զոր լն հաճոյս ամփոփեալ խտացուցանեն զօդն ներքոսփանկ . որով և ծանր գտեալ քան զջուր լջանեն ի վայր . բայց երբ Էարձաւ

869 Ասորպէս բաժանին :

Օայս անթիւ լողակ՝ որ 'ի ջուրս աճին ,
 զերամբս կազմեալ խրմբովին շրջին .

()րէն է յերկու՝ սեռս վերածել ,
 'ի սեռ անարեան՝ և յարեանային :

870

Երկնաւորք են՝ որ ըզթորս ունին ,
 խրոչակ և լէզի՝ փամփուշտ մաշկային .
 Ոմանք տափարակ՝ որպէս լէզուձուկն ,
 ոմանք յալթանդամք՝ կամ կէտք ահալին :

871

Պասարակ ձրկուներ՝ ըստ մեծի մասին ,
 աստի և անտի՝ ունկուներս ունին .

Կեն՝ անօրի օդն , և ձկուներ թէթև գտեալ քան զջուր՝
 'ի վեր ելանեն . սակայն երբ ոչինչ ճնշեն կամ չարձա-
 կեն զպարկն՝ զկայ առնուն 'ի ջրի : Եւ այս յայտ անտի
 է՝ զի խեցեմարթք չունին զայսպիսի պարկս . նմին իրի
 և չկարեն 'ի վեր ելանել . այլ դեղերին 'ի յատակ ծո-
 վու : Եւ գարձեալ 'ի շնչելոյլ մեքենայի պայթուցեալ
 պարկն ձկան միոյ՝ ոչ ևս կարաց այնուհետև ելանել յե-
 րեսս ջուրց :

1 Տեսակ ձկանց՝ որ համարի իբր անհամար , յոմանց
 դնի 900 . բայց արիստոսէլ երիս տեսակս լինանրապէս
 զանազանէ , 'ի կէր . 'ի գլխու . և յանոն . սուսլինքն ու-
 նին խոչակ , թորս , և երկհամունս . ոմանք ունին և ստինս ,
 ծնանին և սնուցանեն կաթամբ . իսկ այլք արտադրին
 յանհամար ձուռոց , զի 'ի մի միայն փոքրիկ ձուկն՝ գտին
 միլիոնաւոր ձուս որ աւելի էին քան զզանդուձու ձկանն :
 Ձկուներ չև հասեալ 'ի չափ՝ թափեն զձուս հակառակ
 այլոց կենդանեաց : Գտանին 'ի հարաւային ովկիանոսի
 և 'ի միջերկրական ծովի Բուլալան ձկուներ . որք երբեմն
 ելեալ 'ի ջրոյ հարուստ մի 'ի վեր լէ օդս թուջին , և 'ի
 ցամաքիլ թևոցն անդէն 'ի ծով անկանին . քի յէ . Չ .
 Չլի : Են որք ունին ռաս և եղջիւրս որպէս ճ . և են՝ որք
 ունին զէնս և զխեցիս որով պաշտպանին . սպիտ : Չ .
 Չլի , Չլի :

Որով և ըզջուր՝ մշտեալ ընդ բերան ,
արտաբերս վարեն՝ նրմանն ծորակին :

872

Կէտք փոխան ունկանց՝ ՚ի գլուխս ունին ,
ծորակ ջըբացիր՝ յորմէ ջուրք հոսին .
Վանզի երբ ուտեն՝ ինչ ինչ կենդանիս ,
ջուրն ընդմշտանէ՝ ՚ի խորշ բերանին :

873 Օ քնչ է բաղէնայն :

Բաղէնայ կէտն է՝ գազան սոսկալի ,
կամ լէառն հողևոր՝ վիշաս կենդանի .
Որ ՚ի ծով հընդկաց՝ յովկիանոսի ,
յայն մեծ ասպարէզ՝ խաղայ հսովի :

874

Երբ ՚ի դուրս ձգեն՝ ըզլէզու սորին ,
՚ի բառնալ տանիլ՝ վէցեակ կառք պիտին .
Իսկ յայն մեծ փասար՝ բացեալ բերանոյն ,
կարէ մարդ հեծեալ՝ մշտանել դիւրին :

875

Կսկորդ փորոտի՝ այսըր գազանին ,²
է անհամեմատ՝ նեղ և կամ նրբին .
Գոյ ձուկըն փոքրիկ՝ նախընթաց սըմին ,
որում հեաւի՝ իբր առաջնորդին :

1 Այս կէտ ՚ի նր գիրս լեֆաթան կոչի . որոյ մեծուի ըսա պլինիոսի ժամանէ մինչև 9960 ռանա՝, և չէ այնչափ ժամանակ կէաց, և աճի . ունի առ ընտերօք թիթղունս մակդէնս՝ երկայնեալ ՚ի վերջաւորս . ունչ հս . Չեւ ճիւն : Այսպիսի էր թերևս և կէտն . որ եկուլ զյալխան . թ այնմ * Եմուտ գլուխ իմ չէ փասարս լերանց իջի ես ՚ի խորս երկրի, և տեսի զնիգս նր . զի էին ունչ աղիք յաւ շիտենից || : յա՛ն . ԳԼ . Թ :

2 Կսկորդ սորա նեղ է ունչ և փորոտին , մինչև հաղիւճ երկու փոքրիկ ձկունս կարէ կըանել ՚ի միասին , որպէս ասեն . սահաւսկեր է , ճարակի նաև ծովային խոտով :

876 Աստուծոյ ազգայնականն ։

Սըրողոյս ձուկն է՝ գազանն ահադին ,¹
 ունի զատամուռնս՝ նրմաննեալ սեպին .
 Յըռուկըն նորա՝ է սըրողոյս ձե ,
 այնու մնաքառի՝ ընդ իւր թշնամին ։

877 Աստուծոյ քիսաղ ։

Իսկ փիսաղ գազան՝ յաւէտ ամեհի ,²
 'ի ծովն աղբանտեան՝ յաճախ տեսանի .
 Ի զըռուր լէ ծորակ՝ 'ի վեր ցընցըղկէ ,
 յորմէ շըրջատիւր՝ տարափ անձրեւի ։

878

Երկուս զայլ անբաւ՝ սեռըս վիշասպաց ,³
 Ե կամ մարդակերպ՝ տեսակ համբարոճաց .
 Երբ յովկիանոս՝ երբեմն երեւին ,
 ըստ մարդանրման՝ կապկաց տեսակին ։

Սա գէշտ երթայ փոքրիկ ձկան ինչ մէկ կողեցեւոյ . մինչ
 զի 'ի պակասիլ սորա շարաչար զարկուցեալ ընդ քարա-
 ժայռս , խրի յաւազուսս ։ Գոյ և կէտ ինչ եղծեալս , կ'ի
 ատամնաւոր յովկիանոսն , որ ունի ատամն 10 ռանաչափ
 երկայն՝ բուսեալ ուղղորդ 'ի վերին ծամելիս ։

1 Այս գազանն քիսաղն ձայնեալ , Չ. Նլք. յա-
 ճախ գտանի յովկիանոսն հնգկաց . որոյ երկայնութիւն
 լինի մինչև 200 ռանա՝ . ատամննքն սեպացեալք և ջը-
 ռուկն քա սըրցաձե ։ 'ի սոյն կարգի համարի և իւրայնի
 երկ , Չ. Նլթ. թէպէտ սա փոքրագոյն է ։ Թո՛ղ զի՛նչ
 յայն , որ թռնաւորեալ զուսկանսն 'ի հեռուստ թմրե-
 ցուցանէ զորսորդս ։ Ըստ այսմ և նախնիս ձուկն փոքրիկ
 'ի նախնեաց համարի , թէ բնական զօրութիւն իւրով զա-
 ռազաստեալ նաւն արգելու 'ի գնացից . բայց և այս լէ
 առասպելս գասի ։

2 'ի 1806 տեսաւ յադրիսական ծովի այս կէտ ահադին
 մեծ երբև բլուր , որ զըռուր ծովուն՝ արտաքս շնչեալ ,
 հարուստ մի 'ի վեր յօդս ձգէր . զք քի , Չ. Նլս ։

3 Բաղուս եղէն 'ի հնուսն առասպելք սակս ձայնալ .

879 Օ կնչ էն խեցիք :

Ընարիւն ձրկունք՝ ժրժմակք ծովային ,
 'ի յերիս տեսակս՝ յամանց վերածին .
 Որպէս խեցեմորիք՝ և խեցեպարեանք ,
 սաքառք մըսալից՝ և մարդարտածին :

880 Իս կնչ կաղամար :

Չուկրն կաղամար՝ է՝ 'ի սոյն կարգի ,
 հեղու յինքենէ՝ հիւթ ինչ մելանի .
 Որպէս սաքիտ՝ ճայլ մելանահոսք ,
 հեղեալ ըզհիւթ սեաւ՝ 'ի նեղչայ թաղչի :

Կու համբարուաց երևելոց երբեմն յախունս ջուրց . զորոց բանաստեղծք բազում ինչ յօդեցին (731 :) Սահայն չէ ինչ ընդդէմ լինել 'ի ջրի այսպիսի մարդակերպ կենդանեաց , ուր էն 'ի ցամաքի կապիկք . որոց դուռն լը բնաբանից՝ է բոլորչի , աչքն՝ մեծ . ունին 'ի կուրծս երկու ձեռս բաժանեալս 'ի 5 մատունս մուշկապատս առ 'ի ըղզալ . ունին և երկուս սոս , և 'ի միջի տուտ կարծր . ձև մարմնոյ նյ է ձկնանման . որոց 4 տեսակք գտանին : Պատմէ գասսենոսս , թէ երևեցան երբեմն յովկիանոսի այսպիսի կենդանիք . որք 'ի սորտոյ 'ի վեր նման էին մարդոյ ունելով ձեռս , ստինս , ևն : 'ի 1812 . 'ի յուլ 31 . 'ի կողմանս փորդմէլինի տեսին վիշապ մի նման մարդոյ , ունէր երկուս ձեռս . և 'ի տեղի սաից զտուտ , 'ի ճակատն և 'ի կզակն ունէր փուռնջս հերաց :

Ի Ոմանք յանարիւն ձկանց՝ արտաքոյ ունին զմիս , և 'ի ներքոյ զկարծր նիւթ . որպէս սաքիտն , և կաղամար ձուկն . ոմանք էն խեցեմորթք . որոց մարմին պատեալ է աղնաղն զրահիւք . ուր է խեցեթախնն * † , Չև . Ճիւն : Աէսք էն խեցեպարեանք կի՞ պատենաւ որք . որպէս էն խիւսնիք . որոց միս փակի 'ի կարծր պահպանակ . զի սլ , կի՞ սն . և քր Չև Ճիւք . զ . զ : է զի սորտոյ կի՞ գալաբեալ . զի էն գէ . ոն . ք , Չև . Ճիւն . զ . է . է զի սորտի . և է զի ժայռալից լինին . որպիսի էն սաքեռն պր . և , Չև . Ճիւք . թ . յորոց և շատք էն այլատարալ , և կենք ծաղկաձև . զի սո . ք . և , Չև . Ճիւ . ւն . ք :

881 Ա՝ պողիպող :

Եւ պողիպողն է՝ ուժեղ կենդանի ,¹
 ըզգոյն իւր փոխէ՝ յինչ մարմին հըպի .
 Որոյ ոտք այնչափ՝ ուժգնու թի ունին ,
 մինչ ընդ քաջագոր՝ կենդանեաց մըրցի :

882 Ա՝ Խեցգեթին :

Խեցգեթինն ունի՝ զըրահ ամրապին ,
 աղիազիս և անբեկ՝ սրատենիւք ծածկին .
 Որոյ են ութ ոտք՝ աստի և անտի ,
 երկու ունելիք՝ յորսըս պիտանի :

883 Ա՝ Լօփ :

Լօփ խեցեմորթ է՝ մարդարտածին ,²
 ըսպիտակ պատեան՝ համեղ միս ունին .
 Լայլե ըզկնձիթ՝ յորմէ արձակի ,
 գեղեցիկ կարմիր՝ հիւթ անջընջելի :

884 Ա՝ նաւաշին :

Նաւաշինն զնաւաձե՝ հիասքանչ խեցին ,³
 որ զիւր նաւ ուղղէ՝ ըստ նաւապետին .
 Պարզէ յառազաստ՝ ըզմաշի իւր միջին ,
 և թիալարեալ՝ շըրջի՝ ի ծովին :

1 Գտանի տեսակ ինչ պողիպողաց , որոց սիրտ ընդ բարբերկայնունն տարածեալ է հանգերձ յառի խոչափողիւք . քանզի տաւաթիլիսս յերկուս բաժանեալ կարուտեաց զպողիպողն գեապին , և ահա յեա 8 աւուրց բազուկքն անջցին , և ելեն երկու պողիպողք :

2 Այս կենդանի յաճախելի ՚ի քիլի՝ երկայն է 5 մաս նաչափ , և ստուար իրր 4 , յորմէ ելանէ մարդարիտ սպիտակ և սպինի , որ և կռուեալ է ՚ի վր ժայռից :

3 Այս խեցի դուրով ՚ի յատակ ծովու՝ շըջէ զնաւաձե կեղևն , միլ և ելանէ յերեսս ծովու , և ապա ուղղեալ զայն թափէ զջուրն . ապա ՚ի վեր ամբարձեալ զերկուս թափս , պարզէ զմաշի իւր իրբն զառազաստ . միտ և զառաւ իւր ՚ի յեանն կողմն նաւակին ՚ի ջուր երբ զեկ :

Թող զողորածոյ՝ այլևայլ խեցիս ,¹
 և զանբաւ խրխունջ՝ զոստրէս ժայռալիս •
 Օ ըսպիտակ սատափ՝ բերող մարգարտին ,
 յոր իբրև կիտունած՝ մարգարիտք շարին :

886 Ո՛րպէս լինին գոանք նոցա :

Իսկ տունք խրխունջից՝ ի հիւթոց կազմին ,²
 մածեալ մասնկանց՝ յայննիւթ կուտակին •
 Որք ունին զարմատ՝ կըցին ընդ կաշին ,
 յորմէ ընդունին՝ սընունդ և ածին :

և զայլ երկուս թաթս արկեալ ՚ի ջուր , թիավարէ և գնայ :

1 Խխունջք շարժին ՚ի ձեռն ծածանման մաշկին եղև լոյս երկուս կողմանս որովայնին • յորոց ելանէ հիւթ ինչ մածուցիկ , որով մածեալ մնան ՚ի վր զինչևիցէ իրաց • ոմանք կան միշտ թաղեալ , և ոմանք ելանեն ՚ի վեր • կէսք զօրէն կենդանաբուսոց՝ ինքնածին են , և այլք առ աշէֆ , ունէն ինչն : Ի սոսա ոչ երևին աչք • այլ եղ ջիւրք նոյ են ՚ի տեղի աչաց • ունին բազում գործարանս : Ի հատանէլ զգլուխ նոյ , անդէն բուսանին լէ եղջերացն յետ աւուրց ինչ , լւ որում և մեք փորձեցաք • ոմանք ձուռ ծին են , այլք կենդանածին : Իսկ ոստրէք չունին տեղական շարժումս • և չկարեն դնալ տեղւոյէ ՚ի տեղի • յորմէ և սորա համարին արուճեգ • ապա թէ ոչ շմնայր տեսակ նոյ : Բայց ունի ծովային՝ փշապատ են նման շագանակի , ու նին բերան հանդերձ ատամամբք և 2100 փուշս , որովք և ընթանան • Իսկ ասպէղջ ծովու ունին 5 շառաւիղս և հազարաւոր ոտս , որով շարժին : Թող զհնգաբէրան կենդանին Բ 4 : Չ և Ծ ճ 7 :

2 Ըստ այսմ լինի և տուն կրիայից • յոր կան յապահո վի և կեան մինչև ց80 ամս • որք յամ 15 աւուրս բերեն զձուս • զոր թաղեալ լէ աւազով , կենդանանան ձագքն զկնի 25 աւուրց • ծովային կրիայք այնչափ մեծ լինին , մինչև ՚ի տեղի փոքրիկ նաւակաց վարեն զպատեանս : Ի ձմերան ելէլ ՚ի ջրոյ՝ ծածկին լէ հողով , և մնան զձմեռն ողջոյն անսոճալ • Եթէ հասցին գլուխք սոցա՝ մնան կեն

887

Սրբա ամենայն՝ տէրունեան մատին ,
անխոնջ օրհնէրդու՝ շարժմամբ բընածին .
Սոյն է քարոզիչ՝ մեծութէ նորին ,
ըստ արարչատուր՝ ձրրից և յատկին :

888

Սացե՛ք քոյդ գրիչ՝ ո՛ր կանանցածին ,
չըմտիլ յանբաւ՝ խեցեաց տեսակին .
Քանզի անհընար՝ մշտաց մարդկային ,
ամփոփել՝ ի գիր՝ ըզսեռքս նոցին :

889

Ս՛յլ քեզ անկանի՝ ո՛վ մարդ հողածին ,
բանալ զվարագոյր՝ քոյդ տեսարանին .
Սալով՝ ի չըքնաղ՝ տեսիլ հրաշալին ,
գրրել նըկարել՝ զտուն բանականին :

զանի աւուրս ինչ : Թողում զէփփէրն թևաւոր կենդանին փոքրիկ . որ ստուգաբանի « ուրէս » . զի ՚ի միջոցի հ ժամուց՝ ծնանի , աճի , կազմակերպի , ձգէ զձուս ՚ի ջրի , ծերանայ , և մեռանի : ՚ի ձոնոցն ելանեն որդունք , ապա փոխակերպեալ ՚ի յեփիմերոն , անդէն մեռանին :

1 Ո՛ր կարէ ՚ի գիր արձանացուցանել զանհամար տեսակս ազգի ազգի խեցեաց , զգեղանկար գոյնս նոցա , և զայլ հիանալի յատկութիս . քանզի սոքա բնակիչ գոլով ՚ի յատակ ծովու , սակաւս ՚ի նոցանէ ՚ի ձեռս բերին բնաղնինք . շատ լիցի ասելն սաղմոսերգո՛ւնին . * Որպէս
11 զի մեծ են գործք քո օր . զիմ ինչ իմաստութի արա-
11 բեր , և լցաւ երկիր ստեղծու՛ածովք քովք || : « 2 . 37 :

ՄԸՄՆ ՏՄՄՆԵՐՈՐԳ

ՄԸՐԳՒԸ ԿԸ.Օ.ՄՈՒԹՒԻՒՆ

890 Օգոստոսի 2 է Տարրահայտութիւնն :

Մարդահազմութիւն՝ ճառէ ըզմարդոյ ,¹
քրննէ զհազմութիւն՝ մարդկային մարմնոյ .
Որով մարդն ինքեան՝ ելեալ ՚ի զընին ,
ապշի ընդ ճարտար՝ գործած իւր անձինն :

891 Եւ զՕգոստոսի 2 Տարր :

Մարդն է փոքր աշխարհ՝ ըստ մարմնականին ,²
յորում այլևայլ՝ մասունք որոշին .
Սուր նաև ցամաք՝ բոյս ընդ կենդանին ,
այլևայլ գաւառք՝ վերին ըստորին :

¹ Կամեցեալ դուրսնաբանել և յազգս մարդկային
մարմնոյ՝ զայս ինչ յուշ առնեմք , զի հրաշագորգ և բազմ-
մարտէստ գործարանք կենսաւորաց՝ առաւել ՚ի մար-
դումս հրաշանան , քան յայլ կենդանին . նմին իրի զանց
արարաք առանձինն խօսել զմասանց այլոց կենդանեաց .
վն զի այսու քաջածանօթ լինին և այնք , ունի տեսցի :

² Մարդն գոշով սիրալի ձեռակերտ անձային հանձն-
բոյ՝ Գործարանք կոչեցաւ ՚ի նախնի իմաստասիրաց . մի
զի որչափ ինչ հիանալի կարգ տեսանի յՏի , զայն ան-
մարթ է տեսանել յայս փոքրիկ արարած . և այն՝ գերա-
գոյն իմն եղանակաւ . և միւս ևս՝ զի ունի մեծատարած
Տն բարեկարգեալ է գլխաւորաբար ՚ի 4 մասանց աստի .
յի ՚ի ընդ , ՚ի հողոյ , ՚ի բոսոյ , և ՚ի կենդանեաց . նոյնպէս
և մարդս ունի զՍուր կի՞ զխոնաւ մասունս . ունի զմար-
մին , յորում բուսանին հերք , և սնանին կենդանիք իբրև
՚ի մարդագետնի . ունի նաև զՋերմութիւն և զՍրտութիւն ,

892

Եկայք զըննեսցուք՝ ո՛ր աղամածին՝¹
 զայս չըքնաղ աշխարհ՝ տեսիլ սըխրալին՝
 Յոր ըսքանչեւի՝ պանծայ ձեռք վերին՝
 արարող մասանց՝ փոքրիկ աշխարհին՝

893 Եւ մատանսն քանի՛ :

Յայս վեհ տեսարան՝ նախ զանազանին՝²
 մասունք հասարարուն՝ մասունք ջերային՝
 Հաստատուն մասունք՝ սսկերք ջիղք երակք,
 արիւն և աւելք՝ յերկրորդ տեսակին՝

ղսնաւութի, և զորութի, այլովքն հանդերձ : Ուստի
 զմարմին մարդկային օրէն է բաժանել յերկու դաւառս՝
 'ի վերին, 'ի վերին, և 'ի ստորին : Վերինն է գլուխն՝ բա-
 նին բնակարան, խնստալց օթարան, և կենսական գոր-
 ծողութեց գործարան . որ զախլ իմանալեաց գաւառին
 բարձեալ բերէ : Միջինն է լանջքն՝ շունարան սրտի,
 որ գոլով վառարան բնածին ջերմութե՝ նման գտանի
 երկնային Յի, յորմէ լոյս և ջերմութիւն արեգական 'ի
 մեզ եկաւորի : Ստորինն է որովայնն . յորում լինին փո-
 փոխութիւնք կերակրոց՝ գոլով տեղի ծննդեան և ազակա-
 նութե . որով և զնմանութի տարրական Յիս յինքեան
 երեւցուցանէ :

1 Այս չըքնաղ աշխարհի ար և թագաւոր է հռ-
 գին Բանախան . որ է գոյացութի աննիւթ, անբաժանելի,
 անքանակ, ինքնաշարժ, անձնիշխան, խնայող, անապա-
 կան, և անմահ . ոչ բաղադրի, և ոչ ծերանայ, զի ոչ
 սնանի և ոչ աճի . գերազանց պատկեր ար, հոգևորէ զա-
 մենայն մասունս մարմնոյ, և ինքն ոչ բաժանի, զի չունի
 մասն, և Բաւրն է 'ի Բաւրում : Ունի կրկին զօրութիս, սրք
 են փոքր և խոտ . առաջինն ըմբռնէ զՆմարման և քննէ
 զինկութիս իրաց . զորս բազդասեալ արատորէ զամե-
 նայն բան ամենահանձար տրամաբանութի իւրով (181) :
 Իսկ եկն է յօժարութի առ բարին ըմբռնեալ մտօք .
 որով բաղձայ անհուն բարեաց, և ազատօրէն դիմէ առ
 ամենայն բարիս, և խորշի 'ի չարէն (189) :

2 Հաստատուն մասունք մարմնոյ են՝ Եւ Ոսկերք . Է

Ոսկերք պընդակազմ՝ և կարծր մարմին ,
 ուղղիչ հաստատիչ՝ բոլոր անդամին .

Մղխաղխեալ՝ ի մի՛ կապին բոլորին ,
 որ ՚ի մեր լեզու՛ կը ճախս անուճանին :

Ոսկերք էն բազում՝ մարդկային մարմնոյն ,
 իբրև երկերիւր՝ ինն և քառասուն .

Որք յօդակապօք՝ յեռեալ աղխաղխին ,
 է զի կան անշարժ՝ և է զի շարժին :

Յօդակապօք . Գ Աճառք . Գ Ջիզք . Է Մկանունք . Է
 Նեարդք . Է Ծնչերակք . Է Ամանք , ևն : Ուր սիրան ,
 ուղեղն , թոքն , և երիկամունքն այլովքն հանդերձ , կո
 չին գործարանս՝ ինչոյ : Ջրային մասունքն էն՝ Է Արիւն .
 Է Մամաց . Գ Լորձունք . Գ Մաղձ . Է Կաթն . Է Աւելի .
 Է Սերմն . Է Հիւթք պանկրէային . Է Հիւթք աչաց . Ժ
 Մազաս . Ժ Է Ողեր :

1 Ոսկերք գոյով երգ մասն ծանրութի մարմնոյն՝ տան
 զամբուութի , զվայելուութի , և զուզորդութի մարմնոյ .
 մինչ զի՛ որոց ուղիղ չափակցեալ էն ոսկերք՝ բարեչափ
 լինին . և որոց հաստատուն՝ այնք զօրաւոր լինին , և եր
 կայնակեաց : Ոսկերք չունին զգայութի , սակայն պօ
 տեալ էն զգայուն մաշկաւ , թեթեւ էն և լի ծակտեօք
 առ ՚ի տալ անցս մանրութելից և ջրաց : Որոց ոմանք էն
 բոլորչի , ոմանք տափարակ , կէսք ուղիղ՝ և խոռոչաւոր .
 այլք թափանցիկ , որք սքանչելի իմն արուճեստի՛ւ յօդա
 ւորին Է միմեանս : Ըստ քիմիականաց բազում հոդ գտանի
 յոսկերս և ալ թռչական , կի՛ ածուխային կաղ , և թըթ
 ուճածին օդ ոչ սակաւ . որպէս և ՚ի մարմինս կենդանեաց
 փակի օդ թթոճածին բազում : Գտան մեծամեծ ոսկերք
 հսկայից , որք համարեցան մնացեալք ՚ի ջրհէղեղէ՛ . բայց
 ըստ նոր քննուէց այն ոսկերք ոչ էին մարդոյ , այլ կեն
 դանեաց ինչ :

2 ՚Ի տփի ուղղոյն էն ոսկերք 14 , յայլ մասունս գլխոյն
 և ՚ի պարանոցին 46 . ՚ի պարանոցէ մինչև յերաստանս
 67 . ՚ի բազուկս և ՚ի ձեռս 62 . ՚ի սրունս և յոտս 60 .

Որպէս ատամունք՝ Հոսկրըն դադաթին ,
 զօդեալ ՚ի տեղիս՝ կարին հեղուսին .
 Խսկ ոսկր արմըկան՝ ազդեր և բազկին ,
 յօդիւք բազակցեալ՝ խաղան և շարժին :

897 Աստուծոյ արարչութիւն :

Օղակապք են հոժ՝ ըսպիտակ մարմին ,
 գործեալ ՚ի թեւից՝ խուռըն սպտատին .
 Օայլեայլ մասունս՝ կապեն և պրրկեն ,
 ոսկրը ընդ ոսկեր՝ զօդէն պընդագին :

898 Աստուծոյ արարչութիւն :

Ճառն է ընդ մէջ՝ ոսկեր և մըսին ,
 կակղիկ լըպրծուն՝ և դիւրաւ թեքին .
 Ասաճրգական՝ կարծրք քան ըղջիղ ,
 ոսկերք ՚ի սմանէ՝ ըսկրսեալ կազմին :

որպէս ցուցանեն կմախքն = ԼԼ. Չ. ԺԺ. Բայց են՝ որք
 ընդ ոսկերաց հաշուէն և զյօդս , և զայլ մասունս , ու
 բով լինի ընդ ամենայն 360 . ըստ այնմ նոր . * Երկ
 հարիւրոց և տասանց վեցից յօդիւք շողկապեցար || =
 Բան . ԽԿ :

1 Կրկին եղանակաւ լինի յօդաւորութիւն ոսկերաց . մի՛
 ոսկր ընդ ոսկեր աղխաղխելով ՚ի ձեռն յօդակապից . որ
 պիտի են ոսկերք ձեռաց և ոտից . և միւս ևս՝ յեռամբ .
 որպէս յեռեալ կարին ոսկերք սկաւառակին , կի՛ որպէս
 զօդին ոսկերք ծնօտին . և կի՛ ուր հեղուսին ատամունք
 ՚ի փոսորակս իւրեանց :

2 Յօդակապք իբրև առասան շողկապեն զմասունս
 մարմնոյ . իսկ յգանձ գուրով պինդ՝ բազկացեալ են ՚ի
 ջրային թեւից , յոր իբրև ՚ի լար աւարտին մկանունք :

3 Աճառն զետեղի յաւէտ յականջս , յուսնս , և ՚ի շնչս
 փողի . որոց գործ է նախ կերպաւորել զձևս մարմնոց
 ինչ . Կր սկանջաց , ընչաց , ևն . եկի՛ գիւրացուցանել
 զշարժմունս ոսկերաց ՚ի յօդակապս :

899 Օ՞րն էն ջիդ :

Չիղք ըսպիտակ լարք՝ զերթ խողովակին ,¹
 'ի ս կաւառակէ՝ և յողէն ծագին .

Որք յամէն մասունս՝ մարմնոյ ճապաղեալ ,
 ըստ բերման հարկի՝ կրծկին և բանին :

900 Եւ Կանի :

Տասըն զոյգ ջղաց՝ ծագեալ 'ի գրլին ,²
 'ի պէտրս աչաց՝ ահանջաց կարգին .

Որով տեսանեմք՝ լըսեմք և խօսեմք ,
 ըստ շարժման ջղաց՝ որպէս պահանջին :

901

Իայց ջիղք որ յուղղոյ՝ ողին ծընանին ,³
 գողցես յերեսուն՝ զոյգ ըս բաժանին .

Ի ներքուստ գողեւ՝ տածէն զնուրբ ողին ,
 կրծկեալ և լայնեալ՝ ներգործէ հողին :

1 Չիղք էն խուրձ ինչ երկայն և նուրբ խողովակաց ,
 և անմիջական գործարան զգաժմանց . քանզի կենսա-
 կան ողիք սրբօք ծաւալին ընդ ողջոյն մարմինն . ուստի
 ընդ շարժիլ ջղաց՝ շարժին և ողիք . որով և հողին զգա-
 ծեալ ըմբանէ զգալափարս :

2 Այս գլխաւոր ջիղք կացուցանեն զգործարանս ըզ-
 գայուժէց . քանզի առաջին զոյգն փեսողա՛ն կոչեցեալ
 մեծ է և թանձր քան զայլս , որ ծագեալ յուղղոյ յեա
 սակաւ մի գնալոյ՝ միանան . և ապա անջատեալ 'ի մե-
 մեանց ելանեն 'ի կէդրոնս աչաց (429) : Է կոչին Եող-
 Կանի , որ գնան յահանջս (936) : Է հոգոփա՛ն , որք Է
 մտպածե բերանն գնան 'ի թաղանթն ընչաց (938) : Է
 Էնդա՛ն . որք ծառայեն համառութե շեղո՛ւի , քմաց ,
 ևն : Է Աւաշարժ . որք շարժեն զաչս , և թարթափեն
 զարականունս , ևն : Իսկ մնացեալ ջիղք սփռեալք ընդ
 ամենայն անդամս ծառայեն շոշափականին սլլովքն հան-
 դերձ : Յորժամ ամթաղի գործ ինչ լինի , այս ջիղք
 շարժին , և զարկնն սփռեն 'ի մանր ամանս երեսաց , և
 շառագնեն զգէմս , և սլլայլեն զաչս և զահանջս :

3 Սորա ելեալ յուղղոյ միջնողին ճապաղին բաղմաման

902 Օրհնէն մասնաւոր :

Եւ մըկանուոնքն էն՝ մըսեղէն մարմին ,
 Տիւսեալ յերակաց՝ ՚ի Թեւրից ջրղին .
 Որք առհասարակ՝ մաշկաւ փաթուածին ,
 Իսկ ծայր մըկանանց՝ չըգանդ անուանին :

903

Սորք կամաւոր՝ շարժմունք կատարին ,
 յորժամ ՚ի մարմնի՝ կըծկին և լայնին .
 Երբեմնն ուռնուն՝ և եբբէք կրնաին ,
 Ըստ բերման կամաց՝ շարժի կենդանին :

Ո՛ւճ Տիւղովք ընդ ամենայն մասունս մարմնոյ . յորոց 7
 զոյգք ելանեն յաղիկց պարանոցին . 12 յաղիկց լանջաց .
 ք = Բ , Չ . ՃԾԷ . 5 յաղիկց միջնոցին . և 6 յսակերէ
 սրբանին . որովք զոյց մարմնն ՚ի ձեռն կենսական ու
 եաց սիւսեւոց յանդամս միջնորդութիւն ջրաց :

1 Պաշտօն միանանց է նախ կատարել զշարժմունս
 մարմնոյ յաւէտ զկամայականս . քանզի ըստ ակնարկելոյ
 կամաց՝ ոգիք յուզոյ չը ջնս բերեալք . կծկեն և լայնեն
 զմիանունս , որով և դարձէ հոգին . որպիսի էն ըւ միա
 նունք , Չ . ՃԾԷ : Երկրորդ՝ խառն չը ջրաց տան մարմ
 նոյն զոյժ և զթեթեւութիւն . որք ՚ի մարդն աւելի զօրա
 ւոր դարձի , առաւելու մարդն թեթեւութիւն և զօրութիւն
 քան զբազում կենդանին՝ համեմատութիւն ծանրութիւն
 մարմնոյ իւրոյ : Իբր զի գտանին ոմանք , մանաւանդ
 ՚ի հայս , որք բառնան զբեռն 300 հին ծանրութիւն , յաւուրս
 մեր եղև ոմն ՚ի հայաստան՝ զազար անուն , որ միով մա
 տամբ բառնայր ասէն 200 հին ծանրութիւն : Ըստ այսմ՝ ՚ի
 մարդն քառապատիկ առաւելու ոյժն , քան զծանրութիւն
 մարմնոյն : Են որք թեթեւութիւն ուսնուն ընդ քանի մի
 կանգուն բարձրութիւն : Մարդն՝ աւելի քան զայլ կեն
 դանին տակայ ջերմութիւն և ցրտութիւն : Եւ որովհետև
 բազում եղանակաւ հնար է մարմնոյ շարժիլ , նախ իբի
 հարկ եղև բազում և պէսպէս միանանց լինել . զորս
 հաշուեն իբր 427 . որոց ոմանք էն երկայնաձև ուղ օր .
 ոմանք բոլորչի . ուղ էն . և կէսք տափարակ ուղ զլ . ևն ,
 Չ . ՃԾԷ :

904 Օ ինչ էն նեարդս :

Սեարդք էն մաշկեղէն՝ խողովակ երկայն ,
 ՚ի կրրկին ըստունար՝ թերթից բաղկանան .
 Ը ո զուսպ ունելոյ՝ զողելիւր արիւն ,
 նակ բաշխելոյ՝ ընդ մարմինն համայն :

905

Սեարդք բաբախին՝ շարժեալ ընդ սրբաին ,
 զի ՚ի նրմանէ՝ զայն շարժումն ունին .
 Արով ճանաչի՝ զխարդ իցէ սիրտ ,
 խոթ է թէ առողջ՝ անշուշտ գուշակին :

906

Վ ձախակողմեան՝ փորոքէ սրտին ,²
 բունք ամէն ներդից՝ ելեալ տարածին ,
 Արով ընդ սրբաին՝ զարկին և բաղխին ,
 յերևան ածեն՝ ըզմարդոյն ներքին :

1 Սոբա կոչին երակք բաբախուն . զի բաբախին առա
 ձգութիւնն և ոստչին չ սրտի , յորմէ ունին զսկիզբն .
 և ընկալեալ զարիւնն սիրտէն յայլ մասունս մարմնոյ :
 Յայսմանէ ճանաչի որպիսութիւն սրտին , առողջութիւն և
 խոթութիւն . որովհետև նեարդ չափահաս առողջին յա
 ռաջ քան զկերակուրն հարկանէ ՚ի միջոցի միոյ բոպէի
 60 կամ 70 անգամ . մանկանցն հարկանէ 80 , կամ 90
 անգամ . իսկ ծերոցն 50 , կի՞ 60 անգամ : Երբ ՚ի միում
 բոպէի հարկանէ 100 անգամ , է երազագոյն . և երբ 150
 անգամ՝ է վտանգաւոր , զի աւելի է ջերմունին . իս այսմ
 անհաւասարութիւն կի՞ ընդհատութիւն զարկին ոչ բարւոք
 գուշակէ (118) :

2 Քանզի սիրտն ոչ միայն է աղբիւր արեան , այլև
 սկիզբն ամենայն ներդից . յորոց ՚ի ձախակողմեան փորոք
 քէ † , Չ . ՃԾԸ , ելանէ բունն ՚ի մեծագոյն ներդի , որ
 ճապալի չ ամենայն մասունս մարմնոյ : Նոյնպէս և է
 բունն թոքային երակաց աստի ելանէ , որբ ՚ի թոքոց
 ընդունին զարիւնն և հոսեն յայս փորոք . իսկ յաջակող
 մեան փորոքէ † ելանէ է բունն ծոցաւոր երակին . չ որ
 ընդունի զարիւնն յամենայն մասանց մարմնոյ . նոյնպէս և

907 Օ ինչ էն շնչերակէ :

Խակ շընչերակք էն՝ տեսակ ինչ ներդի ,¹
մատաւոր մարմնոյ՝ մակերևութի .

Արք զարեան հոսումն՝ առեալ ՚ի սրբաէ ,
բանան ճանապարհ՝ հոսէն ՚ի մարմնի :

908 Լք զինչ էրակէ :

Լքրակք էն մաշկեայ՝ խողովակ նրբին ,²
զարիւն յայլ մարմնոց՝ դէսլ ՚ի սիրտ տանին .
գոլով մատաւոր՝ արտաքին մարմնոյ ,
՚ի վերայ ներդից՝ նըստեալ կան շարժին :

909 Լք քանի՛ :

Վըլխաւոր երակք՝ կրրկին որոշին ,
մին ՚ի կողմանէ՝ ծընանի լերդին .
Ղապաղէ զիւր ոստ՝ դէսլ ՚ի խախացոց ,
անտի յորովայն՝ և ՚ի փայծեղին :

Ճ բունն թորոյին ներդի , լք որ արիւնն ՚ի թորն անցա
նէ : Կեարդք միշտ ծածկեալ գտանին ՚ի ներքոյ ծոցաւոր
երակաց , զի անբաժան էն ՚ի միսեանց (944) :

1 Շնչերակք էն նոյն իսկ նեարդք . որք իբրև զխողւ
վակ առէ՛լ զարիւնն ՚ի սրտէ տանին յամ՝ մատունս . և բա
ժանե՛լ ՚ի բալուճ՝ ճիւղս մերձեհանն ՚ի մակերևոյթ մարմ
նոյ . և հուսկ յետոյ այնչափ նրբանան , մինչև շանկանիլ
լք տեսութիւն . զք է է բունն շնչերակին , Չն . ճճթ .
որ ելեալ ՚ի ձախակողմեան փորոքէ սրաին ճապաղի . = =
էն նեարդք գլխոյն . ԲԲ բազկին . Բն ձեռացն . ԳԳ աղ
դերն , ևն : ՚ի շարժմանէ շնչերակաց յառաջ քան բաբախ
մունք , զոր զգամք յայլևայլ անդամս . իսկ շարժումն շնչե
րակաց ՚ի մեզ զարի՛ կոչի (118) :

2 Երակք էն բազմութիւն , որք զարիւնն եղե՛լ յայլևայլ
մատունս մարմնոյ՝ անդէն ՚ի սիրտն խաղացուցանեն , և
արդէլուն զէլս : Սորա աւելի մօտ էն մակերևութի մարմ
նոյ քան զշնչերակս . յորոց վերայ նստե՛լ կան , և շարժին
լք նոսին : Օրինակ իմն գլխաւոր երակն * , Չն . ճկ .
ճաղեալ ՚ի մեծ երակէ բազկին = = = հուսլ գոլով մակե
րևութի մարմնոյ՝ երևի ՚ի վերայ ձեռաց լք բոյթ մատիւն :

Երկրորդ ծոցաւոր՝ ընդ բոլոր մարմին ,¹
 երկու մեծամեծ՝ բընովք տարածին .
 Բնդ լեարդըն անցեալ՝ դէպ 'ի սիրտ ձգի ,
 անտի 'ի գըլուխ՝ և մինչև յտին :

911 Օ Ինչ էն ամանք :

Մանք էն բարակ՝ ծորակք մաշկային ,²
 յորըս ջուր արիւն՝ և կաթն ամփոփին .
 Սմանք ջըրեղէն՝ և արիւնային ,
 ոմանք կաթնեղէն՝ աման յորջորջին :

912 Եւ մանքախելք :

Իսկ մանրաթելք էն՝ թելք նրման մազին ,³
 բարակ և երկայն՝ ընդ մարմին ձրդին .

Երակք սկսանին 'ի ծայրէ ներդից և հասանեն 'ի սիրտն :
 Իսկ շնչերակք սկսանին 'ի սրտէ , և եզերին 'ի մակերևոյթ
 մարմնոյն :

1 Այս ծոցաւոր երակ սփռի չ մարմին երկու բնովք ,
 առաջինն վերելեալ ձայնել գիմէ 'ի վերին մասունս մարմ
 նոյ . և 'ի լերդէ ընդ սրտակրանս թափ անցեալ գնայ և
 կռուի 'ի սիրտն , սւր բերանաբաց հոսէ զարիւնն յաջ
 փորոք սրտին . յորմէ ապա 4 բարունակք ստեղնեալք
 մին ոտագէ զսրտակրանս . մին զբոյթ սրտին պատէ . մին
 գնայ յերկորն , և միւսն 'ի կողս : Ի սոցանէ շառաւիղեալ
 բազում ուղէչք գնան ծաւալին 'ի գլուխն , 'ի բազուկս ,
 յերեսս , 'ի լեզուն , 'ի ծամելիս , և յուղեզն : Իսկ եկի
 բունն «*» անտանեալ՝ արծակէ 5 ձիւղս . որք սփռին
 'ի ձարպն , յերկամունս , յուղեղ ողին , և 'ի միանունս :

2 Ամանք էն չունարանք կիմ նուրբ խողովակք հեղա
 նիւթից՝ գլուրաթէքք և առածղականք . որք բաղկանան
 'ի ուղսն մաշկաց , և սփռին յայլեւայլ մասունս մարմնոյ ,
 որոց նրբագոյն սպասունաձք կողին ճնափեալ : Ամանք
 որք ունին զարիւն՝ կողին արիւնեղէն . և որք զկաթն՝ կաթ
 նեղէն , և որք զաւելի՝ ջրեղէն , ևն :

3 Սոքա էն ամենանուրբ մազնատեսակ թելք , որք
 միւսերէն զմասունս մարմնոց ինչ չ միմեանս . ոմանք էն
 մսեղէն , ոմանք մաշկեղէն , և ոմանք ներդեղէն :

Սմանք մըսեղէն՝ մաշկեղէն կոչին ,
'ի պէսպէս մասունս՝ խառնին և կապին :

913 Օ՛րն է Քնն :

Սիսն է գրչխաւոր՝ մասըն անդամին ,
իբրև մածուցեալ՝ հիւթ արիւնային .
Պատէ զոսկր երակ՝ որպէս անկողին ,
լնու և հարթէ՝ զանհարթ ըզտեղին :

914 Աստուծոյն :

Սորթն է խիստ թուղանթ՝ կի՛ գորեղ մարմին ,
հիւտեալ՝ 'ի պէսպէս՝ մասանց ջրղային .
Ի՛նդ որով անթիւ՝ մըսանք զէտեղին ,
իբր աղբիւր քրտանց՝ յորոց քերան հոսին :

1 Սիսն է մօրմին թանձր և փափկիկ հիւտեալ ման-
րաթեղօք , և պէսպէս մասամբք . զորս տամկացուցանէ
և պահպանէ յարտաքին պատահարաց :

2 Արտաքին մակերևոյթ մորթոյ՝ է վերուսոյց . և ներ-
քինն՝ ըի անթիւ մասնօք , (որք են իբր աղբիւր քրտանց) ,
և բաժանի՝ 'ի բզմ թերթս . առաջին մորթն փո՛ղ ձայնեալ
բաղկանայ՝ 'ի մանր մանր թերթոց՝ ունելով անհամար ծակ-
տիտ , յորոց արտաշնչին հիւթք . սա՛ 'ի կեցօղ կենդա-
նիս՝ մաշի և նորանոր արտագրի . որ և հաստատութիւն
կուռեալ կայ ը՛ 'ի ներքոյ եղեալ մորթոյ . յորմէ՛ 'ի գիւ-
կունս անջատի՝ 'ի ձեռն ջերմ ջրոյ : Աւելի թանձր է
մորթն ներքան ոտից , և ամին ձեռաց , քան այլ տեղեաց :
'Ի վր մորթոյ միջահնիկ մարդոյ գտանին ծակտիք 30 հա-
զար միլիոն . ը որս՝ 'ի միում գիշերի արտաշնչին՝ 'ի մարմնոյ
50 ունիկ հիւթք . որովհետեւ՝ 'ի 8 մասանց սննդոց 5 մասն
արտաշնչութիւն ծակտի . զորոյ զտեղին ը մասին ընու օդն
'ի ներքս ընկալել շնչառութիւն : Իսկ մասն էն միս սպրն-
գային կարգեալք՝ 'ի ծծել զաւելորդ խոնաւութիւն , և զա-
տանել զհիւթս ինչ . սի մասնք ուղղոյն՝ զատուցանեն ըզ-
կենսական օգիտ . բերանոյն՝ զորձունս . ստեանցն՝ ըզ-
կաթն . երիկամանցն՝ զմէզն . լերդին՝ զարիւնն . մորթոյն
զքերան , ևն (922) :

915 Ա- ցանցարեւսաբն ։

Յանցատեսակն է՝ ցանցեղէն մարմին ,¹
կի՞ մորթ ծակոտկէն՝ կարկամ մաշկնրբին .
Որ և փաթուծէ՝ ըզմորթըն ներքին ,
և սա զճարպեղէն՝ թաղանթ իւղային ։

916 Ա- ճարպն ։

Ճարպն է իւղալիր՝ պարարտ մասն արեան ,²
թորեալ յերակաց՝ մաշկօք միանան .
Որ և ՚ի սովու՝ ձգեալ ըզկրնի ,
սընուցեալ տածէ՝ զանդամն ամենայն ։

917 Ա- ուղեղն ։

Ուղեղն է փափկիկ՝ մարմին պատուհական ,³
փակեալ ՚ի տրիի՝ գահ ըզգայուծեան .

1 Այս մաշկ կոռէշ կայ ՚ի ներքին մակերևոյթ առաջին մաշկի ։ Յսլովք յանդամնզննաց համարին , թէ գոյն առաջին մաշկին է սպիտակ , կի՞ թափանցիկ . և ՚ի ցանցատեսակէ պատճառին գոյնք մարմնոց . և ուր կաղմուծի ցանցատեսակին յայլևայլ մասունս է պէսպս , նոյնպս և գոյն մասանց մարմնոյ է պէսպէս . ի որում զննեալ տեսաւ ՚ի զտուցեալ մորթ սեաւ հնգկաց . յորմէ հետևի թէ սևութի նոցա պատճառի ՚ի ցանցատեսակէ . որ այն պէս տրամագրի ՚ի կլիմայից , և ՚ի ջերմութի արեգական . թէպէտ ոմանք պատիժ ասեն զայն՝ սերնդոցն քանանու . ծն . ինչ սոյն ցանցիւ՛ կայ բուն մորթն , կամ կաշին թանձր և առաձգական , հիւսե՛լ ՚ի ջղային մանրաթելից . առ որով է ճարպեղէն թաղանթն բաղկացեալ ՚ի կուտակուծէ բարակ թերթից , և ընդհատե՛լ բաղում խոր շիւք , որք լի են իւղային հիւթովք ։ ՚ի չորքոտանիս գտաւնի և մեղէն շապիկ միանուա ի մէջ մորթոյ , և ճարպեղէն թաղանթոյ . որով շարժե՛լ զմորթս վանեն կենդանիք զճանճս . իսկ մարդն միայն յերես ունի զայսպիսի մաշկ ։

2 Ճարպն բզի՞ ուրեք է ծակոտկէն , որ ի մզնեօք փոսնդանաց կից գոլով ի աղիս՝ տածէ զբնական ջերմութիւն . և իբրև մթերք ինչ պահե՛լ վն հարկաւոր ժամանակի՛ անգրէն յետս ձգի ՚ի սովու , և սնուցանէ զմասունս մարմնոյ ։

3 Ուղեղն է կակուղ և ընաիր գոյացուծի , աթոռ ըզ

Որ զանազանի՝ ՚ի կրրկին տեսակ ,
յուզէղ ոսկերաց՝ յուզէղ գազաթան :

918

Ուզէղ գազաթան՝ մասն է շաղահան ,
հոսիչ անդամոց՝ ձիր ըզգայութեան .
Սըտաց պահարան՝ ՚ի նախնեաց կոչի ,
ոչ ՚ի հուր հալի՝ կամ տասպով ծախի :

919

Ուզէղըն մարդոյ՝ մեծ է աւելի ,
իբր եռասպատիկ՝ քան թէ արջաւի .
Որ և ՚ի յերիս՝ մասունս օրոշին ,
Ռեծ և քոք ուզէղ՝ այլև ծոծ օղին :

գայութեց , որք լեռնին՝ ՚ի նմանէ զմբռնողական զօրու
թի . զարտաբին մահերեւոյթ ուղղոյն պատատեն մաշկք .
որով ուզէղն իբրև պատտառ տարածեալ լինի . որ և լի
է մանրաթելօք և երակօք՝ այլովքն հանդերձ . յորոց ՚ի
տրամադրութի ասեն ծագի արթնութի և ուշիմութիւն
մտաց : Ուրանօր դնեն զաթոռ հողւոյն արդի փիլիսո
փայք : Որովհետև յուզէղն են բազում մանրաթելք և
երակք օգելիցք . յորոց ՚ի տրամադրութի , յանկոճածոյ ,
և ՚ի համեմատութի ծագին լը փիլիսոփայից՝ զգացողու
թիք և երևակայութի , ևս և բնական պահասութիք .
իբր զի՝ ՚ի սաստիկ ցամաքութի , ՚ի խոնաւութի , և ՚ի
թուլութի թեւից՝ խանգարի ըմբռնումն . զի ըմբռնումն
և ճոռացումն պատճառի՝ երբ թեւքն կակղին ՚ի ձեռն
մտղասոյ . ճոռացումն պատճառի՝ երբ թեւքն կարի իմն
չորանան և ձգտին ՚ի ջերմութի արեան . Կոպաղի մարդն
և իելագարի , երբ ձգտին թեւք ուղղոյն և ջերմանան :
Յորմէ հետևի թէ ուզէղն հարկաւոր է զգացողութի ,
այլ ոչ կենաց . զի եզէն տղայք , որք չունէին զուզէղ
զի ծնաւ ՚ի փարէզ մանուկ մի անգլուխ , և եկաց զա
ւուրս 4 :

1 Առաջակողմեան վերին մեծ մասն ուղղոյն * * * ,
Չև . Ոչիւ , է կորնթարդ և անհարթ . յորմէ առ արմա
տովք ընչաց իջանեն երկու բլթակք . լը որով են և եր
կու փորոքք երկայնաձիգք . յոր ՚ի տուրևառս շնչոյ ընդ

920 () Ինչ է արեան :

Արիւնն է լոյծ մասն՝ յաւէտ պիտանի ,
 յերակ և ՚ի նեարդ՝ բաշխեալ ծաւալի .
 Շրջեալ հոյովեալ՝ ընդ ամէն մասունս ,
 կենդանի պահէ՝ զկեցող կենդանի :

921

() Թարան արեան՝ սիրտըն ճանաչի ,
 յաղբերէ անտի՝ բրդխի և բաշխի .

նուրբ ծակտիս սպրդի մասն ինչ նուրբ օդոյ ՚ի զովա
 ցումն ուղղոյն : Իսկ ուղեզն փոքր ք փակեալ ՚ի խորշ յե-
 աոյ կողման գլխոյն իբր տասնապատիկ փոքր է քան
 զմեծն . և ունի անցս , ընդ որս զմաղաստո յաւելւածս
 Թորէ ՚ի բիմս . որոյ Թանձրագոյն մասն ը ծակս պնչաց
 մղի արտաքս : Եթէ գագաթն հորիզոնաբար կտրեսցի՝
 տեսանի մաշկ ինչ կռտէշ ՚ի սկաւառակն՝ Խոթմաչք կոչե-
 ցեալ . որպիսի է ԲԲ գատեալ ՚ի սկաւառակէ : Ծանրոց
 ուղղոյն ՚ի մարզն է իբր ք լիպրէ , և իբր եռապատիկ մեծ
 քան զուղեղ արջառոյ պահմամբ համեմատութի : Իսկ
 ծուծ ողին՝ նմանապէս մասն ուղղոյն համարեալ լինի . որ
 սկսեալ ՚ի յետին մասնէ ուղղոյն տանաձև հիւստւածով
 գնայ մինչև ցմեծ ծակ ոսկեր ծոծրակին և մինչև ՚ի ծայր
 սրբանին : Թող զուղեղ ոսկերաց կարգէ՝ ՚ի սնունդ նո-
 ցա : Ի ճակատս ուղղոյ մարդոյ և կենդանեաց ինչ գտան
 երբեմն որդունք . զի փոքր ճանձք մտեալ ընդ սննդունս
 գնեն զձուս անդ . յորմէ լինի որդն ՚ի ներքին խոռոչս .
 որ սողոսկելով գնայ ը հիւթոց ՚ի վեր :

1 Արիւնն ելեալ ՚ի սրտէ իբրև յաղբերէ՝ շրջան առ
 նու անընդհատ ընդ ամենայն մասունս մարմնոյ ՚ի ձեռն
 երակաց և շնչերակաց խառն ընդ այլ հիւթոց . քանզի
 բացեալ զսիրտ շան , որ սակաւ մի յառաջ կերեալ էր ,
 գտաւ ՚ի Թոքային շնչերակն սպիտակ հիւթ մամուցային .
 որ յետ բազում շրջանաց ունէր յարիւն փոխարկիլ : Վոյն
 արեան ՚ի Թոքային երակն՝ որ ՚ի ձախակողմեան խոռոչ
 սրտի՝ առաւել կարմիր էրևի . իսկ ՚ի Թոքային շնչերակն ,
 որ յաջակողմեան խոռոչ սրտի՝ առաւել մթնագոյն , պատ-
 ճառեալ Թերևս ՚ի լերդէ :

2 Խաբարանչիւր խոռոչ սրտի տանի յինքեան զմի ունիկի

այլևայլ անդամն՝ շըրջելով զըտի ,
անդրէն յետադարձ՝ ի կեդրոն ձըգի :

922 Աւստին :

Աւստին է յըստակ՝ հիւթ ինչ ջըրային ,
պահեալ յաւըշկեան՝ անօթըս նըրբին .
որ և զատուցեալ՝ հիւթոց յարենէ ,
ցան և ցիր սըփոխն՝ ընդ ողջոյն մարմին :

923

Սահայն սոյն անօթք՝ յորժամ պատանոխն ,
վայթեալ նոյն հեղուկք՝ լըճացեալ լինին .
Սըր ջըրգողութիւն՝ աստի պատճառի ,
արիւն ցամաքեալ ջըրոյ ծարաւի :

արիւն . և զի ՚ի միում՝ ժամու 4000 անգամ բարախուսն
լինի սրտին (947) . ապա յիւրաքանչիւր ժամն անցա-
նէ ընդ սիրան 4000 ունկի արիւն : Իսկ երազութի աը-
եան սաստկանայ լը հեռանալոյ նորա ՚ի սրտէ . նմին իրի
առաւել սաստիկ շարժի արիւնն յերակս հեռաւորս ՚ի
սրտէ , քան ՚ի շնչերակս , որք մօտ են ՚ի սիրան : Չգիտ
արեան մարդոյ դժոճարին է որոշէլ . զի ըստ պէսպէս
հասակի պէսպէս լինի . թէպէտ ոմանք համարին լինել
25 լիպրէ , կի՛ 7 հօխայ , որ ՚ի միում՝ ժամու իբր 18 ան-
գամ անցանէ լը սիրան :

1 Աւստին ընթացեալ ընդ ամենայն մատուսն մարմնոյ
տամկացուցանէ զանդամն , և կատարելագործէ զմա-
մացն յառաջ քան զխառնիլ ընդ արեան . յորմէ և զա-
տանի ՚ի ձեռն աւշկեան մասնաց . որք են սպիտանման .
զորօրինակ * * է մասն . իսկ ըէ են աւշկեան անօթք .
Զ . Ոհիբ :

2 Ըստ կարծեաց բժշկաց ՚ի պատանիլ այսց աւշկեան
անօթոց՝ հիւթն ջըրեղէն լըճացեալ ՚ի փորի պատճառէ
զախտն ջըրգողութի , որ միշտ խնդրէ զջուր . զի արիւնն
ցամաքեալ յայս ցօղոյ խնդրէ զջուր . որով աւելի զայ-
րացեալ ախտին՝ տանջէ զհիւանդն ծարաւով . զայս ջուր
հանեն երբեմն ծակեալ զորովայնն :

924 Օ ինչ էն ոգիք :

Արդ ոգիք էն նուրբ՝ մասըն շընչելի ,¹
 գոլորչիք արեան՝ և պարզեալ շոգի .
 Ար և ՚ի կրրկին՝ տեսակ որոշի ,
 ՚ի կենդանական՝ կենսական ոգի :

925

Կենսականն ՚ի նեարդ՝ ՚ի սրբաէ բերի ,²
 կենսական ջերմամբ՝ ՚ի սրբաին վառի .
 Խակ կենդանական՝ զըտեալ աւելի ,
 յուզղեղէն մասունս՝ շըրջի հոլովի :

926 Օ ինչ է գլուխ :

Ղըլուխն է վսեմ՝ մասըն գերամբարձ ,
 օթարան ուղղոյ՝ և աթոռ ոգեաց .

1 Ոգիք էն ամենանուրբ գոյացութի , կամ նուրբ գոլորչի արեան . որք ՚ի ձեռն ջլաց սիռին լը բոլոր մարմինն , ոգևորեն և կենագործեն զկենդանին . և ունին հալորդութի լը ուղղոյ , յորմէ և ծագին . վն որոյ ՚ի պակասիլ այսր հալորդութի նոցա ընդ միմեանս՝ ջիղք այլ ոչ ևս զգան , և մարմինն մնայ անզգայ :

2 Կենսական ոգիք էն ջերմաջերմ՝ շոգիք արեան վառեալ ՚ի սրաի իբր ՚ի վառարանի կենսական ջերմութի . և ՚ի սիրան զատեղ յարենէ բերին ՚ի նեարդս , և ՚ի ջիղս . իսկ կենդանական զտեալ յարենէ յուզեղն՝ երագընթաց յածին լը ամենայն անցս ջղաց , և լը բովանդակ մարմինն : Գտանին ՚ի մարմնի և քնակն ոգիք . որք ՚ի լերդէ ընդ երակս բերեալք սիռին ՚ի ջիղս . և արբանեկեն ՚ի ծառայել բնական գործոց . զք խնդալոյ , հալալոյ , ևն : Արդ լը կարծեաց բնարանից՝ կենսական ոգիք երիտասարդաց էն ընտիր . յորմէ և յարձակմունք նոցա լինին աշխոյժք , թեպէտ կենդանական ոգիք նոցա չեն այնչափ մաքուր . որով և ճանաչմունք նոցա լինին բազում անգամ յոռի : Եւ ընդհակառակն՝ ծերոց և հանգարտարոյից կենդանական ոգիք՝ էն ընտիր , այլ ոչ կենսականքն . յորմէ և յարձակմունք կմ շարժմունք նոցա լինին յամր . և ճանաչմունքն խոհականք :

Ուր բզզայական՝ շարժմունք գործադրին ,
որ և բաժանի՝ ՚ի մասըն կրրկին :

927

Սասըն առաջին՝ հասափ^օն անոճանի ,
կորընթարդ գագաթն՝ յոր մազ բուսանի •
Որ յուժ ոսկերաց՝ բաղկացեալ լինի ,
խիզ զողոճածք նոցա՝ հարանք յորջորջի :

928

Խիզ երկրորդ մասն է՝ լերկ դէճք բուրբի ,¹
՚ի ձեռն ծամելեաց՝ բուրբեալ լինի •
Յորում էն ականջք՝ ճակատ և բերան ,
այլև աչք և ունչք՝ գործիք պատոճական :

929

Սա է տիրապէս՝ հոգւոյ հայելի ,²
զի ներքին շարժմունք՝ յերեսըս զըննի •
Ուր յաճախ ոգիք՝ յուղղոյ և սրբաի ,
անդ վերաբերեալ՝ դէմքըն փոփոխի :

930 Սա գի՛նչ պարանոցն :

Սա պարանոցն է՝ ոսկրը ծոծրակին ,³
որ իբր երկայն փուշ՝ յերաստան ձրդին •

1 Դէմքն բուրբի ՚ի ձեռն երկուց ծամելեաց՝ վերին և ստորին • վերինն բաղկանայ ՚ի 13 ոսկերաց • յորոց 2 էն ոսկերք այտից • վերին ծամելիք իբր ՚ի բազումն ունին 16 ատամունս , որպէս և ստորինն • որ ՚ի միջէ ոսկրէ ձուլի , հա՛ կմ՛ հա՛ կա՛ ձայնեալ (933) :

2 Դէմք էն տեսարան պատուոյ , և հայելի սրտի • յորում նկարին ներքին կիւրք • իբրև զի՛ երբ յերկիւղէ ա մօթոյ փխտակրի սիրան , արիւնն գիմէ յերեսս և շառագնէ • և երբ յերկիւղէ մահու ըմբռնեալ լինի , արիւնն թողե՛լ զերեսս՝ գիմէ ՚ի սիրան , որով և գեղնի երեսն : Ըստ այսմ ՚ի բարկուժէ , և յուրախուժէ ոգիք և արիւնս սփռեալ յերեսս յայտ աւանէն զներքին կիրս :

